ՉԵՅՄՍ
ԿՐՅՈՒՍ

ՈՒՄ ՈՒՆԵՍ

ԿԱՄ
ՎԱՃԱՌ
ՎԱԾ
ԾՐԾԱՂ

Գ Ի Ր Ք Ա Ռ Ա Ջ Ի Ն

ԿՈՐՅՐԱԾ ԾԻԾԱՂ

Ես հիմար չեմ, որ պայմանից այդ փախչեմ:
Առանց ծիծաղ մարդը գապան կկոչվեր:
Մարդն է միայն այդ շնորհքով օժտված,
Առիթ եղավ, կծիծաղի նա սրտանց[1]:

«Սագ-սագ, ես կկպչեմ մեկ էլ տեսաք»
տիկնիկային կատակերգության նախերգանքից:

Թերթ առաջին

ՆՐԲԱՆՑՔԻ ՏՂԱՆ

Լայն փողոցներ ունեցող մեծ քաղաքներում դեռ այժմ էլ պատահում են այնքան նեղ նրբանցքներ, որ եթե ձեռքդ պատուհանից երկարես, կարող ես դիմացի տան պատուհանից մեկնած հարևանիդ ձեռքը սեղմել։ Օտարերկրյա զբոսաշրջիկները, որոնք փողի և զգացմունքների մեծ պաշարներով ճանապարհորդում են աշխարհով մեկ, պատահաբար ընկնելով այդպիսի մի նրբանցք, սովորաբար բացականչում են. «Ի՜նչ գեղեցիկ է»։ Իսկ տիկնայք «ախ» են քաշում. «Ինչպիսի՜ իդիլիա։ Ինչպիսի՜ ռոմանտիկա»։ Բայց այդ իդիլիան ու ռոմանտիկան միայն կարծեցյալ է, որովհետև այսպիսի նրբանցքներում ապրում են շատ քիչ փող ունեցող մարդիկ։ Իսկ նրանք, ովքեր մեծ և հարուստ քաղաքում քիչ փող ունեն, հաճախ դառնում են մռայլ և նախանձ։ Եվ պատճառն այստեղ մարդիկ չեն, այլ հենց նրբանցքները։

Փոքրիկ Թիմը նրբանցքում բնակվեց, երբ երեք տարեկան էր։ Նրա ուրախ, կլորադեմ մայրիկն արդեն մահացել էր, իսկ հայրը ստիպված էր շինարարության վրա աշխատել որպես օժանդակ բանվոր, որովհետև այն ժամանակ աշխատանք ճարելը շատ դժվար էր։ Եվ ահա հայր ու որդի, թողնելով իրենց լուսավոր սենյակը, որի պատուհանները նայում էին ուղիղ քաղաքային զբոսայգուն, բնակվեցին գետաքարով սալարկված նեղ նրբանցքում, որտեղ մշտապես պղպեղի, շամանի և անիսոնի հոտ էր

[1] Տեքստում եղած չափածոն թարգմանել է Յու. Սահակյանը

փչում. այդ նրբանցքում էր գտնվում քաղաքի միակ աղացը, որտեղ աղում էին համեմունքներ։ Շուտով Թիմն ունեցավ լղար խորթ մայր, որը նման էր մկան, և խորթ եղբայր՝ անպատկառ, երեսառած և այնքան գունատ, կարծես երեսին կավիճ քսած լիներ։

Ճիշտ է, Թիմը նոր էր բոլորել իր երեք տարին, բայց ամրակազմ և լիովին ինքնուրույն տղա էր։ Նա կարող էր առանց որևէ կողմնակի օգնության ղեկավարել աթոռակներից սարքած օվկիանոսային նավը և բազմոցի՝ բարձերից սարքած ավտոմեքենան։ Բացի այդ, նա արտակարգ վարակիչ ծիծաղ ուներ։ Երբ նրա մայրիկը դեռ ողջ էր, արտասվելու ասոիճան ծիծաղում էր, լսելով, ինչպես Թիմը, հեռավոր ճանապարհորդության մեկնելով իր բարձերով ու աթոռակներով, ուրախ բացականչում էր. «Տո՜ւ-տո՜ւ-տո՜ւ։ Կա՜նգ առ։ Ամե-րի-կա՜ն է»։ Իսկ խորթ մորից այդ բոլորի համար նա միայն ծեծի էր արժանանում։ Եվ Թիմը չէր կարողանում դա հասկանալ։

Ասենք, խորթ եղբորը՝ Էրվինին, էլ դժվարությամբ էր հասկանում։ Իր եղբայրական սերը Էրվինը բավական տարօրինակ էր դրսևորում. մեկ վառարանի համար բերված տաշեղներն էր շպրտում Թիմի վրա, մեկ էլ մուր, թանաք կամ սալորի ջեմ էր քսում Թիմի երեսին։ Եվ միանգամայն անհասկանալի էր, թե ինչու այդ ամենի համար ոչ թե Էրվինը, այլ Թիմն էր պատժվում։ Բոլոր այդ անհասկանալի բաների պատճառով, որ կատարվում էին նրա հետ նրբանցքում գտնվող նոր բնակարանում, Թիմը դրեթե մոռացել էր ծիծաղել։ Միայն այն ժամանակ, երբ հայրը տանն էր լինում, երբեմն լսվում էր նրա բարակ, վարակիչ, զրնգուն ծիծաղը։

Բայց Թիմի հայրը տանը քիչ էր լինում։ Այն շինարարությունը, ուր նա աշխատում էր, գտնվում էր քաղաքի մյուս ծայրում, և հայրիկի գրեթե ողջ ազատ ժամանակը կլանում էր ճանապարհը։ Նրա երկրորդ ամուսնության գլխավոր պատճառն էլ այն էր, որ Թիմը ամբողջ օրը տանը մենակ չմնա։ Այժմ միայն կիրակի օրերն էր նրան հաջողվում լինել որդու հետ։ Այդ օրերին նա բռնում էր Թիմի ձեռքը և ասում խորթ մորը.

— Մենք գնացինք զբոսնելու։

Բայց իրականում նա Թիմի հետ գնում էր ձիարշավարան և դրաղ էր գալիս որևէ ձիու վրա շատ քիչ, մանր փողով, ինչ հա-

ջողվում էր կնոջից գաղտնի կուտակել շաբաթվա ընթացքում։ Նա երազում էր, որ մի հիանալի օր շատ փող կշահի և ընտանիքի հետ նեղ փողոցից կտեղափոխվի մի լուսավոր բնակարան։ Բայց նա, ինչպես և շատ ուրիշները, իզուր էր հույսը դրել շահելու վրա։ Գրեթե ամեն անգամ տանուլ էր տալիս, իսկ եթե շահում էր, ապա շահածը հազիվ էր բավականացնում մի գավաթ գարեջրի, տրամվայի տոմսի և Թիմի համար մի փոքրիկ տոպրակ սառնաշաքար գնելու համար։

Ձիարշավները Թիմին առանձնապես հաճույք չէին պատճառում։ Ձիերը և հեծյալները սլանում էին այնքան հեռու և այնքան արագ էին անցնում նրանց մոտով, իսկ առջևում միշտ այնքան մարդ էր կանգնած լինում, որ նույնիսկ հոր ուսերին նստած, նա գրեթե ոչինչ չէր հասցնում տեսնել։ Եվ չնայած ձիերն ու հեծյալները չէին հետաքրքրում Թիմին, նա շատ շուտ գլխի ընկավ, թե ինչ բան է ձիարշավը։ Երբ նա հոր հետ տրամվայով վերադառնում էր տուն, ձեռքին բռնած գույնզգույն սառնաշաքարով փոքրիկ տոպրակը, դա նշանակում էր, որ նրանք շահել են։ Իսկ երբ հայրը նրան նստեցնում էր ուսին, և նրանք տուն էին վերադառնում ոտքով, նշանակում էր, որ տանուլ էին տվել։

Թիմի համար միևնույն էր, շահել են, թե տանուլ տվել։ Նրա համար հոր ուսին նստած վերադառնալը նույնչափ հաճելի էր, որքան և տրամվայով վերադառնալը, և ճիշտն ասած, նույնիսկ ավելի հաճելի։ Իսկ ամենաուրախալին այն էր, որ այսօր կիրակի է, և նրանք երկուսով են, իսկ էրվինը և խորթ մայրը հեռո՜ւ-հեռո՜ւ են, այնքան հեռու, կարծես չկան էլ աշխարհում։

Բայց, ցավոք սրտի, բացի կիրակի օրից շաբաթվա մեջ ևս վեց օր կա։ Եվ այդ օրերին Թիմի կյանքն ընթանում էր ինչպես հեքիաթների այն երեխաների կյանքը, որոնք չար խորթ մայր ունեին։ Միայն մի քիչ ավելի վատ, որովհետև հեքիաթը հեքիաթ է, սկսվում է առաջին էջում և վերջանում, դե, ասենք, տասներկուերորդում։ Իսկ փորձիր այդպիսի չարչարանքին դիմանալ ամեն օր, տարվա բոլոր օրերին, այն էլ ոչ թե մեկ տարի, այլ շատ տարիներ իրար ետևից։ Թիմն այնպես էր սովորել համառել, հանդուգն պատասխաններ տալ, պնդել իրենը, որ եթե աշխարհում կիրակիներ չլինեին, նա, պարզապես համառությունից դրդված, անպայման կդառնար իսկական ստահակ և կոպիտ մեկը։ Բայց քանի որ, բարեբախտաբար, կիրակիներ այնուամենայնիվ կան,

նա մնաց սովորական տղա։ Նույնիսկ նրա ծիծաղը հնչում էր առաջվա նման. կարծես բարձրանում էր ինչ-որ խորքերից և վերջանում երջանիկ, շնչասպառ պոռթկումով։

Ճիշտ է, նրա ծիծաղն այժմ ավելի ու ավելի հազվադեպ էր հնչում։ Թիմը դարձել էր ինքնամփոփ և հպարտ, չափազանց հպարտ։ Միայն այդպես նա կարող էր պաշտպանվել խորթ մոր հարձակումներից, որ տեղում էին ամբողջ օրն անդադար, չնայած երբեմն առանց որևէ չար միտումի։

Թիմը մեծ ուրախությամբ սկսեց դպրոց հաճախել։ Այժմ նա վաղ առավոտից մինչև ճաշը հեռու էր իր նրբանցքից, և ոչ թե կես կիլոմետրով, այլ կարծես գտնվում էր աշխարհի մյուս ծայրում։ Այստեղ, իր առաջին ուսումնական տարում նա նորից սկսեց հաճախակի ծիծաղել և երբեմն նույնիսկ այնպե՞ս, որ ուսուցիչը, նայելով նրան, մոռանում էր, թե ինչի համար էր նկատողություն անելու։ Այժմ Թիմն ինքն էլ էր աշխատում հաշտվել խորթ մոր հետ։ Բավական էր, որ խորթ մայրը մի թեթև գովեր նրան այն բանի համար, որ լիքը պայուսակ կարտոֆիլը մենակ էր տուն բերել, և Թիմն իրեն՝ շա՞տ երջանիկ էր զգում, դառնում էր գիջող ու հաշտ, և պատրաստ էր առավոտից մինչև երեկո օգնել նրան։ Բայց հերթական շշպռանքը ստանալով, նա նորից ամփոփվում էր իր մեջ, մռայլվում էր և գոռոզի դիմակ հագնում։ Այդ պահերին նրան մոտենալ անհնարին էր։

Խորթ մոր հետ անընդհատ գժտվելը ազդում էր նրա դպրոցական պարապմունքների վրա։ Չնայած դասարանում Թիմը շատերից ընդունակ էր, հաճախ մյուսներից պակաս գնահատական էր ստանում, որովհետև ուսուցչի պատմելու ժամանակ ուշադիր չէր լսում։ Նա՛և տնային աշխատանքների պատճառով։ Տանը դաս պատրաստելը նրա համար շատ դժվար էր։ Հենց որ Թիմը քարե-տախտակն առած մոտենում էր խոհանոցի սեղանին, հայտնվում էր խորթ մայրը և նրան քշում մանկական սենյակը, որտեղ քնում էին նա և Էրվինը։ Բայց այդ սենյակը նրա խորթ եղբոր թագավորությունն էր, և Էրվինը ոչ մի վայրկյան Թիմին հանգիստ չէր տալիս. մեկ պահանջում էր, որ Թիմը խաղա իր հետ, և ջղայնանում էր, երբ Թիմը հրաժարվում էր, մեկ ամբողջ սեղանով ցրում էր իր կոնստրուկտորի մասերը, և տեղ չէր մնում, որ Թիմը գոնե մի տետր դնի։ Մեկ անգամ համբերությունը բոլորովին կորցրած Թիմը կծեց Էրվինի ձեռքը։ Դա նրան էժան չնստեց։ Տեսնելով

արյուն իր սիրեցյալի ձեռքին, խորթ մայրը սկսեց ողբաձայն ճչալ, որ Թիմը հանցագործ է, խարդախ չարագործ, իսկական ավազակ։ Ընթրիքի ժամանակ հայրը ոչ մի բառ չասաց։ Այդ օրվանից Թիմը դադարեց պայքարել խորթ եղբոր դեմ և դասերը պատրաստում էր, գաղտնաբար սողոսկելով ծնողների ննջարանը։ Բայց Էրվինը լրտեսեց նրան և հայտնեց այդ մասին, իսկ խորթ մոր պատվիրաններից մեկը ասում էր. «Երեխաները մուտք չպետք է գործեն ծնողների ննջարանը»։

Այժմ Թիմը ստիպված էր նորից դասերը պատրաստել Էրվինի ներկայությամբ։ Եթե վերջինս զբաղեցնում էր սենյակում եղած միակ սեղանը, Թիմը նստում էր մահճակալին և տետրը դնում մահճակալի կողքի փոքրիկ պահարանիկի վրա։ Բայց անկախ այն բանից՝ սեղանի մոտ էր նստած Թիմը, թե մի կերպ տեղավորված էր պահարանիկի մոտ, միևնույն է, որքան էլ որ ջանում էր, չէր կարողանում կենտրոնանալ խնդրի վրա։ Միայն շորեքշաբթի օրերը, երբ Էրվինը գնում էր դպրոց երկրորդ հերթի, Թիմին հաջողվում էր դասերը պատրաստել այնպես, ինչպես ինքն էր ուզում։ Իսկ նա ուզում էր, որ ուսուցիչը գոհ մնա իրենից։ Եվ ընդհանրապես նա ուզում էր ողջ աշխարհի հետ հաշտ ու խաղաղ ապրել։

Բայց, որքան էլ ցավալի է, նրա տնային աշխատանքները տարեցտարի ավելի քիչ էին դուր գալիս ուսուցչին։ «Պայծառ գլուխ ունի,— ասում էր ուսուցիչը,— բայց ծույլ է և շատ անկազմակերպ»։ Որտեղի՞ց նա կարող էր կռահել, որ Թիմը ամեն օր ստիպված է նորից ու նորից տեղ նվաճել դասերը պատրաստելու համար։ Թիմը նրան այդ մասին չէր պատմում, նա համոզված էր, որ ուսուցիչը առանց այն էլ ամեն ինչ գիտի։ Եվ այնպես ստացվեց, որ դպրոցն էլ եկավ Թիմին շշնջալու նույն տխուր եզրակացությունը. կյանքը անհասկանալի է, իսկ բոլոր մեծահասակները, բացառությամբ իհարկե հայրիկի, անարդարացի են։

Բայց և այդ միակ արդար մարդը լքեց նրան։ Չորրորդ դասարանում էր (իսկ այդ բոլոր տարիներին նա դժվարությամբ էր դասարանից դասարան փոխադրվում), երբ հայրը զոհվեց շինարարությունում. նրան ճզմել էր հսկայական բարձրությունից ընկած տախտակը։

Դա ամենածանր բանն էր, որ մինչև այժմ պատահել էր Թիմի կյանքում։

Սկզբում Թիմը պարզապես չէր ուզում հավատալ դրան։ Միայն թաղման օրը, երբ կարմրած և լացից ուռած խորթ մայրը Թիմին ապտակեց այն բանի համար, որ վերջինս մոռացել էր մաքրել նրա կոշիկները, Թիմի համար հանկարծ պարզ դարձավ, թե որքան միայնակ է ինքը այժմ։

Չէ որ այդ օրը կիրակի էր։

Այդ օրը Թիմը առաջին անգամ լաց եղավ։ Նա լալիս էր և՛ իր հոր համար, և՛ իր համար, և՛ այն բանի համար, թե որքան վատ է ստեղծված աշխարհը, և արտասուքների միջից նա լսեց, ինչպես խորթ մայրն առաջին անգամ ասաց. «Ներիր ինձ, Թիմ»։

Այն մեկ ժամը, որ գերեզմանատանն էին, կարծես մղձավանջ լիներ, որն ուզում ես հնարավորին չափ շուտ մոռանալ և որից մնում է միայն ինչ-որ անորոշ, սրտաճմլիկ զգացում։ Թիմն ատում էր բոլոր նրանց, ովքեր կանգնած էին իր շուրջը և ինչ-որ բան էին ասում, երգում, աղոթք կարդում։ Նրան ջղայնացնում էր խորթ մոր լալկան շատախոսությունը, որն անմիջապես փոխվում էր ողբի, հենց որ որևէ մեկը մոտենում էր նրան արտահայտելու իր «խորին ցավակցությունը»։ Նա միայնակ էր իր վշտի հետ և չէր ուզում այն կիսել որևէ մեկի հետ։ Եվ հենց որ ամբոխը սկսեց ցրվել, նա անմիջապես փախավ։

Թիմը առանց որևէ նպատակի թափառում էր փողոցներում, և երբ հայտնվեց քաղաքային զբոսայգու մոտ և անցավ այն բնակարանի պատուհանների առջևով, որտեղ բոլորովին փոքր հասակում ինքը ծիծաղում էր և բղավում «Տո՜ւ-տո՜ւ-տո՜ւ», նրան այնպիսի հուսահատություն համակեց, որ քիչ էր մնում ուշագնաց լիներ։

Նրա նախկին սենյակի պատուհանից դուրս նայեց օտար մի աղջիկ, պճնված տիկնիկը ձեռքին և, նկատելով, որ Թիմը իր կողմն է նայում, լեզու ցույց տվեց նրան։ Թիմը արագորեն շարունակեց ճանապարհը։

— Եթե ես շատ, շատ փող ունենայի,— մտածում էր նա, քարշ գալով փողոցներում,— ես մի մեծ բնակարան կվարձեի, ես այնտեղ առանձին սենյակ կունենայի, և ամեն օր էրվինին ձեռքի ծախսի համար կտայի սիրտն ուզածի չափ։ Իսկ մայրիկը կկարողանար իր համար գնել ինչ որ կամենար։

Բայց դա միայն երազանք էր, և Թիմն այդ գիտեր։

Ինքն էլ դա չնկատելով, նա քայլերն ուղղեց ձիարշավարանի կողմը, որտեղ մի ժամանակ հայրիկի հետ անց էր կացնում երջանիկ կիրակիները։ Այն ժամանակ, երբ հայրը դեռ կենդանի էր։

Թերթ երկրորդ

ՎԱՆԴԱԿԱՎՈՐ ԶԳԵՍՏՈՎ ՊԱՐՈՆԸ

Թիմը հասավ ձիարշավարան, երբ առաջին պտույտն արդեն վերջանալու վրա էր։ Հանդիսականները գոռգոռում էին և սուլում, ավելի ու ավելի բարձրաձայն և հաճախակի գոչելով միայն մի անուն՝ «Քամի»։

Թիմը կանգնած էր և հազիվ էր շնչում. նախ նա վազելով էր եկել, և երկրորդը՝ նրան հանկարծ թվաց, որ ինչ-որ տեղ մոտերքում, այդ գոռգոռացող և ծափահարող մարդկանց մեջ կանգնած է և իր հայրը։ Թիմի մոտ հանկարծ այնպիսի զգացում առաջացավ, որ ինքն այստեղ իր տանն է։ Դա այն տեղն էր, որտեղ նա միշտ հոր հետ մենակ էր մնում։ Առանց խորթ մոր և առանց էրվինի։ Բոլոր կիրակիները, որ նա անց էր կացրել հոր հետ, նա կանգնած էր եղել նույն ամբոխի մեջ, աղմուկի և բացականչությունների մեջ։ Ու հանկարծ մի զարմանալի հանգստություն, գրեթե ուրախություն համակեց Թիմին։ Եվ երբ ցնծացող ամբոխը բազմաձայն հանկարծ բացականչեց. «Քամի՜ն»— Թիմը նույնիսկ ծիծաղեց իր զրնգուն, կարկաչուն ծիծաղով։ Նա հիշեց, թե ինչպես հայրը մեկ անգամ ասաց. ««Քամին» դեռ շատ երիտասարդ է, Թիմ։ Բայց հիշիր, Թիմ, կգա մի օր, երբ նրա մասին կխոսեն»։

Եվ այսօր նրա մասին խոսեցին։ Բայց հայրիկն այդ այլևս չի լսի։ Թիմն ինքն էլ չգիտեր, թե ինչու ծիծաղեց, բայց այդ մասին նա չէր էլ մտածում։ Նա դեռ այն հասակում չէր, երբ մարդիկ շատ են մտածում իրենց անձի և իրենց արարքների մասին։

Ինչ-որ մեկը, որ կանգնած էր Թիմից ոչ հեռու, լսելով նրա ծիծաղը կտրուկ շրջեց գլուխը և սկսեց ուշադիր դիտել նրան, մտախոհ շոյելով իր երկար ծնոտը։ Հետո, կարծես անակնկալ վճիռ կայացնելով, ուղղվեց ճիշտ դեպի Թիմը, բայց, մոտենալով նրան, արագ անցավ մոտով, կոխրճելով նրա ոտքը։

— Ներիր, փոքրիկ,— ասաց նա առանց կանգ առնելու,— հանկարծ եղավ։

— Ոչինչ,— ժպտաց Թիմը,— միևնույն է, կոշիկներս կեղտոտ են։

Այդ ասելով, նա նայեց իր ոտքերին և հանկարծ կանաչների մեջ նկատեց հինգ մարկ արժողությամբ մի փայլուն դրամ։ Մարդը արագ քայլերով ավելի ու ավելի էր հեռանում, իսկ մոտերքում այլևս ոչ ոք չկար։ Թիմը արագորեն ոտքը դրեց դրամի վրա, նայեց շուրջը և, ձևացնելով, թե ուզում է կոշիկի կապը կապել, գաղտնաբար վերցրեց դրամը և խցկեց գրպանը։

Հետո, աշխատելով քայլել որքան հնարավոր է դանդաղ, նա գնաց դեպի ելքը։ Հանկարծ մի երկար նիհար մարդ կանգնեցրեց նրան և հարցրեց.

— Հը, ի՞նչ է, Թիմ, ուզո՞ւմ ես որևէ ձիու վրա դնել։

Տղան շփոթված նայեց անծանոթին։ Նա չնկատեց էլ, որ դա այն նույն մարդն էր, որն ընդամենը մի քանի րոպե առաջ կոխբրճել էր իր ոտքը։ Անծանոթի բերանը կարծես մի նեղլիկ գիծ լիներ, քիթը՝ բարակ ու կեռ, իսկ քթի տակ՝ սև բեղեր։ Ճակատի վրա ցածր իջեցված վանդակավոր գլխարկի տակից նայում էին ծակող, բաց կապտավուն անգույն աչքերը։

Երբ այդ մարդը հանկարծ դիմեց Թիմին, վերջինս զգաց, որ իր կոկորդը կարծես չորացավ։

— Ես... ես փող չունեմ...— վերջապես արտասանեց նա, կմկմալով։

— Ոչ, ունես։ Հինգ մարկ,— ասաց անծանոթը։ Եվ կարծես, ի միջի այլոց, ավելացրեց.— Ես պատահմամբ տեսա, որ դու դրամ գտար։ Եթե դու պատրաստվում ես որևէ ձիու վրա դնել, վերցրու այս անդորրագիրը։ Ես արդեն լրացրել եմ։ Միանգամայն հաստատ կշահես։

Թիմը լսում էր նրան մեկ կարմրելով, մեկ գունատվելով, հետո աստիճանաբար հանգստացավ, և նրա դեմքը նորից ընդունեց իր թուխ երանգը։ (Դեմքի գույնը նա ժառանգել էր մորից)։

— Բայց, կարծեմ, երեխաներին չի թույլատրվում ձիարշավում խաղալ,— ասաց նա և նորից կարկամեց։

Իսկ անծանոթը չէր հեռանում նրանից։

— Այս ձիարշավարանը մեկն է այն սակավաթիվ ձիարշավարաններից, որտեղ այնքան էլ խիստ չեն հետևում այդ կանո-

նին։ Չէ, ոչ թե պաշտոնապես թույլատրվում է, այլ պարզապես մատների արանքից են նայում դրան։ Ուրեմն, ի՞նչ ես մտածում իմ առաջարկի մասին, Թիմ։

— Ես ձեզ բոլորովին չեմ ճանաչում,— կամաց պատասխանեց Թիմը։ Միայն այժմ նա նկատեց, որ պարոնը իր անունն է տալիս։

— Բայց ես քո մասին շատ բան գիտեմ,— հայտարարեց անծանոթը,— ես ճանաչում էի քո հորը։

Եվ դա ամեն ինչ որոշեց։ Ճիշտ է, Թիմի գլուխը մի տեսակ չէր մտնում, որ իր հայրը ծանոթ լիներ այսպիսի տարօրինակ, լավ հագնված պարոնի հետ, բայց քանի որ անծանոթը գիտի իր անունը, ուրեմն, ինչ-որ ձևով ծանոթ է եղել իր հոր հետ։ Մի քիչ էլ տատանվելուց հետո Թիմը վերցրեց լրացված անդորրագիրը և, դրպանից հանելով իր դրամը, գնաց դեպի դրամարկղը։ Այդ պահին բարձրախոսը հայտարարեց, որ սկսվում է երկրորդ պտույտը։

Անծանոթը բղավեց.

— Շտապիր, քանի պատուհանը չեն փակել։ Այ, կտեսնես, ես քեզ երջանկություն կբերեմ։

Թիմը դրամը և անդորրագիրը մեկնեց տոմսավաճառին, ստացավ պոկվող կտրոնը և շուռ եկավ, աչքերով փնտրելով վանդակավոր կոստյումով պարոնին։ Բայց նա անհետացել էր։

Երկրորդ պտույտը վերջացավ և այն ձին, որի վրա դրել էր Թիմը, ֆինիշին հասավ առաջինը, երեք մարմնաչափ առաջ անցնելով մյուսից։

Թիմը պատուհանից ստացավ իր շահույթը. այդքան թղթադրամ նա դեռ երբեք չէր տեսել։ Եվ նորից մեկ կարմրելով, մեկ գունատվելով, բայց այս անգամ ուրախությունից ու հպարտությունից, Թիմը կանգնած էր տոմսարկղի մոտ և երջանկությունից փայլող աչքերով բոլոր հետաքրքրասերներին ցույց էր տալիս շահած դրամը։

Ուրախությունն ու վիշտը միշտ կողք-կողքի են ապրում. Թիմը նորից հանկարծ հիշեց հորը, որին այսօր թաղել էին. նա երբեք այդքան փող չէր շահել։ Արցունքներն իրենք իրենց հոսեցին Թիմի դեմքով, և նա հեկեկաց բոլորի աչքի առաջ։

— Հեյ, տղա, նա, ում բախտն այդպես բերել է, էլ չպիտի նվնվա,— հանկարծ նրա ականջի վերևում հնչեց խռպոտ կոկորդային մի ձայն։

Թիմը արտասուքների միջից տեսավ ճմրթված կոստյումով և ճմրթված դեմքով մեկին։ Նրանից ձախ կանգնած մի շիկահեր լողլող իր հասակի բարձունքից ուշադիր զննում էր Թիմին։ Աջ կողմից կանգնած էր ցածրահասակ, ճաղատ գլխով, նրբաճաշակ հագնված մի պարոն։ Նա համակրանքով էր նայում Թիմին։

Թվում էր, թե նրանք երեքն էլ միասին էին. համենայն դեպս, երեքով միաբերան հարցրին, արդյոք Թիմը չի՞ ցանկանա իրենց հետ լիմոնադ խմել շահույթի առթիվ։

Թիմը, այդպիսի բարյացակամությունից ոչ պակաս զարմացած, քան իրեն բաժին ընկած երջանկությունից, գլխով համաձայնության նշան արեց և, մեկ անգամ էլ հեծկլտալով, ասաց.

— Ես կուզենայի նստել այ այն սեղանի մոտ, որ դրված է այգում։

Քանի՞ անգամ էր նա հայրիկի հետ նստել այդտեղ և լիմոնադ խմել։

— Լավ, պստլիկ, այգում ես ուզում՝ թող այգում լինի,— նորից միաձայն ասացին երեքը։

Եվ մեկ րոպե հետո նրանք արդեն նստած էին Թիմի հետ փարթամ շագանակենու ստվերում դրված սեղանի շուրջը։

Վանդակավոր զգեստով պարոնը, որը Թիմին երջանկություն բերեց, այլևս չէր հայտնվում, և շուտով Թիմը բոլորովին մոռացավ նրա մասին, մանավանդ որ երեք նոր բարեկամները իրենց համար գարեջուր, իսկ Թիմի համար լիմոնադ պատվիրելով, սկսեցին զարմանահրաշ ֆոկուսներով զվարճացնել Թիմին։ Շեկ լողլողը, իր քթին դնելով գարեջրով բաժակը, երկար պտտում էր գլուխը, չթափելով ոչ մի կաթիլ գարեջուր։ Ճմրթված կոստյումով մարդը ամեն անգամ խաղաթղթերի կապոցից հանում էր հենց այն խաղաթուղթը, որը պատահականորեն ասում էր Թիմը, իսկ ցածրահասակ, ճաղատ գլխով պարոնը ամեն տեսակ ծիծաղելի բաներ էր անում Թիմի դրամներով։ Նա այդ դրամները փաթաթում էր թաշկինակի մեջ, թաշկինակը մի փոքր կծիկ էր դարձնում, հետո ուղղում, հարթում էր և... թաշկինակը դատարկ էր լինում։

Ճաղատը քրքջում էր և ասում.

— Իսկ այժմ, տղաս, ձեռքդ քո բաճկոնի ձախ գրպանը տար։

Թիմը ձեռքը մտցնում էր գրպանը և զարմանքով այնտեղ հայտնաբերում իր բոլոր փողերը։

Այո, դա զարմանալի կիրակի էր։ Դեռ երեք ժամ առաջ անչափ դժբախտ Թիմը մենակ թափառում էր քաղաքով, իսկ այժմ նա ծիծաղում էր, ծիծաղում էր այնպես, ինչպես վաղուց չէր ծիծաղել, նույնիսկ մի քանի անգամ քիչ մնաց խեղդվի լիմոնադից։ Նոր ընկերները շատ դուր էին գալիս նրան։ Նա հպարտ էր, որ իսկական բարեկամներ էր գտել, այն էլ այդպիսի հազվագյուտ մասնագիտությունների տեր. պարզվեց, որ «ճմրթվածը» դրամներ դրոշմող է, շիկահերը՝ պայուսակագործ, իսկ ճաղատը՝ ինչոր դրամարկղային գրքերի մասնագետ (Թիմը դա ինչպես հարկն է չհասկացավ)։

Երբ Թիմը փորձեց մեծահոգաբար վճարել մատուցողի բերած հաշիվը, երեքն էլ, ժպտալով, վճռականորեն ձեռքները թափ տվեցին նրա վրա։ Ցածրահասակ, ճաղատ պարոնը ինքը վճարեց ամեն ինչի համար, այդ թվում նաև Թիմի խմած լիմոնադի համար և, երբ Թիմը բաժանվեց իր նոր բարեկամներից, նրա գրպանում էր ողջ շահույթը։

Թիմն արդեն պատրաստվում էր ցատկել տրամվայի մեջ, երբ երես առ երես հանդիպեց վանդակավոր հագուստով պարոնին։ Առանց որևէ նախաբանի նա ասաց.

— Ախ, Թիմ, Թիմ, այ թե հիմար տղա ես եղել։ Հիմա դու ոչ մի կոպեկ չունես։

— Սխալվում եք, պարոն,— ծիծաղեց Թիմը։— Ահա իմ շահույթը։

Նա գրպանից հանեց մի կույտ դրամ, ցույց տվեց անծանոթին և, մի քիչ լռելուց հետո, ավելացրեց.

— Դրանք ձեզ են պատկանում։

— Ք՞ո ձեռքի այդ փողերը պարզապես գույնզգույն թղթի կտորներ են։ Դրանք ոչ մի արժեք չեն ներկայացնում։

— Բայց ես դրանք ստացել եմ դրամարկղո՞ւմ,— բացականչեց Թիմը։— Դա միանգամայն ճիշտ է։

— Բարեկամս, դրամարկղում դու իսկական դրամ ես ստացել։ Իսկ այն եռյակը, որի հետ դու նստած էիր պարտեզում, քո դրամները պարզապես փոխեց կեղծ դրամներով։ Ես նրանց լավ եմ ճանաչում։ Ափսոս որ ես չափազանց ուշ տեսա քեզ նրանց հետ։ Եվ հենց որ ուզեցի մոտենալ քեզ, նրանք ծլկեցին։ Չէ՞ որ նրանք սովորական խաբեբաներ են։

— Սխալվում եք, պարոն։ Նրանցից մեկը պայուսակագործ է...

— Իհարկե, պայուսակներ է գողանում։

— Պայուսակներ է գողանո՞ւմ,— շփոթված հարցրեց Թիմը։— Հապա ի՞նչ է այդ դեպքում անում դրոշմողը։

— Կեղծ դրամներ է տպում։

— Իսկ երրորդը՝ դրամարկղային գրքերի մասնագե՞տը։

— Երրորդն էլ կեղծ կտրոններ է վաճառում այստեղ։ Մի խոսքով, խարդախություններ է անում ձիարշավարանում։

Ոչ, Թիմը չէր ուզում դրան հավատալ։ Ու այդ ժամանակ վանդակավոր զգեստով պարոնը իր դրամապանակից մի թղթադրամ հանեց և այն համեմատեց Թիմի թղթադրամի հետ։ Եվ ճիշտ որ, Թիմի ոչ մի թղթադրամի վրա, որքան էլ Թիմը դրանք նայում էր լույսի դիմաց, հնարավոր չէր ջրանշաններ հայտնաբերել։

Թիմը, ընկճված, համաձայնվեց։ Եվ հանկարծ, թղթերը գետին շպրտելով, սկսեց կատաղությամբ տրորել դրանք։ Մոտից անցնող մի ծերուկ զարմացած նայեց նախ Թիմին, հետո դրամներին, հետո վանդակավոր զգեստով մարդուն և հանկարծ վազելով փախավ, կարծես հանդիպել էր սատանային։

Վանդակավոր զգեստով պարոնը մի քիչ լռեց, հետո գրպանից հանեց հինգ մարկ արժողությամբ մի դրամ և, մեկնելով ապշած Թիմին, առաջարկեց նրան հաջորդ կիրակի օրը նորից գալ այստեղ։ Հետո նա արագ հեռացավ։

«Հետաքրքիր է, թե ինչո՞ւ նա ինքը ձիարշավում չի խաղում»,— մտածեց Թիմը։ Բայց անմիջապես էլ մոռացավ այդ հարցը և, դրամը գրպանը դնելով, ոտքով գնաց տուն՝ իր նրբանցքը։ Կեղծ դրամները այդպես էլ մնացին գետնին թափված։

Խորթ մայրը, որքան էլ տարօրինակ է, այս անգամ չծեծեց Թիմին, չնայած որ նա փախել էր թաղումից և այդքան ուշ էր վերադարձել տուն։ Նա պարզապես Թիմին ընթրիք չտվեց և, առանց որևէ բան ասելու, անմիջապես ուղարկեց քնելու։ Իսկ էրվինին այսօր թույլատրվել էր ավելի ուշ պառկել և մնալ հյուրերի հետ. հյուրերը լուռ, անբարյացակամ հայացքներով նայեցին Թիմի ետևից։

Այդ տարօրինակ կիրակի օրվան հետևեց երկար, տաղտկալի շաբաթը։ Թիմը, ինչպես միշտ, ապտակներ և հարվածներ էր

ստանում տանը և սովորականից շատ դիտողություններ և զգուշացումներ՝ դպրոցում։ Եվ շարունակ մտածում էր՝ գնա՞ կիրակի օրը ձիարշավարան, թե մնա տանը։ Դրամը նա պահել էր, խցկել էր հարևան տան պատի ճեղքի մեջ, որ հանկարծ էրվինը չգտնի։ Եվ ամեն անգամ, անցնելով այդ տան մոտով, նա ակամա ժպտում էր. այն միտքը, որ միգուցե ձիարշավարանում նորից իր բախտը կբանի, գաղտնի ուրախություն էր պատճառում նրան։

Թերթ երրորդ

ՇԱՀԱԾԸ ԵՎ ՏԱՆՈՒԼ ՏՎԱԾԸ

Երբ հասավ երկար սպասված կիրակին, Թիմն արդեն առավոտից գիտեր, որ ճաշից հետո կգնա ձիարշավարան։ Հենց որ հյուրասենյակի հին ժամացույցը զարկեց երեք անգամ, նա դուրս սողոսկեց դռնից, հարևան տան պատի արանքից հանեց իր դրամը և, որքան ուժ ուներ, սլացավ դեպի ձիարշավարան։

Մուտքի մոտ նա թափով դիպավ մեկին, և պարզվեց, որ այդ մարդը ոչ այլ ոք է, քան վանդակավոր զգեստով պարոնը։

— Հոպ-լյա՜,— բացականչեց վանդակավոր զգեստով պարոնը։— Տեսնում եմ, որ անհամբեր սպասել ես այս օրվան։

— Վա՜յ, ներեցեք խնդրեմ,— շնչակտուր ասաց Թիմը։

— Ոչինչ, պստլիկ, իսկ ես այստեղ քեզ եմ սպասում։ Ահա, վերցրու անդորրագիրը։ Հինգ մարկը հո չե՞ս կորցրել։

Թիմը օրորեց գլուխն ու գրպանից հանեց դրամը։

— Ապրե՛ս։ Դե մոտեցիր պատուհանին։ Եթե շահես, ինձ կսպասես այստեղ, մուտքի մոտ։ Ես ուզում եմ մի բանի մասին խոսել քեզ հետ։

— Լավ։

Թիմը նորից դրեց այն ձիու վրա, որի անունը անդորրագրում գրել էր անծանոթը, և, երբ արշավը վերջացավ, պարզվեց, որ, ինչպես և անցյալ կիրակի, մի ամբողջ կույտ դրամ է շահել։

Այս անգամ նա արագ հեռացավ դրամարկղից ոչ ոքի ցույց չտալով իր շահույթը։ Թղթադրամները նա դրեց բաճկոնի ներսի գրպանը և, աշխատելով դեմքին հաղորդել լիակատար անտարբերության արտահայտություն, ցանկապատի արանքից դուրս

«ՄԻՆԻՄԱՐ ՍԵՓԱՍՏԱՑԻ»
Երթեկան Համալիր
ԵՐԵՎԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

ձկավ ձիարշավարանից։ Նա չէր ուզում հանդիպել վանդակավոր զգեստով պարոնին. այդ մարդուն տեսնելիս նա ամեն անգամ իրեն լավ չէր զգում։ Եվ հետո, չէ որ անծանոթն ինքն էր Թիմին նվիրել անդորրագիրն ու դրամը։ Ուրեմն, Թիմը նրան ոչինչ պարտք չէ։

Անմիջապես ձիարշավարանի ետևում մարգագետին էր, և այդտեղ աճում էին մի քանի բարձր կաղնիներ։ Թիմը պառկեց ամենաբարձր կաղնու տակ և սկսեց մտածել, թե ինչպես վարվի իր հարստության հետ։ Լավ կլիներ, եթե այն նպաստեր, որ ինքը բարեկամանար բոլորի հետ՝ խորթ մոր և եղբոր, ուսուցչի և դրպրոցական ընկերների հետ։ Իսկ հոր գերեզմանի վրա մարմարե շիրմաքար կդնի և նրա վրա ոսկե տառերով կգրի. «Քո որդի Թիմից, որը քեզ երբեք չի մոռանա»։

Եթե փողն ավելանա, Թիմն իր համար այնպիսի հեծանիվ կգնի, ինչպիսին ունի հացթուխի տղան, ազդանշանով և փչվող անիվներով։

Նա այնքան երազե՞ց ու երազե՞ց, մինչև վերջապես քնեց։ Վանդակավոր զգեստով պարոնի մասին Թիմը բոլորովին չէր հիշում։ Եվ եթե հանկարծ Թիմը հիմա նրան տեսներ, շատ կզարմանար. տարօրինակ անծանոթը զրուցում էր այն երեք խարդախների հետ, որոնք անցյալ կիրակի օրը Թիմին լիմոնադ էին հյուրասիրում։

Բայց, բարեբախտաբար, կամ ավելի ճիշտ՝ դժբախտաբար, Թիմն այդ չէր տեսնում։ Նա քնած էր։

Թիմն արթնացավ մի կտրուկ ձայնից՝ դա վանդակավոր զգեստով պարոնի ձայնն էր։ Նա կանգնած էր այստեղ, կաղնու տակ, Թիմի կողքին։ Սևեռուն հայացքով նայելով Թիմին, նա ոչ այնքան սիրալիր հարցրեց Թիմին.

— Դե, քունդ առա՞ր։

Թիմը կարծես դեռևս լրիվ չարթնացած, գլխով արեց, ապա վեր կացավ և, համենայն դեպս, դրսից շոշափեց իր բաճկոնի ներսի գրպանը։ Գրպանը նրան տարօրինակ դատարկ թվաց։ Թիմը արագ ձեռքը տարավ գրպանը և հանկարծ վերջնականապես արթնացավ. գրպանը իրոք դատարկ էր, փողերն անհետացել էին։

Վանդակավոր զգեստով պարոնը հեգնաբար կկոցեց աչքերը։

— Իսկ փո-ո-ղերը ձեզ մո՞տ են,— կակազելով հարցրեց Թիմը։

— Ո-ո՛չ, քնկոտ։ Փողերը այն երեք խարդախներից մեկի մոտ են, որոնց հետ դու քեֆ էիր անում անցյալ կիրակի։ Նա հետևել է քեզ։ Երևում է, իմ բախտից է. ես միշտ շատ ուշ եմ հասնում։ Հենց որ նա ինձ տեսավ, անմիջապես փախավ։ Միայն այդպես ես կարողացա քեզ գտնել։

— Ո՞ւր փախավ։ Պետք է ոստիկան կանչել։

— Ես այնքան էլ չեմ համակրում այդ աղավնյակներին...

Անծանոթը խոժոռեց դեմքը։

— Իմ կարծիքով, նրանք շատ վատ են դաստիարակված։ Եվ, միևնույն է, գողը արդեն շատ հեռու փախած կլինի։ Իսկ հիմա վեր կաց, եղբայր, և գնա տուն։ Հաջորդ կիրակի նորից կգաս։

— Ես, երևի, էլ չեմ գա,— ասաց Թիմը։— Այդպես չի լինում, որ մարդու բախտը միշտ բերի։ Դա հայրս է ինձ ասել։

— Երջանկությունն ու դժբախտությունը միշտ երեք անգամ են գալիս։ Չե՞ս լսել այդ ասացվածքը։ Իսկ դու երևի ուզում էիր քեզ համար մի բան գնել, չէ՞։

Թիմը գլխով արեց։

— Տեսնո՞ւմ ես։ Եվ դու քո բոլոր ուզածները կունենաս, եթե մյուս կիրակի նորից գաս այստեղ և ինձ հետ մի գործարք կնքես։

Անծանոթը նայեց ժամացույցին և հանկարծ շտապեց.

— Մինչև մյուս կիրակի,— արագ ասաց նա։ Եվ շտապ հեռացավ։ Թիմը դանդաղ գնաց դեպի իր նրբանցքը։ Նրա գլխում ամեն ինչ խառնվել էր իրար։

Խորթ մայրը, ինչպես միշտ, ծեծեց նրան. խորթ եղբայրը, ինչպես միշտ, չարախնդում էր։

Եվ նորից ձգվեց երկար շաբաթը։

Բայց այդ շաբաթ Թիմը չէր վհատված։ Ճիշտ է, վանդակավոր զգեստով պարոնին նա այնքան էլ չէր վստահում, բայց հաստատ որոշեց գործարք կնքել նրա հետ։ Որովհետև գործարքը, մտածում էր Թիմը, շատ պատկառելի և օրինական բան կլինի, և ոչ թե գտած դրամով շահած հարստություն։ Գործարքի դեպքում յուրաքանչյուր կողմը ինչ-որ բան է տալիս և փոխարենը ինչ-որ բան ստանում։ Եվ յուրաքանչյուրը շահում է։ Իհարկե, կարող է տարօրինակ թվալ, որ հինգերորդ դասարանցի տղան դատողու-

թյուններ էր անում այդպիսի բաների մասին, բայց նեղ նրբանցքներում, որտեղ մեծահասակները ստիպված են կամա թե ակամա հաշվել յուրաքանչյուր կոպեկը, երեխաները վաղ են սկսում լուրջ վերաբերվել դրամին։

Կիրակի օրվա մասին մտածելը Թիմին օգնում էր հաղթահարելու շաբաթվա բոլոր անախորժություններն ու տհաճությունները։ Երբեմն նա մտածում էր, որ գուցե հայրն է խնդրել վանդակավոր զգեստով պարոնին հետևել որդուն և օգնել նրան, եթե որևէ բան պատահի։ Բայց հետո մտածում էր, որ հայրը այդպիսի հանձնարարության համար ավելի համակրելի մեկին կընտրեր։

Այսպես, թե այնպես, Թիմը լրիվ պատրաստ էր անծանոթի հետ գործարք կնքելուն, նույնիսկ ավելին, այդ գործարքը նրան շատ ուրախացնում էր։ Նա նորից սկսեց հաճախ ծիծաղել իր նախկին մանկական ծիծաղով, և նրա ծիծաղը դուր էր գալիս բոլորին։ Եվ հանկարծ նա ձեռք բերեց բազմաթիվ բարեկամներ, շա՛տ ավելի, քան երբևէ ունեցել էր։

Տարօրինակ է, ի՞նչ ասես, որ նա չէր անում առաջ, որպեսզի բարեկամներ նվաճի, որքա՞ն ջանք էր գործադրում։ Կամավոր կերպով ստանձնում էր ամեն տեսակ հանձնարարություններ, օգնում էր բոլորին և ամեն ինչում... Իսկ այժմ յուրաքանչյուրն ուզում էր դառնալ նրա բարեկամը։ Եվ հավատացեք, դրա համար նա ոչ մի ջանք չէր գործադրում, միայն ծիծաղում էր։ Այժմ պատրաստակամությամբ ներում էին այն ամենը, ինչի համար առաջ բարկանում էին նրա վրա։ Մեկ անգամ, օրինակ, թվաբանության դասի ժամանակ Թիմը հիշեց, թե ինչպես շտապելուց կպավ վանդակավոր զգեստով պարոնին և հանկարծ ծիծաղեց իր զրնգուն, կլկլան ծիծաղով։ Եվ անմիջապես բերանը փակեց ձեռքով։ Բայց ուսուցիչը բոլորովին էլ չբարկացավ։ Ծիծաղը հնչեց այնքան ուրախ և զվարճալի, որ վարակեց ամբողջ դասարանին, ինչպես նաև ուսուցչին։ Հետո ուսուցիչը մատը տնկեց վեր և ասաց. «Բոլոր պայթյուններից ես ընդունում եմ միայն ծիծաղի պայթյունը, Թիմ։ Այն էլ ոչ դասի ժամանակ...»։

Այդ օրվանից Թիմին կոչեցին «պայթեցնող», և տղաներից շատերը չէին ուզում դասամիջոցներին, նրանից բացի, որևէ մեկի հետ խաղալ։

Նույնիսկ խորթ մոր և Էրվինի վրա էլ էր ազդում Թիմի վարակիչ ծիծաղը. հիմա նրանք էլ էին երբեմն ծիծաղում։

Մի խոսքով, Թիմի հետ ինչ-որ անհասկանալի բան էր կատարվում, և դրա պատճառը վանդակավոր զգեստով պարոնն էր։ Բայց Թիմը այդ մասին չէր մտածում։ Որքան էլ մեծ էր դառը փորձը, որ նա ձեռք էր բերել ապրելով նեղ նրբանցքում, այնուամենայնիվ նա շարունակում էր մնալ բարեհոգի ու միամիտ տղա։ Թիմը չէր նկատում, թե որքան է իր ծիծաղը դուր գալիս մարդկանց. նա մոռացել էր, որ հոր մահվան օրից բոլորից թաքցնում էր իր ծիծաղը այնպես, ինչպես ժլատը թաքցնում է իր գանձերը։ Նա պարզապես մտածում էր, թե ձիարշավարանում տեղի ունեցած բոլոր չարաբաստիկ դեպքերից հետո ինքը դարձել է շատ ավելի խելոք և պարզապես սովորել է մարդկանց հետ լեզու գտնել։ Բայց եթե նա այն ժամանակ հասկանար, թե որքան թանկ է իր ծիծաղը, հավանաբար, կխուսափեր շատ ու շատ դառը փորձություններից։

Մի օր վերադառնալով դպրոցից, Թիմը փողոցում հանդիպեց վանդակավոր զգեստով պարոնին։ Ճիշտ մեկ րոպե դրանից առաջ Թիմը հետևում էր քնած կատվի ականջի վերևում պտտվող բզեզին. բզեզը, փոքր ինքնաթիռի պես, վայրէջքի տեղ էր որոնում։ Դա այնքան զվարճալի էր թվում, որ Թիմը բարձրաձայն ծիծաղեց։ Բայց հենց որ նա ճանաչեց ձիարշավարանի անծանոթին, ամբողջ ուրախությունը կարծես անմիջապես անհետացավ։ Քաղաքավարի գլուխ տալով, նա ասաց.

— Բարի օր։

Սակայն անծանոթը ձևացրեց, թե չնկատեց Թիմին։ Անցնելով Թիմի մոտով, նա միայն շշնջաց.

— Փողոցում մենք անծանոթ ենք։

Եվ, շրջվելով, շարունակեց ճանապարհը։

«Երևի գործարք կնքելու համար այդպես է պետք»,— մտածեց Թիմը։ Եվ անմիջապես նորից ծիծաղեց, որովհետև կատուն արթնացավ և վախեցած թափ տվեց այն ականջը, որի վրա նստած էր բզեզը։ Փոքրիկ ինքնաթիռը չարացած բզզացնելով թռավ, իսկ Թիմը, սուլելով, գնաց իր նրբանցքը։

Թերթ չորրորդ

ՎԱՃԱՌՎԱԾ ԾԻԾԱՂԸ

Այդ կիրակի օրը Թիմը ուզում էր որքան հնարավոր է շուտ ծլկել տնից և ավելի շուտ գալ ձիարշավարան, բայց հրեքի կեսին խորթ մոր հայացքը պատահմամբ ընկավ պատին կախված օրացույցին, և նա հանկարծ հիշեց, որ այդ օրը իր ամուսնության տարեդարձն է. հենց այդ օրն էր նա ամուսնացել Թիմի հոր հետ։ Նա մի քիչ լաց եղավ (այժմ դա հաճախ էր պատահում) և հանկարծ պարզվեց, որ չափազանց շա՜տ գործ կա անելու. հարկավոր է ծաղիկներ տանել գերեզմանին, խանութից տորթ գնել, սուրճ աղալ և հարևանուհուն հրավիրել, զգեստը փոխել, հետևաբար, նախ պետք է զգեստը հարդուկել. Թիմին հրամայված էր մաքրել բոլոր կոշիկները, իսկ էրվինը պետք է գնար ծաղիկներ գնելու։

Թիմը շատ էր ուզում, որ իրեն հանձնարարեն ծաղիկներ տանել հոր գերեզմանին։ Եթե ինքը շտապեր, ապա կհասներ մինչև ձիարշավի սկիզբը։ Բայց երբ խորթ մոր տրամադրությունը որևէ պատճառով ընկած էր լինում (իսկ այժմ նա միշտ վատ տրամադրություն էր ունենում), նա ոչ մի առարկություն չէր հանդուրժում. եթե նրան հակաճառում էին, նրա տրամադրությունն ավելի էր ընկնում, և նա բարձրաձայն լալով փլվում էր բազմոցին, այնպես որ ի վերջո ստիպված էին լինում զիջել նրան։ Դրա համար էլ Թիմը չփորձեց էլ առարկել նրան և հնազանդ գնաց խանութ։

— Ետնամուտքի դուռը ծեծիր։ Երեք անգամ։ Ասա, որ շատ կարևոր գործ է։

Խմորեղենի խանութի տիրուհին Թիմին դիմավորեց մռայլ դեմքով, բայց Թիմին դա չշփոթեցրեց («Ինչքան կուզի թող փընթփընթա... Տե՜ս հա, դատարկ ձեռքով չվերադառնաս... Տեղիցդ չշարժվես մինչև պառավ վհուկը ինչ որ պետք է չտա...»)։ Թիմը խորթ մոր պատվերը ճշտիվ հաղորդեց («Վեց կտոր ընկույզով տորթ... Թող ամենաթարմից կտրի»)։

Սակայն, դժբախտաբար, խմորեղենի խանութի տիրուհուց այնպիսի պատասխան ստացավ, որին խորթ մայրը նրան բոլորո-

վին չէր նախապատրաստել։ Ֆրաու Բեբերը, այդպես էր խանութի տիրուհու անունը, ասաց.

— Նախ պետք է վճարել հին պարտքը, որից հետո ես կսկսեմ նորից պարտքով տալ։ Այդպես էլ ասա տանը։ Ով որ փող չունի, կարող է տորթ չուտել։ Քսանվեց մարկի կաթնահո՞ւնց առնել։ Հետաքրքի՞ր է, ով է ձեզ մոտ այդքան ուտում։ Նույնիսկ ջրհան կայանի դիրեկտորի համար այդքան չեն պատվիրում։ Իսկ նրանց ընտանիքում թիվածք սիրում են, ո՞վ, ո՞վ, իսկ ես դա լա՞վ գիտեմ։

Թիմը զարմանքից պապանձվել էր։ Ճիշտ է, ժամանակ առ ժամանակ խորթ մայրը նրան մի կտոր կարկանդակ կամ մեղրաբլիթ տալիս էր։ Բայց... քսանվե՞ց մարկի կաթնահունց։ Չէ որ դա սարի չափ կլինի։ Կարկանդակնե՞ր, մեղրաբլիթնե՞ր։ Միթե խորթ մայրը այդ բոլորը ուտում է իրենից և Էրվինից գաղտնի, երբ հարևանուհին գալիս է նրա մոտ սուրճ խմելու։ Նա գիտեր, որ բարեկամուհիները հաճախ զրուցում են խոհանոցում, երբ ինքը և Էրվինը դպրոց են գնում։ Բայց գուցե Էրվի՞նն է կարկանդակների համար գաղտնի այստեղ այցելում։

— Դա եղբա՞յրս է ձեզնից պարտքով կարկանդակներ գնում,— հարցրեց Թիմը։

— Պատահում է և այդպես,— փնչացրեց Ֆրաու Բեբերը։— Բայց ավելի հաճախ կաթնահունցը նախաճաշի համար քո մայրն է վերցնում։ Ախ, ես մոռացա, չէ որ նա, կարծեմ, քո խորթ մայրն է... Բայց դու ոնց որ դրա մասին ոչինչ չգիտե՞ս։

— Չէ, ինչու,— շտապեց առարկել Թիմը,— իհարկե, գիտեմ։

Բայց իրականում նա ոչինչ չգիտեր։ Այդ նորությունը չզայրացրեց նրան և նույնիսկ չբարկացրեց։ Նա պարզապես մի քիչ տխրեց, որ խորթ մայրը քաղցրավենիքներ է ուտում իրենից և եղբորից գաղտնի, իսկ պարտքը գնալով աճում է։

— Ուրեմն, այդպես,— ասաց Ֆրաու Բեբերը, հասկացնելով, որ խոսակցությունն ավարտված է,— իսկ հիմա գնա տուն և հաղորդիր այն, ինչ ես քեզ ասացի։ Հասկացա՞ր։

Բայց Թիմը տեղից չէր շարժվում։

— Այսօր,— ասաց Թիմը,— հորս և մորս ամուսնության տարեդարձն է, այսինքն հորս և խորթ մորս ամուսնության։ Եվ հետո...— Թիմը հանկարծ հիշեց այն գործարքի մասին, որ այսօր ձիարշավարանում կնքելու է վանդակավոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
«ՀՈՒՐԹԱՐ ՍՍՀՄ ՍՏԱՑԻ»
Կրթական համալիր
ԵՐԵՎԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

հետ, և իսկույն ավելացրեց.— Եվ հետո, ֆրաու Բեբեր, պարտքը ես ձեզ կվերադարձնեմ այսօր երեկոյան։ Եվ ընկույզով տորթի արժեքը նույնպես։ Անպայմա՛ն։

— Այսօր երեկոյա՞ն։

Ֆրաու Բեբերը մի բոպե տատանվեց, բայց Թիմի ձայնում կար ինչ-որ բան, որը նրան համոզեց։ Նրան, չգիտես թե ինչու, հանկարծ թվաց, որ Թիմն անպայման այսօր երեկոյան կվերադարձնի ողջ պարտքը կամ էլ գոնե մի մասը։

Համոզվելու համար այնուամենայնիվ հարցրեց.

— Իսկ որտեղի՞ց ես փող ճարելու։

Թիմը դեմքը մռայլ ծամածռեց, ինչպես ավազակը բեմում, և թավ ձայնով պատասխանեց.

— Կգողանամ, ֆրաու Բեբեր։ Ջրհան կայանի դիրեկտորից։

Թիմն այնքան լավ ձևացավ ավազակ, որ ֆրաու Բեբերը ծիծաղեց, բարիացավ և տվեց նրան վեց կտոր ընկույզով տորթ ու դեռ յոթերորդն էլ որպես հավելում. հենց այնպես, անվճար։

Խորթ մայրը շեմին կանգնած անհամբեր սպասում էր Թիմին։ Թվում էր, թե նա դեռևս (բայց գուցե և արդեն նորից) ինչ-որ բանից վշտացած էր։ Եվ հենց որ Թիմը մոտեցավ, առանց շունչ քաշելու արագ-արագ սկսեց.

— Ավելի լավ էր ինքս գնայի։ Ընկույզով տորթը բերե՞լ ես։ Իսկ պարտքի մասին բա՞ն ասաց։ Էլ ինչո՞ւ ես լռում, խոսիր։

Թիմը ավելի շուտ կհամաձայնվեր կտրել իր լեզուն, քան հաղորդել նրան խոսակցությունը ֆրաու Բեբերի հետ։ Բացի այդ, նա շտապում էր ձիարշավի, իսկ խորթ մոր հետ բանակցությունների համար քիչ ժամանակ չէր պահանջվի։

— Նա ինձ մի կտոր էլ ձրի տվեց։ Կարելի՞ է, ես գնամ խաղալու, մա։ (Նրան դեռ ոչ մի անգամ չէր հաջողվել մինչև վերջ արտասանել «մայրիկ» բառը)։

Խորթ մայրն անմիջապես թույլ տվեց, որ նա գնա և նույնիսկ ճանապարհի համար մի կտոր տորթ տվեց։

— Ի՞նչ հետաքրքիր բան է քեզ համար մեր զրույցը լսելը։ Ավելի լավ է գնա խաղալու։ Միայն թե տես, ժամանակին վերադարձիր։ Վեցից ոչ ուշ։

Թիմը ամբողջ թափով սլացավ ձիարշավարան, միաժամանակ ծամելով տորթը։ Միայն երեք կաթիլ կրեմ ճանապարհին ընկավ գետնին և մեկն էլ կիրակնօրյա կապույտ վարտիքին։

Վանդակավոր զգեստով պարոնը կանգնած էր մուտքի մոտ։ Ջնայած առաջին պտույտը վաղուց սկսված էր, նա ոչ մի անհամբերություն ի հայտ չէր բերում և, թվում էր, միանգամայն հանգիստ։ Այսօր նա ավելի սիրալիր էր երևում, քան սովորաբար։ Նա Թիմին հրավիրեց իր հետ լիմոնադ խմելու այգում, մի կտոր ընկույզով տորթ ուտելու։ «Երևում է, այսօրվա կիրակին այսպիսին է,— որոշեց Թիմը։— Ամեն քայլափոխում՝ մի կտոր տորթ»։

«Եվ այնուամենայնիվ նա հաճելի մարդ է,— մտածեց Թիմը,— հիմա ես հասկանում եմ, թե ինչու էր հայրս նրա հետ բարեկամություն արել»։

Անծանոթը փաղաքշող շագանակագույն աչքերով սիրալիր նայում էր նրան։ Եթե Թիմը մի փոքր ավելի դիտողականություն ունենար, նա կհիշեր, որ դեռ անցյալ կիրակի օրը վանդակավոր զգեստով պարոնի աչքերը ջրիկա-կապտավուն և սառն էին, ինչպես ձկան աչքերը։ Բայց Թիմը դիտողականությամբ աչքի չէր ընկնում։ Կյանքը դեռ շատ քիչ բան էր նրան սովորեցրել։

Վերջապես վանդակավոր զգեստով պարոնը խոսեց գործարքի մասին։

— Թանկագին Թիմ,— սկսեց նա,— ես ուզում եմ քեզ առաջարկել այնքան դրամ, որքան դու կկամենաս։ Ես ի վիճակի չեմ այդ փողը դնել սեղանին, հաշվել զրնգուն դրամներով։ Բայց ես կարող եմ քեզ պարգևել ցանկացածդ վիճաբանությունը, գրազը շահելու ընդունակություն։ Ցանկացածդ... Հասկացա՞ր։

Թիմը մռայլ գլխով արեց, բայց շատ ուշադիր լսում էր։

— Հասկանալի է, որ ո՛չ ձրի։ Ամեն ինչ իր գինն ունի։

Թիմը նորից գլխով արեց։ Հետո բեկբեկուն ձայնով հարցրեց.

— Իսկ ի՞նչ եք դուք դրա դիմաց ուզում։

Անծանոթը մի փոքր հապաղեց, մտախոհ նայելով Թիմին։

— Քեզ հետաքրքրում է, թե ի՞նչ եմ դրա փոխարեն ուզում։

Նա բառերը ձգում էր ծամոնի պես։

Եվ հանկարծ բառերը տեղացին շուտասելուկի պես։ Հիմա դրանք դժվար էր հասկանալ։

— Դրա փոխարեն ես ուզում եմ քո ծիծաղը։

Հավանաբար, նա ինքն էլ նկատեց, որ չափազանց արագ է խոսում, և այդ պատճառով կրկնեց.

— Դրա փոխարեն ես ուզում եմ քո ծիծաղը։

— Եվ միա՞յն,— ծիծաղելով, հարցրեց Թիմը։

Բայց շագանակագույն աչքերը նրան նայեցին մի տեսակ տխուր արտահայտությամբ, և նրա ծիծաղը կտրվեց, չհասնելով երջանիկ շնչակտուր պայթյունը։

— Դե, ուրեմն,— հարցրեց վանդակավոր զգեստով պարոնը։— Համաձա՞յն ես։

Թիմի հայացքը հանկարծ ընկավ տորթով ափսեին։ Նա հիշեց ֆրաու Բեբերին, պարտքը և այն ամենը, ինչ նա պատրաստվում էր առնել, եթե շատ փող ունենար։ Եվ նա ասաց.

— Եթե դա ազնիվ գործարք է, ես համաձայն եմ։

— Որ այդպես է, տղաս, մեզ մնում է միայն ստորագրել պայմանագիրը։

Վանդակավոր զգեստով պարոնը պիջակի ներսի գրպանից հանեց մի թուղթ, բաց արեց, դրեց սեղանին, Թիմի առջև և ասաց.

— Հապա սա ուշադիր կարդա։

Եվ Թիմը կարդաց.

1. Այս պայմանագիրը կնքված է ... թվականի ... ամսվա ... թվին մի կողմից պարոն Զ. Անատասի և մյուս կողմից պարոն Թիմ Թալերի միջև, և երկու կողմերը այն ստորագրում են երկու օրինակից։

— Իսկ ի՞նչ է նշանակում երկու կողմերը,— հարցրեց Թիմը։

— Այդպես են կոչվում պայմանագրի մասնակիցները։

— Հը-ը՞-ը՞։

Թիմը շարունակեց կարդալ։

2. Պարոն Թիմ Թալերը իր ծիծաղը հանձնում է պարոն Զ. Անատասի լիակատար տնօրինությանը։

Երբ Թիմը երկրորդ անգամ կարդաց «պարոն Թիմ Թալերը» բառերը, նա ինքն իրեն զգաց գրեթե բոլորովին մեծ։ Միայն հենց այդ բառերի համար նա պատրաստ էր ստորագրել պայմանագիրը։ Նա չէր էլ ենթադրում, որ այդ փոքրիկ երկրորդ կետը կփոխի իր ողջ կյանքը։

Հետո նա կարդաց շարունակությունը.

3. Որպես փոխհատուցում ծիծաղի դիմաց, պարոն Զ. Անատասը պարտավորվում է հոգալ այն մասին, որ պարոն Թիմ Թալերը շահի բոլոր գրազները։ Սույն կետը չունի ոչ մի սահմանափակում...

Թիմի սիրտն ավելի արագ բաբախեց։ Ապա.

4. Երկու կողմերը պարտավորվում են սույն պայմանագրի մասին պահպանել լիակատար լռություն:

Թիմը գլխով արեց։

5. Այն դեպքում, եթե կողմերից մեկը որևէ երրորդ դեմքի հաղորդի սույն պայմանագրի մասին և խախտի շորրորդ կետում հիշատակված գաղտնիքի պահպանման պայմանը, մյուս կողմն ընդմիշտ իրավունք է ձեռք բերում. ա) ծիծաղելու կամ բ) շահելու գրազն այն ժամանակ, երբ պայմանը խախտած կողմը վերջնականապես կորցնում է իրավունքը ա) ծիծաղելու կամ բ) շահելու գրազը:

— Սա ես չհասկացա,— ասաց Թիմը, խոժոռելով ճակատը։

Պարոն Զ. Անատասը (վերջապե՞ս մենք իմացանք նրա անունը) բացատրեց նրան.

— Հասկանում ես, Թիմ, եթե դու խախտես գաղտնիքի պահպանման պայմանը և որևէ մեկին պատմես այս պայմանագրի մասին, դու անմիջապես կկորցնես գրազը շահելու ընդունակությունը, բայց և ծիծաղդ էլ այլևս չես ստանա։ Իսկ եթե ընդհակառակը, ես այդ մասին պատմեմ որևէ մեկին, դու ետ կստանաս քո ծիծաղը և կպահպանես գրազը շահելու ունակությունը։

— Հասկանալի է,— ասաց Թիմը,— լռել—նշանակում է լինել հարուստ, բայց երբեք չծիծաղել։ Իսկ որևէ մեկին ասելը՝ նորից աղքատ լինել և դարձյալ չծիծաղել։

— Միանգամայն ճիշտ է, Թիմ։ Դե, շարունակիր կարդալ։

6. Այն դեպքում, եթե պարոն Թիմ Թալերը որևէ գրազ տանուլ տա, պարոն Զ. Անատասը պարտավորվում է պարոն Թիմ Թալերին վերադարձնել նրա ծիծաղը: Բայց այդ դեպքում պարոն Թիմ Թալերը հետագայում կորցնում է գրազ շահելու ունակությունը:

— Այստեղ բանն այն է...— ցանկացավ բացատրել Անատասը...

Բայց Թիմը առանց այդ էլ ամեն ինչ հասկացել էր։ Եվ ընդհատեց նրան.

— Ես գիտեմ։ Եթե ես երբևէ տանուլ տամ որևէ գրազ, ես ետ կստանամ իմ ծիծաղը, բայց այլևս երբեք չեմ շահի։

Նա արագ կարդաց պայմանագրի վերջին կետը։

7. Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում այն վայրկյանից, երբ երկու կողմերը կստորագրեն երկու օրինակի տակ ... ամսաթիվ... տարերիվ:

Զախ կողմում արդեն պարոն Անատասը ստորագրել էր։ Եվ Թիմը մտածեց, որ դա լիովին օրինավոր և ազնիվ պայմանագիր է։ Նա իր գրպանից հանեց մատիտի մի կտոր և արդեն ուզում էր թղթի աջ կողմում դնել իր ստորագրությունը։ Բայց պարոն Անատասը մի կողմ քաշեց նրա ձեռքը։

— Թանաքով պետք է ստորագրել,— ասաց նա և Թիմին մեկնեց իր ինքնահոսը, որը, եթե գույնից դատելու լինեինք, պատրաստված էր մաքուր ոսկուց։

Շոշափելիս նա մի տեսակ տարօրինակ տաք էր, կարծես սենյակի ջրով լցված լիներ։ Բայց Թիմը դրան ոչ մի ուշադրություն չդարձրեց։ Նա այժմ մտածում էր միայն մի բանի մասին՝ իր ապագա հարստության մասին։ Նա համարձակորեն կարմիր թանաքով իր ստորագրությունը դրեց երկու օրինակների վրա։

Եվ հենց որ նա ստորագրեց, պարոն Անատասը ժպտաց ամենագրավիչ ժպիտով ու ասաց.

— Շատ շնորհակալ եմ։

— Խնդրեմ,— պատասխանեց Թիմը և նույնպես ուզեց ժպտալ, բայց դեմքի վրա չկարողացավ անգամ խղճուկ քմծիծաղ արտահայտել։ Նրա շրթունքները ամուր սեղմված էին, և դրանք բացել նա ի վիճակի չէր. նրա բերանը վեր էր ածվել մի բարակ գծի։

Պարոն Անատասը վերցրեց պայմանագրի օրինակներից մեկը, չորս տակ ծալեց և դրեց պիջակի ներսի գրպանը։ Մյուս օրինակը նա մեկնեց Թիմին։

— Պահիր, ինչպես հարկն է։ Եթե պայմանագիրը քո անփութության պատճառով որևէ մեկի ձեռքն ընկնի, ուրեմն, դու խախտել ես գաղտնիքի պահպանման պայմանը։ Այդ դեպքում վատ կլինի քո վիճակը։

Թիմը գլխով արեց, նույնպես չորս տակ ծալեց իր օրինակը և խցկեց գլխարկի աստառի տակ (մի կողմից կարը մի քիչ քանդված էր)։ Հետո վանդակավոր զգեստով պարոնը նրա առջև դրեց հինգ մարկանոց երկու դրամ։

— Ահա և քո հարստության հիմքը։

Եվ ուրախ ծիծաղեց Թիմի ծիծաղով։ Հետո նա հանկարծ

շտապեց, կանչեց մատուցողուհուն, վճարեց փողը, վեր կացավ և արագ ասաց.

— Դե, հաջողություն եմ ցանկանում։

Եվ հեռացավ։

Հիմա Թիմն էլ պետք է շտապեր, որ հասցներ որևէ ձիու վրա դնել,— սկսվում էր վերջին պտույտը։ Նա մոտեցավ պատուհանին, անդորրագիր վերցրեց և, առանց երկար-բարակ մտածելու, վրան գրեց «Մաուրիցիա» անունը։ Եթե իր գլխարկի մեջ եղած պայմանագիրը իսկական է, այդ ձին, միևնույն է, առաջինը կհասնի։

Եվ Մաուրիցիան հաղթեց։

Թիմը, որն այս անգամ տասը մարկ էր դրել, դրամարկղում ստացավ բազմաթիվ թղթադրամներ՝ քսան, հիսուն և անգամ հարյուր մարկանոց։ Աշխատելով, որ ոչ ոք այդ չնկատի, նա դրամը պահեց բաճկոնի գրպանում և արագ քայլերով հեռացավ ձիարշավարանից։

Թերթ հինգերորդ

ՀԱՐՑԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ

Դուրս գալով ձիարշավարանի դարպասից, Թիմը զգուշությամբ շոշափեց գրպանը. արդյոք դեռ այնտե՞ղ են շահած դրամները։ Երբ նա լսեց թղթադրամների խշխշոցը, սիրտն արագ բաբախեց։ Ինքը՝ Թիմ Թալերը, հիմա հարուստ մարդ է դարձել։ Նա կարող է հոր գերեզմանին մարմարե շիրմաքար դնել։ Վճարել Ֆրաու Բեբերի պարտքը։ Որոշ բաներ գնել խորթ մոր և Էրվինի համար։ Իսկ եթե ցանկանա, նույնիսկ հեծանիվ կգնի։ Ազդանշանով և փչովի անիվներով։

Որպեսզի ավելի լիարժեք վայելի երջանկությունը, Թիմը դեպի տուն ուղղվեց ոտքով։ Նա ուզում էր ճանապարհին որևէ նվեր գնել խորթ մոր համար, բայց օրը կիրակի էր, և բոլոր խանութները փակ էին։ Թիմը ձեռքով գրպանում ամուր սեղմում էր շահած դրամների կույտը։

Արդեն բավական հեռացած լինելով ձիարշավարանից, նա

փողոցում հանդիպեց իր դասարանցի երեք տղաների և կանգ առավ զրուցելու նրանց հետ։ Նրանցից մեկը հանկարծ հարցրեց.

— Այդ ի՞նչ է գրպանումդ, Թիմ։ Գո՞րտ է։

— Շոգեքարշ է,— պատասխանեց Թիմը և ուզեց ծիծաղել։ Բայց նրա շրթունքները սեղմվեցին իրար և նեղ գծի տեսք ստացան։

Ճիշտ է, տղաները այդ չնկատեցին։ Նրանք ծիծաղում էին Թիմի պատասխանի վրա, և նրանցից մեկը բղավեց.

— Ցույց տուր տեսնենք, թե ի՞նչ շոգեքարշ է։

— Գուցե նրանով Գոնոլուլու՞ կգնանք,— առաջարկեց մյուսը։

Բայց Թիմը միայն ավելի ու ավելի ամուր էր սեղմում գրամների կուլտը։

— Ես տուն պետք է գնամ։ Ցտեսություն,— ասաց նա։

Բայց տղաներից պոկվելն այդքան էլ հեշտ չէր։ Նրանք սպասեցին, մինչև Թիմը մի փոքր առաջ անցնի, ապա գողեգող հասան նրան և, անակնկալ բռնելով նրա արմունկից, ձեռքը դուրս քաշեցին գրպանից։

Ի զարմանս նրանց, փողոցով մեկ թափվեցին քսան, հիսուն և նույնիսկ հարյուր մարկանոց թղթադրամներ։

Դա առավել զարմանալի էր, որովհետև Թիմը ապրում էր նեղլիկ նրբանցքում, և տղաները հիանալի գիտեին այդ մասին

— Քեզ որտեղի՞ց այսքան փող,— շփոթված հարցրեց նրանցից մեկը։

— Կողոպտել եմ ջրհան կայանի դիրեկտորին,— պատասխանեց Թիմը և, չնայած իր ողջ սրտնեղությանը, ուզում էր ծիծաղել։ Բայց ժպիտի փոխարեն նրա դեմքն այնպես սարսափելի ծամածռվեց, որ տղաները վախեցան։

Ինչպես երևում է, նրանք որոշեցին, որ Թիմը իրենց ճշմարտություն է ասել, և, միանգամից տեղներից պոկվելով, ամբողջ ուժով փախան։

Հեռվից Թիմին հասան նրանց բացականչությունները.

— Թիմ Թալերը փո՞ղ է գողացել։ Թիմ Թալերը գո՞ղ է։

Թիմը տխուր հավաքեց իր թղթադրամները և խցկեց գրպանը։

Հետո նա գնաց դեպի քաղաքի միջով հոսող գետակը, գետափին նստեց նստարանին և սկսեց նայել բադիկներին, որոնք ջրի մոտ փորփրում էին հողը։

Փոքր բադիկները, օրորվելով, անօգնական շարժվում էին խոտերի մեջ, և դեռ երեկ Թիմն անպայման կծիծաղեր նայելով նրանց։ Բայց այսօր բադիկները նրան նույնիսկ ծիծաղելի չթվացին։ Եվ դրանից նա ավելի տխրեց։ Նա այնպես էր նայում բադիկներին, ինչպես նայում են դատարկ պատին։ Եվ հասկացավ, որ այս կիրակի նա դարձավ բոլորովին ուրիշ տղա։

Միայն երբ սկսեց մթնել, Թիմը գնաց տուն։

Նա դեռ չէր հասցրել նրբանցք մտնել, երբ նկատեց, որ իրենց դռան առջև կանգնած է հարևանուհիներով շրջապատված խորթ մայրը։ Նրանք հուզված խոսում էին ինչ-որ բանի մասին, բայց հենց որ տեսան Թիմին, ցրվեցին վախեցած հավերի նման և թաքնվեցին իրենց տներում։ Սակայն բոլոր տների դռները մի փոքր բաց մնացին, իսկ յուրաքանչյուր պատուհանի, որի մոտով անցնում էր Թիմը, վարագույրները շարժվում էին։

Խորթ մայրը դեռ կանգնած էր կիսաբաց դռան առջև։ Նա այնպիսի տեսք ուներ, կարծես հենց այժմ վրա է հասնելու աշխարհի վերջը։ Նրա կավճի պես սպիտակ դեմքի վրա սպառնալի ձևով ցցված էր կարմրավուն սուր քիթը։ Եվ հենց որ Թիմը մի քիչ մոտեցավ նա, առանց որևէ բառ ասելու, ապտակներ դրոշմեց սկզբում Թիմի աջ, ապա ձախ այտին և, թևքից բռնած, տարավ տուն։

— Որտե՞ղ են փողերը,— ծղրտաց նա, իր հետևից դեռ լրիվ չծածկած դուռը։

— Փողե՞րը,— ոչինչ չկասկածելով, հարցրեց Թիմը։

Եվ նորից ստացավ երկու այնպիսի ապտակ, որ նրա գլխում ամեն ինչ աղմկեց, իսկ աչքերը լցվեցին արտասուքներով։

— Այստեղ տուր փողերը, անպիտա՜ն։ Հանցագո՞րծ։ Անմիջապես գնա խոհանոց...

Գրեթե բռնի ուժով խորթ մայրը Թիմին քարշ տվեց խոհանոց։ Թիմը դեռևս չէր հասկանում, թե ինչ է եղել։ Եվ այնուամենայնիվ նա գրպանից հանեց դրամը ու դրեց խոհանոցի սեղանին։

— Տեր աստվա՜ծ, չէ՞ որ այստեղ հարյուրներ են,— բղավեց խորթ մայրը և աչքերը այնպես սևեռեց Թիմի վրա, կարծես նրա առջև ոչ թե Թիմն էր կանգնած, այլ երկգլխանի մի հորթուկ։

Բարեբախտաբար, այդ պահին դուռը բացվեց, և շնչակտուր ֆրաու Բեբերը խցկվեց ներս։ Նրա ետևից հայտնվեց Էրվինը, նա

յայն բացել էր բերանը, իսկ աչքերով խժռում էր սեղանին դրված թղթապրամները։

— Ջրհան կայանի դիրեկտորին ոչ ոք չի կողոպտել,— մի շնչով ասաց ֆրաու Բեբերը, հաղիվ շունչ քաշելով։— Նրանք ոչ մի կոպեկ չեն կորցրել։

Թիմը հանկարծ գլխի ընկավ։ Ահա թե ինչու էր խորթ մայրը իրեն այդպիսի ընդունելություն ցույց տվել։ Չէ որ ինքը ֆրաու Բեբերին կատակով խոստացել էր, որ կկողոպտի ջրհան կայանի դիրեկտորին։ Եվ տղաներին էլ նույնն էր ասել։ Իսկ տղաները, Թիմի գրպանում շատ փող տեսնելով, գրպարտել են նրան։ Այ թե ինչ է պատահել։

Նա ուզեց անմիջապես ամեն ինչ բացատրել, բայց խորթ մայրը նորից փրփրեց և թույլ չտվեց, որ Թիմը բերանը բանա։ Նա հա՛ խոսում էր, բղավում.

— Ախ, ուրեմն ջրհան կայանի դիրեկտորի՞ց չէ։ Ինչ տարբերություն, որտե՞ղից գողացել է։ Ասա, որտեղից ես փողը գողացել։ Ճիշտն ասա՛։ Քանի դեռ ոստիկանությունը չի եկել։ Ամբողջ նրբանցքն արդեն գիտե։ Ճիշտն ասա, լսո՞ւմ ես։

Եվ Թիմը ճիշտն ասաց.

— Ես ոչ ոքից ոչինչ չեմ վերցրել։

Այս անգամ ապտակները ու հարվածները կարկուտի պես տեղացին նրա վրա։ Եվ հայտնի չէ, թե ինչով այդ բոլորը կվերջանար, եթե չմիջամտեր ֆրաու Բեբերը և, բռնելով խորթ մորը, չհարցներ Թիմին.

— Ճիշտ է՞, Թիմ, որ դու ինձ ասացիր, թե այսօր երեկոյան կվճարես խմորեղենի ողջ պարտքը։

— Խմորեղենի պա՞րտքը։ Ի՞նչ գործ ունի այստեղ խմորեղենի պարտքը,— կատաղությունից ճչաց խորթ մայրը։

— Խնդրում եմ, ֆրաու Թալեր, թույլ տվեք, որ ես խոսեմ տղայի հետ,— ընդհատեց նրան ֆրաու Բեբերը։

Խորթ մայրը ոռնոցով նստեց աթոռակին, բռնելով էրվինի ձեռքը։

Իսկ ֆրաու Բեբերը այդ ժամանակ շարունակում էր հարցաքննությունը.

— Ճիշտն ասա, Թիմ։ Դու որտեղի՞ց գիտեիր, որ այսօր երեկոյան այդքան շատ փող կունենաս։

Մի վայրկյան Թիմը կծեց լեզուն։ Մտքերը պտտվում էին վախեցած աղավնիների երամի նման։ «Միայն թե պարոն Անատասի մասին ոչինչ դուրս չտամ։ Պայմանագրի մասին էլ,— պնդում էր նա ինքն իրեն։— Թե չէ կկորցնի իր ուժը»։

Վերջապես, կակազելով ասաց.

— Ես... մի անգամ... շատ վաղուց... գտա հինգ... տասը... մարկ։ Եվ ես ուզեցի գնալ ձիարշավարան և դնել որևէ ձիու վրա։— Այժմ նա նորից խոսում էր համարձակ, առանց կակազելու։— Ես կարծում էի, որ կարող եմ մի քիչ դրամ շահել։ Եվ ես դրեցի Մաուրիցիայի վրա ու իսկապես շահեցի։ Ահա և բոլորը։

Նա ձեռքով ցույց տվեց խոհանոցի սեղանը։ Հետո գրպանից հանեց անդորրագրի կտրոնը և դրեց թղթադրամների վրա։

Ֆրաու Բեբերը ուզում էր ավելի լավ զննել կտրոնը, բայց խորթ մայրն արդեն վերցրել էր թղթի կտորը և մոտ երեք րոպե ուշադիր ուսումնասիրում էր այն։

Ոչ ոք խոհանոցում ոչ մի բառ չարտասանեց։ Թիմը կանգնած էր լուռ, ձգված, կարծես քարացել էր։ Էրվինն անորոշ վիճակում աչքի տակով նայում էր նրան։ Ֆրաու Բեբերը, ձեռքերը կրծքին խաչած, ժպտում էր։

Վերջապես խորթ մայրը նորից կտրոնը գցեց սեղանին և վեր կացավ աթոռակից։

— Ձիարշավում շահածը՝ մաքուր փող չէ,— ասաց նա խրատական ձևով։— Դա աղնիվ աշխատանքով չի վաստակած։

Եվ դուրս եկավ խոհանոցից։

Հիմա էլ ֆրաու Բեբերը ուշադիր ուսումնասիրեց թղթի նեղլիկ կտորը և, գլխով անելով, ասաց.

— Քո բախտը բերել է, Թիմ։

Սենյակից լսվեց խորթ մոր ձայնը. նա կանչում էր Էրվինին։

Նրա որդին ոտքերը հնազանդ քարշ տվեց խոհանոցից, ոչ մի բառ չասելով Թիմին։

Իր ծիծաղը ծախած տղան հանկարծ իրեն մերժված և թշվառ զգաց։ Աշխատելով թաքցնել արտասուքները, նա հարցրեց ֆրաու Բեբերին։

— Իսկ մի՞թե ձիարշավում շահելը անազնվություն է։

Ֆրաու Բեբերը անմիջապես չպատասխանեց։ Մի քիչ լռելուց հետո, ասաց.

— Սպանդանոցի տերերն էլ շահեցին վիճակախաղում և

այդ փողով իրենց համար տուն կնեցին։ Իսկ նրանց մասին ոչ մի վատ բան չես ասի։

Հետո նա սեղանից վերցրեց երեսուն մարկ և, իր գոգնոցի գրպանից հանելով չորս մարկ, մաները դրեց սեղանին.

— Խմորեղենի համար վճարված է, Թիմ։ Գլուխդ մի կախիր։

Այդ ասելով, նա դուրս եկավ։ Թիմը լսեց, ինչպես փակվեց մուտքի դուռը։

Այժմ խոհանոցում նա մնաց մենակ։ Նրա սիրտը լեփ-լեցուն էր վիրավորանքով, հուսահատությամբ և տխրությամբ։

Մի քիչ մտածելուց հետո նա թղթադրամները հավաքեց սեղանից և խցկեց գրպանը։ Նա որոշել էր գնալ տնից։ Ընդմի՜շտ։ Հեռո՜ւ-հեռո՜ւ։

Բայց հենց որ ուզեց բանալ բնակարանի դուռը, լսեց խորթ մոր ձայնը.

— Անմիջապես պառկիր քնելու։

Մի քիչ լռելուց հետո նա ավելացրեց.

— Փողը դիր խոհանոցի պահարանը։

Թիմը հասկացավ, որ քամին փոխել է ուղղությունը։ Նա ենթարկվեց, դրամը տարավ խոհանոց և քաղցած, հուզված ու ուժասպառ, մտավ անկողին։ Մյուս անկողինը դատարկ էր։ Էրվինն այսօր քնել էր խորթ մոր սենյակում։

Եվ մինչ Թիմը կհասցներ որևէ բանի մասին մտածել, քնեց խոր, մղձավանջային քնով։

Թերթ վեցերորդ

ՓՈՔՐԻԿ ՄԻԼԻՈՆԱՏԵՐԸ

Հաջորդ օրը Ֆրաու Բեբերի խանութում առևտուրը ընթանում էր շատ աշխույժ։ Խանութը լի էր հետաքրքրասերներով, ամեն մեկն ուզում էր լսել Թիմի շահույթի մասին։ Այդ պատմությունը Ֆրաու Բեբերը կրկնում էր նորից ու նորից, պատմածը համեմելով իր ապրանքի գովեստներով։

— ...Իսկ հետո տղան ինձ ասաց, որ պատրաստվում է կողոպտել ջրհան կայանի դիրեկտորին։ Պետք է ձեզ ասեմ, որ պարոն դիրեկտորը և նրա ողջ ընտանիքը հիացած են մեր կարկան-

գակներով։ Եվ, ուրեմն, այսպես, հենց որ ես լսեցի, որ տղայի գրպանում հաղարներ են, մտածեցի, որ տեղնուտեղը հանկարծամահ կլինեմ։ Իսկույն հագա կիրակնօրյա զգեստս և վազեցի ջրհան կայան։ Չէ որ, միևնույն է, օրը կիրակի էր, և ես պետք է պատվիրած տորթը տանեի այնտեղ, կրեմով մակագրված «Երջանկություն եմ ցանկանում ծննդյան օրվա առթիվ»։ Ամուսինս այդ մակագրությունները հիանալի է կատարում։ Եվ ուրեմն, իմանում եմ, որ այնտեղ ոչ մի կողոպուտի մասին չեն էլ լսել։ «Թանկագին ֆրաու Բեբեր,— ասում է ինձ պարոն դիրեկտորը,— ես գիտեմ, որ դուք հասկացող կին եք և ձեր կարկանդակներն էլ հիանալի են, բայց այս անգամ, ինչպես երևում է, սխալվել եք։ Մեզնից ոչինչ չեն գողացել»։

Եվ այլն, և այլն նույն ոգով...

Թիմը դարձավ օրվա հերոս։ Հարևանների շրջանում, դպրոցում և անգամ տանը։ Խորթ մայրը, որն այժմ վերարկուի վրա շեկ աղվես էր կպցրել, սկսեց նրա հետ վարվել ավելի զգույշ. խորթ եղբայրը նրան անընդհատ հարցնում էր ձիարշավի մասին. Հարևանները կատակով, թե նախանձից նրան անվանում էին «փոքրիկ միլիոնատեր», իսկ դպրոցի բակում նրան հանգիստ չէին տալիս։

Թիմին ուրախացնում էր այդ ընդհանուր ուշադրությունը։ Նա արդեն շատ վաղուց ներել էր այն երեք տղաներին, որ մատնել էին իրեն, ներել էր և խորթ մոր ապտակներն ու ծեծը։ Նա հիմա ուզում էր կատակել և ծիծաղել բոլորի հետ միասին։ Բայց հենց դա էր, որ նրա մոտ չէր ստացվում։ Հենց որ Թիմը փորձում էր ժպտալ, նրա դեմքին հայտնվում էր անպատկառ ծամածռությունը։

Եվ շուտով նա հուսահատվեց և հրաժարվեց այդ փորձերից։ Նա այլևս չէր ժպտում։ Նա սովորեց լուրջ դեմք ընդունել։ Եվ միթե դա ամենավատ բանը չէ, որ կարող է պատահել տղային։

Հարևաններն սկսեցին փսփսալ.

— Երևակայում է։ Քիթը տնկել է։

Դասարանի տղաները սկսեցին խուսափել նրանից, և նույնիսկ խորթ մայրը, որն այժմ ավելի հանգիստ էր, Թիմին անվանում էր «թթված»։

Սակայն խորթ մայրն այլևս երբեք չէր ասում, որ ձիարշավում շահած փողերն անազնիվ են։ Որոշ ժամանակից ի վեր նա

գտնում էր, որ ձիարշավում դրամ շահելը լրիվ օրինական և շատ պատվավոր գործ է։ Նա նույնիսկ մեկ անգամ հարցրեց Թիմին, արդյոք նա չի՞ ուզում քսան մարկ վերցնել շահած գումարից, որ կիրակի օրը գնա ձիարշավարան և որևէ ձիու վրա նորից դնի։ Մինչև հիմա այդ փողերից Թիմին ոչ մի կոպեկ բաժին չէր ընկել. առայժմ նա ստիպված էր հրաժեշտ տալ մարմարե շիրմաքարի և հեծանիվի մասին երազանքին։ Եվ հիմա վիրավորանքից ու համառությունից, նա հրաժարվեց նաև քսան մարկից։ Այն օրվանից, ինչ իմացել էր կարկանդակների պարտքի մասին, Թիմը բոլորովին այլ աչքով էր նայում խորթ մորը։ Տղան այլևս չէր վստահում նրան։

Ամբողջ այդ շաբաթ Թիմը մտածում էր այն մասին, թե որքան լավ կլիներ, եթե աշխարհում ընդհանրապես կիրակիներ չլինեին։ Նա վախենում էր, որ խորթ մայրը կհամոզի իրեն ձիարշավարան գնալ։ Եվ նրա վախը իզուր չէր։ Արդեն շաբաթ օրը երեկոյան խորթ մայրը հեռվից սկսեց խոսակցությունը.

— Էլի հաց ուզո՞ւմ ես, Թիմ։ Ընդհանրապես ասած, երբ մարդու բախտը բերում է, պետք է երեք անգամ փորձել։ Ասենք, մինչև վաղը դեռ շատ ժամանակ կա։ Դեռ կհասցնես որոշել գնալ, թե՞ չէ։ Ճիշտ չէ՞։

Եվ Թիմն, իհարկե, գնաց։ Ոչ միայն այն պատճառով, որ Էրվինը և խորթ մայրը նախաճաշի ժամանակ սկսեցին խոսել ձիարշավի մասին և չէին դադարում խոսել մինչև ճաշը և ճաշի ժամանակ. Թիմը ուզում էր փորձել պայմանագրի, այդ տարօրինակ թղթի ուժը, որը գտնվում էր նրա գլխարկի աստառի տակ։ Հիմա նա ինքն էլ չգիտեր, թե դա ինչ բան է՝ ադնիվ համաձայնագիր, թե ստոր գործարք։

Նրանք երեքով միասին տրամվայով գնացին ձիարշավարան։ Էրվինի գունատ դեմքը կյանքում առաջին անգամ ծածկվել էր կարմիր լաքաներով, իսկ խորթ մայրը, ինչպես միշտ, անդադար բլբլացնում էր ռիսկի, ձիարշավի ժամանակ սպեկուլյացիայի, չափազանց բարձր գների մասին։ Նա քսան մարկ տվեց Թիմին, նրա գլխին տեղալով բազմաթիվ նախազգուշացումներ, իսկ վերջում էլ ավելացրեց.

— Միայն թե Ֆորտունայի վրա չդնես, Թիմ։ Տրամվայում ես լսեցի, որ Ֆորտունան շահելու ոչ մի նախադրյալ չունի։ Չգիտեմ,

ձիու ինչ-որ հիվանդությամբ է տառապում, թե էլի ինչ-որ բան։ Լսո՞ւմ ես, Թիմ։ Միայն թե ո՛չ Ֆորտունայի վրա։

Եվ, իհարկե, այժմ արդեն Թիմը հաստատ որոշեց Ֆորտունայի վրա դնել։ Պայմանագիրը նրա գլխարկի մեջ էր, մտածելու բան չկար։ Եվ խորթ մորն էլ օգտակար է ապացուցել, որ այսպիսի գործերում ինքը նրանից լավ է գլուխ հանում։

Բայց հենց որ նրանք հայտնվեցին ձիարշավարանում, խորթ մայրը և Էրվինն ընդհանրապես մոռացան Թիմի գոյության մասին, այնպես էր նրանց կլանել այն, ինչ կատարվում էր շուրջը։ Պճնված տիկնայք և նրբաճաշակ պարոններ, ձիեր, որոնց սանձերը բռնած պտույտ են գործում կարմիր գլխարկներով ժոկեյները, աղմուկ, խոսակցություն, իրարանցում, հրմշտոց դրամարկղի և պատնեշի մոտ—այս բոլորից ուղղակի գլուխ էր պտտվում։

— Իսկ դու չե՞ս նայելու,— հարցրեց խորթ մայրը, երբ Թիմը պատուհանից մեկնեց անդորրագիրը և ստացավ կտրոնը։

Թիմը գլխով բացասական նշան արեց։

— Ո՞ր ձիու վրա ես դրել,— հարցրեց Էրվինը։

— Ֆորտունայի,— պատասխանեց Թիմը ավելի բարձր, քան դա անհրաժեշտ էր։

Խորթ մայրը կատաղեց.

— Ֆորտունայի՞։ Չէ որ_ես քեզ ասացի, որ այդ ձին... որ ես տրամվայում լսեցի...

Ձիարշավի սկիզբը ազդարարող կրակոցն ընդհատեց նրա շատախոսությունը։ Լսվեց սմբակների դոփյունը, հանդիսականները սկսեցին աղմկել, բղավելով սիրեցյալների անունները, և խորթ մայրը Էրվինի հետ նետվեց առաջ, որ տեսնի ձիերին, չնայած դա հեշտ չէր բազմաթիվ գլխարկների պատճառով։ Բայց ամբոխի միջով առաջ անցնել նրանց չհաջողվեց, ու հիմա նրանք կանգնած էին խոտին նստած Թիմից ոչ հեռու։ Ժամանակ առ ժամանակ Էրվինը, շրջվելով Թիմի կողմը, հուզված բղավում էր.

— Ֆորտունա՜ն դուրս է գալիս երրորդ տեղը։

Եվ նորից.

— Ֆորտունա՜ն առաջ է անցնում։

Եվ վերջապես, հիացմունքից խեղդվելով.

— Ֆորտունան առջևո՜ւմ է։

Բայց հետո հանկարծ սկսեց թվալ, թե Ֆորտունայի ուժերը

սպառվեցին։ Նա սայթաքեց, նրանից առաջ անցան, և Էրվինը բղավեց.

— Կորա՞ն մեր փողերը։ Ֆորտունան էլ չի կարողանում...

Այժմ խորթ մայրը գլուխը շրջեց դեպի Թիմը, նրա հայացքն ասում էր. «Այ տեսնո՞ւմ ես։ Չէ որ ես զգուշացնում էի։ Այ չլսեցիր...»։

Բայց երբ մինչև ավարտը բոլորովին քիչ ժամանակ էր մնացել, Ֆորտունան հանկարծ չտեսնված արագությամբ առաջ անցավ։

Էրվինը գոռում էր խելագարի նման.

— Ապրե՞ս, Ֆորտունա՞։ Ապրե՞ս, Ֆորտունա՞։ Մի քի՞չ էլ, մի քի՞չ էլ, մի քի՞չ էլ...

Եվ ամբոխը նույնպես ավելի ու ավելի բարձր էր գոռում։

— Ֆորտունա՞, Ֆորտունա՞, Ֆորտունա՞։

Հետո հնչեց միաձույլ ոռնոց, և Թիմը հասկացավ՝ Ֆորտունան հաղթեց։ Եվ պարոն Անատասն էլ հաղթեց։

Թիմը ի միջի այլոց այն պատճառով էր մի կողմ նստել, որ տեսնի պարոն Անատասին։ Բայց այն սակավաթիվ վանդակավոր գլխարկների տակից, որոնց հանդիպեց նրա հայացքը, նրան նայում էին միանգամայն անծանոթ դեմքեր։ Անատասը ոչ մի տեղ չկար։ (Սակայն նա այստեղ էր, ձիարշավարանում, ճիշտ է, այս անգամ ոչ վանդակավոր զգեստով։ Տեղից-տեղ անցնելով, նա կկոցած աչքերով ուշադիր հետևում էր տղայի դեմքին)։

Էրվինը շնչակտուր վազեց Թիմի մոտ։

— Շահեցի՞նք,— բղավեց նա ամբողջ կոկորդով մեկ,— այստեղ տուր կտրոնը։

Բայց Թիմը կտրոնը ամուր բռնել էր ձեռքում և սպասում էր մինչև դրամարկղի մոտ հավաքված ամբոխը նոսրանա։ Եվ միայն այն ժամանակ, երբ պատուհանի մոտ ոչ մի մարդ չմնաց, նա մոտեցավ և ստացավ իր շահույթը՝ երկու հազար մարկ։

— Բավական մեծ շահույթ է,— ասաց նա, դրամը մեկնելով խորթ մորը,— այստեղ պետք է լինի երկու հազար մարկ։

— Իսկ դու փողը ստուգեցի՞ր։ Հո քեզ չե՞ն խաբել։

— Կարծում եմ, որ խաբած չեն լինի,— պատասխանեց Թիմը։

— Տա՛-տա՛-տա՛-տա՛։ Այստեղ տուր, տեսնե՛մ։ Ես ինքս կհաշվեմ։

Գրեթե խլելով տղայի ձեռքից փողը, նա սկսեց հաշվել թղթադրամները. սխալվեց, նորից հաշվեց և վերջապես ասաց.

— Ճիշտ է։ Ուղիղ երկու հազար մարդ է։

Եվ երեքով էլ լռեցին։ Խորթ մայրը հայացքը սևեռել էր ձեռքում բռնած թղթադրամների կույտին։ Էրվինը կանգնած էր՝ բերանը լայն բացած. Թիմի դեմքը, ինչպես միշտ, լուրջ էր

Վերջապես խորթ մայրն ընդհատեց լռությունը.

— Հիմա մենք ի՞նչ պետք է անենք այս փողերը։

— Չգիտեմ,— ասաց Թիմը։— Դրանք քո փողերն են։

Եվ խորթ մայրը լաց եղավ. ո՞վ գիտե՝ ուրախությունից, ցնցումից, թե այդ բոլորից միասին։ Նա սկսեց համբուրել մերթ մեկ, մերթ մյուս տղային, իսկ հետո թաշկինակով սրբեց աչքերն ու ասաց.

— Գնանք, երեխաներ։ Պետք է նշել։

Եվ նորից Թիմը նստած էր այգում շագանակի ծառի տակ, հենց այն սեղանի առջև, որտեղ մի ժամանակ նստած էր հոր հետ, հետո այն երեք խաբեբաների հետ, իսկ դեռ անցյալ կիրակի օրը՝ վանդակավոր զգեստով պարոնի հետ։

Խորթ մոր տրամադրությունը բարձր էր, և նա անդադար բլբլացնում էր։

— Ես ուղղակի կարծես զգում էի, որ Թիմը իղուր չէր Ֆորտունայի վրա դրել։ Ա՜յ թե խորամանկն ես եղել։— Եվ նա փաղաքշական քաշեց նրա ականջը։

Հետո նա լիմոնադ պատվիրեց և յուրաքանչյուրի համար մեկական կտոր տորթ, այս անգամ ոչ թե ընկույզով, այլ շոկոլադով։

Էրվինը անվերջ խոսում էր խաղալիք էլեկտրական երկաթուղու և շագանակագույն, հաստ ներբանով կիսակոշիկների մասին։ Լուռ, առանց բերանը բացելու նստած էր Թիմը, այն տղան, որ չէր կարող ծիծաղել։

Թերթ յոթերորդ

ԽԵՂՃ ՀԱՐՈՒՍԸ

Այժմ Թիմը ստիպված էր ամեն կիրակի օր խորթ մոր և էրվինի հետ գնալ ձիարշավարան։ Դա նրան տհաճություն էր պատճառում, և Թիմը երբեմն նույնիսկ հիվանդ էր ձևանում։ Երբեմն էլ նրան հաջողվում էր կիրակի առավոտյան անհետանալ տանից, և այդպիսի օրերին նա տուն էր վերադառնում ուշ երեկոյան։ Այդպիսի օրերին խորթ մայրը և էրվինը ձիարշավարան էին գնում առանց Թիմի։ Բայց նրանց բախտը չէր բերում։ Եթե նրանք շահում էին, ապա մի քանի մարկից ոչ ավելի։

Դրա համար էլ Թիմը ստիպված էր լինում հաջորդ կիրակի օրը նորից գնալ նրանց հետ և ամեն անգամ ավելացնել ձիու վրա դրվող գումարը։ Շուտով ձիարշավարանում նա ամենահայտնի մարդը դարձավ, նրան այնտեղ, ինչպես ասում են, ճանաչում էր ամեն մի շուն։ Նրա հաջողությունները ասացվածք էին դարձել։ Նրանց մասին, ովքեր հաճախ շահում էին, ասում էին. «Թիմի նման հաջողակ է»։

Թիմը շատ շուտ գլխի ընկավ, որ ավելի լավ կլինի, որ տարբեր ժամանակ, տարբեր չափով շահի՝ երբեմն ավելի, իսկ երբեմն էլ պակաս,— և հաճախ նրան դա հաջողվում էր։ Եթե նա գնում էր հռչակավոր վարգաձիու վրա, որի վրա գնում էին և շատ ուրիշները, շահույթն այնքան էլ մեծ չէր լինում։ Իսկ եթե ընտրում էր քոնձրոտած մի ձի, որի վրա գրեթե ոչ ոք չէր հանդգնում դնել, ապա հսկայական գումարներ էր տանում։

Խորթ մայրը, որ սկզբում հայտարարել էր, թե բոլոր շահած գումարները պատկանում են Թիմին, իսկ ինքը, որպես նրա խնամակալ, միայն տնօրինում է դրանք, շուտով խոսեց «մեր շահույթների», «մեր փողերի», «բանկում մեր անձնական հաշվի» մասին։ Թիմը նրանից միայն մի քանի մարկ էր ստանում մանր ծախսերի համար, և այնուամենայնիվ նրան հաջողվել էր աստիճանաբար փող կուտակել մարմարե շիրմաքարի համար։ Այդ փողը Թիմը որոշեց մի կողմ դնել։ Արծաթը և պղինձը նա փոխանակեց թղթադրամով և դրանք պահեց մեծ հին ժամացույցի մեջ, քանի որ պատահաբար հայտնաբերել էր, որ այդ ժամացույցի պատվանդանը կրկնակի հատակ ուներ։

Անսպասելի հարստությունը կարծես մթագնել էր խորթ մոր ուղեղը։ Շատ շուտով նա ճիշտ այնքան թշնամի ունեցավ, ինչքան ընակիչ կար նեղ նրբանցքում։ Իր նախկին ընկերուհու, որի հետ մի ժամանակ առավոտները սուրճ էր խմում խոհանոցում, ուղղակի երեսին հայտարարել էր, որ նա չափազանց վատ է հագնված և որ ինքը ամաչում է նրա հետ փողոց դուրս գալ։ (Ընկերուհուն նոր զգեստ նվիրելը, իհարկե, նրա մտքովն անգամ չէր անցել)։ Ֆրաու Բեբերի կաթնահունցը, կարկանդակներն ու տորթերը նա փնովում էր բոլորի մոտ և այժմ թանկարժեք խմորեղեն էր գնում քաղաքի կենտրոնում։ (Այն, որ ֆրաու Բեբերը առաջներում հրսկայական քանակությամբ խմորեղեն էր նրան պարտքով տալիս, իհարկե, իսպառ ջնջվել էր նրա հիշողությունից)։

Երվինը, որին ֆրաու Թալերը աշխատում էր գաղտնի մի քիչ ավելի փող տալ մանր ծախսերի համար, հարուստ ընտանիքի զավակ էր ձևացնում։ Նա հագնում էր սարսափելի հաստ ներբանով կիսակոշիկներ, երկար անդրավարտիքներ և կապում էր պայծառ գույների փողկապներ։ Բացի այդ, նա գաղտնի ծխում էր և ձևացնում, թե ձիերի գիտակ է։

Իսկ Թիմը մտովի անիծում էր այն հարստությունը, որի պատճառը ինքն էր։ Այժմ նա ժամերով թափառում էր մեծ քաղաքի հեռավոր ծայրամասերում, փայփայելով այն հույսը, որ կհանդիպի վանդակավոր զգեստով պարոնին։ Գուցե Անատասը համաձայնվի վերադարձնել նրա ծիծաղը, եթե ինքն ընդմիշտ հրաժարվի հարստությունից։ Բայց Անատասը ոչ մի տեղ չկար։

Սակայն վանդակավոր զգեստով պարոնը երբեք Թիմին իր տեսադաշտից դուրս չէր թողնում։ Ժամանակ առ ժամանակ մի շքեղ ավտոմոբիլն էր անցնում այն թաղամասով, որտեղ ապրում էր Թիմը, և նրա մեջ, կաշվե բարձերին թիկնած, նստած էր վանդակավոր գլխարկով պարոնը։ Փողոցում նկատելով Թիմին, նա վարորդին կարգադրում էր կանգ առնել և մտահոգ, գրեթե երկչոտ արտահայտությունը դեմքին, դիտում էր տղային։ Այդ պարոնը հոգաց և այն մասին, որ Թիմի բնակարանում հայտնվի մի օրացույց, որում սուրճը, կակաոն և կարագը գովաբանող ռեկլամային ոտանավորների կողքին մեջբերումներ էին արված հռչակավոր մարդկանցից։ Օրացույցի առաջին էջում կարելի էր կարդալ.

Պայմանագրին պետք է վերաբերվել ինչպես ամուսնությանը. նախ կշռադատել բոլոր «կողմ»-երը և «դեմ»-երը, ապա պանպանել հավատարմություն նրան:

Զ. Անատաս:

Բարեբախտաբար, խորթ մայրը պոկել և պահել էր այդ թերթիկը, որովհետև նրա հակառակ կողմում տպագրված էր ճակատագրի բացատրությունը՝ աստղերով։ Նա ծնվել էր Կարիճի համաստեղության տակ։

Թիմի համար ամենաանախորժը այն էր, որ շատ շուտով նրբանցքում թշնամաբար սկսեցին վերաբերվել իրեն։ Դեմքի լուրջ արտահայտությունը մարդիկ գնահատում էին որպես գոռոզամտության արտահայտություն, և իրենք իրենց եկել էին այն եզրակացության, թե խորթ մայրը, Էրվինը և Թիմը միևնույն ծառի պտուղներն են։ «Մեծամիտներ»— միայն այսպես էին այժմ նրանց անվանում։

Հենց այդ պատճառով էլ ոչ ոք այնպես ուրախ չէր, ինչպես Թիմը (իհարկե, որքան որ նա դեռ ընդունակ էր ուրախ լինելու), երբ խորթ մայրը բնակարան վարձեց հարուստ թաղամասերից մեկում, և նրանց ընտանիքը տեղափոխվեց լայն փողոցում գտնվող մի մեծ տուն։

Կահույքը, իհարկե, միայն հինը, խորթ մայրը նվիրեց նրբանցքի սակավաթիվ հարևաններին, որոնց հետ դեռ շարունակում էր խոսել։ Նա ուզեց նվիրել և մեծ հին ժամացույցը, որի մեջ պահված էին Թիմի խնայողությունները, բայց, բարեբախտաբար, Թիմը ժամանակին լսեց դրա մասին և խորթ մորը խընդրեց թույլ տալ ժամացույցը տանել նոր բնակարանի իր ապագա սենյակը։ Այնպիսի ջերմեռանդությամբ էր խնդրում Թիմը, որ խորթ մայրը վերջապես համաձայնվեց. նա ավելի զարմացած էր, քան զայրացած։ Այդպիսով ժամանակը հաշվող պահարանը, Թիմի հետ միասին, հայտնվեց նրա համար առանձնացված սենյակում , որտեղ նա կյանքում առաջին անգամ կարող էր անարգել պատրաստել դասերը։

Խորթ մայրը, նոր բնակարան տեղափոխվելով, սպասուհի վարձեց։ Բայց սպասուհիներից ոչ մեկը չէր կարողանում նրա հետ լեզու գտնել։ Մարիային հետևեց Բերտան, Բերտային՝ Կլարան, Կլարային փոխարինեց Իոհաննան, և, վերջապես, երբ Իոհաննան գնաց, հայտնվեց մի տարեց կին, որի անունը Գրիտ էր։ Նրան

հաջողվեց դիմանալ բոլորից շատ, որովհետև նա խորթ մոր ոչ մի դիտողությունն ու խոսքը անպատասխան չէր թողնում, և, երբ խորթ մայրը բարկանում էր նրա վրա, արժանի պատասխան էր ստանում։

Այդպես նրանք մեկ կռվում էին, մեկ՝ հաշտվում, իսկ տարիներն անցնում էին, մինչև վերջապես լրացավ Թիմի տասնչորս տարին։ Այժմ ժամանակն էր մտածելու, թե ինչ մասնագիտություն պետք է Թիմն ընտրի։

Խորթ մայրը պնդում և նույնիսկ պահանջում էր, որ Թիմը որպես աշակերտ ընդունվի ձիարշավարանի դրասենյակը։ Դա իր պատճառներն ուներ. մեկ տարի առաջ, հենց այն օրը, երբ լրացավ Թիմի տասներեք տարին, նա մեծ գումար դրեց մի նժույգի վրա, որին սոսկ կարեկցանքից դրդված թույլ տվեցին վերջին անգամ դուրս գալ մրցման։ Ոչ ոք, Թիմից բացի, չհանդգնեց նրա վրա դնել։ Բայց քանի որ նրա վրա էր դրել Թիմը, նժույգը, ի զարմանս, բոլոր գիտակների, եկավ առաջինը։ Թիմը դրամարկղից ստացավ երեսուն հազար մարկ։ Դրանից հետո նա հայտարարեց խորթ մորը, որ իրենք այժմ բավականաչափ հարուստ են և որ ինքը այլևս ձիարշավում չի խաղա։ Ոչ արտասուքները, ոչ ծեծը չէին կարող փոխել նրա վճիռը։ Այդ օրվանից նա այլևս ոչ մի օր ձիարշավարան չգնաց։

Եվ ահա այժմ խորթ մայրը հույս ուներ, որ Թիմը նորից կտարվի ձիարշավով, եթե որպես աշակերտ ընդունվի ձիարշավարանի դրասենյակը։ Նա անգամ բանակցություններ սկսեց քաղաքում ձիարշավի ամենահարուստ կազմակերպչի հետ։ Բայց Թիմը համառում էր և ասում, որ ուզում է նավաստի դառնալ, նավարկության գնալ և այլևս երբեք ձիարշավում չխաղալ։

Մի օր (դա դպրոցն ավարտելուց մի քանի օր հետո էր) խորթ մայրը նորից սկսեց իր սովորական խոսակցությունը Թիմի ապագայի մասին։

— Չէ որ դու արդեն երեխա չես, Թիմ։ Այսպես, թե այնպես դու պետք է սկսես որևէ գործով զբաղվել։ Իսկ դրասենյակում դու քո ընդունակություններով կարող ես հարստանալ։ Չէ որ ես միայն քո բարին եմ ուզում, տղաս։ Չէ որ ես ոչ թե իմ, այլ քո մասին եմ մտածում։

— Դրասենյակ ես չեմ գնա,— կտրուկ պատասխանեց Թիմը,— ես ուզում եմ մեկնել նավարկության։

Խորթ մայրը սկզբում բարկացավ, հետո կատաղեց, իսկ վերջում հուզվեց։ Ինչպես միշտ, նա սկսեց լաց լինել և ճչալ, որ Թիմը ուզում է լքել իրեն, որ ծերության օրերին ինքը մնա առանց կոպեկի և մուրացկանություն անի։ Ուզում է լքել իրեն և եղբորը՝ Էրվինին, թողնելով նրանց բախտի քմահաճույքին, իսկ ինքը դառնա հարուստ։ Եվ ընդհանրապես Թիմը բոլորովին կապված չէ իր ընտանիքի հետ։ Նույնիսկ երբեք չի ժպտում։

Վերջին խոսքերը Թիմին խայթեցին շատ ավելի ուժեղ, քան կարող էր ենթադրել խորթ մայրը։ Արյունը տվեց Թիմի գլխին։ Նա ցանկացավ անմիջապե՛ս փախչել, հե՛նց այդ վայրկյանին։ Բայց այն ժամանակից ի վեր, ինչ նա կորցրել էր իր ծիծաղը, նա ձեռք էր բերել իր տարիքի տղայի համար հազվագյուտ և զարմանալի ինքնատիրապետում։

Նա այդ անգամ էլ այնքան տիրապետեց իրեն, որ խորթ մայրը ոչինչ չնկատեց, գուցե միայն այն, որ տղան կարմրեց։

— Հաջորդ կիրակի տուր ինձ այնքան փող, ինչքան այն վերջին անգամ,— ասաց նա։— Ես, երևի, շատ կշահեմ։

Եվ նախքան խորթ մայրը կհասցներ որևէ բան պատասխանել, Թիմը դուրս թռավ տնից, վազեց գետափ, նստեց մեկուսի նստարանին և փորձեց հաղթահարել իր հուզմունքը։ Բայց դա նրան չհաջողվեց՝ նա լաց եղավ։ Նա չէր ուզում լաց լինել և պայքարում էր իր հետ, բայց հեկեկում էր ավելի ու ավելի դառը, մինչև վերջապես ազատություն տվեց իր հուսահատությանը։ Իսկ երբ հեկեկոցները սկսեցին մեղմանալ ու արցունքները վերջացան, Թիմը սկսեց ողջամիտ և սառնասիրտ մտածել իր ապագայի մասին։

Նա որոշեց, որ հաջորդ կիրակի նորից կգնի որևէ քոնձրոտ ձիու վրա և շատ փող կշահի։ Ամբողջ փողը կտա խորթ մորը, իսկ ինքը պարզապես կփախչի, լքելով նրան և Էրվինին։ Գուցե որպես յունգա կընդունվի որևէ նավի վրա։ Փողի մասին անհանգստանալու հարկ չունի։ Ձիարշավարան ամեն տեղ էլ կա։ Իսկ հարբստությունից (այժմ նա այդ հաստատ գիտեր) միևնույն է, ոչ մի ուրախություն չպետք է սպասել։ Նա իր ծիծաղը փոխեց մի բանի հետ, որն իրեն բոլորովին պետք չէր։

Եվ հենց այստեղ, գետափում, Թիմը շատ ավելի կարևոր որոշում ընդունեց. ինչ գնով էլ լինի նա կվերադարձնի իր ծիծաղը։ Նա կմեկնի որոնելու պարոն Անատասին և կգտնի, որտեղ էլ որ նա թաքնված լինի, թեկուզ աշխարհի ծայրում։

Ինչ լավ կլիներ, եթե ողջ աշխարհում գոնե մի մարդ գտնվեր, թեկուզ հարբած կառապան, կամ կիսախենթ թափառական, որի հետ Թիմը կարողանար խոսել իր որոշման վերաբերյալ։ Ամենաբարդ բաները երբեմն շատ պարզ են դառնում, եթե նրանց մասին խոսում ես որևէ մեկի հետ։ Բայց Թիմը այդ մասին ոչ ոքի հետ չպետք է խոսեր։ Նա պետք է պարփակվեր իր գաղտնիքի մեջ, ինչպես խխունջը իր պատյանում։ Չորս տակ ծալած թուղթը, որն այժմ փողի հետ գտնվում էր հին ժամացույցի մեջ, Թիմին դարձրել էր երկրագնդի ամենամիայնակ տղան։

Թիմը սկսեց մտածել հոր մասին և այն փողի մասին, որը կուտակել էր շիրմաքարի համար։ Եվ ահա թե ինչ նա որոշեց. նախքան քաղաքից ընդմիշտ գնալը նա շիրմաքար կդնի հոր գերեզմանին։ Նա հասկանում էր, որ դա այնքան էլ հեշտ չի լինի իրականացնել, բայց հաստատ հույս ուներ, որ կհաղթահարի ամեն տեսակ դժվարություններ։

Վերջապես, հանգստացած վեր կացավ նստարանից. այժմ նա ծրագիր ուներ. մնում էր միայն իրականացնել։ Եվ այդ ծրագիրը ուժ էր հաղորդում նրան։

Թերթ ութերորդ

ՎԵՐՋԻՆ ԿԻՐԱԿԻՆ

Երբ վրա հասավ կիրակին, վերջին կիրակին, որը Թիմն անց կացրեց հարազատ քաղաքում, խորթ մայրն արդեն նախաճաշի ժամանակ անհանգստություն էր հանդես բերում։ Այսօր նա հատկապես թանձր սուրճ պատրաստեց և խմում էր ագահ կումերով, բայց գրեթե ոչինչ չէր ուտում։ Թիմին մի քիչ ավելի փող տվեց, քան նա խնդրել էր։ Հագնելով իր ամենաշքեղ մետաքսե զգեստը, որի վրա ծաղիկներ էին ասեղնագործված, նա պահարանից հանեց աղվեսը, որ տնից դուրս գալիս գցի ուսերին։

— Ախ, որքա՜ն հետաքրքրական, է որքա՜ն հետաքրքրական,— կրկնում էր նա,— արդյոք կշահե՞նք մենք այսօր, թե ոչ։ Թիմ, դու արդեն որոշե՞լ ես, թե որ ձիու վրա պետք է դնես։

— Ոչ,— պատասխանեց Թիմը։ Եվ դա ճշմարտություն էր։

— Ուրեմն, դու այդ մասին չե՞ս էլ մտածել։ Ուզում ես, հենց այնպես դնել, առանց մտածելո՞ւ։

— Թիմը գիտե, թե ինչ է անում,— ասաց Էրվինը։

Խորթ եղբոր հաջողությունները ձիարշավարանում նրան ներշնչում էին և՛ նախանձ, և՛ հարգանք։

Նախաճաշից հետո նրանք երեքով նստեցին տաքսի և գնացին ձիարշավարան։ Մեքենայից հազիվ ոտքը դուրս դրած, խորթ մայրը ուզում էր նետվել դեպի դրամարկղի պատուհանը։ Բայց Թիմն ասաց, որ ինքը պետք է սկզբում մի քիչ մտածի, և խորթ մայրը դա համարեց լիովին խելամիտ՝ թող մի քիչ շրջի ամբոխի մեջ, լսի, թե ինչ են մարդիկ խոսում։

Ձիարշավարանում արդեն գրեթե մոռացել էին Թիմին։ Չէ որ նա մի ամբողջ տարի չէր խաղացել։ Եվ այնուամենայնիվ ոմանք նրան հիշում էին. երբ նա անցնում էր, որոշ հանդիսականներ շշուկով խոսում էին իրար հետ, իրար հրում արմունկներով։ Հատկապես մեծ հետաքրքրություն Թիմի նկատմամբ հանդես բերեց գանգուր, մուգ մազերով և տարօրինակ ծակող, բաց կապտավուն աչքերով ինչ-որ մեկը։ Նա պտտվում էր Թիմի շուրջը, ինչպես հավատարիմ շունը տիրոջ շուրջը կպտտվի, և տառացիորեն հայացքը չէր հեռացնում նրանից, ընդ որում ինչ-որ կերպ հաջողացնում էր մնալ աննկատ։ Երբ Թիմը սկսեց կարդալ ձիերի ցանկը, այդ մարդը կանգնեց նրա կողքին։

— Հարավայինի վրա, կարծեմ, դեռ ոչ ոք չի դրել,— շշնջաց նա, կարծես ի միջի այլոց, նույնիսկ չնայելով Թիմին։— Ի՞նչ է, դու նույնպես պատրաստվում ես դնե՞լ։

— Այո,— պատասխանեց Թիմը,— և հենց Հարավայինի վրա։

Այժմ անծանոթը շրջվեց դեմքով դեպի նա։

— Շատ հանդուգն ես, փոքրիկ։ Չէ որ Հարավայինը, կարելի է ասել, ոչ մի շանս չունի։

— Կտեսնենք,— պատասխանեց Թիմը։

Նա, չգիտես ինչու, ուզեց ծիծաղել։ Բայց ծիծաղել չէր կարող։ Նա լուրջ և տխուր նայում էր անծանոթին, որը հիմա սկսեց կատակել Թիմի համարձակ որոշման և հույսերի վրա։ Անծանոթը Թիմին ուղեկցեց մինչև դրամարկղը։

Ճանապարհին նա շարունակում էր անընդհատ կատակել։ Նա ծիծաղում էր փոքրիկ ժոկեյների վրա, շարունակելով ուշադիր

նայել Թիմի դեմքին։ Բայց Թիմի դեմքը մնում էր առաջվա պես յուրջ։

Գրեթե արդեն հասնելով դրամարկղի պատուհանին, Թիմի ուղեկիցը կանգ առավ։ Թիմը նույնպես ակամա դանդաղեցրեց քայլը։

— Իմ անունը Կրեշմիր է,— ասաց անծանոթը,— ես քո բարին եմ կամենում, փոքրիկ։ Ես գիտեմ, որ այս ձիարշավարանում դու դեռ ոչ մի անգամ տանուլ չես տվել։ Հազվագյո՞ւտ և զարմանալի՞ դեպք։ Թո՞ւյլ կտաս ես քեզ մի հարց տամ։

Թիմը նայեց անծանոթի ջրիկ-կապույտ աչքերին, և նրանք սարսափելի ծանոթ թվացին։ Այդ աչքերը նրան հիշեցրին ինչ-որ մեկին, միայն թե նա ոչ մի կերպ չէր կարողանում մտաբերել, թե ում։

— Խնդրեմ,— ասաց նա։— Հարցրեք։

Հայացքը տղայից չհեռացնելով, Կրեշիմիրը կամաց հարցրեց.

— Ինչո՞ւ դու երբեք չես ծիծաղում, փոքրիկ։ Ձե՞ս ուզում... Թե՞... չես կարող։

Թիմը զգաց, որ կարմրում է։ Ո՞վ է այս մարդը։ Ի՞նչ գիտի նա իր մասին։ Հանկարծ նրան թվաց, որ այդ մարդու աչքերը Անատասի աչքերն են։ Գուցե Անատասն է այդպես փոխվել։ Եվ ուզում է փորձե՞լ Թիմին։

Հավանաբար, նրա պատասխանը շատ ուշացավ։ Կրեշիմիրը հանկարծ ասաց.

— Քո լռությունը բավական պերճախոս է։ Գուցե ինձ երբևէ հաջողվի քեզ օգնել։ Ցտեսություն։

Եվ մարդն անհետացավ բազմության մեջ։ Թիմը նրան անմիջապես կորցրեց տեսադաշտից։ Այլեկոծված, նա մոտեցավ դրամարկղի պատուհանին և ողջ դրամը, որ իր մոտ ուներ, դրեց Հարրավայինի վրա։

Պատուհանից հազիվ հեռացած, նա հանդիպեց խորթ մորը և Էրվինին։ Հաստատ կարելի էր ասել, որ նրանք այդտեղ դիտավորյալ սպասում էին Թիմին։ Բայց այս անգամ Թիմը նրանց չասաց, թե որ նժույգի վրա է դրել։ Սակայն, դրա փոխարեն, Թիմն այսօր առաջին անգամ նրանց հետ միասին հետևում էր ձիարշավին։

Պարզվեց, որ Հարավայինն արտակարգ խառնվածքի ջահել նժույգ է։ Նա ընդամենը երրորդ անգամ էր մասնակցում ձիարշավին։ Ասում էին, որ նրան չափազանց վաղ են դուրս բերել ձիարշավի։ Մինչև այդ օրը նա երկու անգամ էլ չորրորդն էր հասել ֆինիշին։ Ճիշտ է, եղել է դեպք, երբ արշավի հենց սկզբից նա նետի պես սլացել է և, շրջանցելով մյուսներին, կես մարմնաչափով դուրս է եկել առաջ։ Բայց շուտով նա ետ է մնացել, և, ինչպես առաջին անգամ, չորրորդն է հասել ավարտին։

Այս ամենը Թիմն իմացավ իրենից ոչ հեռու կանգնած երկու մարդու զրույցից։ Կյանքում առաջին անգամ նա հուզմունքով հետևում էր ձիարշավին։ Նա վախենում էր, որ Կրեշիմիրի հետ խոսակցությունից հետո իր պայմանագիրը կդառնա անվավեր։ Ձիարշավի արդյունքը պետք է ցույց տար, թե որքանով էին իրավացի նրա կասկածները։

Կրակոցը ազդարարեց առաջին պտույտի սկիզբը։ Նժույգները սլացան, և Հարավայինը անմիջապես, ինչպես միշտ, գտնվեց չորրորդ տեղում։ Թիմի կողքին կանգնած երկու տղամարդիկ այժմ խոսում էին առջևում ընթացող նժույգների մասին։ Բայց հետո զրույցը նորից անցավ Հարավայինին։ Ուժգնացող աղմուկի մեջ Թիմին հասնում էին հատուկենտ բառեր։

— Շա՜տ բան է սովորել... Ուժերը խնայում է... Կպոկվի...

Սակայն, ըստ երևույթին, հաղթելու ոչ մի երաշխիք Հարավայինը չուներ։ Նա շարունակում էր ընթանալ չորրորդ տեղում, իսկ նրանից առաջ ընթացող նժույգները շատ առաջ էին անցել։ Էրվինը և խորթ մայրը անընդհատ կպչում էին Թիմին, որ ասի, թե որ նժույգի վրա է դրել։ Իսկ Թիմին համակել էր կասկածը։ Այժմ նա վախով էր հետևում ձիարշավին։ Հարավայինը հազիվ նկատելիորեն առաջ էր անցնում։ Ավարտին մնացել էր շատ քիչ։

Եվ հանկարծ առջևում սլացող նժույգը սայթաքեց։ Նրա ետևից ընթացող երկու մյուս նժույգները վախեցած թափ տվեցին գլուխները, շեղվեցին ճանապարհից։ Այդ վայրկյանին Հարավայինը սլացավ նրանց մոտով և առաջինը բարեհաջող հասավ ֆինիշին։ Ամբոխի բացականչությունների մեջ ավելի հիասթափություն կար, քան հիացմունք։ Թիմը լսեց, ինչպես կողքին մեկն ասաց.

— Իմ տեսած ձիարշավների մեջ սա ամենաանհեթեթն էր։

Մեծ լուսատախտակի ամենավերևում հայտնվեց «Հարավա-

յին» մակագրությունը։ Թիմը թեթևացած շունչ քաշեց։ Ինչպե՞ս էր նա այժմ ուզում ծիծաղել։ Բայց դրա փոխարեն լուռ գրպանից հանեց կտրոնը և, մեկնելով խորթ մորը, ասաց.

— Մենք շահեցինք։ Խնդրում եմ փողը ինքդ ստանաս։

Ֆրաու Թալերը էրվինի ուղեկցությամբ նետվեց դեպի դրամարկղի պատուհանը։ Իսկ Թիմը, չսպասելով նրանց վերադարձին, տրամվայով գնաց տուն, հին ժամացույցի միջից հանեց պայմանագիրն ու փողը և, պայմանագիրը գլխարկի աստառի տակ խցկելով, իսկ փողը՝ բաճկոնի ներսի գրպանը, ուզում էր արդեն դուրս գալ, երբ հանկարծ լսեց, որ խորթ մայրն ու էրվինը աստիճաններով բարձրանում են։ Նա մի կերպ հասցրեց թաքնվել փոքրիկ նկուղի դուռը ծածկող վարագույրի ետևում։ Եվ անմիջապես բնակարանի դուռը բացվեց, ու խորթ մայրը սկսեց բարձրաձայն կանչել նրան։ Թիմը չպատասխանեց։

— Տեսնես ո՞ւր կորավ,— լսեց Թիմը մոր ձայնը։— Վերջերս նա շատ տարօրինակ է դարձել։

Ձայները սկսեցին հեռանալ։ Այժմ նրանք արդեն լսվում էին խոհանոցից կամ ննջարանից։ Թիմը լսեց նաև, ինչպես էրվինը հարցրեց.

— Հիմա մենք չափազանց հարուստ ենք, չէ՞։

Եվ խորթ մոր կտրուկ ձայնը հեռվից ինչ-որ բան պատասխանեց։ Թիմին հասավ.

— ...քառասուն հազարի...

«Դե,— մտածեց Թիմը սառը դատողականությամբ,— այժմ ես հաստատ նրանց պետք չեմ»։

Նա դուրս եկավ նկուղից, անաղմուկ բացեց և փակեց մուտքի դուռը, պատին կպչելով անցավ իր բնակարանի պատուհանների տակով և ամբողջ թափով սլացավ գերեզմանատան կողմը, դեպի քաղաքի արևելյան ծայրամասը։

Միայն այն ժամանակ, երբ գերեզմանատան հաստամարմին ու բեղավոր պահակը մուտքի մոտ նրան հարցրեց, թե ո՞ր համարի գերեզմանն է նրան պետք, նա հասկացավ, որ սխալվել է. հոր գերեզմանի համար մարմարե շիրմաքարը, հավանաբար, հարկավոր էր նախօրոք պատվիրել մեկ այլ տեղում։ Եվ այնուամենայնիվ Թիմը որոշեց գոնե որևէ բան իմանալ։

— Արդյոք չե՞մ կարող ես ձեզ մոտ մարմարե շիրմաքար պատվիրել,— քաղաքավարի հարցրեց պահակին։

— Մարմարե շիրմաքարեր մեզ մոտ չի թույլատրվում, կարելի է միայն քարից,— պատասխանեց բեղավորը։— Հետո ընդհանրապես դու սխալ հասցեով ես դիմում։ Բայց դե գերեզմանաքարերի և հուշարձանների արհեստանոցը կիրակի օրերը փակ է։

Եվ հանկարծ Թիմի գլխում մի հանդուգն միտք ծագեց։

— Եկեք գրաղ գանք, որ իմ հոր գերեզմանի վրա մարմարե շիրմաքարն արդեն դրված է։ Եվ նրա վրա էլ ոսկե տառերով գրված է. «Քո որդի Թիմից, որը քեզ երբեք չի մոռանա»։

— Դու տարվեցիր, այ տղա։

— Միևնույն է, եկեք գրաղ գանք։ Մի սալիկ շոկոլադի վրա։ (Նա մի քիչ առաջ շոկոլադի սալիկը նկատել էր պահակատան պատուհանի գոգին)։

— Իսկ եթե տարվես, շոկոլադի սալիկի համար փողդ կբավականացնի՞։

Թիմն իր գրպանից հանեց թղթադրամները։

— Դե՛, գրաղ դալի՞ս ենք, թե չէ։

— Ավելի հիմար գրաղ դժվար թե պատահի,— փնթփնթաց գերեզմանատան պահակը։— Դե լավ, համաձայն եմ։

Նրանք իրար ձեռք տվին և քայլեցին հսկայական, զբոսայգու նման գերեզմանատնով դեպի այն կողմը, ուր գտնվում էր Թիմի հոր գերեզմանը։

Դեռ հեռվից նրանք նկատեցին գերեզմանի մոտ ինչ-որ գործով զբաղված երեք բանվորի։ Գերեզմանատան հաստամարմին պահակն արագացրեց քայլերը։

— Չէ որ սա...— Նա ծովացուլի նման ֆշշացրեց և վազեց դեպի գերեզմանը։

Հենց այդ պահին գերեզմանի վրա դնում էին նոր մարմարե շիրմաքարը։ Նրա վրա ոսկե տառերով գրված էր Թիմի հոր անունն ու ազգանունը, կյանքի տարեթվերը։ Ներքևում գրված էր. «Քո որդի Թիմից, որը քեզ երբեք չի մոռանա»։

Բանվորները ոչ մի ուշադրություն չդարձրին պահակի բացականչությանը։ Նրանք պահակին ցույց տվեցին ինչ-որ թղթեր, որոնք հաստատում էին, որ այդ շիրմաքարը գերեզմանի վրա դրված է միանգամայն օրինական ձևով։ Փաստաթղթերի մեջ նույնիսկ հատուկ թույլտվություն կար հասարակ շիրմաքարը մարմարով փոխելու մասին։ Ինչպես պարզվեց, այն ժամանակ,

երբ բանվորները անցել են պահակի մոտով, վերջինս ննջելիս է եղել, և բանվորները չեն ուզեցել զարթնեցնել նրան։

— Իսկ այս բոլորի համար պետք է վճարի ոմն Թիմ Թալեր։

— Ճիշտ է,— ասաց Թիմը։— Ահա փողը։— Նա գրպանից հանեց թղթադրամները և, հաշվելով, հանձնեց բանվորներից մեկին։ Այժմ նրա մոտ մնաց ընդամենը հիսուն պֆենինգ։

Գերեզմանատան պահակը փնթփնթալով վերադարձավ իր տնակը։

Բանվորները հավաքեցին գործիքները և, հրաժեշտ տալով, բարձրացրեցին գլխարկները ու գնացին դեպի ելքը։

Թիմը, ձեռքում հիսուն պֆենինգը սեղմած, մնաց մենակ կանգնած հոր գերեզմանի մոտ։ Մյուս ձեռքում նա բռնել էր գլխարկը, որի աստառի տակ պահված էր տարօրինակ, անհասկանալի պայմանագիրը։ Թիմը պատմում էր նրան, ով արդեն վաղուց չկար, այն բոլորը, ինչ ուզում էր պատմել գոնե մեկ կենդանի մարդու։

Վերջապես նա լռեց, կրկին նայեց հոր մարմարե շիրմաքարին և գտավ, որ շատ գեղեցիկ է։ Հետո կամաց ասաց.

— Ես կվերադառնամ, երբ նորից կկարողանամ ծիծաղել։ Մինչև շուտափույթ հանդիպում,— բայց հանկարծ կակազեց և ավելացրեց.— Հուսով եմ, որ հանդիպումը կլինի շուտ...

Պահակատան մոտից անցնելիս, նա բարկացած պահակից վերցրեց շոկոլադի սալիկը։ Մնացած փողով տրամվայի տոմս գնեց։

Թիմն ինքն էլ չգիտեր, թե ուր է գնում։ Նա միայն գիտեր, որ պետք է գտնի վանդակավոր զգեստով պարոնին և ետ վերցնի վաճառված ծիծաղը։

Թերթ իններորդ

ՊԱՐՈՆ ՌԻԿԵՐՏԸ

Տրամվայի վագոնը գրեթե դատարկ էր։ Թիմից բացի, այնտեղ նստած էր միայն մի կլորիկ, կարճլիկ, ուրախ դեմքով տարեց մարդ, որը մի քիչ նման էր բարեհոգի մոպսի։

Նա տղային հարցրեց, թե ուր է գնում։

— Կայարան,— պատասխանեց Թիմը։

— Այդ դեպքում դու պետք է փոխես վագոնդ։ Այս տրամվայը կայարան չի գնում։ Դա ես հաստատ գիտեմ. ես էլ եմ գնում կայարան։

Թիմն իր գլխարկը դրել էր ծնկներին և, մատներով շոշափելով աստառը, լսում էր, թե ինչպես է ձեռքի տակ շխշիկում չորս տակ ծալված պայմանագիրը։ Եվ հանկարծ նա մտածեց, որ հիմա պետք է աշխատի որքան հնարավոր է հաճախ վիճել ամենահավանական բաների շուրջը։ Գուցե դրանցից որևէ մեկը տանո՞ւլ կտա։ Չէ որ այդ դեպքում ինքը կվերադարձնի իր ծիծաղը։

— Գրազ գանք, որ այս տրամվայը գնում է կայարան։

Կլորիկ մարդը ծիծաղեց և ասաց ճիշտ նույնը, ինչ ասել էր գերեզմանատան պահակը։

— Դու տանուլ տվեցիր գրազը դեռ այն չսկսած,— և ավելացրեց,— չէ որ սա «ինն» է։ Նա դեռ երբեք մինչև կայարան չի գնացել։

— Եվ այնուամենայնիվ ես ձեզ հետ գրազ եմ գալիս,— ասաց Թիմն այնքան վստահ, որ մարդը զարմացած լռեց։

— Ինչ-որ շատ ես վստահ, փոքրիկ։ Ուրեմն, ինչի՞ վրա ենք գրազ գալիս։

— Մինչև Համբուրգ գնալու տոմսի վրա,— արագ պատասխանեց Թիմը։ Նա ինքն էլ էր զարմացած իր արագ պատասխանից։ Այդ միտքը շատ անակնկալ եկավ նրա գլուխը։ Եվ այնուամենայնիվ պատահական չէր։ Չէ որ նա արդեն վաղուց որոշել էր նավարկության գնալ։

— Իսկ ի՞նչ է, դու պատրաստվում ես Համբո՞ւրգ գնալ։

Թիմը գլխով արեց։

«Մոպսի» բարեհամբույր դեմքը հալվեց ժպիտից։

— Դու կարիք չունես գրազ գալու, փոքրիկ։ Բանն այն է, որ ես էլ եմ Համբուրգ գնում և երկու տոմս եմ վերցրել երկու տեղանոց խցիկում։ Իսկ այն պարոնը, որը պետք է ինձ հետ մեկներ, չկարողացավ գալ։ Ուրեմն, դու կարող ես ընկերանալ ինձ։

— Եվ այնուամենայնիվ ես ուզում եմ գրազ գալ ձեզ հետ,— լուրջ պատասխանեց Թիմը։

— Լավ, արի գրազ գանք։ Բայց զգուշացնում եմ, դու տանուլ կտաս։ Իսկ ի՞նչ է քո անունը։

— Թիմ Թալեր[1]։

— Լավ անուն է։ Դրամների զրնգոցի պես է հնչում։ Իսկ իմ ազգանունը Ռիկերտ է։

Նրանք սեղմեցին միմյանց ձեռք։ Այդպես նրանք միաժամանակ և ծանոթացան, և գրազը կնքեցին։

Երբ տոմսավաճառն անցավ վագոնով, պարոն Ռիկերտը նրան հարցրեց.

— Ասացե՛ք, խնդրեմ, այս տրամվայը գնո՞ւմ է կայարան։

Տոմսավաճառը հենց ուզում էր պատասխանել, վագոնը հանկարծ ցնցվեց և կանգ առավ։ Թիմը քիչ մնաց ընկնի պարոն Ռիկերտի վրա։

Տոմսավաճառը վազեց առջևի դռան մոտ։ Հենց այդ րոպեին ներս ընկավ քաղաքային տրանսպորտի վարչության աստիճանավորներից մեկը, որի բաճկոնին արծաթե նշաններ էին ամրացված։ Նա հուզված ինչ-որ բան հաղորդեց տոմսավաճառին, վերջինս հուզված ինչ-որ բան պատասխանեց, հետո վերադարձավ վագոն և դիմեց պարոն Ռիկերտին.

— Այսօր վագոնը բացառության կարգով կգնա կայարան, որովհետև մեր գծի վրա վթար է եղել։ Իսկ սովորաբար «ինները» այդ երթուղով չի գնում։

Նա երկու մատը մոտեցրեց գլխարկին և նորից գնաց դեպի վագոնի առջևի մասը։

— Սատանան տանի, այ թե հեշտությամբ դու տարար գրազը, Թիմ Թալեր,— ծիծաղեց պարոն Ռիկերտը։— Խոստովանիր, անպայման լսել էիր, որ այս գծում լարը կտրվել է։ Դե, խոստովանիր։

Թիմը տխուր թափ տվեց գլուխը։ Նա շատ ավելի կուզեր տանուլ տալ այդ գրազը, քան տանել։ Այժմ նրա համար վերջնականապես պարզ դարձավ, որ պարոն Անատասը, մեղմ ասած, արտասովոր հնարավորությունների տեր է։

Կայարանում պարոն Ռիկերտը հետաքրքրվեց, թե որտեղ է Թիմը թողել իր ճամպրուկը։

— Այն ամենը, ինչ պետք է ինձ, մոտս է,— պատասխանեց

---

1 Բառախաղ է. Թալերը գերմանական հին արծաթե դրամ է (ծան. հայ. հրատ. թարգմ.)։

Թիմը անորոշ և բնավ ոչ մանկական ձևով։— Իսկ անձնագիրը բաճկոնիս գրպանումն է։

Թիմն իրոք իր մոտ անձնագիր ուներ։ Երբ լրացավ նրա տասնչորս տարին, նա համոզեց խորթ մորը, որ իր համար սեփական անձնագիր ստանա, պատճառաբանելով, թե ինքը ստիպված կլինի ձիարշավարանի դրամարկղում անձնագիր ներկայացնել։ Այդ փաստարկը համոզեց խորթ մորը, մանավանդ որ Թիմն արդեն մի ամբողջ տարի էր, ինչ հրաժարվել էր ձիարշավում խաղալ։

Բայց միայն այժմ Թիմը հասկացավ, թե որքան անհրաժեշտ էր անձնագիրը։ Չէ որ ինքը Համբուրգ էր գնում։

Պարոն Ռիկերտի խցիկը առաջին կարգի խցիկ էր։ Խցիկի դռանը գրված էր նրա անունը. «Քրիստիան Ռիկերտ, նավագնացության դիրեկտոր»։

Իսկ ներքևում ևս մեկ անուն կար, և, կարդալով այն, Թիմը գունատվեց. «Բարոն Զ. Անատաս»։

Երբ նրանք նստեցին իրենց տեղերը, պարոն Ռիկերտը հարցրեց.

— Դու քեզ վա՞տ ես զգում, Թիմ։ Այնպե՞ս ես գունատվել։

— Այդպես երբեմն պատահում է,— պատասխանեց Թիմը (և չի կարելի ասել, թե դա ճիշտ չէր, որովհետև ո՞ւմ հետ դա երբեմն չի պատահում)։

Գնացքը որոշ ժամանակ գնում էր էլբայի երկայնքով։ Պարոն Ռիկերտը նայում էր գետին, նրա ափերին։ Երևում էր, որ դա նրան հաճույք էր պատճառում։ Բայց Թիմը չէր նայում ոչ պատուհանից դուրս, ոչ պարոն Ռիկերտին։

«Մոպսի» շոյող հայացքը ժամանակ առ ժամանակ աննկատելիորեն կանգ էր առնում տղայի դեմքի վրա, բայց հետո նորից դառնում էր գետի գունեղ ափերին։

Պարոն Ռիկերտը մտահոգված էր։ Նա անդադար մտածում էր Թիմի մասին։

Վերջապես նա որոշեց տղային աշխուժացնել ծովային ճանապարհորդության մասին որևէ զվարճալի բան պատմելով, բայց հենց որ սկսեց պատմել, անմիջապես նկատեց, որ տղան ցրված է և բոլորովին չի լսում իրեն։

Միայն այն ժամանակ, երբ պարոն Ռիկերտը խոսք գցեց բարոն Անատասի մասին, որի տեղը խցիկում այժմ զբաղեցնում էր

Թիմը, վերջինս հանկարծ դարձավ ուշադիր և նույնիսկ զրուցասեր։

— Հավանաբար, բարոնը շատ հարո՞ւստ է,— հարցրեց Թիմը։

— Հրեշավոր հարուստ է։ Նա իր ձեռնարկությունները ունի աշխարհի բոլոր մասերում։ Այն նավագնացությունը Համբուրգում, որը ես ղեկավարում եմ, նույնպես պատկանում է նրան։

— Մի՞թե բարոնը ապրում է Համբուրգում։

Պարոն Ռիկերտը անորոշ շարժում արեց ձեռքով, որն ըստ երևույթին պետք է նշանակեր. «Աստվա՜ծ գիտի»։

— Բարոնն ապրում է ամենուր և ոչ մի տեղ,— բացատրեց նա։— Այսօր նա Համբուրգում է, վաղը՝ Ռիո դե Ժանեյրոյում, իսկ մյուս օրը, գուցե Հոնկոնգում։ Նրա գլխավոր նստավայրը, որքան ինձ հայտնի է, նրա զոյակն է Միջագետքում։

— Դուք երևի նրան շատ լավ եք ճանաչում։

— Նրան ոչ ոք լավ չի ճանաչում, Թիմ։ Նա քամելյոնի նման փոխում է իր արտաքին տեսքը։ Այ, մի օրինակ բերեմ. տարիներ շարունակ նրա շրթունքները նեղ էին և բարակ շերտի նման։ Նրա հայացքը սառն էր և ծակող։ Ընդ որում, կարող եմ երդվել, որ աչքերը շրիկ-կապտավուն գույնի էին։ Իսկ երբ ես երեկ նրան հանդիպեցի, պարզվեց, որ նրա աչքերը շագանակագույն են, բարի։ Եվ հիմա նա այլևս փողոցում արևի ակնոց չի կրում։ Բայց ամենատարօրինակն այն է, որ այդ մարդը, որի դեմքին, երդվում եմ, առաջներում երբեք ժպիտ չեմ տեսել, երեկ ծիծաղում էր տղայի նման։ Եվ ոչ մի անգամ շրթունքները չսեղմեց։ Իսկ առաջ նա դա անում էր ամեն րոպե։

Թիմն արագ շրջվեց դեպի պատուհանը։ Հենց նոր նա ակամայից սեղմել էր շրթունքները։

Պարոն Ռիկերտը զգում էր, որ իր պատմածի մեջ ինչ-որ բան միաժամանակ գրավում և հուզում է տղային։ Նա փոխեց զրույցի թեման.

— Իսկ ի՞նչ ես պատրաստվում անել Համբուրգում։

— Ուզում եմ ընդունվել որևէ նավի վրա որպես սպասավորի աշակերտ։

Եվ նորից Թիմը զարմացավ իր կայացրած անակնկալ վճռի վրա. այդ մասին նա առաջին անգամ հենց այս վայրկյանին մտածեց։ Ասենք, այդ վճիռն էլ այնքան անակնկալ չէր։ Չէ որ

որևէ բանից մարդ պետք է սկսի, եթե որոշել է նավարկության դուրս գալ։

Դիմացը նստած բարեհոդի մոպսի նման մարդու դեմքին ուրախ ժպիտ հայտնվեց։

— Լսիր, Թիմ, դու պարզապես բախտավոր տղա ես,— բավական հանդիսավորությամբ արտասանեց պարոն Ռիկերտը։— Երբ դու պատրաստվում ես գնալ կայարան, տրամվայը հանուն քեզ փոխում է իր երթուղին, իսկ երբ քեզ անհրաժեշտ է աշխատանք գտնել, դու տեղնուտեղը հանդիպում ես մի մարդու, որը կարող է քեզ աշխատանք տալ։

— Դուք կարո՞ղ եք ինձ որպես սպասավորի աշակերտ տեղավորել։

— Նավի վրա սպասավորը կոչվում է «ստյուարդ»,— ուղղեց նրան նավագնացության դիրեկտորը։— Սկզբում որոշ ժամանակ դու կաշխատես որպես սպասյակ կայուտ-կոմպանիայում, կամ էլ որպես յունգա։ Բայց ամենագլխավորն այժմ ահա թե ինչն է. ծնողներդ համաձա՞յն են։

Թիմը մի պահ մտածեց, ապա պատասխանեց.

— Ես ծնողներ չունեմ։

Խորթ մոր մասին նա ոչինչ չասաց. նա գիտեր, որ խորթ մայրը ոչ մի դեպքում թույլ չէր տա, որ ինքը նավագնացության մեկնի։ Եվ ընդհանրապես նա այլևս ոչ մի վայրկյան չէր ուզում մտածել այն ամենի մասին, ինչ թողել էր ետևում։ Հիմա նրան այլ բան էր զբաղեցնում. իրոք նրա հանդիպումը պարոն Ռիկերտի հետ երջանիկ պատահականությո՞ւն էր, թե հիմա էլ, ինչպես մարմարե շիրմաքարի և «իններորդ» տրամվայի ժամանակ, իր մասնակցությունն ուներ վանդակավոր զգեստով պարոնը։

Ծիծաղի հետ միաժամանակ Թիմը կորցրել էր ևս մի բան՝ վստահությունը մարդկանց նկատմամբ։ Իսկ դա, ինչպես հայտնի է, նույնպես լավ բան չէ։

Պարոն Ռիկերտը ինչ-որ բան հարցրեց, և Թիմը ստիպված էր ջանք գործադրել, որ հասկանա հարցի էությունը,— նրա գլխում ամեն ինչ խառնվել էր իրար։

— Ես հարցնում եմ, արդյոք համաձա՞յն ես, որ ես մի քիչ հոգամ քո մասին,— կրկնեց պարոն Ռիկերտը։— Կամ գուցե քեզ դուր չի՞ գալիս իմ դեմքը։

Թիմը առանց երկմտանքի պատասխանեց.

— Ոչ, դուր է գալիս։ Նույնիսկ շատ է դուր գալիս։

Եվ դա ճիշտ էր։ Նրա մոտ հանկարծ այնպիսի համոզվածություն ծագեց, որ չնայած այդ մարդը վանդակավոր զգեստով պարոնի ծառայողն է, բայց բնավ էլ նրա գործակիցը չէ (Թիմը դեռ պետք է ընտելանար այն մտքին, որ վանդակավոր զգեստով պարոնը վերածվեց հարուստ բարոն Անատասի)։ Եվ այդ մտքից Թիմը նորից դարձավ շատ սովորական, մարդկանց վստահող տասնչորսամյա տղա։

— Ի՞նչ է քեզ հետ կատարվում,— նրան ուղղակի հարցրեց պարոն Ռիկերտը։— Այսօր դու դեռ ոչ մի անգամ չես ժպտացել։ Իսկ դու ժպտալու այնքա՞ն առիթ ունեցար։ Քեզ որևէ դժբախտություն է պատահել։

Աշխարհում ամենից շատ Թիմը հիմա կուզենար նետվել պարոն Ռիկերտի գիրկը, ինչպես դա լինում է թատրոնում, բեմի վրա։ Բայց չէ որ այս բոլորը ոչ թե թատրոնում էր, այլ իրականում։ Անսահման կարոտը համակեց Թիմին, կարոտը որևէ մեկի նկատմամբ, ում նա կկարողանար պատմել ամեն ինչ։

Նրա համար այնքան դժվար էր հաղթահարել կարոտը, մենահատությունը, լիակատար անօգնականության զգացումը, որ խոշոր փայլուն արտասուքները կարկուտի պես գլորվեցին նրա այտերով։

Պարոն Ռիկերտը նստեց նրա կողքին և, կարծես իմիջիայլոց, ասաց.

— Դե՛, դե, լաց մի եղիր։ Ավելի լավ է պատմիր, թե ինչ է քեզ պատահել։

— Չե՛մ կարող,— բացականչեց Թիմը, դեմքը պահելով պարոն Ռիկերտի ուսին։ Նրա ամբողջ մարմինը հեկեկոցից ցընցվում էր։

Նավագնացության փոքրիկ կլորիկ դիրեկտորը վերցրեց նրա ձեռքը իր ձեռքի մեջ և բաց չթողեց այնքան ժամանակ, մինչև Թիմը քնեց։

Թերթ տասներորդ

ՏԻԿՆԻԿԱՅԻՆ ԹԱՏՐՈՆ

Այն նավը, որի վրա Թիմը աշխատանքի պետք է ընդունվեր որպես ստյուարդի օգնական, կոչվում էր «Դելֆին»։ Դա բեռնատար-մարդատար նավ էր, որը երթևեկում էր Համբուրգի և Ջենովայի միջև։

Մինչև նավի մեկնումը Թիմը դեռ երեք ազատ օր ուներ։ Այդ օրերը նա կարող էր անցկացնել պարոն Ռիկերտի տանը։

Պարոն Ռիկերտի տունը սպիտակ էր, ինչպես ամբը ամառային երկնքում, և գտնվում էր Էլբայի ափի երկայնքով ձգվող ճանապարհի վրա։ Նրա ճակատային մասում կիսակլոր պատշգամբ կար, որը հենված էր երեք սյուների վրա։ Պատշգամբի տակ գտնվող բարձր մուտքը աջ և ձախ կողմերից պահպանում էին խաղաղ և բարեհոգի տեսքով երկու քարե առյուծներ։

Ընկճված սրտով էր Թիմը նայում այդ ուրախ, լուսավոր տանը։ Առաջ, երբ նա դեռ նրբանցքում ապրող երեխա էր և կարող էր ծիծաղել, այս բոլորը, հավանաբար, նրան կախարդական երազ՝ հեքիաթային չքնաղ արքայազնի դղյակ կթվար։ Բայց նրա համար, ով վաճառել է իր ծիծաղը, երջանիկ լինելը դժվար է։ Լուրջ և տխուր Թիմը երկու բարի առյուծների միջով անցավ սպիտակ առանձնատան ներսը։

Պարոն Ռիկերտը ապրում էր իր մոր՝ հաճելի ու բարի մի ծեր կնոջ հետ։ Նրա գլուխը ամբողջովին ծածկված էր սպիտակ գանգուրներով, իսկ ձայնը կարծես փոքր աղջկա ձայն լիներ, և ամեն շնչին առիթով նա զրնգուն և ուրախ ծիծաղում էր։

— Դու միշտ տխուր ես, տղաս,— ասաց նա Թիմին։— Դա ոչ մի բանի նման չէ։ Այն էլ քո հասակում։ Դու դեռ ժամանակ կունենաս իմանալու, որ կյանքը այնքան էլ քաղցր չէ։ Ճի՞շտ է, Քրիստիան։

Նրա որդին, նավագնացության դիրեկտորը, գլխով արեց և անմիջապես մորը մի կողմ տանելով, բացատրեց նրան, որ, ամեն ինչից դատելով, տղային ինչ-որ սարսափելի դժբախտություն է պատահել և այդ պատճառով ինքը շատ է խնդրում նրա հետ վարվել որքան հնարավոր է նրբանկատ։

Ծեր կինը դժվարությամբ հասկացավ, թե ինչ էր ասում որդին։ Նա մեծացել էր ունևոր, կենսուրախ ընտանիքում, ամուսնացել էր ունևոր կենսուրախ մարդու հետ, և նրա ծերությունն էլ նույնպես անցնում էր ունևոր և կենսուրախ։ Մեծ քաղաքների նեղ նրբանցքների մասին նա գիտեր միայն սրտաճմլիկ պատմվածքներից, որոնց վրա դառը արտասուքներ էր թափում, իսկ վեճերի, նախանձի, խարդավանքների և նման բաների մասին բոլորովին ոչ լսել էր, ոչ էլ ուզում էր լսել։

Ամբողջ կյանքում նա մնացել էր որպես երեխա։ Նա կարծես երկնագույն կրոկուս լիներ, որը կլոր տարին ծաղկում էր։

— Այ թե ինչ, Քրիստիանիկ,— ասաց նա որդուն, երբ վերջինս նրան պատմեց իր ողջ իմացածը,— գնամ մի քիչ զբոսնեմ տղայի հետ։ Այ կտեսնես, որ ես նրան կստիպեմ ծիծաղել։

— Զգույշ եղիր, մայրիկ,— զգուշացրեց նրան պարոն Ռիկերտը։

Եվ ծեր կինը խոստացավ լինել զգույշ։

Թիմի համար նրա հետ զբոսնելը առավել ծանր էր հենց այն պատճառով, որ տղան սարսափելի կապվեց այդ ութսունից ավելի տարիք ունեցող հաճելի մանուկի հետ։ Երբ նա բռնում էր Թիմի ձեռքը իր փոքրիկ, փափուկ թաթիկով, տղան ուզում էր աչքով անել նրան և ծիծաղել։ Թիմը կարող էր նույնիսկ մի փոքր կատակել նրա հետ՝ ինչպես մեծ քրոջ հետ,— դա նրա համար շատ հարմար կլիներ։

Բայց նրա ծիծաղը հեռու էր։ Նրա հետ աշխարհով մեկ շրջում էր վանդակավոր զգեստով տարօրինակ պարոնը՝ հարուստ բարոն Անատասը։

Հիմա Թիմը հասկանում էր, որ վաճառել էր երբևէ իր ունեցած բաներից ամենաթանկագինը։

Երեքշաբթի օրը հիանալի գաղափար ծնվեց ծեր Ֆրաու Ռիկերտի գլխում։ Նա թերթում կարդացել էր, որ տիկնիկային թատրոնը այսօր ներկայացում է տալիս «Սագ, սագ, որ մոտենամ կկպչեմ» հեքիաթի հիման վրա։ Այդ հեքիաթը պատմում էր մի արքայադստեր մասին, որը չէր կարողանում ծիծաղել։ Ֆրաու Ռիկերտը շատ լավ էր հիշում հեքիաթը և որոշեց ներկայացումը նայել չծիծաղող տղայի հետ։

Նա իր գաղափարը համարում էր ուղղակի փայլուն, բայց առայժմ այդ մասին ոչ ոքի ոչինչ չէր ասում։ Ամբողջ առավոտ

Նա խորամանկորեն ծիծաղում էր, իսկ ճաշից հետո երկու տղաներին՝ պարոն Ռիկերտին և Թիմին հրավիրեց իր հետ գնալ տիկնիկային թատրոն։ Եվ քանի որ նրանցից ոչ մեկը ոչինչ մերժել չէր կարող ծեր կնոջը, երեքով ուղղվեցին դեպի տիկնիկային թատրոն։

Տիկնիկային թատրոնը գտնվում էր նրանց տանը շատ մոտ։ Համբուրգում նա ներկայացումներ էր տալիս Էլբայի ափին գտնվող Օվելգյոն արվարձանում. այգիներով շրջապատված մաքուր տնակները կարծես շարք էին կազմել գետի մոտ, նրա նախկին բարձր ափի տակ։ Այստեղ փոքր պանդոկի խորքի սենյակում էր իր վարագույրները կախել տիկնիկային թատրոնը։

Նեղլիկ դահլիճը լեցուն էր երեխաներով։ Միայն տեղ-տեղ աթոռների մեջքերի վերևում երևում էին մայրիկների և հայրիկների գլուխները։

Ֆրաու Ռիկերտը անմիջապես երեք ազատ աթոռ նկատեց երկրորդ կարգում և, ծիծաղելով ու ձեռքերը թափահարելով, սկսեց անցնել դեպի այդ աթոռները։ Որդին և Թիմը հնազանդ հետևում էին նրան։ Եվ հենց որ նրանք նստեցին, լույսը դահլիճում հանգավ, և փոքրիկ թատրոնի փոքրիկ կարմիր վարագույրը բացվեց։

Ներկայացումը սկսվեց չափածո նախաբանով՝ արքան զրուցում էր շրջմոլիկի հետ։ Նրանք գիշերով հանդիպել էին դաշտում, երբ լուսինը նոր էր դուրս եկել։ Արքայի դեմքը գունատ էր և թախծոտ։ Շրջմոլիկը՝ անգամ լուսնի դեղին լույսով լուսավորված, կարմիր էր, և ժպիտն էլ բոլորովին չէր անհետանում նրա դեմքից։ Ահա այդ երկուսի զրույցը, որը դարձել էր հեքիաթի նախաբան.

Արքա

Լսել եմ, որ իմ տերության սահմանում
Մի անժպիտ իշխանուհի է մնում։
Ես լուրջ մարդ եմ և ծիծաղի թշնամի,
Ուզում եմ նա ինձ ամուսին անվանի։
Էյ, բարեկամ, դու մի ոսկի կստանաս,
Եթե նրա տունը ցույց տալ խոստանաս։

Շրջմոլիկ

Ահա տունը։ Այս դղյակումն է ապրում։
Ինչ խոսք, ես էլ նրա մոտ եմ շտապում։
Բայց քեզ համար, արքա, ոչ մի հույս չկա,
Հենց ներս մտա՝ կուրախացնեմ աղջկան։

Արքա

Դատարկ ջանքեր զուր հավատի ու հույսի,
Դեմքը նրա ժպիտը չի ակոսի։
Ով որ գիտի ինչ է մահ ու մահացու
Նրա դեմքը չի լինելու անարցունք։
Երկիրը մեր չնչին բան է, գնդի չափ,
Ինչպես փայլուն մի օճառի պղպջակ,
Իսկ այս բանը ով և երբ էլ որ հիշի
Ծիծաղելը կվերագրի ապուշին։

Շրջմոլիկ

Արքա է, բայց դեռ հիմար չէ վերջնական։
Թվում է ճիշտ, սակայն ճիշտ չէ մեր արքան։
Ուրեմն, մարդ ծնվում մահվա՞ն է գնում,
Նպատակը ի՞նչ է, լոկ մա՞հն է մնում։
Գինու թասը նրա համա՞ր փայլփլաց,
Որ քիչ հետո նրան տեսնենք ջարդվա՞ծ։
Չէ, բարեկամ, թասը միշտ էլ գինով լի
Պիտի հագուրդ տա ծարաված սրտերին։
Ի՞նչ փույթ, թե նա պիտի ջարդվի երբևէ,
Կարևոր է, որ լիքն ու լավն է եղել։

Արքա

Ինչ փույթ, թե նա գինով լցված փայլփլաց,
Ցրը կանցնի, և նա կընկնի ջարդված։

Շրջմոլիկ

Դրա համար է նա ցնծում ու վայելում,
Որ լավ գիտի. ոչինչ հավերժ չի տևում։

Արքա

Չէ, երևի, չհասկացանք մեկ-մեկու,
Արի նրա դատին գնանք ես ու դու։
Ու թե նրան ուրախացնել կարենաս
Դու իմ թագն էլ աղջկա հետ կստանաս։

Շրջմոլիկ

Ես հիմար չեմ, որ պայմանից այդ փախչեմ։
Առանց ծիծաղ մարդը գազան կկոչվեր։
Մարդն է միայն այդ շնորհքով օժտված.
Առիթ եղավ, կծիծաղի նա սրտանց։

Վարագույրն իջավ, և դահլիճը գրեթե լրիվ մթնեց։ Միայն վարագույրի նեղ արանքից մի քիչ լույս էր թափանցում։ Երեխաների մեծ մասը նախերգանքը չհասկացավ և հիմա փսփսում էին իրար հետ, անհամբերությամբ սպասելով, թե երբ է վերջապես ներկայացումը սկսվելու։

Միայն երեք հոգի առջևում, երկրորդ կարգում, նստած էին միանգամայն լուռ. նրանցից յուրաքանչյուրը իր մտքերի հետ էր։ Ծեր ֆրաու Ռիկերտը զայրանում էր, որովհետև պարզվում է, որ ինքը մտածում է ճիշտ այնպես, ինչպես ինչ-որ շրջմոլիկ։ Շրջմոլիկների մասին նա այնքան էլ բարձր կարծիքի չէր, թեկուզև շատ փող էր բաժանում աղքատներին։ Նա շատ ավելի կուզեր համաձայն լինել արքայի հետ, չէ որ նա այնքա՜ն լուրջ էր և այնքա՜ն տխուր։

Պարոն Ռիկերտը, որ նստած էր նրա աջ կողմում, կիսախավարի միջով նայում էր Թիմի դեմքին։ Միայն մի բարակ լուսավոր ճառագայթ էր ընկնում տղայի ճակատին, գունատ, ինչպես արքայինը՝ բեմում. պարոն Ռիկերտը վախենում էր, որ իր մայրիկի նախաձեռնությունը այնքան էլ մեծ հաջողությամբ չպսակվի—չէ որ դեռ երեկ էր նա տեսել, թե ինչպես էր լաց լինում Թիմը։

Թիմի գլխում միայն մի միտք կար. «Միայն թե հիմա ոչ ոք ինձ հետ չխոսի»։ Արտասուքները խեղդում էին նրան։ Եվ նրա ականջներում կրկին ու կրկին հնչում էին նախերգանքի վերջին տողերը.

Մարդն է միայն այդ շնորհքով օժտված.
Առիթ եղավ, կծիծաղի նա սրտանց։

Կարող է ծիծաղել... Կարող է ծիծաղել...

Վարագույրը բարձրացավ, և Թիմի ուշադրությունը աստիճանաբար գրավեց այդ գունատ և շատ լուրջ արքայադուստրը, որը դղյակի պատուհանից նայում էր դուրս։

Դղյակը շրջապատող այգում, ճիշտ արքայադստեր պատուհանի տակ, հայտնվեց հայր-արքան։ Հենց որ դուստրը նրան տեսավ, անմիջապես դանդաղ հեռացավ պատուհանից։

Նորին մեծությունն արքան նստեց շատրվանի մոտ, ջրավազանի եզրին, և սկսեց տխուր երգել ջրի ու ծաղիկների համար։ Արքան գանգատվում էր նրանց, որ դիմել է բոլոր հռչակավոր կատակասերներին՝ ծաղրածուներին և հիմարներին, փորձել է աշխարհի երեսին եղած բոլոր կատակները, որ իր դստերը ծիծաղեցնի։ Բայց, ավա՜ղ, ապարդյուն։

Հետո արքան, ծանր հոգոց քաշելով, վեր կացավ։ Դահլիճի երեխաները անշարժ նստած էին։

Նորին մեծությունը ետ ու առաջ էր քայլում այգում, մտածելով իր և աղջկա մասին, իսկ հետո հանկարծ կանգ առավ և բացականչեց.

«Ախ, եթե որևէ մեկը նրան ծիծաղեցներ, ես անմիջապես նրան կնության կտայի արքայադստերը և թագավորության կեսն էլ հետը»։

Հենց այդ պահին այգի մտան թափառաշրջիկը և տխուր երիտասարդ արքան։ Լսելով հայր-արքայի հուսահատ ճիչը, թափառաշրջիկը ուղղակի հայտարարեց.

«Ձերդ մեծություն, ներողամիտ եղեք։ Ուրեմն, եթե ես ծիծաղեցնեմ արքայադստերը, նա կդառնա իմ կինը։ Իսկ թագավորության կեսը դուք կարող եք թողնել ձեզ. ահա այս պարոնը, որն ինձ ուղեկցում է, իր թագավորությունն ամբողջությամբ տալիս է ինձ»։

Արքան զարմացած նայեց ճամփորդներին, որոնք ակամայից դարձել էին նրա խոստումի վկաները։ Գունատ երիտասարդ արքան նրան շատ ավելի դուր եկավ, քան կարմրադեմ թափառաշրջիկը։ Չէ որ արքաներն այդ հարցում իրենց ճաշակն ունեն։ Սակայն չցանկանալով խախտել խոստումը, նա ասաց.

«Օտարական, եթե քեզ հաջողվի ծիծաղեցնել արքայադստերը, դու կդառնաս արքայազն և նրա ամուսինը»։

Թափառաշրջիկը հենց դրան էր սպասում։ Նա հանկարծ ամբողջ թափով սլացավ ինչ-որ տեղ, արքաներին իրար հետ մենակ թողնելով այգում։

Այդ ժամանակ վարագույրը փակվեց, և հայտարարեցին ընդմիջում։

Այժմ փոքրիկ հանդիսատեսները անհամբերությամբ սպասում էին շարունակությանը։ Բոլորն ուզում էին իմանալ՝ կծիծաղի՞ արքայադուստրը, թե ոչ։

Թիմը թաքուն հույս ուներ, որ նա լուրջ կմնա։ Չնայած ներկայացման սկզբից շատ քիչ ժամանակ էր անցել, արքայադուստրը նրա համար ասես քույր էր դարձել. նրանք երկուսով, ձեռք-ձեռքի տված, կարող էին անվախ նայել ծիծաղող աշխարհի երեսին։ Բայց Թիմը շատ լավ գիտեր, թե ինչպես են հեքիաթներն ավարտվում։ Նա տխուր սպասում էր այն րոպեին, երբ արքայադուստրը կծիծաղի։

Եվ նա ստիպված չեղավ երկար սպասելու։ Երբ վարագույրը բարձրացավ, արքայադուստրը նորից հայտնվեց պատուհանում, իսկ երկու արքաները նստեցին շատրվանի մոտ, ջրավազանի եզրին։ Բեմի ետևից լսվեց երգ ու ծիծաղ, և հանկարծ պալատի այգում նորից հայտնվեց թափառաշրջիկը։ Նա պարանով իր ետևից բերում էր ոսկե վզակալ հագցրած մի սագ, իսկ նրա ետևից, ձեռքը սագի պոչին դրած, արագ քայլերով գալիս էր մի հաստլիկ մարդ, և թվում էր, թե նրա ձեռքը սոսնձվել է սագի փետուրներին։ Մյուս ձեռքով նա իր ետևից քարշ էր տալիս մի նիհար մարդուկի, որը քայլելու ժամանակ այս ու այն կողմ էր նետվում։ Այս վերջինս իր հերթին իր ետևից քարշ էր տալիս մի ծեր կնոջ, ծեր կինը՝ տղայի, տղան՝ աղջկա, և աղջիկը՝ շնիկի։ Թվում էր, թե կախարդական մի ուժ նրանց բոլորին անց է կացրել մի թելի վրա։ Կարծես անտեսանելի զսպանակների ներգործությամբ նրանք թռչկոտում և ցատկոտում էին այս ու այն կողմ, վերև ու ներքև։ Լնդ որում այնպես էին ծիծաղում, որ արքայադուստրը լսվում էր պալատի այգում։

Արքայադուստրը կիսով չափ դուրս կախվեց պատուհանից, որ ավելի լավ տեսնի այդ երթը։ Նա լայն բացել էր աչքերը, բայց նրա դեմքը մնում էր լուրջ։

«Չծիծաղես, չծիծաղես, քույրիկս,—մտովի խնդրում էր նրան Թիմը։— Թող նրանք բոլորը ծիծաղեն, բացի ինձնից ու քեզնից»։

Բայց նա իզուր էր խնդրում։ Տխուր երիտասարդ արքան ցըրված շոյեց ամենավերջում վազող շնիկին, և նրա ձեռքը կարծես կպավ շան պոչին։ Վախեցած՝ նա մյուս ձեռքով բռնեց հայր-արքայի ձեռքը։ Եվ ահա արդեն երկու արքաները միացան մնացածներին, եզրափակելով այդ անսովոր շքերթը։ Նրանց ջղաձիգ շարժումներից երևում էր, որ շատ կուզենային ազատվել այդ տարօրինակ կախարդանքից, բայց դա ոչ մի կերպ չէր հաջողվում։ Նրանք ստիպված էին հաշտվել իրենց համար անսովոր այդ դրությանը և, հավանաբար, սկսեցին անգամ հաճույք զգալ դրանից։ Թվում էր, թե նրանց ոտքերը ուր որ է կսկսեն պարել, շրթունքների անկյունները դողում էին, և շուտով նրանք արդեն սկսեցին ծիծաղելի թռչկոտել և ցատկոտել, անընդհատ փոթկալով ծիծաղից։

Այդ վայրկյանին պատուհանից լսվեց արքայադստեր ծիծաղը։ Սկսվեց երաժշտությունը։ Բոլորը պարում էին, ցատկոտում, ծիծաղում և հաճույքից ոտքերը գետին զարկում։

Խեղճ Թիմը նստած էր կարծես քարացած։ Նա նման էր ժայռի, որը շրջապատված էր ծիծաղի ծովով։ Ծեր ֆրաու Ռիկերտը այնպես էր նրա կողքին ծիծաղում, որ նույնիսկ դեմքը փակել էր ձեռքերով և կռացել էր առաջ։ Նրա աչքերից արտասուքներ էին հոսում։

Եվ այդ ժամանակ Թիմը առաջին անգամ նկատեց, թե ծիծաղող մարդու շարժումները որքան նման են լաց լինողի շարժումներին։ Նա դեմքը փակեց ձեռքերով, կռացավ առաջ և ձևացրեց, թե նույնպես ծիծաղում է։

Բայց Թիմը չէր ծիծաղում։ Նա լաց էր լինում։ Եվ արտասուքների միջից կրկնում էր ինքն իր համար. «Ինչո՞ւ ծիծաղեցիր, քույրիկս։ Ինչո՞ւ, ինչո՞ւ ծիծաղեցիր»։

Երբ վարագույրը իջավ, և լույսը վառվեց, ծեր ֆրաու Ռիկերտը պայուսակից հանեց ժանյակավոր թաշկինակը, դրեց աչքերին և, սրբելով արտասուքները, մեկնեց Թիմին.

— Վերցրու, Թիմ, դու էլ սրբիր արտասուքներդ։ Տեսնո՞ւմ ես։ Ես այդպես էլ գիտեի, որ այս ներկայացմանը դու անպայման կծիծաղես։

Եվ ծեր կինը հաղթականորեն նայեց որդուն։

— Այո, մայրիկ,— հարգալից ասաց պարոն Ռիկերտը,— դա իրոք հրաշալի միտք էր։

Բայց երբ նա այդ ասում էր, նրա դեմքը տխուր էր։ Նա հասկացավ, որ տղան հոգու բարությունից և հուսահատությունից դրդված խաբեց ծեր կնոջը։ Իսկ Թիմը հասկացավ, որ պարոն Ռիկերտը ամեն ինչ հասկացել է։

Ձիարշավարանի այն չարաբաստիկ օրվանից հետո առաջին անգամ նրա հոգում անզոր զայրույթ բարձրացավ բարոնի դեմ։ Զայրույթը կարծես հեղեղեց նրան։ Եվ այդ րոպեին նա հաստատ վճռեց, որ ետ կնվաճի իր ծիծաղը ի՞նչ գնով էլ որ լինի։

ՓՈԹՈՐԻԿ ԵՎ ԱՆԴՈՐԸ

Փրկված է նա, ով ծիծաղում է:

Անգլիական ասացվածք

Թերթ տասնմեկերորդ

ՀՐԵՇԱՎՈՐ ԲԱՐՈՆԸ

Թիմի բախտից նավը Ջենովա էր մեկնում հաջորդ առավոտյան։ Մեր ֆրաու Ռիկերտը սպիտակ առանձնատան աստիճաններին կանգնած, թափահարում էր թաշկինակը, և Թիմը նույնպես թափահարում էր թաշկինակը նրան ի պատասխան այնքան ժամանակ, քանի դեռ առանձնատունը չէր անհետացել տեսադաշտից։

Նավագնացության դիրեկտորն ինքը ուղեկցեց Թիմին մինչև նավամատույց։ Նա Թիմի համար գնեց անդրավարտիք, բաճկոն և կոշիկներ, ձեռքի ժամացույց և նավաստիական նոր ճամպրուկ։ Հրաժեշտ տալով Թիմին, նա ձեռքը մեկնեց և ասաց.

— Գլուխդ վեր, փոքրիկ։ Երեք շաբաթից հետո, երբ վերադառնաս, աշխարհը քո աչքում բոլորովին այլ կերևա։ Եվ դու անպայման նորից կծիծաղես։ Որոշեցի՞նք։

Թիմը հապաղեց, ապա արագ ասաց.

— Երբ ես վերադառնամ, պարոն Ռիկերտ, ես նորից կծիծաղեմ։ Որոշեցինք։— Հետո նա ավելացրեց,— Շատ շնորհակալ եմ,— բայց հազիվ լսելի, որովհետև կոկորդը սեղմվեց, և նա աստիճաններով վազեց դեպի տախտակամած։

Նավապետը մռայլ մարդ էր և սիրում էր խմել։ Ուրիշ ոչինչ նրան չէր էլ հետաքրքրում։ Նա հազիվ նայեց Թիմին, երբ վերջինս նրան ներկայացավ, և փնչացրեց.

— Դիմիր ստյուարդին։ Նա էլ նոր մարդ է։ Նրա հետ մի խցիկում կլինես։

Թիմը կյանքում առաջին անգամն էր լինում նավի վրա։ Նա շփոթված թափառում էր, փնտրելով ստյուարդին, մեկ բարձրանալով, մեկ էլ իջնելով երկաթե սանդուղքներով, քայլում էր նեղ միջանցքներով, ընկնելով մեկ նավի քթի, մեկ պոչի, մեկ վերևի, մեկ էլ ներքևի տախտակամածները։ Նավի անձնակազմը համազգեստ չէր կրում։ Դրա համար էլ Թիմը նույնիսկ չգիտեր, թե ում դիմեր։ Նավով մեկ թափառելով, նա միջին տախտակամածի բաց դռնից պատահմամբ ընկավ փոքր հյուրասենյակի նման ինչ-որ տենյակ։ Նրա մեջտեղից դեպի նավի խորքն էին գնում գորգով ծածկված և բարձր ողորկ բազրիքով աստիճանները։ Ներքևից տապակած ձկան հոտ էր փչում, և Թիմը գլխի ընկավ, որ հենց այնտեղ է, ըստ երևույթին, նրա ապագա աշխատատեղը։

Աստիճաններից դեպի աջ գտնվում էր կամբուզը (խոհանոցը), որտեղից տարածվում էին ամեն տեսակ համեղ հոտեր։ Առջևում, կիսաբաց երկփեղկանի դռնից երևում էր մեծ սալոն-ռեստորանը։ Սեղաններն ու աթոռներն այստեղ ամրացված էին հատակին։

Սպիտակ բաճկոնով մի մարդ այդ ժամանակ դասավորում էր սպասքները։ Նրա մարմինը և մուգ գույնի գանգուր մազերով ծածկված խոշոր, կլոր գլուխը Թիմին թվացին ծանոթ, թեպետ նա չէր կարողանում հիշել, թե ով է այդ մարդը։

Երբ տղան մտավ սալոն, սպիտակ բաճկոնով մարդը շրջվեց և ասաց, բոլորովին չզարմացած.

— Ահա և դու եկար։

Թիմը զարմացած էր։ Նա ճանաչում էր այդ մարդուն։ Եվ որքան էլ տարօրինակ է, նույնիսկ հիշում էր նրա անունը։ Նրա անունը Կրեշիմիր էր։ Դա հենց այն մարդն էր, որը ձիարշավարանում տհաճ հարցեր էր տալիս իրեն, իսկ հետո, հրաժեշտ տալով, ասաց. «Գուցե երբևէ ես կկարողանամ քեզ օգնել...»։ Դա հենց այն մարդն էր, որի ծակող ջրիկ-կապտավուն աչքերը հիշեցնում էին վանդակավոր զգեստով պարոնի՝ Անատասի աչքերը, որին փնտրում էր Թիմը։

Կրեշիմիրը թույլ չտվեց, որ Թիմը երկար մտորի։ Նա տղային տարավ իրենց ընդհանուր խցիկը, Թիմի ճամպրուկը գցեց մահճին, ապա իր ճամպրուկից հանեց և նրան մեկնեց ճիշտ այնպիսի վանդակավոր անդրավարտիք և սպիտակ բաճկոն, ինչպիսին ինքն էր հագել։

Նոր զգեստը Թիմի վրայով էր և սազեց նրան։

— Դու կարծես ստյուարդ ծնված չիներես.— ծիծաղեց Կրեշիմիրը։

Բայց տեսնելով Թիմի լուրջ դեմքը, ձայնը կտրեց և լռեց։ Նա մտախոհ նայեց տղային և փնթփնթաց, ավելի շատ իր, քան Թիմի համար։

— Կուզեի իմանալ, թե ինչ գործարք եր դուք կնքել։— Հետո, կարծես ցանկանալով վանել տհաճ միտքը, նա գլուխը թափ տվեց, ուղղվեց և բարձր ասաց.

— Դե, իսկ այժմ աշխատանքի՛։ Գնա կամբուզ Էնրիկոյի մոտ և օգնիր նրան կարտոֆիլ մաքրելու։ Եթե դու ինձ պետք դաս, կկանչեմ։ Սրահի միջով դեպի աջ։

Թիմը ստիպված էր մինչև երեկո կամբուզում կարտոֆիլ մաքրել։ Կոկ Էնրիկոն ջենովացի ծեր հարբեցող էր, նավապետի պես, օդուց բացի քիչ բանով էր հետաքրքրվում։ Նավի վրա նավապետը ոչ միայն տեր է և հրամանատար, այլև վարվելակերպի օրինակ է ծառայում նավաստիներից յուրաքանչյուրի համար։ Եթե նավապետը խիստ է և գործնական, ապա նրա անձնակազմն էլ այդպիսին է։ Եթե նա ծույլ է և անփույթ, ինչպես այստեղ էր, ա՞հելֆինս նավի վրա, ապա և ողջ անձնակազմն էլ, սկսած նավապետի օգնականից և վերջացրած նավի խոհարարով, ծույլ է և անփույթ։

Էնրիկոն Թիմին անընդհատ զվարճալի պատմություններ էր պատմում գերմաներենի և իտալերենի ամենահրեշավոր խառնուրդով, և քանի որ Թիմը ոչ մի անգամ չծիծաղեց, կոկը որոշեց, որ տղան, հավանաբար, իրեն չի հասկանում։ Չնայած դրան նա անվերջ պատմում էր ու պատմում իր պատմությունները, ըստ երևույթին սեփական բավականության համար, և անգամ ուշադրություն չէր դարձնում, որ Թիմը կարտոֆիլի կեղևը շատ հաստ էր մաքրում։

Իսկ երեկոյան, երբ նավը դուրս եկավ Համբուրգի նավահանգստից, Թիմը ստիպված էր գնալ սալոն-ռեստորան, օգնելու Կրեշիմիրին։ Եվ ամբողջ ժամանակ, քանի գտնվում էր սալոնում, նա իր վրա զգում էր ստյուարդի ջրա-կապույտ աչքերի գննող հայացքը։ Ալյալվված Թիմը անգամ չփոթեց որոշ պատվերներ։ Մի ամերիկուհու համար վիսկիի փոխարեն նա լիմոնի հյութ բերեց, իսկ ինչ-որ շոտլանդացի լորդի սեղանին ապուխտով ձվածեղի փոխարեն երկու կտոր ընկույզով տորթ էր դրել։

Կրեշիմիրը առանց կշտամբանքի ամեն անգամ ուղղում էր նրա սխալը և գործի ընթացքում Թիմին ծանոթացնում էր նրա նոր մասնագիտության գաղտնիքներին։

— Ձախ կողմից մոտեցիր։ Երբ սպասարկում ես աջ ձեռքով, ձախը բոնիր մեջքիդ ետևում։ Պատառաքաղը ձախ կողմում, դանակը՝ աջ, սուր կողմը դեպի ափսեն։

Ընթրիքից հետո Թիմին նորից ուղարկեցին կամբուզ՝ օգնելու խոհարարին ափսեները լվանալու։ Դա նա անում էր անվարժ և ցրված, որովհետև գլխում բազմաթիվ հարցեր էին պտտվում։ Ինչո՞ւ բարոնը չմեկնեց գնացքի այն խցիկով, որով Թիմը Համբուրգ մեկնեց պարոն Ռիկերտի հետ։ Ինչո՞ւ հանկարծ Կրեշիմիրը որպես ստյուարդ հայտնվեց հենց այն նավում, որի վրա որպես յունգա վարձվեց Թիմը։ Ինչո՞ւ պարոն Ռիկերտը նրան հենց այդ նավի վրա տեղավորեց։ Ինչո՞ւ, ինչո՞ւ, ինչո՞ւ։

Եվ հանկարծ Թիմը լսեց մի բարձրաձայն «ինչու»։ Տղամարդու ձայնը հարցնում էր.

— Ինչո՞ւ դուք հայտնվեցիք հենց այս նավի վրա։

Իսկ մյուսը պատասխանում էր.

— Իսկ ինչո՞ւ ես չէի կարող հենց այստեղ հայտնվել։

Դա Կրեշիմիրի ձայնն էր։

— Գնանք տախտակամած,— հրամայեց առաջին ձայնը։

Թիմը լսեց ոտնաձայն նեղ երկաթե սանդուղքի վրա, որը տանում էր դեպի նավախել։ Հետո քայլերը և ձայները նվազեցին։ Բայց Թիմի ականջներում նրանք շարունակում էին հնչել։ Նրան թվաց, թե նա ճանաչում է այն ձայնը, որը դիմում է Կրեշիմիրին։ Եվ հանկարծ,— հենց այդ վայրկյանին նա սրբում էր ապուրի ամանը,— հանկարծ նա հասկացավ, թե դա ում ձայնն է։

Դա այն մարդու ձայնն էր, որին նա վաճառել էր իր ծիծաղը, դա բարոն Անատասի ձայնն էր։

Ապուրի ամանը տահեց նրա ձեռքից և, ընկնելով կամբուզի հատակին, փշուր-փշուր եղավ։ Խոհարար Էնրիկոն «Mama mia»[1] բացականչելով, ցատկեց մի կողմ, իսկ Թիմը վազեց սանդուղքն ի վեր, ձայների հետևից։

Վերևում ոչ ոք չկար։ Երկու լապտեր թույլ լուսավորում էին նավախելը և առագաստով ծածկված նավակը։ Եվ հանկարծ Թի-

---

[1] Մայրիկ (իտալ.)։

մը ինչ-որ շշուկ լսեց։ Նա նայեց դեպի ձախ, այն կողմը, որտեղից լսվում էին ձայները, և նրան թվաց, որ նավակի ետևում ինչ-որ մեկը շարժվում է։ Թիմը ոտնաթաթերի վրա կամաց մոտեցավ և տեսավ, որ նավակի ետևից երևում են երկու զույգ ոտքեր։ Նրան այլևս ոչինչ չհաջողվեց տեսնել։ Բայց նա համոզված էր, որ նավակի ետևից լսվող ձայները պատկանում են Կրեշիմիրին և բարոնին։ Քայլ առ քայլ, շունչը պահած, Թիմը ավելի ու ավելի էր մոտենում։ Մեկ անգամ տախտակամածը ճռռաց։ Բայց նավակի հետևում պահված երկուսը ոչինչ չլսեցին։

Վերջապես Թիմը այնքան մոտեցավ, որ կարողացավ լսել նրանց կիսաշշուկով խոսակցությունը։

— ...պարզապես ծիծաղելի է,— ֆշշացնում էր բարոնը։— Մի՞թե դուք ուզում եք ինձ հավատացնել, որ ծախսել եք բաժնեթղթերով ստացած բոլոր դրամները։

— Հենց որ դուք ինձ հանձնեցիք բաժնեթղթերը, նրանք անմիջապես սկսեցին արժեզրկվել... Կայծակնային արագությամբ,— հանգիստ նկատեց Կրեշիմիրը։

— Համաձայն եմ։— Բարոնը ծիծաղեց գնված ծիծաղով։— Բաժնեթղթերը արժեզրկվեցին, որովհետև բորսայում ես ազդեցիկ մարդ եմ։ Բայց, իմ հաշիվներով, քառորդ միլիոն պետք է մնար ձեզ մոտ։

— Այդ քառորդ միլիոնը ես դրեցի մի բանկում, որն անմիջապես սնանկացավ, բարոն։

— Դա էլ ձեր բախտից է,— բարոնը նորից ծիծաղեց։

Եվ Թիմը զգաց, որ իր ամբողջ մարմնով սարսուռ անցավ։ Նա պատրաստ էր նետվելու բարոնի վրա։

Եվ այնուամենայնիվ նա այնքան խելք ունեցավ, որ հասկացավ, թե ինչ գնով էլ լինի պետք է մինչև վերջ լսի խոսակցությունը։

— Եթե դուք նույնիսկ ստիպված եք նորից աշխատել,— այժմ ասաց բարոնը,— ապա դա դեռ չի նշանակում, որ պետք է աշխատանքի անցնեիք հենց այս նավի վրա, տղայի հետ միասին։

Այս անգամ ծիծաղեց Կրեշիմիրը։

— Ոչ ոք չի կարող ինձ դա արգելե՞լ,— բացականչեց նա։

— Կամաց,— ֆշշաց Անատասը։

Կրեշիմիրը կիսաձայն շարունակեց.

— Ես ձեզ վաճառեցի իմ աչքերը և փոխարենը ստացա ձեր ծակող, ձկան աչքերը։ Դրա փոխարեն դուք ինձ հանձնեցիք մեկ միլիոնի արժեթղթեր։ Բայց ոչ մի կոպեկ այդ միլիոնից իմ գրպանը չընկավ։ Դուք ինձ խաբեցիք։ Բայց այս անգամ ես ձեզնից խորամանկ կգտնվեմ, բարոն։ Ես երկու անգամ տեսել եմ ձեզ տղայի հետ ձիարշավարանում։ Ես հետևել եմ նրան և պարզել, որ դրանից հետո տղան սկսեց պարբերաբար շահել ձիարշավում։ Իսկ հետո ես պարզեցի, որ փոքրիկը դարձավ տխուր ու մռայլ, ինչպես հիվանդ, միայնակ ծերուկ։

Երբ Թիմը լսեց այս խոսքերը, նրա սիրտն այնպես բաբախեց, կարծես ուզում էր պոկվել տեղից, բայց նա տեղից չշարժվեց։

Կրեշիմիրը շարունակեց.

— Միևնույն է, ես ձեր դիմակը կպատռեմ։ Ես կպարզեմ, թե ինչ գործարք եք դուք կնքել տղայի հետ, բարոն։ Արդեն չորրորդ տարին է, ինչ ես հետևում եմ նրան, և ես քիչ ջանք չեմ գործադրել, որ որպես ստյուարդ տեղավորվեմ այս նավի վրա։ Իսկ հիմա...

— Իսկ հիմա,— ընդհատեց բարոնը Կրեշիմիրին,— ես նորից ձեզ առաջարկում եմ մեկ միլիոն կանխիկ գումար։ Կանխավճարը կարող եք ստանալ հենց այժմ։

— Այս անգամ, բարոն, առավելությունը իմ կողմն է։— Այն, ինչ ինձ հայտնի է, ես կարող եմ օգտագործել տարբեր ձևով՝ հետ պահանջել իմ աչքերը, ընդունել ձեզնից միլիոնը, կամ էլ վերջապես, և դա, թերևս, բոլորովին էլ վատ չէր լինի, կարող եմ ձեզ ստիպել չեղյալ համարել պայմանագիրը տղայի հետ, ինչպիսին էլ որ լինի այդ պայմանագիրը։

Թիմը մթության մեջ կծում էր բռունցքը, վախենալով, որ կտնքա։

Մի քանի րոպե տախտակամածում իշխում էր լռությունը։ Հետո նորից լսվեց բարոնի ձայնը.

— Իմ գործարքը տղայի հետ ձեզ չի վերաբերում։ Բայց եթե դուք այդքան գնահատում եք ձեր աչքերը, ես պատրաստ եմ, թերևս, որոշ պայմանով...

Կրեշիմիրը, ծանր շնչելով, ընդհատեց նրան.

— Այո, բարոն, ես թանկ եմ գնահատում իմ ծեր աչքերը։ Ես գնահատում եմ իմ ծեր, պարզամիտ, հիմար, բարի աչքերը

շատ ավելի, քան աշխարհի բոլոր հարստությունները։ Ասենք, դա դուք երբեք չեք հասկանա։

— Ես դա երբեք չեմ հասկանա,— հաստատեց բարոնի ձայնը։— Եվ այնուամենայնիվ ես համաձայն եմ որոշ պայմաններով չեղյալ համարել մեր գործարքը։ Բարի եղեք, խնդրեմ, այս փոքր հայելու մեջ նայել ձեր դեմքին։

Այս խոսքերին հետևեց լարված լռությունը։ Թիմի մարմինը ծածկվել էր սառը քրտինքով և՛ հուզմունքից, և՛ այն բանից, որ աշխատում էր ոչ մի շշուկով չմատնել իր ներկայությունը։

Վերջապես նա լսեց, ինչպես Կրեշիմիրը կամաց ասաց.

— Ահա և նրանք նորից իմն են։

— Իսկ այժմ լսեցեք իմ պայմանը,— ասաց բարոնը։

Բայց Թիմն այլևս ոչինչ չլսեց։ Կրեշիմիրը ետ ստացավ աչքերը։ Իսկ ինքը, Թիմը հիմա լսում էր իր ծիծաղը այնքան մոտիկ, որ թվում էր, եթե ձեռքը մեկներ, կհասներ նրան... Այլևս նա չէր կարող իրեն զսպել։ Նա նետվեց դեպի նավակը և բացականչեց.

— Տվեք իմ...

Բայց այդ ժամանակ նրա ոտքն ընկավ փոկի օղակի մեջ, նա ընկավ, գլուխը խփեց նավակի սուր քթին և, գիտակցությունը կորցրած, փռվեց տախտակամածին։

Թերթ տասներկուերորդ

ԿՐԵՇԻՄԻՐԸ

Երբ Թիմը արթնացավ, նավը ճոճվում էր։ Պատուհանի հաստ ապակու հետևում, բարձրանալով ու իջնելով, պարում էր աստղը՝ բարկացած փայլատակող Մարսը։ Թիմը պառկած էր այն նավախցի վերևի մահճին, որտեղ քնում էր ստյուարդի հետ։ Ատլանտյան օվկիանոսի վրա բացվում էր առավոտը։

Նավախցում ինչ-որ մեկը շարժվում էր։ Թիմը շրջեց գլուխը։ Դա Կրեշիմիրն էր։ Այդ վայրկյանին նա էլ շրջեց գլուխը։ Կրեշիմիրի մահճի վերևում վառվող լապտերի թույլ լույսի տակ նրանց հայացքները հանդիպեցին։ Ստյուարդի աչքերը բարի էին, շագանակագույն։

— Դե, փոքրիկ, ինչպե՞ս ես զգում,— սիրալիր հարցրեց նա։

Թիմը դեռ լրիվ չէր արթնացել։ Նա ոչ մի կերպ չէր կարողանում հիշել, թե ինչպես ընկավ այստեղ։ Եվ այս Կրեշիմիրը, որը հիմա ինչ-որ բան է իրեն հարցնում, բոլորովին ուրիշ էր, քան այն, որին նա երեկ երեկոյան օգնում էր սալոն-ռեստորանում։ Այս Կրեշիմիրը շատ ավելի հանգիստ էր, մեղմ, բարի։

Ստյուարդն ավելի մոտեցավ Թիմի մահճակալին։

— Դու քեզ ավելի լա՞վ ես զգում, փոքրիկ։

Այժմ Թիմի հիշողության մեջ աստիճանաբար սկսեցին վերականգնվել երեկվա երեկոյի դեպքերը։ Ձայները կամբուզի դռան ետևում, խոսակցությունը նավակի ետևում, իր սեփական ճիչը..

— Որտե՞ղ է բարոնը,— հարցրեց նա։

— Ես դա չգիտեմ, Թիմ։ Համենայն դեպս, նա այլևս նավի վրա չէ։ Դու ինձ միայն մի բան ասա, երեկ երեկոյան դու ակա՞նջ էիր դնում։

Տղան գլխով արեց։

— Ես ուրախ եմ, պարոն Կրեշիմիր, որ դուք վերադարձրիք ձեր աչքերը։

— Իսկ դո՞ւ, Թիմ։ Ի՞նչ կուզեիր ետ ստանալ բարոնից։

— Իմ...— Թիմը լռեց։ Նա հիշեց պայմանագիրը և շրթունքները ամուր սեղմեց իրար։

Եվ հանկարծ Կրեշիմիրը ձեռքը խփեց իր ճակատին։

— Ո՜նց ես անմիջապես գլխի չընկա,— բացականչեց նա,— այդ հարգարժան խաբեբան ծիծաղում էր փոքրիկ տղայի նման։ Չէ որ ես զգում էի, որ ինչ-որ բան փոխվել է... Այժմ ես գիտեմ, թե ինչ էր դա՝ նրա ծիծաղը։ Ավելի ճիշտ...— Կրեշիմիրը նայեց ուղիղ Թիմի աչքերին,— ավելի ճիշտ՝ քո ծիծաղը։

— Ես այդ չե՛մ ասել,— բացականչեց Թիմը։— Մի՞թե երեկ երեկոյան ես դա բղավեցի...

— Ոչ, Թիմ, դու չհասցրեցիր դա բղավել։ Եվ գուցե դա քո երջանկությունն է։ Չէ որ ես ծանոթ եմ պարոն բարոնի պայմանագրերում գաղտնապահության վերաբերյալ կետերին։ Դու ոչինչ չես ասել։

Բայց Թիմը, միևնույն է, չէր կարողանում հանգստանալ։ Նրան անհրաժեշտ էր անմիջապես, հենց այս վայրկյանին ստուգել դեռ ուժի մե՞ջ է պայմանագիրը, թե ոչ։ Պետք էր շտապ գրազ գալ Կրեշիմիրի հետ։ Որևէ ամենաանհավանական բանի մասին։

Թիմը փորձեց վեր կենալ անկողնուց, բայց հենց որ մի փոքր բարձրացավ, գլուխը պտտվեց և քունքերը սկսեցին աղմկել։ Ստիպված գլուխը նորից դրեց բարձին։

Կրեշիմիրը նրան տվեց նախօրոք պատրաստված դեղահաբը և բաժակով ջուրը։

— Խմիր, Թիմ։ Այսօր դու ստիպված կլինես պառկած մնալ։ Իսկ վաղը ամեն ինչ կանցնի։ Քեզ ոչ մի լուրջ բան չի պատահել, միայն ճակատդ ես խփել, դա ղեկորդն ասաց, իսկ նա անցյալում սանիտար է եղել։

Թիմը հնազանդ ընդունեց դեղահաբը, շարունակելով մտածել, թե ինչի մասին գրազ բռնի Կրեշիմիրի հետ։ Վերջապես գտավ մի նյութ և նորից սկսեց խոսել Անատասի մասին։

— Ի՞նչ պայման առաջարկեց ձեզ բարոնը, պարոն Կրեշիմիր։ Դե երբ որ վերադարձրեց ձեր աչքերը։

— Ոչ մի պայման,— ծիծաղեց Կրեշիմիրը։— Այն ժամանակ, երբ դու ճչացիր և փովեցիր տախտակամածին, վեր վազեցին նավաստիները, և բարոնը շտապեց անհետանալ՝ պահվեց նավակի ստվերում։ Հենց այդ պահին ես շշնջացի նրան. «Երկուսից մեկը— կամ դուք առանց որևէ պայմանի ինձ կվերադարձնեք իմ աչքերը, կամ ես անմիջապես որոշ բան կպատմեմ այս մարդկանց»։

— Իսկ նա ի՞նչ ասաց։

Կրեշիմիրը նորից ծիծաղեց։

— Բարոնը նույնիսկ հուզմունքից կակազեց։ Ասում է՝ «Ա-ա-ռանց ո-որ-և-է պայ-մա-նի»։

Թիմը արագ շրջվեց դեպի դուռը։ Ծիծաղելու ապարդյուն փորձը աղավաղեց նրա դեմքը։

— Ինչ ասես կտայի, որ իմանայի, թե որտեղ է հիմա բարոնը,— ասաց Կրեշիմիրը։

Դա այն միտքն էր, որին սպասում էր Թիմը։ Նա արագ ասաց.

— Եկեք գրազ գանք...

— Կարող ես ինձ «դու» ասել,— նրան ընդհատեց Կրեշիմիրը։

— Այդ դեպքում արի գրազ գանք, որ հինգ րոպե հետո մենք կիմանանք, թե որտեղ է գտնվում բարոնը։

— Իսկ ինչի՞ վրա ենք գրազ գալիս։

— Մի կտոր ընկույզով տորթի։

— Ինչ կա որ, դա ես քեզ կարող եմ տալ։ Չէ որ եթե ես չեմ սխալվում, դու պետք է շահես այս գրազը, ինչպես և յուրաքանչյուր այլ գրազ։ Ուրեմն, տուր ձեռքդ։

Ստյուարդը ձեռքը մեկնեց տղային, և Թիմը սեղմեց նրա ձեռքը։

Նույն պահին ինչ-որ մեկը հարևան խցիկում միացրեց ռադիոն։ Հաղորդում էին եղանակի տեսությունը։ Հետո սկսեցին հաղորդել աշխարհիկ կյանքի նորությունները։

Թիմին և Կրեշիմիրին սկզբում ջղայնացնում էր, որ ռադիոն խանգարում էր նրանց զրույցը, բայց այժմ նրանք սկսեցին լսել։ Հաղորդավարն ասում էր.

«Հայտնի ձեռնարկատեր բարոն Անատասը, որի հարստությունը, ինչպես հաստատում են քաջատեղյակ շրջաններում, կազմում է մի քանի միլիարդ դոլար, այս գիշեր Ռիո-դը-Ժանեյրոյում ընթրիք է տվել բրազիլական մայրաքաղաքի արդյունաբերական և առևտրական վերնախավի համար։ Ընդունելության հենց սկզբում բարոնը թողել է իր հյուրերին և վերադարձել միայն երկու ժամ հետո, որոշակիորեն ինչ-որ բանից հուզված։ Նկատվել է, որ վերադարձից հետո նա ամբողջ ժամանակ սև ակնոցով է եղել։ Ենթադրում են, որ նորից իրեն զգացնել է տվել նրա աչքերի վաղեմի հիվանդությունը, որից, ինչպես համարվում էր, բարոնը վերջնականապես բուժվել էր։ Հեռախոսով մեզ հայտնեցին, որ ընթրիքը շարունակվում է, և բարոնը, հավանաբար, նորից...

Խցիկի պատի ետևում ռադիոն անջատեցին, և անմիջապես լսվեց ջրի աղմուկ։ Հավանաբար, բացեցին լվացարանի ծորակը։

Թիմի դեմքը դարձավ լուտաբացի մառախուղի նման գորշ։ Նա նորից հաղթեց և այժմ գիտեր, որ պայմանագիրը մնում է ուժի մեջ։ Բայց նրան զարմացրեց այդ տարօրինակ հաղորդումը։

— Ինչպե՞ս կարելի է այդքան արագ հասնել Ռիո-դը-Ժանեյրո,— շփոթված հարցրեց նա։

— Այդպիսի հարստություն ունենալով, կարելի է,— պատասխանեց Կրեշիմիրը։

— Բայց չէ որ այդպիսի արագությամբ ինքնաթիռն էլ չի թռչում։

Դրան ստյուարդը սկզբում ոչինչ չպատասխանեց։ Հետո նա շշնջաց.

— Ես կարծում էի, որ դու գոնե գիտես, թե ում հետ ես գործ բռնել...

Եվ հանկարծ սարսափելի շտապեց, վախենալով, որ աշխատանքից կուշանա։ Շեմում նա նորից շրջվեց և ասաց.

— Փորձիր քնել, Թիմ։ Անկողնում մտածելը—դատարկ գործ է։

Բարեբախտաբար, տղայի առողջ օրգանիզմը հաղթեց, և Թիմը իրոք որ քնեց։ Երբ նա նորից արթնացավ, արդեն կեսօր էր։ Կրեշիմիրը նրա համար բերեց մի լիքը ափսե ապուր և շահած ընկույզով տորթը, և նրա հոգին հանկարծ զարմանալիորեն թեթևացավ ու հանգստացավ։ Այս ամբողջ ժամանակամիջոցում առաջին անգամ նրա սարսափելի գաղտնիքը կիսում էր մեկ ուրիշը։ Եվ չէ որ այդ մեկը հաղթող դուրս եկավ բարոնի հետ վտանգավոր մենամարտում։ Դա Թիմին հավատ, ո՛չ, ուրախ վստահություն ներշնչեց, որ ամեն ինչ կատարվի բարեհաջող։ Առաջին վայրկյանին նա նույնիսկ մոռացավ տարօրինակ հաղորդագրության մասին Ռիո-դը-Ժանեյրոյից, որը լսեց ռադիոյով։

Ճաշից հետո մի բոպեով նավախցիկ եկավ ղեկորդը, համբուրգցի մի հսկա տղա, որի անունը Ջոնն էր։ Նա հետաքրքրվեց Թիմի առողջությամբ, զարմանալիորեն հոգատար մատներով շոշափեց ճակատի ուռուցքը, ևս մեկ դեղահաբ տվեց ու հետո ասաց.

— Վաղը լրիվ կառողջանաս, փոքրիկ։ Հուսով եմ, որ այլևս ոտքդ օղակի կամ էլ այլ թակարդի մեջ չես գցի։ Տե՛ս հա։

Դրանից հետո նա գնաց նավախցից։

«Եթե դու իմանայիր, թե ինչ թակարդն եմ ընկել»,— մտածեց Թիմը։ Եվ նորից քնեց։ Ղեկորդը նրան քնաբեր հաբ էր տվել։

Նա արթնացավ գիշերը, երբ Կրեշիմիրը վերադարձավ նավախցիկ։ Ստյուարդը արմունկներով հենվեց Թիմի մահճակալի եզրին և ասաց.

— Այնուամենայնիվ, ի՞նչ ստորություն է այդ սրիկայի կողմից։

— Այդ ինչի՞ մասին եք...— Թիմը ուղղեց իրեն,— այդ ինչի՞ մասին ես ասում...

— Էրի նույն բանի։ Ես գիտեմ, որ դու պետք է լռես։ Լռիր, ինչքան կուզես։ Բայց չէ որ ինձ հայտնի է, թե ինչումն է բանը։ Նա ծիծաղում է քո ծիծաղով, իսկ դու շահում ես ցանկացածդ գրազը։ Դե, իսկ ի՞նչ կլինի, եթե դու տանուլ տաս։

— Ես հենց այդ մասին եմ երազում,— կամաց պատասխանեց Թիմը։ Նա այլևս ոչինչ չասաց։

— Դրա մասին ես կհոգամ,— ասաց Կրեշիմիրը, հետո հանվեց և նույնպես անկողին մտավ։

Երբ յուրաքանչյուրը հանգցրեց լապտերը, Կրեշիմիրը սկսեց պատմել իր հայրենիքի մասին, Խորվաթիայի լեռներում գտնվող իրենց գյուղի մասին։

Շաբաթվա յոթ օրն էլ քաղցած է անցկացրել Կրեշիմիրը մանուկ ժամանակ։ Շաբաթական յոթ օր նա երազել է հարստանալու և կուշտ ուտելու մասին։ Եվ ահա մեկ անգամ գյուղով մի ավտոմոբիլ է անցել։ Ղեկին նստած է եղել վանդակավոր զգեստով մի պարոն։ Այդ պարոնը նրան նվիրել է մի տոպրակ՝ մեջը յոթ նուռ, իսկ յուրաքանչյուր նուռն այն ժամանակ արժեցել է մեկ դինար։ Տղան մինչև լողափը ոտքով տասը կիլոմետր է անցել և լողափում վաճառել է նռները։

— Այո, Թիմ, կյանքումս առաջին անգամ իմ ձեռքում հայտնվեց իմ սեփական փողը, շա՜տ փող, ինչպես ինձ այն ժամանակ էր թվում։ Ամբողջ յոթը դինար։ Եվ գիտե՞ս, թե ինչ առա ես այդ փողով։ Ոչ թե հաց առա, թեպետ ես հաց շատ էի սիրում, այլ մի կտոր տորթ։ Եվ նավամատույցի տախտակների հետևում ես մի վայրկյանում ագահությամբ խժռեցի այդ տորթը։ Եվ ուտելիս մտածում էի. «Ուրեմն, այ թե ինչ են երկնքում ուտում հրեշտակներն ամեն օր նախաճաշի ժամանակ»։

Հետո ես փսխեցի։ Պարզապես իմ ստամոքսը սովոր չէր նման ուտելիքի։ Երբ ես ոտքերս քարշ տալով վերադառնում էի գյուղ, ճանապարհին նորից հանդիպեցի այն ավտոմոբիլային, որի մեջ նստած էր վանդակավոր զգեստով պարոնը...

Կրեշիմիրը լռեց, և այժմ Թիմը մտածում էր պղպեղի, շամանի, անիսոնի հոտով ներծծված նեղ նրբանցքի փոքրիկ տղայի մասին։ Հետո ստյուարդը պատմեց շարունակությունը՝ թե ինչպես վանդակավոր զգեստով պարոնը այն ժամանակվանից սկսեց ավելի հաճախ հայտնվել գյուղում նռան տոպրակով, թե ինչպես մի հիանալի կիրակի օր նա խոսեց Կրեշիմիրի ծնողների

հետ և տղային, որպես ստյուարդ, աշխատանքի տեղավորեց իր նավերից մեկում, ինչպես էր նա երբեմն տղային վերցնում իր հետ ուղևորությունների և տանում ձիարշավարան, թե ինչպես Կրեշիմիրը թեթևամիտ խաղալով ձիարշավարանում, շատ պարտք արեց պարոնից և ինչպես ի վերջո այդ պարոնին վաճառեց իր ունեցած ամենաարժեքավորը՝ աչքերը։

— Իսկ այժմ ես ետ վերադարձրի իմ աչքերը,— եզրափակեց Կրեշիմիրը։— Եվ դու էլ ետ կստանաս քո ծիծաղը։ Դա նույնքան հաստատ է, որքան հաստատ է այն, որ իմ անունը Կրեշիմիր է։ Բարի գիշեր։

Կարծես մի գունդ էր դեմ առել Թիմի կոկորդին։ Բեկբեկուն ձայնով նա պատասխանեց.

— Բարի գիշեր, Կրեշիմիր։ Շնորհակալություն։

Թերթ տասներեքերորդ

ՓՈԹՈՐԻԿ

Կրեշիմիրի պատմածը խորապես հուզեց Թիմին։ Եվ ծովն այդ գիշեր փոթորկվեց։ Թիմը քնած էր անհանգիստ, կողքից-կողք էր շրջվում անկողնում։

Հանկարծ նրա զգայուն քունն ընդհատվեց որոտից։ Մի վայրկյան անց նրա աչքերի մեջ, փակ կոպերի միջով փայլատակեց կուրացուցիչ պայծառ կայծակը։ Եվ նորից երազում, թե իրականում, լսվեց որոտը։

Թիմը ճչաց և վախեցած արթնացավ։

Նրան թվաց, թե ամպրոպի միջից նա լսեց իր սեփական ծիծաղը։ Նա բացեց աչքերը, և նրա հայացքն ընկավ պատուհանին. կլոր հատ ապակու միջից դեպի նավախուց, ուղիղ իր դեմքին էին նայում ջրիկ-կապույտ աչքերը։

Թիմը սարսափած փակեց աչքերը։ Սառը քրտինքը պատեց նրան և, ի վիճակի չլինելով շարժվել, նա այդպես էլ մնաց նստած, թեքված դեպի առաջ։ Թվում էր, մի ամբողջ դար անցավ, նախքան նա համարձակվեց նորից բացել աչքերը և կամաց ձայն տալ Կրեշիմիրին։

Ստյուարդը չէր պատասխանում։ Այնտեղ, նավակողի ետևում, բարակ թիթեղյա պատի ետևում, փոթորկվում էր ծովը, հավասարաչափ ընդմիջումներով հարվածելով պատին։

Թիմն այլևս չէր համարձակվում նայել պատուհանին։ Նա ավելի բարձր կանչեց Կրեշիմիրին։ Բայց նորից պատասխան չկար։

Այդ ժամանակ նա այնպես բղավեց, որ վախեցավ իր ձայնից.

— Կրեշիմի՜ր։

Բայց և այս անգամ ոչ մի պատասխան չհետևեց։

Թիմը փակեց աչքերը, որպեսզի պատուհանին չնայի և, շոշափելով, գլխավերևում գտավ լամպի բարակ լարը։ Երբ լարն ընկավ ձեռքը, նա հուզմունքից ամբողջ ուժով քաշեց այն։

Լույսը վառվեց, և Թիմը բացեց աչքերը։

Հենց որ մթությունն անհետացավ, վախն էլ չքացավ։ Թիմը կախվեց մահճակալից և ցած նայեց։ Կրեշիմիրի անկողինը դատարկ էր։

Եվ նորից նավախցի անկյուններից սկսեցին դուրս սողալ վախերը։ Լվացարանի վերևի հայելում նա տեսնելով սարսափից աղավաղված իր դեմքը, Թիմն ավելի վախեցավ։

Բայց ինչ-որ տարօրինակ ձևով սեփական արտացոլումը հայելում գործողության դրդեց նրան։ Նա ցատկեց անկողնուց և սկսեց արագ հագնվել։ Նրան թվում էր, թե բոլոր վախերը հավաքվել են իր արտացոլման մեջ, իսկ ինքը նրանցից միանգամայն ազատ է և կարող է անել, ինչ կամենա։ Այժմ նա համարձակություն ունեցավ նավախցիկից դուրս վազել միջանցք։ Պատերին հենվելով, նա ճոճվող նավով սլացավ երկաթե սանդուղքի մոտ և բարձրացավ վեր։ Տախտակամածում նրան ծածկեց ալիքը, և նա մինչև ոսկորները թրջվեց։ Բայց ճոպաններից բռնելով, նա ճոճվող, լպրծուն հատակով գնում էր ավելի ու ավելի առաջ և, վերջապես, հասնելով նավաղեկի խցիկը, մտավ ներս։ Այստեղ տաք էր և ծխով լի. հաստ ապակուց փոքրիկ լամպը թույլ լուսավորում էր խցիկը։

Ղեկի մոտ կանգնած Ջոննին, համբուրգցի հսկան, հանդարտ զարմանքով նայում էր տղային։

— Այսպիսի եղանակին ինչո՞ւ ես այստեղ բարձրացել։

— Որտե՞ղ է Կրեշեմիրը։

Իր հարցը Թիմը գրեթե բղավեց, որ խլացնի այդ վայրկյանին նավի կողին զարկող ալիքի ոռնոցը։

— Կրեշիմիրը հիվանդ է, փոքրիկ։ Բայց դու նրա համար մի անհանգստանա, նրա կույր աղիքն է, իսկ դրանից մեր ժամանակներում չեն մահանում։

— Որտե՞ղ է նա,— համառորեն կրկնում էր Թիմը։— Որտե՞ղ է նա հիմա։

— Մեզնից ոչ հեռու, բարեբախտաբար, լողում էր պահականավը։ Նա Կրեշիմիրին տարավ ափ։ Իսկ դու միթե չիմացար, որ մեքենան կանգ առավ։

— Չէ,— տխուր պատասխանեց Թիմը։ Եվ, աշխատելով խոսել հանգիստ, ավելացրեց.— Կրեշիմիրը չի հիվանդացել։ Այդ բոլորը բարոնի սարքածն է։ Ես պատուհանում տեսա նրա աչքերը։

— Դու տեսար բարոնի աչքերը պատուհանո՞ւմ,— ծիծաղեց Ջոննին։— Աչքիդ է երևացել, տղաս։ Ավելի լավ է հանվիր, վերցրու այս ծածկոցը և պառկիր նստարանին ու քնիր։ Այստեղ, ինձ մոտ քո աչքին այլանդակ տեսիլքներ չեն երևա։

Տաք խցիկում, բարեհոգի Ջոննիի մոտ Թիմին իրոք սկսեց թվալ, թե այդ բոլորը իր աչքին է երևացել։ Բայց նա նորից հիշեց ռադիոհաղորդումը Ռիո-դը-Ժանեյրոյից բարոնի անհետացման մասին և իր արտացոլումը լվացարանի վերևի հայելում՝ դողացող, ծամածռությունից աղավաղված դեմքը։ Եվ հասկացավ, որ բարոնն ընդունակ է ամեն ինչի։ Եվ միևնույն ժամանակ որոշեց այլևս երբեք, որքան որ ներեն ուժերը, չվախենալ բարոնից։ Որովհետև, բարեբախտաբար, Թիմը բարոնին տեսել էր և՛ նրա թուլության պահին։

Վերջապես, նա լուռ պառկեց հատակին պտուտակներով ամրացված նստարանին, որի վրա ներքնակ կար։ Նստարանը ճոճվում էր վեր ու վար, կողմից-կողմ, որովհետև այստեղ՝ վերևում, ճոճումը շատ ավելի ուժեղ էր, քան ներքևում՝ նավախցում։

Խառնաշփոթ մտքերը և անսովոր զգացումը ստամոքսի շրջանում թույլ չէին տալիս, որ Թիմը քնի։ Ժամերն անցնում էին, իսկ նա չէր կարողանում քնել։ Ջոննին հանգիստ կանգնած էր ղեկի մոտ, իրար ետևից ծխելով սիգարեթները։ Փոթորիկն աստիճանաբար սկսեց հանդարտվել։

Այդ ժամերին Թիմն անընդհատ մտածում էր ամենաանհավանական վիճաբանությունների մասին։ Այն, ինչի շուրջը նա կվիճի հիմա, կլինի այնքան անհեթեթ և անիրականալի, որ ինքը անպայման տանուլ կտա։ Բարոնը նրա վրա սարսափ է ազդում։ Հետո ի՞նչ։ Հիմա էլ ահից թող ինքը դողա։ Ասենք, որքան էլ Թիմը մտածում էր, չէր կարողանում գտնել այնպիսի պահանջ, որ բարոնը ի վիճակի չլիներ կատարել։ Այ, ենթադրենք, Թիմը կվիճի, որ անտառի ընկույզը կոկոսից մեծ է։ Նախ՝ ո՞ր հիմարը կհամաձայնվի վիճել դրա մասին։ Եվ հետո շատ հնարավոր է, որ Անատասը աշխարհում այնպիսի մի վայր կգտնի, որտեղ իրոք անտառի ընկույզները կոկոսի ընկույզներից ավելի մեծ կլինեն, և դեռ կհոգա էլ այն մասին, որ իրենց նավը այնտեղ ժամանի։ Եվ Թիմը մի կողմ էր նետում հերթական հորինվածքը, ինչպես որ մինչ այդ մտածած բոլոր վեճերը։ Գլխում անընդհատ պտտվում էր այն տրամվայի դեպքը, որով ինքը պարոն Ռիկերտի հետ գնում էր կայարան։

«Իսկ եթե այնպիսի մի բան հորինեմ,— մտածեց նա հանկարծ,— որ հնարավոր չլինի՞ պատճառաբանել կտրված լարո՞վ։ Իսկ եթե ստիպեմ, որ այդ հսկայական երկաթե մեքենան, որը տրամվայ է կոչվում, կտրվի ռելսերից և օդով թռչի։ Չէ որ տրամվայը ի վերջո սոխակ չէ։ Իսկ Անատասն իր սատանայական հնարավորություններով հանդերձ, այնուամենայնիվ, հրաշագործ չէ»։

Թիմին թվաց, թե նա գտավ բարոնի աքիլեսյան գարշապարը։ Նա հենվեց արմունկներին և ասաց.

— Ղեկորդ, գիտեք, որ Ջենովայում թռչող տրամվայներ կան։

— Ավելի լավ է պառկիր ու քնիր,— պատասխանեց Ջոննին, այնքան էլ չզարմացած։— Էլի աչքիդ ինչ-որ բան է երևացել։

— Չէ, ղեկորդ, ես բոլորովին էլ քնած չեմ։ Եվ դա միանգամայն ստույգ է. Ջենովայում թռչող տրամվայներ կան։ Եկեք գրազ գանք մի շիշ ռոմի վրա։

— Հիմարություն է,— ասաց Ջոննին։— Սուտ։ Բացի այդ, ինձ համար այնքան էլ պարզ չէ, թե որտեղից ես դու մի շիշ ռոմի համար փող ճարելու։

— Շիշը իմ ուսապարկում է,— ասեց Թիմը։— Դե, գրազ ենք գալի՞ս, թե չէ։

Ջոննին շրջվեց նրա կողմը։

— Եթե դու ինձ հետ մեկ միլիոնի վրա գրազ գայիր, միևնույն է, ես դրան չէի հավատա։ Ես շատ լավ եմ ճանաչում թե մեկը, թե մյուսը՝ և Ջենովան, և տրամվայը։

— Այդ դեպքում դուք կարող եք գրազ գալ առանց որևէ ռիսկի։ Մի շիշ ռո՞մ, չէ որ ղեկորդի համար դա ուղղակի գանձ է։

— Կարո՞ղ ես ինձ խոստանալ, որ եթե ես քեզ հետ գրազ գամ, դու անմիջապես կպառկես ու աչքերդ կփակես։

— Ազնիվ խո՞սք,— բացականչեց Թիմը։

Եվ ղեկորդը նրան մեկնեց իր ձեռքն ու ասաց.

— Եթե Ջենովայում...

Նա լռեց, որովհետև այդ վայրկյանին ինչ-որ մի բան թռավ ղեկախցիկի մոտով, ընթացքի ժամանակ կպչելով ապակուն։

— ...Եթե ես Ջենովայում տեսնեմ թեկուզ մեկ թռչող տրամվայ, ես ուրեմն տանուլ եմ տվել գրազը և դու մի շիշ ռոմ կստանաս։ Իսկ եթե ոչ մի թռչող տրամվայ չտեսնեմ, ուրեմն քո ուսապարկի շիշը իմն է։ Ահա՞։ Իսկ հիմա բարի եղիր պառկել։ Երեք ժամից դու պետք է սկսես աշխատանքդ։

Այս անգամ Թիմն իրոք քնեց։ Նա երազում տեսնում էր, որ լսում է իր սեփական ծիծաղը։ Այդ ծիծաղին միախառնվում էր երկնքով ուղիղ նրա գլխավերևով սլացող տրամվայի դղրդյունը։ Երբ լուսաբացին ղեկորդը արթնացրեց Թիմին, նրա ականջներում դեռ ամեն ինչ աղմկում էր։ Եվ այդ աղմուկից նա իրեն այնքան էլ լավ չէր զգում։

Թերթ տասնչորսերորդ

ԳՐԱԶ, ՈՐԸ ՀՆԱՐԱՎՈՐ ՉԷ ՇԱՀԵԼ

Որքան էլ Թիմը վախով էր մտածում Ջենովայի մասին, այնուամենայնիվ անհամբերությամբ էր սպասում այն պահին, երբ հեռվում կերևան քաղաքի ուրվագծերը։

Սակայն մի քանի օր անցավ, մինչև «Դելֆին» նավը մտավ Ջենովայի նավահանգիստը։ Դա տեղի ունեցավ պարզ, երկնա-

գույնով փայլատակող կեսօրին։ Ինչ-որ պատրվակով Թիմը մտավ ղեկախցիկ և այժմ կանգնած էր Ջոննիի կողքին, նայելով մոտեցող քաղաքին։ Նրա հագին սև-սպիտակ վանդակավոր անդրավարտիք և կոպիտ գորշ քաթանից կարված գոգնոց կար, որ նրան տվել էր խոհարար Էնրիկոն կարտոֆիլ մաքրելիս հագնելու համար։

Արդեն պարզ երևում էին Ջենովայի տներն ու փողոցները։ Կարելի էր նույնիսկ տարբերել օմնիբուսները և ավտոմեքենաները։ Բոպե առ բոպե տեսանելիությունը դառնում էր ավելի ու ավելի պարզ։

Հանկարծ Ջոննիի կոկորդից դուրս թռավ զարմանքի բացականչություն՝ մռնչյունի և գլգլոցի նման ինչ-որ բան։ Թիմը զարմացած նայեց նրան. ղեկորդը աչքերը ամուր փակել էր, հետո զգուշությամբ բացեց, բայց միայն որպեսզի անմիջապես նորից կկոցի։ Վերջապես նա նորից լայն բացեց աչքերը և դանդաղ, գրեթե հանդիսավորությամբ ասաց.

— Ես խելագարվում եմ։

Թիմը սկսում էր հասկանալ, թե ինչումն է բանը։ Նրա կոկորդը չորացել էր։ Բայց նա չէր համարձակվում հայացքն ուղղել քաղաքի վրա։ Նա դեռ շարունակում էր նայել ղեկորդին։

Այժմ Ջոննին նայեց Թիմին և, գլուխը տարուբերելով, ասաց.

— Դու իրավացի էիր, Թիմ, Ջենովայում թռչող տրամվայներ կան։ Դու տարար գրաղը։

Թիմը թուքը կուլ տվեց։ Ինչ խմաստ ունի աչքերը պահելը։ Ստիպված պետք է այդ տեսնել։ Նա գլուխը շրջեց և սկսեց նայել հեռուն՝ քաղաքին։ Այնտեղ փողոցներից մեկում, տների արանքում թռչում էր տրամվայ՝ ամենաիսկական տրամվայ—այն շատ լավ երևում էր։

Բայց հանկարծ տրամվայի անիվների տակ հայտնվեցին ռելսեր և ամուր քարե փողոց։ Տրամվայը այլևս ոչ թե թռչում, այլ ռելսերով սահում էր փողոցում։

— Դա պարզապես տեսիլք էր,— գրեթե հիացմունքով բացականչեց Թիմը։— Ես տարվեցի։

— Դու կարծես ուրախ ես, որ տարվեցիր,— զարմացավ Ջոննին։

Եվ Թիմը հասկացավ, որ սխալ թույլ տվեց։ Բայց նախքան նա կհասցներ ուղղել իր սխալը, Ջոննին շարունակեց.

— Եվ այնուամենայնիվ, դու տարա՞ր, Թիմ։ Չէ որ մենք վիճեցինք այն մասին, թե կտեսնե՞նք արդյոք Ջենովայում թեկուզ մեկ թռչող տրամվայ, այլ ոչ թե այն մասին՝ կա՞ն նրանք այնտեղ իրականում, թե ոչ։ Իսկ տեսնելը, մենք տեսանք։ Համենայն դեպս, ես տեսա։ Եվ ոչ մի կասկած չի կարող լինել։

— Ուրեմն, ես այնուամենայնիվ շահեցի՞։ Ա՜յ թե լավ է,— ասաց Թիմը։— Այս անգամ նա աշխատեց այդ արտասանել ուրախությամբ։ Բայց նրա ձայնը խռպոտ էր և ոչ մի ուրախություն չէր արտահայտում։ Բարեբախտաբար, այդ րոպեին Ջոննին զբաղված էր իր ղեկով։

— Եվ որտեղից մտքովդ անցավ այդպիսի հիմար գրազ բռնել,— ուսի վրայից հարցրեց նա Թիմին։— Ի՞նչ է, քո բախտը հաճա՞խ է բերում վիճելիս։

— Այո։ Ես դեռ ոչ մի անգամ կյանքումս տանուլ չեմ տվել,— անտարբեր պատասխանեց Թիմը։— Ես միշտ շահում եմ։

Ղեկորդը ուշադիր նայեց նրան.

— Միայն թե շա՞տ չերևակայես, այ տղա։ Կան այնպիսի բաներ, որոնք շահելը պարզապես անհնարին է։

— Օրինակ,— հուզված հարցրեց Թիմը,— ասացեք գոնե մեկը։

Ղեկորդը նորից զննող հայացքով նայեց նրան, միայն մեկ վայրկյան։ Տղայի հետ ինչ-որ բան էր կատարվում։ Բայց Ջոննին սովոր էր պատասխանել տրված հարցին։ Եվ իր սպիտակ գլխարկը ճակատին քաշելով, նա քորեց ծոծրակը։ Այդ վայրկյանին նորից ինչ-որ բան սլացավ ղեկախցիկի պատուհանի մոտով, կպչելով ապակուն։ Ջոննին շրջվեց, բայց ոչինչ չտեսավ։ Եվ հանկարծ գտավ.

— Թերևս, ես գիտեմ մի բան, որը դու ոչ մի կերպ չես տանի, Թիմ։

— Ես համաձայն եմ ձեզ հետ գրազ գալ, ղեկորդ, անգամ չիմանալով, թե դա ինչ բան է։ Եթե տարվեմ, ես ձեզ կվերադարձնեմ ձեր մի շիշ ռոմը։

— Դու ուզում ես պարկի մեջ կատո՞ւ առնել տղա։ Ինչ արած, ես համաձայն եմ։ Ռոմը միշտ էլ ռոմ է մնում։ Եվ քանի

որ դու որոշել ես ամեն գնով տանուլ տալ, խնդրեմ։ Եվ այսպես, գրազ ենք գալիս...— Ղեկորդը մի վայրկյան լռեց, նայեց տղային և հարցրեց.— Դու հաստա՞տ ուզում ես գրազ գալ, դա, ես հարցնում եմ միայն մի շիշ ռոմի պատճառով։

— Հաստատ,— պատասխանեց Թիմը այնքան վճռական, որ Ջոննին մի կողմ նետեց իր կասկածները։

— Այդ դեպքում գրազ բռնիր ինձ հետ, որ հենց այս երեկո դու ավելի հարուստ կդառնաս, քան աշխարհի ամենահարուստ մարդը։

— Ուրեմն, ավելի հարուստ, քան բարոն Անատա՞սը,— կամաց հարցրեց Թիմը։ Նրա շունչը կտրվում էր։

— Հենց այդպես։

Թիմը ձեռքը մեկնեց շատ ավելի արագ, քան Ջոննին սպասում էր։ Դա մի բան էր, որը հնարավոր չէր շահել։ Ուրեմն, Թիմն անպայման տանուլ կտա։ Նա բարձրաձայն ասաց.

— Մեկ շիշ ռոմի վրա գրազ եմ բռնում, որ հենց այսօր երեկոյան կդառնամ բարոն Անատասից ավելի հարուստ։

— Ճստիկս, դու պարզապես մի քիչ...— ասաց Ջոննին, բաց թողնելով Թիմի ձեռքը։— Բայց ոչինչ, ես գոնե կվերադարձնեմ իմ մի շիշ ռոմը։

Այդ ժամանակ ղեկախցիկ մտավ նավապետը։

— Իսկ յունգան ի՞նչ գործ ունի այստեղ,— մռայլ հարցրեց նա Ջոննիին։

— Ես նրան կանչեցի, որ ինձ համար մի գավաթ սուրճ բերի,— պատասխանեց Ջոննին։

— Ուրեմն, թող շտապի։

Թիմն անմիջապես վազեց կամբուզ։ Այդ րոպեին նա ուզում էր երգել։ Բայց նա, ով չի կարող ծիծաղել, չի կարող և երգել։

Երբ նա վերադարձավ ղեկախցիկ, մատուցարանի վրա բերելով գավաթը,— ճանապարհին սուրճը միայն երկու անգամ քիչ-քիչ թափվեց,— տեսավ, որ նավապետը դեռ կանգնած է նույն տեղում։

Ջոննին բարեհոգի ժպտաց, նավապետի մեջքի ետևից աչքով անելով տղային, և Թիմը նրան պատասխանեց նույնով, բայց միանգամայն լուրջ դեմքով։ Հետո նա դուրս ցատկեց ղեկախցիկից և վազեց ներքև, տախտակամած։ Նա հիմա այնպե՞ս էր ուզում ծիծաղել։ Բայց նրա բերանը ծռվեց ժպիտի խղճուկ նմանությամբ։

Ցածրահասակ տարեց մի հոլանդուհի, որն այդ ժամանակ տախտակամածով գալիս էր Թիմին ընդառաջ, վախեցավ, տեսնելով ծամածռությունից աղավաղված նրա դեմքը։ Քիչ անց նա ասաց նավախցիկի իր հարևանուհուն.

— Այդ տղան ինչ-որ դուրս չի գալիս, ինչ-որ սատանայական բան կա մեջը։ Քնելուց առաջ պետք է նավախցիկի դուռը ամուր փակել։

Թիմը, որպեսզի ոչ ոքի ցույց չտա իր հուզմունքը, թաքնվեց նավախելում, խարսխի շղթայով փաթաթված կաբեստանի ետևում, և որոշեց այնքան նստել այստեղ, իրար վրա թափված, փաթաթված ճոպանների վրա, մինչև նավը հասնի Ջենովա։ Նա լսել էր, որ Ջենովայում կա հռչակավոր տիկնիկային թատրոն։ Ահա թե ուր կգնա նա և այնտեղ կծիծաղի բոլորի հետ միասին։ Բայց ավելի հաճելի էր պատկերացնել, թե ինչպես է ինքը զբոսնում փողոցում և հանկարծ ժպտում որևէ անծանոթի՝ փոքրիկ աղջկա կամ, գուցե, որևէ ծեր կնոջ։ Եվ Թիմը մխրճվեց անուրջների մեջ արևոտ աշխարհի մասին՝ լի լույսով և բարեկամությամբ։ Արևը ուժեղ փայլում էր կապուտակ երկնքում, իր ճառագայթները գցելով ուղիղ նրա դեմքին, և դրա համար էլ անուրջները ավելի էին նման իրականության։

Նավի ռադիոկայանից տխուր ձայնով ինչ-որ բան էին հաղորդում, բայց Թիմը ոչ մի ուշադրություն չէր դարձնում դրան։ Նա երազում էր...

Որոշ ժամանակ հետո հաղորդումը սկսեցին նորից կրկնել։ Լսելով իր անունը, Թիմն ուշքի եկավ և սկսեց լսել։ Նրա ականջներին հասավ «... Թալերը անցնի ղեկախցիկ, նավապետի մոտ»։

Օճառի պղպջակների պես պայթեցին հաճելի երազանքները։ Թիմին թվաց, թե արևը սարսափելի այրում է։ Մոայլ նավապետը մինչ այդ դեռևս ոչ մի անգամ նրա վրա ուշադրություն չէր դարձրել։ Եթե նա կանչում է իր մոտ, ուրեմն, ինչ-որ արտառոց բան է պատահել։

Թիմը դուրս եկավ կաբեստանի հետևից, անցավ յուտով, այս առավոտ արդեն երրորդ անգամ, երկաթե տանդուղքով բարձրացավ վերևի տախտակամածը։ Եվ չնայած Թիմը բռնել էր սանդուղքի երկաթե բազրիքից, նրա ձեռքերը թաց էին քրտինքից։

Երբ նա մտավ ղեկախցիկ, նավապետը նրան նայեց մի տեսակ տարօրինակ ձևով։ Նրա հայացքում չկար սովորական ան-

տարբերության հետքն անգամ։ Ղեկորդը հայացքն ուղղել էր հեռուն և նույնիսկ գլուխը չշրջեց Թիմի կողմը։

— Քո անունը...— նավապետն ինքն իրեն ընդհատեց, հազաց և նորից սկսեց.— Ձեր անունը Թիմ Թալե՞ր է։

— Այո, պարոն նավապետ։

— Դուք ծնվել եք...

Նավապետը ձեռքին բռնած թղթում կարդաց Թիմի ծննդյան տարին և վայրը, ինչպես նաև նրա կյանքի կարևոր տարեթվերը։

Եվ Թիմը յուրաքանչյուր թվից հետո պատասխանում էր.

— Այո, պարոն նավապետ։

Լարված սպասումի պատճառով նրա աչքերին արտասուքներ երևացին։

Երբ հարցաքննությունն ավարտվեց, և նավապետը վերջապես իջեցրեց իր ձեռքը, որով բռնել էր թերթիկը, տիրեց զարմանալի լռություն։ Ղեկախցիկի հատակին դողում էր արևի շողը, իսկ Թիմը համառորեն նայում էր ղեկորդի լայն ծոծրակին։ Վերջինս շարունակում էր, առանց շրջվելու, նայել առաջ։

— Ուրեմն, ես կարող եմ առաջի՞նը ձեզ շնորհավորել,— ռությունը խախտեց նավապետը։

— Ինչի՞ առթիվ, պարոն նավապետ,— հազիվ շունչ քաշելով, հարցրեց Թիմը։

— Ահա թե ինչի...— նավապետը գլխի շարժումով ցույց տվեց ձեռքին բռնած թուղթը։ Եվ անմիջապես հարցրեց.— Ի՞նչ է, դուք բարոն Անատասի ազգակա՞ն եք։

— Ոչ, պարոն նավապետ։

— Բայց դուք նրան անձամբ ճանաչո՞ւմ եք։

— Այո, ճանաչում եմ...

— Այդ դեպքում ձեզ համար կկարդամ ռադիոգիրը։

«Բարոն Անատասը մահացել է կետ Հաղորդեցեք Թիմ Թալերին նշանակումը միակ ժառանգ կետ Հանգուցյալի երկվորյակ եղբայրը նոր բարոն Անատասը ընդունում է խնամակալությունը մինչև չափահասություն կետ Ջենովա Անատասի «Ֆենիքս» նավագնացություն կետ Գլխավոր դիրեկտոր Գրանդիցի»։

Թիմը կանգնած էր քարացած դեմքով, դեռևս հայացքը չհեռացնելով ղեկորդի ծոծրակից։ Նա շահեց աշխարհում ամենաանհավանական գրազը։ Ընդամենը մեկ շիշ ռոմով։ Նա, տասնչորսամյա տղան, այդ վայրկյանին դարձավ երկրագնդի ամենահա-

ղուստ մարդը։ Բայց նրա ծիծաղը մեռավ բարոնի հետ միասին և հիմա նրա հետ էլ կթաղվի։ Նա, աշխարհի ամենահարուստ մարդը, բոլոր մարդկանցից աղքատն է։ Նա ընդմիշտ կորցրեց իր ծիծաղը։

Ղեկորդի ծոծրակը ցնցվեց։ Ջոննին դանդաղ շրջեց գլուխը։ Թիմին նայում էին օտար, զարմացած աչքեր, բայց Թիմը դրանք տեսավ միայն մեկ սարսափելի վայրկյան։ Ջոննին հազիվ հասցրեց բռնել Թիմին, որը, գիտակցությունը կորցրած, վայր էր ընկնում։

Թերթ տասնհինգերորդ

ԻՐԱՐԱՆՑՈՒՄ ՋԵՆՈՎԱՅՈՒՄ

Լայն, չսափրված դեմքը կռացել էր Թիմի վրա։

— Դու ինձ լսո՞ւմ ես։

— Այո, ղեկորդ,— շշնջաց Թիմը։

Հոգատար ձեռքը բարձրացրեց Թիմի գլուխը, և ջուրը կաթիլ-կաթիլ հոսեց նրա բերանը։

Նա նորից ականջի մոտ լսեց ղեկորդի ձայնը։

— Բայց այդ ինչպե՞ս եղավ, որ Ջենովայում թռչող տրամվայ տեսա։ Եվ ինչո՞ւ բարոնն այդպես շուտափույթ մեռավ։ Ինչու՞ ես դու ուրախանում գրազը տանուլ տալու համար և գիտակցությունդ կորցնում ես, երբ շահում ես։

Թիմի գիտակցության մեջ, որն աստիճանաբար պարզվում էր, նորից ու նորից հնչում էին այդ «ինչուները», հիշեցնելով նրան այդպես էլ անպատասխան մնացած սեփական «ինչունները»։ Հուզմունքը համակեց նրան և քիչ մնաց, որ նա նորից կորցնի գիտակցությունը։

Այդ րոպեին լսվեցին ձայներ և քայլեր, և նավապետը մի անծանոթի ուղեկցությամբ մտավ ղեկախցիկ։

Նստարանին պառկած Թիմը առաջին հերթին տեսավ հսկայական, լույսի պես սպիտակ թաշկինակը, որը դուրս էր ցցված անծանոթի սև կոստյումի պիջակի վերևի գրպանից։ Հետո նրան հասավ մեխակի հոտը։ Այդ հոտը տառացիորեն Թիմի քթին խփեց

այն ժամանակ, երբ անծանոթը մոտեցավ նրան, որպեսզի ներկայանա։

— Դիրեկտորե Գրանդիցի։ Ես ինձ շատ երջանիկ զգալ, որ մեր ֆիրմայի անունից առաջին շնորհավորել ձեզ, պարոն։ Ես ցավում, որ դուք չառողջ, բայց ես հասկանալ՝ ոչ մեծ շոկ։— Նա ձեռքերը տարածեց և գլուխը թեքեց։— Ախ, այդքան հարուստ մի փոքր բոպե։ Դա սատանայական դժվար, բայց...

Թե ինչ էր հետո ասում դիրեկտոր Գրանդիցին, Թիմը չհասկացավ։ Նրա ճառը լսելը չափազանց հոգնեցուցիչ էր։ Միայն վերջին նախադասությունը հասավ Թիմին, որովհետև դիրեկտորը այն արտասանեց ուղիղ նրա ականջի տակ։

— Հիմա ես կնստացնեմ բարկաս, պարոն։

Բայց այդ պահին առաջ եկավ Ջոննին։

— Թույլ տվեք, որ տղայի մասին ես հոգամ,— փնթփնթաց նա,— ես ինքս նրան կտանեմ բարկաս։ Պարոն նավապետ, դուք ստիպված կլինեք առայժմ կանգնել ղեկին։

Չնայած նավն արդեն խարիսխ էր գցել, ընդհանուր իրարանցումն այնքան մեծ էր, որ նավապետը հնազանդ գնաց ղեկախուց և կանգնեց ղեկի մոտ։ Նավին մոտեցավ նավագնացության ընկերության բարկասը, որն ուղարկել էին հարուստ ժառանգին բերելու համար։ Ջոննին Թիմին գրկած, ճոպանե սանդուղքով այնքան թեթև իջավ բարկաս, կարծես ոչ թե մարդ էր տանում, այլ սպիտակեղենի կապոց։ Դիրեկտոր Գրանդիցին մեկ աջից, մեկ ձախից վազվզում էր Ջոննիի շուրջը և նրա ծածանվող հոտավետ ժանյակավոր թաշկինակը նման էր իր տիրոջ շուրջը ցատկոտող շնիկի պոչի։

Միայն այժմ Թիմը նկատեց, որ դիրեկտորի գլուխը գրեթե լրիվ ճաղատ է։ Նրա գլխի երկու կողմերում պահպանված վերջին երկու սև փնջերը սուրանկյուն եռանկյան ձևով սանրված էին դեպի ճակատը։ Դա սրությունն էր հաղորդում դիրեկտորի կլոր դեմքին և նմանեցնում էր դիմակի։

Բարկասում ղեկորդը Թիմին նստեցրեց նավախելում դրված նստարանի անկյունում, որտեղ բարձեր էին դարսված։ Այդ ժամանակ նա հասցրեց շշուկով ասել Թիմին.

— Դու դեռ պետք է ինձնից ստանաս քո շահած երկու շիշ ռոմը։ Ժամը ութին կգաս Քրիստափոր Կոլումբոսի հուշարձանի

մոտ։ Միայն մենակ։ Իսկ եթե օգնության կարիք զգաս, անպայման կգաս։ Հասկացա՞ր։

Թիմը գլխով չարեց։ Նա միայն հազիվ լսելի ձայնով պատասխանեց. «Ըհը», որովհետև արդեն սովորել էր զգուշանալ։

— Հաջողություն եմ ցանկանում, ճստիկ,— թավ ձայնով ասաց Ջոննին, նայելով դիրեկտորին։ Հետո նա իր հսկայական թաթով սեղմեց Թիմի ձեռքը և վերադարձավ նավ։

Հենց որ բարկասը հեռացավ, Թիմը նորից զգաց մեխակի հոտը։ Դիրեկտոր Գրանդիցին նստեց նրա կողքին։ Երկու հարուստ հագնված պարոններին, որ նստած էին նրանց դիմաց, նա նշան արեց, որ խոսեն ավելի ցածրաձայն։ Նրանք հասկացող տեսքով գլխով արեցին և սկսեցին ինչ-որ բանի մասին փսփսալ, չքողարկված հետաքրքրասիրությամբ նայելով Թիմին։

— Սինյոր, ես ձեզ հյուրանոց կտանեմ,— կամացուկ ասաց դիրեկտորը։— Այնտեղ դուք մեկ ժամ հանգստանաք, իսկ հետո մեր նավագնացության ընկերությունն սպասի ձեզ մի փոքր ընդունելություն։

Թիմը, որ դեռ այսօր առավոտյան յունգա և ստյուարդի օգնական էր միջին չափի մարդատար-բեռնատար նավում, մի քիչ անսովոր էր իրեն զգում ընդգծված ուշադրությամբ շրջապատված հարուստ ժառանգի դերում։ Բայց իր ծիծաղի հետևից ընկած, նա արդեն առաջին անգամը չէր, որ ստիպված էր լինում ամենն տեսակ վերափոխումների ենթարկվել, և այս նոր փոփոխությանը նա վերաբերվեց բավականաչափ սառնասիրտ։ Նրան բոլորովին այլ բան էր տանջում—այժմ նրա որոնումները անիմաստ էին դարձել, չէ որ նրա ծիծաղը մահացել էր։

Ի պատասխան այն ամենի, ինչ ասում էր դիրեկտոր Գրանդիցին, Թիմը, ցրված, գլխով էր անում։ Միայն մեկ անգամ նա թափահարեց գլուխը, երբ դիրեկտորն ասաց, որ պրես-կոնֆերանսը նշանակված է ժամը ութին։

— Ախ, դու չսիրե՞լ մամուլ, սինյոր։ Բայց թերթեր օգտակար բան, շատ օգտակար։

— Գիտեմ,— պատասխանեց Թիմը։

Այստեղ, փափուկ ճոճվող բարկասում, նա իրեն շատ ավելի լավ էր զգում։

— Քանի որ դուք ընդունել թերթերի անհրաժեշտությունն,

ինչո՞ւ չուզել փոքր կոնֆերանս,— չէր պոկվում դիրեկտոր Գրանդիցին։

— Որովհետև...— Թիմը մերժելու տենդագին պատրվակ էր փնտրում։— Այս ամենը ինձ համար այնքան նոր է և անսպասելի։ Արդյոք չի՞ կարելի կոնֆերանսը հետաձգել վաղվան։

— Օ, իհարկե, սինյոր։ Բայց այսօր երեկոյան...

— Այսօր երեկոյան ես ուզում եմ մենակ զբոսնել՝ նայել քաղաքը,— նրան կտրուկ ընդհատեց Թիմը։

(Գրանդիցին խոսում էր այնպիսի ոգևորությամբ, որ ամբողջ ժամանակ ցանկություն էր առաջանում ընդհատելու նրան)։

Սակայն դիրեկտորին իր ընթացքից շեղելը այնքան էլ հեշտ չէր։

— Ոչ, ոչ, սինյոր, մենակ չի կարելի,— շտապողականությամբ առարկեց նա։— Հիմա ձեզ միշտ ուղեկցի դետեկտիվ, ինչպե՞ս են այդ ասում— թիկնապահ։ Չէ որ դուք հիմա այնքա՜ն հարուստ։

— Իսկ ես ուզո՜ւմ եմ քաղաքում մենակ թափառել,— բղավեց Թիմը։

Բարկասի քթին նստած հարուստ հագնված պարոնները Թիմին նայեցին շատ մտահոգված։ Նրանցից մեկը, հավասարակշռություն պահպանելով ճոճվող բարկասի վրա, մոտեցավ նրան և հարցրեց.

— Արդյոք չե՞մ կարող ես որևէ բանով ձեզ օգտակար լինել։ Իմ ազգանունը Պամպինի է։ Ես ֆիրմայի գլխավոր թարգմանիչն եմ։

Ըստ երևույթին, նա որոշեց օգտագործել առիթը, որպեսզի ներկայանա հարուստ ժառանգին։ Բայց երբ նա ձեռքը մեկնեց Թիմին, բարկասը կտրուկ ճոճվեց աջ։ Թարգմանիչ Պամպինին գլորվեց ուղիղ Թիմի ծնկներին, հետո մի կերպ ոտքի կանգնեց, հազար անգամ ներողություն խնդրելով, բայց այդ ժամանակ նորից ընկավ դիրեկտոր Գրանդիցիի ծնկներին։

Կատաղած դիրեկտորը բղավեց սկզբում թարգմանչի, ապա բարկասի ղեկորդի վրա։ Մեկին նա դատարկագլուխ անվանեց, մյուսին՝ ավանակ։ Հետո նա հասկացավ, որ ղեկորդը գերմաներեն չի հասկանում և իր հայհոյանքները կրկնեց իտալերեն, ընդ որում այդ լեզվով դրանք ստացվեցին առնվազն հինգ անգամ ավելի երկար։

Թարգմանիչը կռացած նստեց բարկասի քթին դրված նստարանի անկյունում։ Այդ ժամանակ բարկասը մոտեցավ ծովապատնեշի աստիճաններին։

Ներքևի աստիճանին արդեն պատրաստ կանգնած էր կապույտ համազգեստով վարորդը, կապույտ գլխարկը ձեռքին բռնած։ Նրա օգնությամբ (նա ձեռքը մեկնեց Թիմին և զգուշությամբ նրան ձգեց դեպի իրեն) և միևնույն ժամանակ, ճիշտ է՝ ավելի շատ սիմվոլիկ, դիրեկտորի կողմից թևանցուկ արված Թիմը առաջինը բարկասից իջավ ցամաք։ Բոլորը նրա հետ այնպես էին վարվում, կարծես նա դառամյալ և ծանր հիվանդ պարոն լիներ։

Վերևում, ծովապատնեշի վրա խռնվել էին բազմաթիվ սև կոստյումավոր տղամարդիկ, նրանք փակել էին Ջենովան Թիմի հայացքից։ Դիրեկտոր Գրանդիցին սկսեց հերթով նրանց ներկայացնել Թիմին։ Նրանց բոլորի ազգանունները վերջանում էին «իցի» կամ «օցի»-ով, և բոլոր այդ ազգանունները Թիմը անմիջապես մոռանում էր։

Ծանոթանալու այդ հանդիսավոր արարողության ամենատարօրինակն այն էր, որ դա կազմակերպված էր մի տասնչորսամյա տղայի համար, որը հագել էր մինչև ծնկները վեր քաշած վանդակավոր անդրավարտիք, որպիսիք սովորաբար հագնում են կոկերը, և շատ մեծ սվիտեր։ Ճիշտն ասած, այդ տեսարանին նայելիս կարելի էր մեռնել ծիծաղից։ Բայց արարողության բոլոր մասնակիցները մնում էին շափազանց լուրջ, և դա նույնիսկ լավ էր փոքրիկ Թիմի համար։

Մոտեցավ շքեղ սև ավտոմեքենան, և վարորդը հարգալից բացեց դուռը։ Սկզբում մտավ Թիմը, նրա հետևից՝ դիրեկտոր Գրանդիցին։ Նրանք նստեցին կաշվե կարմիր նստարաններին, ավտոմեքենան շարժվեց։ Սև կոստյումներով պարոնները լուրջ դեմքերով և կարևորությամբ լի շարժումներով շարք կազմեցին և, աջ ձեռքը վեր բարձրացրած, հրաժեշտ տվեցին մեկնողներին։

Միայն այժմ, ճանապարհին, Թիմը հիշեց պարոն Ռիկերտի նվիրած նավաստիական ուսապարկի մասին։ Բոլոր իրերի հետ միասին այն մնացել էր նավի վրա։ Թիմն այդ մասին պատմեց դիրեկտորին, բայց Գրանդիցին միայն ժպտաց.

— Օ, իհարկե, սինյոր, մենք կարող ենք ձեր անձնական

իրեր վերցնել նավից։ Բայց պարոն բարոնը արդեն հոգացել ձեր նոր, ավելի նրբաճաշակ հագուստների մասին։

— Բարո՞նը,— տարակուսանքով հարցրեց Թիմը։

— Նոր պարոն բարոնը, սինյոր։

— Ախ, ահա թե ինչ։— Թիմը հենվեց նստարանի կաշվե բարձին և միայն հիմա պատուհանից տեսավ Ջենովայի այն փողոցը, որով անցնում էին, մարմարե հանդիսամուտքը և պղնձե ցուցնակը մուտքի մոտ՝ «Պալմարո հյուրանոց» մակագրությամբ։

Հետո պատուհանների մոտով անցավ ոչ բարձր արմավենու հովհարը, մեջտեղում լավանդայի թփով կլոր ծաղկաթումբը, և ավտոմեքենան փափուկ կանգ առավ։ Ավտոմեքենայի դուռը արագ բացեցին։ Ոսկե ժապավենով համազգեստ հագած դռնապանը ձեռքը մեկնեց Թիմին և նորից այնպիսի զգուշությամբ օգնեց նրան դուրս գալ ավտոմեքենայից, կարծես Թիմը ոչ թե տղա, այլ զառամյալ ծերուկ լիներ։ Այժմ Թիմը կանգնած էր լայն մարմարե աստիճանների մոտ։ Ինչ-որ մեկը ողջունեց նրան, ձեռքով արեց վերևի աստիճանից և բացականչեց.

— Բարի գալո՞ւստ։

Այդ մարդու հագին վանդակավոր կոստյում էր, իսկ քթին՝ արևի հսկայական սև ակնոց։

— Նոր պարոն բարոնն է, նախկինի երկվորյակ եղբայրը։

Եվ երբ նոր բարոնը, աստիճաններով իջնելով ծիծաղելով բացականչեց. «Օ՜, ինչ հիանալի ավազակային զգեստով ես»,— Թիմը հասկացավ այն, ինչի մասին գլխի չէր ընկնում դիրեկտորը։ Նա ճանաչեց այդ մարդուն իր սեփական ծիծաղով։ Ոչ մի երկվորյակ եղբայր գոյություն չուներ։

Բարոնը կենդանի էր։ Իսկ դա նշանակում է, որ կենդանի էր և Թիմի ծիծաղը։

Թերթ տասնվեցերորդ

ՋԱՐԴՎԱԾ ՋԱՀԸ

Հյուրանոցի շքեղ համարում, որն իրենից ներկայացնում էր երեք սենյակից բաղկացած անֆիլադա, Թիմն առաջին անգամ վերջապես մեն-մենակ էր։ Բարոնը գնաց ինչ-որ խորհրդակցության, ասելով, որ կգա Թիմի մոտ հենց որ վերադառնա։

Թիմը ինչպես որ կար՝ վանդակավոր անդրավարտիքով և Ջոննիի լայն սվիտերով, թիկնեց բազկաթոռին։ Նրա գլխի տակ զոլավոր մետաքսե բարձերի լեռ էր։ Թիմը հայացքը չէր հեռացնում ջահից, որն ասես գոյացել էր սառած ապակե արտասուքներից։

Երկար ժամանակից հետո առաջին անգամ նա իրեն նորից զգում էր գրեթե խաղաղված։ Ո՞չ թե այն փոփոխությունների պատճառով, որ նրա հետ կատարվեցին շնորհիվ երկնքից ընկած հարստության (այդ փոփոխությունների մասին Թիմն առայժմ շատ թերի գաղափար ուներ), այլ այն պատճառով, որ նա հաստատ գիտեր՝ իր ծիծաղը կենդանի է։ Եվ այդ ամբողջ խառնաշփոթի մեջ նրա համար պարզ էր ևս մի բան՝ բարոնը իր խնամակալն է և, հետևաբար, նա այլևս ոչ մի տեղ չի անհետանա Հիմա նրանք կարծես կապված են միմյանց։ Իր ծիծաղի որոնումների ճանապարհին Թիմը, կարծես, գրեթե մոտ էր նպատակին։ Մնում էր միայն իմանալ բարոնի աքիլեսյան գարշապարը։

Ավաղ, Թիմն այն ժամանակ դեռ չգիտեր, որ շատ բան հեռվից շատ ավելի լավ է երևում, քան մոտիկից։

Դուռը ծեծեցին, և Թիմը դեռ չէր հասցրել պատասխանել «մտե՛ք», երբ համար մտավ բարոնը։

— Հանգստանու՞մ ես։ Հիանալի է,— ասաց Անատասը շեմքից։

Հետո նրա երկար և չոր մարմինը գրպանի դանակի պես երկու տակ ծալվեց, և նա նստեց փղոսկրյա գարդարանքներով շքեղ բազկաթոռին։ Ոտքը ոտքին գցելով, նա քմծիծաղելով նայեց Թիմին։

— Ձեր վերջին գրազը պարզապես փայլո՞ւն էր։ Ընդունեցեք իմ հարգանքները, Թիմ Թալեր։

Թիմը նայում էր բարոնին և լռում։

Թվում էր, թե դա էլ էր զվարճացնում բարոնին։ Նա հարցրեց.

— Իսկ, անկեղծ ասած, դու ի՞նչ էիր ուզում՝ տարվել, թե տանել այդ անգամ։ Ես շատ կուզենայի այդ իմանալ։

Թիմը զգույշ պատասխանեց.

— Առավել հաճախ գրազ են գալիս տանելու նպատակով։

— Այդ դեպքում՝ դա հիանալի հայտնագործություն էր,— բացականչեց բարոնը։ Նա արագ վեր կացավ բազկաթոռից և,

ձեռքերը կրծքին խաչելով, սկսեց ետ ու առաջ քայլել համարում։

Թիմը, բազկաթոռում կիսապառկած, հարցրեց.

— Իսկ մեր պայմանագիրը ուժի մե՞ջ է։ Չէ որ ես այն կնքել էի առաջին բարոն Անատասի հետ, այլ ոչ թե նրա երկվորյակ եղբոր հետ։

Անատասը ննջարանից ուղղվեց դեպի հյուրասենյակ և, վերադառնալով, պատասխանեց.

— Պայմանագիրը կնքված էր բարոն Զ. Անատասի հետ։ Իմ անունը Չարլզ Անատաս է։ Իսկ մինչև հիմա ես ինձ կոչում էի Չեզարե Անատաս։ Եվ այն անգամ էր Զ., և այս անգամ է Զ., իմ պատանի բարեկամ։

— Բայց քանի որ չկա ոչ մի երկվորյակ եղբայր,— հետաքրքրվեց Թիմը,— ո՞ւմ թաղեցին ձեր փոխարեն։

— Մի խեղճ հովվի, որը ոչ մի ազգական չուներ։

Անատասը այնպես էր խոսում, կարծես վայելում էր այդ բառը։

— Միջադետքում է գտնվում իմ գլխավոր նստավայրը՝ դա մի մեծ ապարանք է։ Հենց այնտեղ էլ նրան շքեղ թաղեցին։

Բարոնը նորից ուղղվեց հեռավոր սենյակը։ Թիմը լսեց նրա հեռացող ձայնը։

— Դու երբեք չե՞ս լսել այնպիսի մարդկանց մասին, որոնք պայմանագիր են կնքել սատանայի հետ և այն ստորագրել են սեփական արյունով։

Բարոնն արդեն վերադառնում էր այն սենյակը, որտեղ պառկած էր Թիմը։ Թիմը բավական անտարբեր հարցրեց.

— Իսկ մի՞թե իրականում սատանա կա։

Անատասը նորից նստեց փղոսկրյա զարդաքանդակներով բազկաթոռին և գրեթե տնքոցով ասաց.

— Ինչ է, դու իսկապես հիմա՞ր ես, թե ձևացնում ես միայն։ Սատանայի մասին, կարծես, դու չես էլ մտածում։

Թիմը ոչ մի կերպ չէր կարողանում հասկանալ, թե ինչու է այդ զրույցը այդպես հուզում բարոնին։ Սակայն «պայմանագիր» բառը լսելով, նա զգոնացավ։ Նա մտածեց, որ Անատասը որոշել է իր հետ խոսել պայմանագրի մասին։ Բայց բարոնը դեռ շարունակում էր շաղակրատել։ Նա խոսում էր Բեհեղզեբուղի՝ դժոխքի տիրակալի, Ֆորկուզ, Աստարոտ և Բեգեմոտ դևերի, վհուկների և սև կախարդանքի, հռչակավոր հրաշագործ բժիշկ Ֆաուստի մա-

սին, որի ծառան մի ժամանակ եղել է հայտնի սատանա Մեֆիստոֆելը։

Տեսնելով, որ այդ զրույցները ձանձրացնում են տղային, նա վեր կացավ բազկաթոռից և ասաց.

— Ստիպված պետք է գործեմ ավելի ուղղակի։

Թիմը նորից գլուխը դրեց բարձերին։ Աջ ձեռքով, որը կախ էր ընկել բազկաթոռից, նա ցրված խաղում էր մետաքսե մաշիկի հետ (այդ մաշիկները այստեղ էին բերել նրա գալուն պես)։ Թիմի հայացքը նորից գամվեց ջահին՝ նրա ապակե արտասուքներում բազմաթիվ անգամ արտացոլվում էր բարոնի վտիտ և անհեթեթ ծռմռված, նիհար մարմինը։

— Ուզում ես սովորել այն կախարդական խոսքերը, որոնցով բժիշկ Ֆաուստը կանչում էր սատանային,— վճռական հարցրեց Անատասը։

— Ոչ,— պատասխանեց Թիմը, առանց գլուխը շրջելու. նա տեսավ, թե ինչպես ծամածռությունից աղավաղվեցին փոքրիկ բարոնների դեմքերը ջահի փայլփլող կաթիլներում։

— Որ այդպես է, գոնե ես արտասանեմ այդ կախարդական խոսքերը,— ասաց բարոնը։ Նրա ձայնում զգացվում էր վատ թաքնված բարկությունը։

— Ինչպես կցանկանաք, բարոն,— անտարբեր պատասխանեց Թիմը։

Եվ այնուամենայնիվ նրա հետաքրքրասիրությունն արթնացավ, երբ տեսավ, թե ինչպես բազմաթիվ փոքրի՜կ-փոքրի՜կ Անատասներ, որոնք արտացոլվում էին բազմաթիվ երփներանգ փայլփլուն ապակիների մեջ, իրենց բարակ ձեռքերը վեր բարձրացրեցին կախարդանքն արտասանելու համար։

Դանդաղ, խուլ ձայնով Անատասն սկսեց արտասանել ինչ-որ անհասկանալի բառեր.

Բագաբի լակո բախաբե,
Լամուկ կախի ախաբաբե,
Լամակ-լամեկ Բախլյալ
Կաբախազի զաբալյաս...

Հենց որ բարոնը հասավ կախարդանքի կեսին, ջահը սկսեց թեթևակի օրորվել, հավանաբար այն պատճառով, որ նա շատ

ուժեղ թափահարում էր ձեռքերը,— և անհանգստացած հսկայական սարդը իր բարակ ճոպանով սկսեց արագ իջնել ցած։

Բարոնն արտասանում էր կախարդանքի հենց վերջին բառերը.

Բարիոլազ
Լագոցատա կաբելազ...

Վերևում, առաստաղի վրա, ինչ-որ բան ջարդվեց, և հանկարծ հսկայական ջահը իր երփներանգ ապակե արտասուքների ամբողջ ծանրությամբ, աղմուկով ու զրնգոցով ընկավ հատակին, բազկաթոռի մոտ։

Վախեցած Թիմը ոտքերը քաշեց տակը։ Բարոնը, բերանը բաց և ձեռքերը վեր բարձրացրած, կանգնած էր բազկաթոռի հետևում՝ հսկայական ուռուցքը ճակատին։ Հավանաբար, ջահի մի կտորը դիպել էր նրա գլխին։

Համարում տիրեց լիակատար լռություն։ Բայց շրխկոցը, ըստ երևույթին, լսվել էր ամբողջ հյուրանոցով մեկ։ Ինչ-որ մեկն արդեն ծեծում էր դուռը։ Կռացած, վերջնականապես ուժասպառ եղած մարդու հոգնած քայլվածքով բարոնը մոտեցավ դռանը, մի փոքր բացեց և արանքից մի քանի խոսք ասաց իտալերեն։ Թիմը դրանք, իհարկե, չհասկացավ։ Հետո բարոնը կրկին փակեց դուռը, մեջքով հենվեց նրան և արտասանեց.

Ամեն ինչ անիմաստ է։ Պարզամիտ մարդու հետ գործը գլուխ չի գա։

Թիմի համար այդ նախադասությունը նույնքան անհասկանալի էր, ինչպես որ խորհրդավոր կախարդանքը։ Չվերկենալով բազկաթոռից, նա մի փոքր բարձրացավ տեղից և հարցրեց.

— Ի՞նչն է անիմաստ։

— Միջնադարը,— պատասխանեց բարոնը առանց երևէ կապի։

Եվ Թիմը մնաց լիակատար տարակուսանքի մեջ։ Նա այլևս ոչինչ չհարցրեց և միայն ասաց.

— Ներեցեք ինձ, խնդրում եմ, ջահի համար։ Ես ուզում էի խփել սարդին։

— Դատարկ բան է։ Պարզապես մենք ստիպված կլինենք վճարել ջահի արժեքը,— ասաց բարոնը։

— Իսկ ինչո՞ւ մենք,— հարցրեց Թիմը։ Նա հանկարծ հիշեց,

որ ինքը հսկայական հարստության տեր է, և դրա համար ավելացրեց.— Ջահի համար, բարոն, ես եմ վճարում։

— Հազիվ թե դա հնարավոր լինի,— առարկեց Անատասը, և նրա շրթունքներին նորից ժպիտ երևաց։

— Չէ որ դու դեռ անչափահաս ես, թանկագինս, և, նշանակում է, ոչ մի կոպեկ չես կարող ծախսել առանց խնամակալիդ համաձայնության։ Իսկ քո խնամակալը, ինչպես քաջ հայտնի է, բարոն Չարլզ Անատասն է։— Նա հեգնանքով գլուխ տվեց։— Բայց, իհարկե, դու մանր ծախսերի համար դրամ կստանաս։

Թիմը՝ վանդակավոր անդրավարտիքով և հին սվիտերով յունգան, բարձրացավ բազկաթոռից և նույնպես գլուխ տվեց։

— Դուք էլ, բարոն, երբեմն փայլուն մտքեր եք ունենում։ Այժմ թույլ տվեք, որ ես զգեստս փոխեմ։ Ես ցանկանում եմ մենակ մնալ։

Մի պահ Անատասը հայացքը սևեռեց տղայի վրա, չարտասանելով ոչ մի բառ։ Հետո նա հանկարծ ուրախ ծիծաղեց։ Եվ, դեռ շարունակելով ծիծաղել, բացականչեց.

— Պարզվում է, որ դու շատ ավելի բանի ես ընդունակ, քան ես կարծում էի, Թիմ Թալեր։ Շնորհավորում եմ։

Այժմ միայն նա նկատեց, որ Թիմը, լսելով իր ծիծաղը, գունատվեց։

Այդ ծիծաղը, ուրախ պոռթկումներն ու զրնգոցը, որով նա, ինչպես օղապարանով ամեն անգամ բռնում էր իր զրուցակիցներին, տղայի վրա չազդեց։ Նրա նկատմամբ ծիծաղը ոչ մի զորություն չուներ։ Չէ որ դա նրա սեփական ծիծաղն էր։

Անատասը արագ շրջվեց դեպի դուռը։ Բայց նախքան սենյակից դուրս կգար, պիջակի թևքով սրբեց իր ճանապարհին, գրեթե դռան մոտ դրված փոքրիկ գրասեղանի ողորկ մակերեսը։ Ընդ որում նա, աչքի տակով նայելով Թիմին, արմունկով սեղանի կենտրոնը քշեց գրելու պիտույքներ պարունակող բյուվարը։

Դրանից հետո միայն բացեց դուռը և ուսի վրայից ետ նայելով ասաց.

— Միշտ պատրաստ եմ ծառայելու, պարոն Թալեր։ Ես կհրավիրեմ սպասավորին։ Նա ինձ շատ նվիրված մարդ է և ծագումով էլ Միջագետքից է։

— Շնորհակալ եմ,— ասաց Թիմը,— ես սովոր եմ ինքնուրույն հագնվելու։

— Ինչ կա որ, ավելի լավ,— քմծիծաղեց բարոնը։— Ուրեմն, մենք կտեսնենք դրա վրա։

Վերջապես նա դուրս եկավ, իր հետևից անաղմուկ ծածկելով դուռը։

Աստիճանավանդակում բարոնը մի քիչ կանգնեց մտաբերելով։

— Երևում է, տղան որոշել է ետ ստանալ իր ծիծաղը,— փնթփնթաց նա։— Նա արհամարհում է այն զորությունը, որը տալիս են դիվային ուժերը։ Կամ էլ անտարբեր է այդ ուժերի նկատմամբ։ Նա լույս է ուզում, իսկ լույսը...— բարոնը դանդաղ գնաց դեպի իր համարը — ...Իսկ լույսը, ինչպես հայտնի է, բեկվում է հալելում։ Պետք է փորձել և այդ։

Մտնելով իր համարը, Անատասը անմիջապես նորից նստեց բազկաթոռին։ Նրա գլխավերևում կախված էր նույնպիսի ջահ, ինչպիսին Թիմի համարում էր։ Բարոնի հայացքն ընկավ թեթևակի երերվող ապակե արտասուքներին և, հիշելով, թե ինչպես Թիմը մաշիկը շպրտեց սարդի վրա, նա հանկարծ ծիծաղեց։ Նա այնպես էր ծիծաղում առաջ ու ետ ընկնելով ու ցնցվելով ծիծաղից, որ բազկաթոռը նրա տակ ճռռում էր։ Նա ծիծաղում էր փոքր տղայի պես։ Ծիծաղը բարձրանում էր խորքից ինչ-որ տեղից և դուրս էր գալիս մակերես, ինչպես պղպջակները գազով ջրի բաժակում։ Եվ դարձյալ նորից ու նորից ծիծաղի ելևէջները ավարտվում էին երջանիկ, բեկբեկուն, ընդհատվող քրքիջով։

Բայց բարոնը այն մարդկանցից էր, որոնք երբեք ուրախ անհոգությամբ չեն տրվում իրենց զգացմունքներին։ Նա զուրկ էր երջանիկ լինելու տաղանդից։ Նա սովոր էր ամեն ինչ բացատրել և տարրալուծել մասերի, նույնիսկ սեփական զգացմունքները։

Այս անգամ էլ հենց որ լռեց վերջին երջանիկ քրքիջը, բարոնը մտահոգվեց այն հարցով, թե ինչու էր ինքը այդպես ծիծաղում։ Եվ հանկարծ նա զարմանքով պարզեց, որ ինքն իր վրա էր ծիծաղում, կախարդանքի օգնությամբ Թիմի բարյացակամությունը նվաճելու իր անհաջող փորձի վրա։

Եվ այսպես, փորձը չհաջողվեց։ Անատասը պարտված էր։ Եվ այնուամենայնիվ նա ծիծաղո՞ւմ էր։ Դա բարոնի համար ինչ-որ նոր բան էր, միանգամայն անսպասելի։

Նա վեր կացավ բազկաթոռից և, ետ ու առաջ քայլելով սենյակում, սկսեց ինքն իրեն բարձրաձայն մտածել։

— Զարմանալի բան է, ես այդ ծիծաղը գնեցի, որ իշխանություն նվաճեմ ուրիշների սրտերի և հոգիների նկատմամբ։ Եվ ահա...— Նա այնքան ապշած էր, որ նույնիսկ կանգ առավ,— և ահա ես իշխանություն նվաճեցի ինքս իմ նկատմամբ, իմ տրամադրությունների, սարսափելի քմահաճույքների նկատմամբ։ Ես այլևս ոչ մի տրամադրություն չունեմ։ Ես ծիծաղում եմ ամեն ինչի վրա։

Նա նորից սկսեց ետ ու առաջ քայլել սենյակում։

— Առաջ ես կատաղում էի, եթե, փորձելով իմ իշխանությունը, պարտվում էի։ Ես կարող էի կատաղությունից տառացիորեն ատամներով գորգը կրծել։ Իսկ այժմ, նույնիսկ պարտություն կրելով, ես մնում եմ հաղթող՝ ես ծիծաղո՞ւմ եմ։

Բարոնը ձեռք տվեց ճակատի ուռուցքին (նա այդ ժամանակ գրեթե երջանիկ տեսք ուներ) և բացականչեց.

— Անհավանական է։ Այն ամենը, ինչին ես հասել եմ կյանքում, հասել եմ խարդավանքի և խաբեության, խարդախաբար ուրիշներին հաղթելու շնորհիվ։ Եվ հանկարծ հիմա ինչ-որ բան ինձ բաժին է ընկել հենց այնպես, ինքն իրեն, առանց որևէ ջանքերի, միայն այն բանի շնորհիվ, որ ներսումս կա ինչ-որ խրթխրթոց, որը կարող է ամեն րոպե դուրս գալ մակերես և ծառայել ինձ։ Ո՛չ, ծիծաղը շատ ավելի թանկ է, քան ես ենթադրում էի։ Այո, դրա համար կարելի է մի ամբո՞ղջ թագավորություն տալ։

Եվ նորից այդ երկար, նիհար մարդը նետվեց բազկաթոռի մեջ։ Նրա դեմքը մի վայրկյան դարձավ ձիարշավարանի վանդակավոր զգեստով պարոնի դեմքը՝ ինքնամփոփ և խորամանկ։

«Դե, ինչ կա որ, վազի՛ր քո ծիծաղի հետևից, Թիմ Թալեր։ Վազի՛ր, վազի՛ր։ Դու այն երբեք չես ստանա։ Ես ամուր եմ պահել քո ծիծաղը, ամբողջ ուժով, ատամներով ու մագիլներով»։

Թերթ տասնյոթերորդ

ՀԱՐՈՒՍՏ ԺԱՌԱՆԳԸ

Պատանի հարուստ ժառանգների սովորական զգեստը Թիմի ժամանակներում ուներ հետևյալ տեսքը. կարճ մոխրագույն անդրավարտիք, կարմիր և սև զոլերով բաճկոնակ, ձյան պես սպի-

տակ մետաքսե վերնաշապիկ, փողկապ՝ կարմիր շոտլանդական վանդակներով, նույնպիսի գուլպաներ և շագանակագույն զամշից կիսակոշիկներ՝ հաստ ներբանով։

Թիմը այդ զգեստով կանգնած էր մարդաբոյ հայելու առջև և սանրվում էր, կյանքում առաջին անգամ մազերը օդեկոլոնով նախապես օծելուց հետո։ Գորգի վրա նրա ոտքերի մոտ ընկած էր մի նկարազարդ ամսագիր, թենիսի չեմպիոնի լուսանկարներով։ Թիմը աշխատում էր մազերը սանրել ճիշտ այնպես, ինչպես չեմպիոնի մազերն էին։ Վերջապես դա նրան հաջողվեց։

Որոշ ժամանակ նա հայելում ուշադիր զննում էր իր դեմքը, հետո փորձեց վեր բարձրացնել բերանի անկյունները։ Բայց դա նույնիսկ հեռավոր նմանություն չուներ ժպիտի հետ։

Թիմը տխուր շրջվեց հայելուց և սկսեց աննպատակ ու տխուր սենյակից-սենյակ քայլել իր համարում։ Անգործությունից նա ճոճվեց ճոճաթոռով, մանրամասն նայեց պատերին կախված նկարները,— դրանք բոլորը նավեր էին բաց ծովում,— հետո վերցրեց փղոսկրի գույնի հեռախոսի լսափողը, բայց անմիջապես նորից դրեց տեղը և, վերջապես, բաց արեց պաճուճված կաշվե բյուվարը, որը բարոնը, գնալուց առաջ, քաշել էր ողորկ գրասեղանի կենտրոնը։

Բյուվարի մեջ կար փոստային թղթի կապոց։ Առաջին թերթի վերին ձախ անկյունում մոխրագույն ուղիղ տառերով տպված էր.

Թիմ Թալեր,
«Բարոն Անատաս և ընկերություն» ձեռնարկության տեր
Աջ կողմում գրված էր՝

«Ջենովա ... ամսի ... թվի»։

Բյուվարի կողքի մետաքսե գրպանիկում դրված էին փոստային ծրարներ։ Թիմը հանեց դրանցից մեկը և ներքևում գծի տակ կարդաց. «Առաքող Թիմ Թալեր, Ջենովա, Իտալիա։ «Պալմարո» հյուրանոց»։

Թիմը նստեց գրասեղանի մոտ դրված բազկաթոռին, բացեց բյուվարի մոտ դրված ինքնահոսը և որոշեց նամակ գրել։

Երբ նա վերցրեց մի թերթ թուղթ և մի կողմ քաշեց բյուվարը, նկատեց, որ սեղանի ողորկ մակերեսի վրա, ինչպես հայելում, արտացոլվեց թերթիկի վերևում տպագրված մակագրությունը։ Իսկ եթե այն հակառակը կարդալ.

Բելաթ միթ

ռետ հայթուկրանոեն «նույթուրեկնը և սատանն նորաթ»:

Այդ ժամանակ նա նկատեց «սատանա» բառը։

«Կարծես այստեղ գրված է «սատանա»,— մտածեց Թիմը։— Բայց դե հայտնի բան է,— ավելացրեց նա մտովին,— երբ խոսում են սատանայի մասին, ամենուր նա է աչքիդ երևում»։

Նա թերթիկը հարմարեցրեց և սկսեց նամակ գրել։

Թանկագին պարոն Ռիկերտ,

Ջենովա ես հասա ոչ այնքան բարեհաջող: Բարոնը մահացավ, և այժմ ես նրա ժառանգն եմ: Բայց ինձ դա բոլորովին էլ պետք չէր: Ավելի շուտ հակառակը: Ցավոք, հիմա ես ձեզ ոչինչ բացատրել չեմ կարող: Գուցե երբեմն դա կանեմ: Խնդրում եմ, աշխատեք կապ հաստատել ստյուարդի հետ: Նրա անունը Կրեշիմիր է, և նա կույր աղիքի բորբոքում ունի: Կրեշիմիրը կարող է ձեզ ամեն ինչ պատմել, իսկ ես, ցավոք սրտի, ոչինչ: Խնդրում եմ, խոսեք նաև «Դելֆինի» դեկորդի հետ: Նրա անունը Ջոնենի է, և նա ծնվել է Համբուրգում: Նա ամեն ինչ գիտե:

Հիմա ես ամենահարուստ մարդն եմ աշխարհում, և այսպես կոչված նոր բարոնը իմ խնամակալն է: Դրանում որևէ լավ բան չկա, բայց գուցե դա ինձ օգնի: Ես աշխատում եմ, որ բարոնը չնկատի, որ ես ոչ մի այդպիսի բան չեմ ուզում: Դուք և Ձեր մայրիկը, և՛ ստյուարդը, և՛ Ջոնենին շատ բարի էիք իմ նկատմամբ: Գուցե դուք որևէ ելք գտնեք ինձ համար: Բայց, հավանաբար, ես ինքս պետք է գլուխ հանեմ: Եվ, հավանաբար, դա շատ լավ է, որ ես ծրագիր և նպատակ ունեմ, որովհետև դա օգնում է մոռանալ, որ ես հիմա արդեն իսկական մարդ չեմ:

Խնդրում եմ, ողջույններ հաղորդեք Ձեր մայրիկին, և խորին շնորհակալություն Ձեզ՝ ձեր տխուր Թիմ Թալերից:

Միայն, խնդրում եմ, նամակ ինձ չգրեք: Գուցե հետո ես ձեզ որևէ գաղտնի հասցե կուղարկեմ:

Թիմ

Նա մեկ անգամ էլ սկզբից մինչև վերջ կարդաց նամակը, հետո թերթիկը չորս տակ ծալեց և, դնելով ծրարի մեջ, փակեց։ Բայց հենց այն վայրկյանին, երբ նա ուզում էր գրել հասցեն, դուռն հետևում լսվեցին ոտնաձայներ։

Թիմը նամակը արագ դրեց բաճկոնի ներսի գրպանը։ Նույն վայրկյանին լսվեց դռան թակոցը, և նորից, նախքան Թիմը կհասցներ պատասխանել «մտե՛ք», նրա համարը մտավ բարոնը։

Բայց բյուվարի կողքին նա տեսավ ինքնահոսը և հարցրեց.

— Ինչ է, անձնական նամակներ ե՞ք գրում, պարոն Թալեր։ Այդ հարցում դուք պետք է զգույշ լինեք։ Ի դեպ, ձեր տրամադրության տակ քարտուղար ունեք։

Թիմը փակեց բյուվարը, պտտեցրեց գրիչը և ասաց.

— Եթե քարտուղարի կարիքը զգամ, ես նրան կկանչեմ։

— Մոնչոցդ վատ չէր, պատանի առյուծ,— ծիծաղեց բարոնը։— Ինձ թվում է, որ նոր զգեստ հագնելով, դուք անմիջապես ձեռք բերիք նոր ձևեր։ Դա շա՛տ, շա՛տ գովելի է։

Նորից լսվեց դռան թակոց։ Անատասը դժգոհ բղավեց.

— Che cosa vole?[1]

— La garderoba per il signore Thaler[2]— պատասխանեց ինչ-որ մեկը դռան ետևից։

— Avanti[3],— փնթփնթաց Անատասը։

Երկար, կանաչ դոգնոցով ծառան խոնարհվելով ներս բերեց Թիմի ուսապարկը, դրեց ճամպրուկների պատվանդանի վրա և մնաց դռան մոտ կանգնած։

Թիմը մոտեցավ նրան, մեկնեց ձեռքը և ասաց.

— Շատ շնորհակալ եմ։

Ծառան զարմացած և նույնիսկ կարծես տհաճությամբ սեղմեց իրեն մեկնած ձեռքը։

— Non carisco[4],— շշնջաց նա։

— Նա չի հասկանում,— ծիծաղեց բարոնը։— Իսկ այ սա նա անպայման կհասկանա։

Այդ ասելով Անատասը գրպանից մի քանի թղթե լիր հանեց և դրանցից մեկը մեկնեց ծառային։

— Grazie! Mille grazie! Tante grazie, signore Barone![5]— և ցածր խոնարհվելով, նա ետ-ետ գնաց դեպի դուռը։

---

1 Ի՞նչ եք ցանկանում (իտալ.)։

2 Պարոն Թալերի իրերն են։

3 Մտեք։

4 Չեմ հասկանում։

5 Շնորհակալ եմ։ Շատ շնորհակալ եմ։ Անչափ շնորհակալություն, պարոն բարոն։

Անատասը նրա ետևից փակեց դուռը և ասաց.

— Նախկինում հասարակ մարդը նախքան տերերի սենյակների շեմից ներս մտնելը, հանում էր կոշիկները, իսկ մտնելուց հետո ծունկի էր իջնում և համբուրում տիրոջ կոշիկի քիթը։ Ավաղ, այդ օրհնյալ ժամանակները վաղո՜ւց անվերադարձ անցել են։

Թիմը ուշադրություն չէր դարձնում բարոնի խոսքերին։ Նրան հանկարծ ցնցեց այն միտքը, որ ուսապարկի մեջ է իր գլխարկը, իսկ գլխարկի աստառի տակ է Անատասի հետ կնքած պայմանագիրը։ Նա անփութորեն մոտեցավ ուսապարկին, բացեց կապը և անմիջապես տեսավ գլխարկը՝ այն վերևից էր դրված։ Վերցնելով գլխարկը, նա լսեց, թե ինչպես աստառի տակ շխկշխկաց թուղթը։ Թիմը թեթևացած շունչ քաշեց։ Շարունակելով լսել բարոնի ճամարտակությունները, նա աշխատում էր աստառի տակից անկատ հանել պայմանագիրը և տեղափոխել բաճկոնի ներսի գրպանը։

— Այնպիսի հյուրանոցներում, ինչպիսին սա է,— իր խոսքը շարունակեց բարոնը,— լիովին բավական է երեք հոգու ձեռքը սեղմել։ Գլխավոր հերթապահինը, որպեսզի անհրաժեշտության դեպքում միշտ ասի, որ դուք հենց նոր դուրս եկաք, դիրեկտորինը՝ որպեսզի ձեր գաղտնիքները չտարածի և շեֆ-խոհարարինը, որպեսզի ինչպես հարկն է կերակրի ձեզ պետքական մարդկանց։

— Ես դա նկատի կունենամ,— նկատեց Թիմը։

Բայց մտքում ասաց. «Երբ ես նորից կկարողանամ ծիծաղել, ես ուրախությամբ կսեղմեմ բոլոր սպասավորների և սպասուհիների ձեռքը»։

Հնոտախոսը զանգահարեց։ Թիմը վերցրեց լսափողը և ասաց.

— Լսում եմ։ Սա Թիմ Թալերն է։

— Ձեր մեքենան ներքևում է, պարոն,— լսվեց լսափողում մի ձայն։

— Շատ շնորհակալ եմ,— պատասխանեց Թիմը և սեղմեց լծակը։

Բարոնը, որը շատ ուշադիր հետևում էր Թիմին, դիտողություն արեց.

— Երբեք մի ասեք ձեր լրիվ անունը, Թանկագինս։ Լիովին բավական է ասել «այո», այն էլ այնպիսի տոնով, որպեսզի հասկանան ձեր դժգոհությունը. չէ որ ձեզ անհանգստացրել են։ Եվ

երբեք մի ասեք. «Շատ շնորհակալ եմ», եթե հաղորդում են, որ մեքենան սպասում է ձեզ։ Լիովին բավական է ասել՝ «լավ»։ Հարբստությունը պարտավորեցնում է որոշակի քաղաքավարություն) պարոն Թալեր։ Շատ կարևոր է մարդկանց տարածության վրա պահելը։

— Ես դա նկատի կունենամ,— նորից կրկնեց Թիմը։

Եվ նորից մտածեց. «Դե սպասիր, թող հալա իմ ծիծաղը վերադարձնե՞մ»։

Նրանք միասին աստիճաններով իջան սրահ,— այդպիսի շքեղ հյուրանոցներում դա սովորաբար կոչվում է հոլլ,— և հենց որ նրանք երևացին, ինչ-որ պարոններ վեր կացան իրենց բազկաթոռներից ու գլուխ տվեցին։ Նրանցից մեկը մոտեցավ և հարցրեց.

— Թույլ կտա՞ք, պարոն բարոն...

Անգամ չնայելով նրան, բարոնը պատասխանեց.

— Մենք շտապում ենք, հետո։

Հետո նրանք իջան մարմարե աստիճաններով և ուղղվեցին դեպի իրենց շքեղ ավտոմեքենան։

Վարորդը նրանց առաջ բացեց դուռը, և բարոնն ու Թիմը նստեցին կարմիր կաշվե նստարանին։

Թիմը չնկատեց, որ իրենց ավտոմեքենայի առջևից և հետևից ընթանում էին երկու ավտոմեքենաներ, անձնական թիկնապահներով։ Նա չհասկացավ նաև լրագրավաճառների բացականչությունները, որոնք վազելով փողոցով, թափահարում էին իրենց լրագրերը։

— Il barone Anatase è morto!

— Adesso un ragazzo di quatrodici anni èil piu ricco uomo del mondo!

Բարոնը, ժպտալով, Թիմի համար թարգմանեց նրանց բացականչությունները.

«Բարոն Անատասը մեռել է։ Տասնչորսամյա տղան աշխարհի ամենահարուստ մարդն է»։

Խաչմերուկում ավտոմեքենան կանգ առավ լուսաղդանշանի առջև։ Անատասը այդ ժամանակ ցուցումներ էր տալիս Թիմին, թե ինչպես պետք է իրեն պահի ընդունելության ժամանակ, ուր նրանք այժմ գնում էին։ Բայց Թիմը նրան գրեթե չէր լսում։ Նրա ուշադրությունը գրավել էր բալի նման սև աչքերով փոքրիկ աղջիկը, որը մայթին կանգնած էր մրգավաճառի կողքին և, բերանը

լայն բացած, աշխատում էր կծել խնձորը։ Նկատելով Թիմի հայացքը, նա իջեցրեց ձեռքը և ժպտաց տղային։

Թիմը նրան գլխով արեց, նորից մոռանալով, թե որքան տխուր է ամեն անգամ վերջանում ժպտալու իր փորձը։

Եվ աղջիկը հանկարծ տեսավ, թե ինչպես ավտոմեքենայի ապակու հետևում տղայի դեմքը աղավաղեց սարսափելի ծամածռությունը։ Նա վախեցավ, լաց եղավ և թաքնվեց մրգավաճառի մեջքի ետևում։

Թիմը ձեռքերով ծածկեց դեմքը և ընկավ նստարանի մեջքին։ Իսկ բարոնը, որը հայելու մեջ դիտում էր այդ տեսարանը, իջեցրեց իր կողմի ապակին և, ծիծաղելով, իտալերեն ինչ-որ բան բղավեց աղջկան։

Աղջիկը դեռ արտասուքներից թաց դեմքով դուրս նայեց մրգավաճառի մեջքի ետևից, անհամարձակ մոտեցավ ավտոմեքենային և իր խնձորը մեկնեց բարոնին։ Երբ Անատասը դրա փոխարեն նրան տվեց փայլուն մի դրամ, նա պայծառացավ, բարակիկ ձայնով բացականչեց. «Grazie, signore»[1]— և ծիծաղեց։

Այդ վայրկյանին ավտոմեքենան շարժվեց, և բարոնը խնձորը մեկնեց Թիմին։

Բայց Թիմը ակամա ետ քաշեց ձեռքը, և հսկայական կարմիր խնձորը, որը այնպես էր փայլում, ֆարթես լաքապատված լիներ, նրա ծնկներից գլորվեց ներքև, վարորդի ոտքերի տակ։

— Դուք պետք է ապագայում սովորեք, պարոն Թալեր,— ասաց Անատասը,— ձեր ժպիտը փոխարինել դրամ նվիրելով։ Մեծ մասամբ դա շատ ավելի ուժեղ տպավորություն է գործում։

«Այդ դեպքում ինչո՞ւ դու գնեցիր իմ ծիծաղը»,— մտածեց Թիմը։

Բարձրաձայն նա ասաց.

— Ես նկատի կունենամ, բարոն։

---

[1] Շնորհակալություն, պարոն։

Թերթ տասնութերորդ

ՊԱԼԱՑՑՈ ԿԱՆԴԻԴՈ

Պալացցո Կանդիդոն, ինչպես արդեն պարզ է իտալական անունից, սպիտակ պալատ է. դրսից՝ սպիտակ մարմար, ներսից՝ սպիտակ ծեփ։ Երբ բարոնը և Թիմը սպիտակ մարմարե աստիճաններով բարձրացան առաջին հարկը, նրանց ամեն կողմից շրջապատեցին դիրեկտորները։ Թիմին թվաց, որ նրանք բոլորը տարօրինակ կերպով ծանոթ են, հավանաբար, նրանք էին իրեն դիմավորում Նավահանգստում։

Երբ բարոնը խոսում էր Թիմի հետ, դիրեկտորները հարգալից լռություն էին պահպանում։

— Այս պալատը, որ տրամադրել են մեզ,— ասաց Անատասը կիսաձայն,— թանգարան է, և այդ պատճառով մենք ստիպված կլինենք շատ փող վճարել։ Նրա սրահներում կախված են իտալական և հոլանդական դպրոցների վարպետների նկարները։ Մենք ստիպված կլինենք նայել դրանք։ Մեր դիրքը մեզ պարտավորեցնում է այդպիսի բաների։ Քանի որ դուք, պարոն Թալեր, հավանաբար գեղանկարչությունից և ընդհանրապես արվեստից ոչինչ չեք հասկանում, խորհուրդ եմ տալիս նկարները դիտել լուռ, լուրջ դեմքով։ Այն նկարների առաջ, որոնց մոտ ես կհազամ, դուք կկանգնեք ավելի երկար, քան մյուսների մոտ։ Լուռ հետաքրքրասիրություն խաղացեք։

Թիմը լուրջ դեմքով լուռ գլխով արեց։

Բայց երբ նրանք, դիրեկտորների շքախմբով շրջապատված, սկսեցին շրջել պատկերասրահում, Թիմը չհետևեց բարոնի ցուցումներին։ Այն նկարների մոտից, որտեղ Անատասը հազում էր, Թիմն անմիջապես հեռանում էր։ Դրա փոխարեն ավելի երկար էր մնում այն նկարների մոտ, որտեղ Անատասը չէր հազում։

Թանգարանում ամենից շատը՝ յուղաներկով կատարված դիմանկարներն էին։ Հոլանդական վարպետների դիմանկարների վրա մարդկանց դեմքերը թվում էին բոլորովին թափանցիկ և զարմացնում էին կենտրոնացած արտահայտությամբ. նրանց նեղ շուրթերը ամուր փակված էին։ Իտալական վարպետների դիմանկարների դեմքերն աչքի էին ընկնում մաշկի գեղեցիկ թխու-

թյամբ, իսկ շուրթերի անկյունների մոտի ուրախ կիսաշրջանների պատճառով թվում էր, որ նրանք հիմա կժպտան։ Ինչպես երևում է, հոլանդական դիմանկարները ավելի մեծ հռչակ ունեին— բարոնը ավելի հաճախ նրանց մոտ էր հազում։ Բայց Թիմին դուր էին գալիս բոլորովին այլ դեմքեր— պակաս ինքնամփոփ, բաց, փոսիկներով բերանի անկյունների մոտ։ Երբեմն բարոնը ստիպված էր լինում գրեթե հրել նրան, որ հեռանա այդպիսի դիմանկարից։ Դրա փոխարեն «իցի» և «օցի» վերջավորությամբ դիրեկտորները գտնում էին, որ տղայի ճաշակը վատը չէ։ Երբ Անատասը նկատեց այդ, նա առանց երկար բարակ մտածելու որոշեց ընդհատել պատկերասրահի դիտումը և ասաց.

— Սակայն ժամանակն է անցնելու մեր միջոցառման հիմնական մասին, պարոնայք։

Այժմ բոլորը ուղղվեցին այն սրահը, որտեղ «n» տառի ձևով դրված էին ճոխ սեղանները։ Սեղանի գլուխը զարդարված էր դափնու ճյուղերով։ Այնտեղ պետք է նստեր Թիմը։

Բայց նախքան բոլորը կգրավեին իրենց տեղերը՝ հայտնվեց լուսանկարիչը, փոքրամարմին, ժիր, չափազանց երկար սև մազերով մի մարդուկ։ Նրա մազերն անընդհատ թափվում էին աչքերին, և նա ամեն անգամ գլխի գեղեցիկ շարժումով ճակատից նետ էր գցում դրանք։ Լուսանկարիչը բոլոր ներկաներին խնդրեց կիսաշրջան կազմել այնպես, որ Թիմը կենտրոնում լինի։ Դիրեկտորներից բացի, այստեղ հայտնվեցին բազմաթիվ ինչ-որ այլ մարդիկ, բայց նրանց ձեռքերը Թիմը չպետք է սեղմեր։

Փոքրամարմին լուսանկարիչը իր ապարատը ամրացրեց շտատիվին, նայեց և սկսեց ցուցումներ տալ հավաքվածներին, ամբողջ ուժով թափահարելով ձեռքերը և բացականչելով.

— Ridere, sorridere! Sorridere, prego!

Թիմը, որ կանգնած էր Գրանդիցիի առջևում, ուսի վրայից հարցրեց դիրեկտորին.

— Ի՞նչ է ասում։

— Նա ասում է, որպեսզի դու... Ներեցեք, որպեսզի դուք... Ավելի ճիշտ, նա ասում է, որպեսզի մենք ժպտանք... Ժպտացեք։

— Շնորհակալություն,— պատասխանեց Թիմը։

Նա միանգամից գոհատվեց։ Այժմ լուսանկարիչը դիմեց ուղիղ նրան և կրկնեց.

— Sorridere, signore! Ժպտացեք, խնդրեմ։

Եվ բոլորի հայացքներն ուղղվեցին տղային։

Իսկ նա կանգնած էր, շրթունքները ամուր սեղմած իրար։ Լուսանկարիչը հուսահատությամբ կրկնեց.

— Ժպտացե՛ք։ Օ,՝ խնդրում եմ, խնդրո՛ւմ եմ։

Գրանդիցիի հետևում կանգնած բարոնը ոչնչով Թիմին օգնության չհասավ։

Եվ Թիմն ասաց.

— Իմ ժառանգությունը ծանր բեռ է, պարոն լուսանկարիչ։ Եվ ես դեռ չգիտեմ, ինչ անեմ՝ ծիծաղեմ, թե լաց լինեմ։ Թույլ տվեք, որ ես առայժմ չշտապեմ ծիծաղել կամ լաց լինել։

Կիսաշրջանով շշուկ անցավ։ Ոմանք Թիմի խոսքերը թարգմանում էին իտալերեն, մյուսները զարմանք և հիացմունք էին արտահայտում։ Միայն Անատասն էր ուրախ ժպտում։

Վերջապես լուսանկարվեցին, ճիշտ է՝ առանց ժպտացող ժառանգի։ Դրանից հետո բոլորը սեղան նստեցին։ Թիմի մի կողքը նստած էր Գրանդիցին, մյուսը՝ բարոնը։ Դիրեկտոր Գրանդիցիի թաշկինակը մեխակի բուրմունք էր արձակում։ Թվում էր, թե քաղցր պղպեղի հոտ էր գալիս։

Նախքան ուտելուն անցնելը, դիրեկտորները բազմաթիվ հանդիսավոր ճառեր արտասանեցին— մի մասը՝ իտալերեն, մյուսները՝ կոտրտված գերմաներենով։ Եվ ամեն անգամ, երբ ունկնդիրները ծիծաղում էին, գլխով անում կամ ծափահարում, նրանք նայում էին սեղանի ամենապատվավոր տեղում նստած տղային։

Մեկ անգամ բարոնը շշնջաց Թիմին.

— Դուք ձեզ համար ծանր կյանք ստեղծեցիք, պարոն Թալեր, շտապողականությամբ գրազ գալով։

Թիմը շշուկով պատասխանեց.

— Ես գիտեի, թե ինձ ինչ է սպասում, բարոն։

Բայց իրականում նա իր կյանքում դեռ երբեք այնքան վատ չէր զգացել, ինչպես այժմ, երբ բոլորը զննում էին իրեն, կարծես ինքը մի անսովոր գազանիկ լիներ։ Սակայն բարոնին ոչնչով չզիջելու հաստատ որոշումը ամրապնդում էր նրա ուժերը և թույլ չէր տալիս, որ հոգեպես ընկճվի։

Միայն մի կարճ վայրկյան Թիմը մտածմունքի մեջ ընկավ, նա հիշեց ղեկորդ Ջոննիին։ Եվ այդ պահին նա նորից վերածվեց փոքր տղայի ու վախեցավ, որ հիմա կպայթի։ Բայց, բարեբախ-

տաբար, հենց այդ բոպեին բարոնը ոտքի կանգնեց, և Թիմը նորից տիրապետեց իրեն։

Ամենից առաջ բարոնը գովաբանեց իր մեռած եղբոր ընդունակությունները ու գործնական հատկությունները, ապա անցավ այն բարձր խնդիրներին, որոնք ծառայում են յուրաքանչյուրի առջև, ով հսկայական հարստություն է կառավարում, և, վերջապես, համառոտ, եռանդուն արտահայտություններով ուժ ու իմաստություն մաղթեց պատանի ժառանգորդին, որպեսզի նա խելոք և բարի նպատակով օգտագործի այդպիսի հսկայական ժառանգությունը։ Հետո նա մի քանի խոսք ասաց իտալերեն։ Ըստ երևույթին, դա կատակ էր, և նա ինքն էլ փոքր տղայի նման ծիծաղեց այդ առթիվ։

Տիկնայք և պարոնայք սեղանի շուրջ այնպես էին հիացած նրա ծիծաղով, որ նույնպես ծիծաղեցին և սկսեցին ուժեղ ծափահարել։

Այս անգամ բարոնի ծիծաղը չհուզեց Թիմին։ Նա այժմ միշտ ձեռքին կրում էր այն ժամացույցը, որը նրան նվիրել էր պարոն Ռիկերտը Համբուրգում, և հենց այդ բոպեին նա նայում էր ժամացույցին։ Ժամացույցը ցույց էր տալիս տասնութն անց երեսուն՝ վեցն անց կես։ Ժամը ութին նա պետք է հանդիպեր Ջոննիին։ Իսկ դատելով ափսեներից, բաժակներից և սպասքներից, բանկետը դեռ երկար պետք է տևեր։ Հավանաբար, Թիմը ստիպված պետք է առաջինը վեր կենար սեղանից։ Բայց ինչպես այդ անել։ Չէ որ նա այդտեղ գլխավոր գործող անձն էր...

Ճաշկերույթը, իրոք, շատ երկար տևեց։ Երբ ապուրից հետո, որը հետևել էր խորտիկներին, մատուցեցին գլխավոր ճաշատեսակը՝ սպիտակ գինով եփած երիկամները, արդեն ժամը յոթն անց էր քսան բոպե։

Թիմի միտքը զբաղված էր միայն մեկ հարցով՝ առաջիկա հանդիպմամբ Ջոննիի հետ, և նա ինքն էլ չնկատեց, թե ինչպիսի դժվարություններ ստիպված եղավ հաղթահարել, որ սեղանի շուրջ թողնի լավ դաստիարակված երիտասարդի տպավորություն։ Նա ուտում էր այնպես, ինչպես ուտում էին «Դելֆին» նավի ռեստորանի այցելուները, և բարոնը չէր դադարում զարմանալ տղայի կենդանի և բնական շարժուձևով։ Տեսնելով, թե ինչպիսի նրբագեղությամբ է Թիմը երիկամի կտորը անցկացնում պատառաքաղին, նա շշնջաց.

— Չէ, ես պարզապես թերագնահատել եմ այս տղային։

Երբ ժամացույցի սլաքը ցույց տվեց ութից քսան պակաս, Թիմը կռացավ դեպի բարոնի ականջը և ասաց.

— Ես պետք է դուրս գամ։

Բարոնը արագ պատասխանեց.

— Զուգարանը միջանցքի աջ կողմում է։

— Շնորհակալություն,— ասաց Թիմը։

Նա վեր կացավ և հանդիսավոր զարդարված սեղանների մոտով անցավ դեպի դուռը։ Նրան ուղեկցում էին բազմաթիվ հայացքներ։ Նա ջանում էր այնպես քայլել, ինչպես քայլում է յուրաքանչյուր սովորական տասնչորսամյա տղա։

Միջանցքում հանկարծ ցանկություն առաջացավ բացել ճաշասրահի դուռը և բարձրաձայն այնպիսի մի բառ բղավել ներս, որ բոլորը վեր թռչեն տեղերից։ Բայց այնտեղ կանգնած էր ոսկեզարդ համազգեստով մի սպասավոր, և Թիմը հանգիստ արժանապատվությամբ գնաց զուգարան։

Հենց այն րոպեին, երբ նա նորից դուրս եկավ միջանցք, ոսկեզարդ համազգեստով սպասավորը շրջվել էր, և Թիմը ոտքի մատների վրա (չէ որ մարմարն ուժեղ արձագանքում է) սողոսկեց աստիճանների վրա և արագ վազեց ցած։

Պալատի մուտքի առաջ կանգնած էր դռնապանը, որը հագած էր ոսկե ժապավեններով շինել։ Բայց նա, ըստ երևույթին, չէր ճանաչում տղային և Թիմին նայեց մռայլ անտարբերությամբ։ Թիմն այնքան սրտապնդվեց, որ հարցրեց նրան, թե որտեղ է գտնվում Քրիստափոր Կոլումբոսի հուշարձանը։ Բայց դռնապանը նրան չհասկացավ։ Նա անվստահ ցույց տվեց տրամվայի կանգառի կողմը։ Եվ Թիմը արագ քայլերով գնաց այդ ուղղությամբ։

Թերթ տասնիններորդ

ՋՈՆՆԻՆ

Տրամվային սպասելով (թվում էր, թե անցավ մի ամբողջ դար), Թիմը անընդհատ գլուխը շրջում էր և նայում պալատի մուտքին, բայց դռան մոտ անշարժ կանգնած դռնապանից բացի,

այնտեղ առաջվա նման ոչ ոք չկար։ Ըստ երևույթին, Թիմի երկարատև բացակայությունը դեռևս ոչ ոքի մոտ անհանգստություն չէր առաջացրել։ Թիմը անհամբերությամբ ուսումնասիրում էր տրամվայների երթուղիների սխեմաները, որի կենտրոնում տեղավորված էր երկար ուղղանկյուն հայելի։ Եվ հանկարծ նա,— այդ օրվա մեջ արդեն ո՞չ առաջին անգամ,— արտացոլման շնորհիվ որոշ նոր բան իմացավ բարոնի բարքերի մասին։ Նա հայելու մեջ տեսավ, որ պալատի դուրս ցցված մասի հետևում կանգնած է հենց այն ավտոմեքենան, որով նա այստեղ եկավ բարոնի հետ։ Այդ ավտոմեքենայի հետևում երևում էին ևս երկու ավտոմեքենաներ, և նրանցից առաջինի մոտ կանգնած էին երկու մարդ, որոնք ինչ-որ բանի մասին զրուցում էին միմյանց հետ։ Նրանցից մեկը հենց այդ պահին ձեռքով ցույց էր տալիս Թիմին։

Հիմա Թիմը մտաբերեց, որ դիրեկտոր Գրանդիցին դեռ այն ժամանակ, երբ իրենք դալիս էին բարկասով, ասում էր դետեկտիվների մասին, որոնք կլինեն իր մշտական անձնական թիկնապահները։ Գուցե հենց դրա՞նք են այդ թիկնապահները։ Որքան դա անտեղի կլիներ— չէ որ բարոնը չպետք է իմանար, որ Թիմը տեսնվել է Ջոննիի հետ։

Այդ ժամանակ մոտեցավ տրամվայը, որն ուներ երկու բաց հարթակներով կցորդ, այսինքն հարթակի մյուս կողմում էլ աստիճաններ կային։

Դա ձեռնտու էր Թիմին։ Այն ժամանակից ի վեր, ինչ զրկվել էր ծիծաղից, նա աստիճանաբար սովորել էր դժվար դրություններում դատել հանգիստ և սառնասիրտ։ Թիմը ցատկեց միջին վագոնի հարթակին և, հրմշտելով այնտեղ կանգնած մարդկանց, հասցրեց տրամվայը շարժվելուց առաջ իջնել հարթակի մյուս կողմից։ Եվ անմիջապես վազքով հատեց փողոցը, անցավ սուրացող վազքամեքենայի քթի տակով և մայթով սլացավ առաջ։

Նախքան նեղ նրբանցք մտնելը, նա մեկ անգամ ևս ետ նայեց ու տեսավ, որ դետեկտիվներից մեկը այդ րոպեին պատրաստվում է վազքով հատել փողոցը։ Եվ Թիմը հասկացավ, որ ինքը թիկնապահներից ազատվել կկարողանա միայն խորամանկությամբ։ Բարեբախտաբար, նա գտնվում էր Ջենովայի այն մասում, որը հռչակված էր իր խառնիճաղանջ նրբանցքներով և միջանցուկ բակերով. տների մեծ մասն այստեղ ուներ երկու մուտք՝ գլխավոր և հետնամուտք։ Թիմը անկախ տեսքով մտավ մի փոքր խորտ-

կարան, որտեղից տապակած մսի և ձիթապտղի յուղի հոտ էր գալիս, և, անմիջապես դուրս գալով մյուս դռնից, հայտնվեց մի նրբանցքում, որտեղ ուղղակի տների առջև դրված էին տապակած թանաքաձկան վաճառասեղանները։ Այդտեղ նա սողոսկեց ինչ-որ դռնից ներս, որի վերևում կախված էր «Trattoria»—«Ճաշարան» ցուցատախտակը, և, դուրս վազելով ճաշարանի հետնամուտքից, ընկավ ոսկերչական խանութների նրբանցքը։ Նա վազեց թանկարժեք քարերով լցված զարդերի ցուցափեղկերի երկայնքով, շրջվեց մյուս կողմի նեղ նրբանցքը և, հայտնվելով շատախոս, աղմկարար և կովարար տանտիրուհիների ամբոխում, հասկացավ, որ գտնվում է ինչ-որ փոքր շուկայում։ Թիմը նորից վազեց ինչ-որ ճաշարանի միջով, որտեղ թթու գինու հոտ էր գալիս և հանկարծ հայտնվեց այդ պահին կանգ առած ավտոբուսի բաց դռան առջև։ Առանց երկար մտածելու, նա ցատկեց աստիճանին, դուռը ետևում փակվեց, և ավտոբուսը շարժվեց։

Տոմսավաճառը ժպտալով մատով սպառնաց նրան և ձեռքը մեկնեց, որ ստանա ուղևորության վարձը։ Թիմը, որ բոլորովին մոռացել էր փողի մասին, մեքենայաբար ձեռքը տարավ իր շերտավոր բաճկոնի գրպանը և, թեթևացած շունչ քաշելով, գրպանում շոշափեց մանր փող և թղթադրամներ։ Թղթադրամներից մեկը նա մեկնեց տոմսավաճառին և ասաց.

— Քրիստափոր Կոլումբոս։

— Հը-ը-ը՞,— չհասկացավ տոմսավաճառը։

— Քրիստափոր Կոլումբոս։ Հուշարձանը,— կրկնեց տղան, աշխատելով խոսել որքան հնարավոր է հստակ։

Վերջապես տոմսավաճառը նրան հասկացավ։

— Il monumento di Crictoforo Colombo,— ուղղեց նա Թիմին խրատական ձևով։

Եվ Թիմը ջանասիրությամբ կրկնեց.

— Իլ մոնումենտո դի Քրիստափորո Կոլոմբո։

— Bene, bene!— ժպտաց տոմսավաճառը։— Լավ, լավ։

Հետո նա Թիմին վերադարձրեց 85 լիր, պոկեց մի տոմս և նշաններով հասկացրեց, որ կասի, թե երբ իջնի։

Թիմը լուրջ դեմքով գլխով արեց և մտածեց. «Ա՜յ թե բախտ բերեց»։

Ինչպես հարկն է ուրախանալ նա չէր կարող, բայց որոշ թեթևություն զգաց։

Մի տասը բոպեից ավտոբուսը, անցնելով նավահանգստի մոտով, սկսեց նրբանցքով բարձրանալ սարը։ Տոմսավաճառը պատուհանից Թիմին ցույց տվեց մեծ սպիտակ հուշարձանը, որը կանգնած էր արմավենիներով շրջապատված և բազմաթիվ ապակե դռներ ունեցող հսկայական շենքի առջև։

Թիմը ասաց իտալերեն իմացած իր միակ բառը.

— Գրացիե։ Շնորհակալ եմ։

Հետո նա դուրս եկավ ավտոբուսից և հայտնվելով մեծ հրապարակում շփոթված նայեց շուրջը։ Նա հասկացավ, որ մեծ շենքը կայարան է։ Գլխավոր մուտքի վերևում կախված ժամացույցը ցույց էր տալիս ժամը ութից հինգ բոպե պակաս։

Հրապարակի մարդկանց մեջ նա չհայտնաբերեց իր դետեկտիվներին։ Բայց ղեկորդ Ջոննին էլ ոչ մի տեղ չկար։ Թիմը դիտավորյալ դանդաղ քայլերով գնաց հուշարձանի կողմը, պտտվեց նրա շուրջը և միայն այդ ժամանակ տեսավ ղեկորդ Ջոննիին, որը կանգնած էր հսկայական արմավենու բնին հենված, ինքն էլ գրեթե նրա բարձրության։ Դժվար էր չնկատել նրան։

Թիմը վազելով նետվեց նրա մոտ և կկախվեր նրա պարանոցից, եթե Ջոննին այդքան մեծ չլիներ։

— Ես փախել եմ, Ջոննի՜,— բղավեց նա, հազիվ շունչ քաշելով։— Բարոնը ինչ-որ դետեկտիվների է կցել ինձ։ Բայց ես...

— Բարո՞նը,— զարմացած ընդհատեց Ջոննին։— Ես նրան մեռած էի համարում։

— Նա վերածվել է իր երկվորյակ եղբորը։

Ջոննին ատամների արանքից սուլեց։ Հետո նա բռնեց Թիմի ձեռքը և ասաց.

— Գնանք նստենք որևէ պանդոկում։ Եվ թող նա փորձի մեզ գտնել։

Եվ նա Թիմին տարավ իր հետևից անվերջանալի նրբանցքներով և նեղլիկ փողոցներով։

Այն, ինչը Ջոննին կոչեց «պանդոկ», ըստ էության ավելի լավ անվան էր արժանի։ Ձևով միջանցք հիշեցնող այդ շինությունը աստիճանաբար լայնանում էր և վերջանում կիսախավար, գրեթե քառակուսի սրահով։ Հատակն այստեղ տաշած տախտակներից էր, մուգ պատերին կպած փայտե դարակների վրա գրեթե մինչև առաստաղը դարսված էին բոլոր ձևերի, գույների և չափե-

րի շշեր։ Այդ դարակների տեսքը ,շատ հանդիսավոր էր, կարծես շշերից կառուցված տաճար լիներ։

Ղեկորդը Թիմին մոտեցրեց քառակուսի սրահի ամենահեռավոր անկյունում դրված սեղանին։ Այժմ դռնից մտնողը չէր կարող տեսնել նրանց։ Երբ մատուցողը մոտեցավ, Ջոննին պատվիրեց երկու բաժակ կարմիր գինի։ Հետո նա իր բաճկոնի աջ և ձախ գրպաններից հանեց մեկական շիշ ռոմ։

— Ահա քո շահածը։ Ես սրանք պահում եմ, որ մատուցողը չկարծի, թե մենք պատրաստվում ենք այստեղ խմել դրսից բերած գինին։

Թիմը, իր հերթին, նույնպես ինչ-որ բան հանեց բաճկոնի ներսի գրպանից։ Դա պարոն Ռիկերտին գրած իր նամակն էր։

— Դու տա կտանե՞ս Համբուրգ, Ջոննի։ Ես վախենում եմ փոստով ուղարկել։

— Կտանեմ, փոքրիկ։

Նամակն անմիջապես անցավ ղեկորդի գրպանը։ Ապա Ջոննին ասաց.

— Բայց դու իսկական պիժոն ես դարձել, Թիմ։ Դե ո՞նց է, հարուստ լինելը լա՞վ է։

— Մի քիչ հոգնեցուցիչ է,— պատասխանեց Թիմը։— Բայց ընդհանրապես կարող ես անել, ինչ ուզես։ Եթե չես ուզում ծիծաղել, կարող ես չծիծաղել, նույնիսկ լուսանկարվելու ժամանակ։ Իսկ դա այնքան էլ քիչ բան չէ։

— Իսկ դու ծիծաղելուն դե՞մ ես, ինչ է,— մտահոգված հարցրեց Ջոննին։

Թիմը հասկացավ, որ դա չպետք է ասեր։ Քիչ էր մնացել, որ իրեն մատներ։ Բայց չէ որ աշխարհում ոչ մի մարդ իրենից չպետք է խմանա, որ նա վաճառել է իր ծիծաղը։ Բայց Թիմին այդպես էլ չհաջողվեց որևէ անմեղ բացատրությամբ ուղղել իր սխալը, որովհետև Ջոննին նորից խոսեց։ Թվում էր, թե նա իր տարերքում էր. խոսելով ծիծաղի մասին, նա նույնիսկ ավելի հարթ էր արտահայտվում, քան սովորաբար։

— Ես համաձայն եմ, որ քաղաքավարի ժպիտները,— ասաց նա,— և թեթև ծիծաղները ջղայնացնում են։ Աշխարհում ավելի զզվելի բան չկա, քան այն, որ «Նավաստիի տանը» առավոտից մինչև երեկո քեզ սիրալիր ժպտում են ինչ-որ պառավ հիմար կանայք։ Ժպտալով համոզում են հրաժարվել ալկոհոլային

խմիչքներից, ժպտալով ափսեիդ մեջ թթու կաղամբ են դնում, ժպտալով կոչ են անում քնելուց առաջ աղոթել։ Նույնիսկ կույր աղիքդ փորիցդ կտրելիս էլի ժպտում են։ Ժպի՜տ, ժպի՜տ, ժպի՜տ։ Աղնիվ խոսք, ոչ մի համբերություն չի դիմանա։

Մատուցողը գինին բերեց և մասնագիտորեն ժպտաց, տալով բաժակները։ Թիմը կծեց շրթունքը, նա նստած էր հայացքը սեղանին գամած, և Ջոննին զարմանքով նկատեց, որ քիչ է մնում տղան լաց լինի։ Նա լռեց, սպասելով, որ մատուցողը գնա։ Բայց նրա գնալուց հետո էլ բարձրացրեց իր բաժակն ու ասաց.

— Քո կենացը, Թիմ։

— Քո կենացը, Ջոննի։

Թիմը միայն մի քիչ համտես արեց գինին, որը նրան թվաց թթու։

Սեղանին դնելով դատարկ բաժակը, Ջոննին ասաց.

— Շատ կուզենայի իմանալ, թե ինչումն է բանը...

Բայց Թիմը նրան հասկացավ։ Նա հանկարծ աշխուժացավ և շշուկով ասաց.

— Աշխատիր խոսել Կրեշիմիրի հետ։ Նա ամեն ինչ գիտի և կարող է քեզ պատմել։ Իսկ ես չեմ կարող։ Ես իրավունք չունեմ։

Ռեկորդը մտազբաղ նայեց տղային։ Վերջապես ասաց.

— Կարծեմ, ես ինչ-որ բան գլխի եմ ընկնում...— Հետո նա սեղանի վրայով կռացավ Թիմի կողմը և, ուղիղ նայելով նրա աչքերի մեջ, հարցրեց.— Ասա, այդ տիպը քեզ ցո՞ւյց է տվել ինչ-որ ֆոկուսներ։

— Ոչ,— պատասխանեց Թիմը։— Նա ինձ ոչինչ չի ցույց տվել։ Միայն մեկ անգամ բերանացի ինչ-որ հին կախարդանք էր արտասանում։

Եվ Թիմը ղեկորդին պատմեց այն տարօրինակ խոսակցության մասին հյուրանոցի համարում, կախարդանքի և այն մասին, թե ինչպես վայր ընկավ ջահը։

Ջահի պատմությունը չափազանց զվարճացրեց Ջոննիին։ Նա ուղղակի ծիծաղից ոռնաց և այնպես էր բռունցքներով հարվածում սեղանին, որ բաժակները պարում էին, իսկ գինին թափվում։ Ծիծաղից խեղդվելով, նա հազիվ ասաց.

— Ա՜յ քեզ օյին։ Պարզապես հիանալի է։ Իսկ դու հասկանում ես, որ դիպել ես այդ պառավ կապկի ամենացավոտ տեղը։ Հը՞, Թիմ։ Չէ, լուրջ, ճստիկ։

Եվ Ջոննին նորից ծիծաղից գալարվեց։

— Ավելի լավ բան անել դու չէիր կարող,— շարունակեց նա, ուժասպառ թիկնելով աթոռին,— քան փշուր-փշուր անել այդ ջահը։ Այդպիսի բան այդ պարոնը չի հանդուրժում։ Եվ այն էլ նման բոպեներին։

Ղեկորդը ծիծաղելով վեր բարձրացրեց ձեռքերը, ներկայացնելով, թե ինչպես է բարոնը արտասանում կախարդանքը, և ծիծաղաշարժ հանդիսավորությամբ արտասանեց.

Օ, տիրակալ առնետների, մկների,
Ոջիլների, լվերի ու գորտերի։

Թիմը նույնպես ակամա թիկնեց աթոռին։ Նա հանկարծ այնքան վստահ զգաց իրեն այն բանից, որ աշխարհում գոնե մի մարդ համարձակվեց ծաղրել բարոնին և ծիծաղել նրա վրա։ Երկար ժամանակից ի վեր նա առաջին անգամ նորից լսեց մի ծիծաղ, որը զզվելի չէր իրեն։

Երբ Ջոննին, ծաղրելով, ավարտում էր իր զվարճալի նզովքը, Թիմը, հայացքը վար գցած, նայում էր հատակի տաշած տախտակներին։ Եվ հանկարծ նա տեսավ մի հսկայական չաղ առնետ։ Ականջ ծակող ծղրտոցով նա դիվային համարձակությամբ ցատկեց Ջոննիի ոտքի մոտ, պատրաստվելով կծել նրան։

Թիմը առնետ տանել չէր կարող։ Նա բացականչեց.

— Ղեկո՞րդ, առնետը։

Բայց Ջոննին էլ էր արդեն տեսել չար գաղանիկին։ Նա գործում էր հիանալի ճարպկությամբ և կամքի ուժով։ Մի կողմ քաշելով ոտքը, որի վրա շտապում էր բարձրանալ առնետը, նա անսպասելի արագությամբ բարձրացրեց մյուս ոտքը և մի հարվածով սպանեց նենգ թշնամուն։ Թիմը մի վայրկյան շրջվեց. սատկած առնետի տեսքից նա քիչ մնաց գիտակցությունը կորցներ։

Բայց Ջոննին, անվախ Ջոննին, ողջ բերանով մեկ ժպտալով ասաց.

— Օհո՞, տիրակալը առաջ է ուղարկում իր սուրհանդակներին։ Մի քիչ գինի խմիր, Թիմ, և մի նայիր այդ կողմը։

Այս անգամ Թիմը մի մեծ կում գինի խմեց և անմիջապես զգաց գինու ազդեցությունը։ Նա իրեն զգաց ավելի լավ, բայց գլուխը պտտվեց։

— Հիմա մենք գրեթե ժամանակ չունենք, Թիմ,— ասաց

Ջոննին։— Շատ շուտով նա սեփական անձով կներկայանա այստեղ։ Ուզում եմ քեզ միայն մի բան ասել— այն, ինչին չես հավատում, իրականում չկա։ Դու ինձ հասկացա՞ր։

Թիմը, չհասկանալով, գլխով արեց։ Նրա գլուխը ավելի ու ավելի էր պտտվում։

— Ես ուզում եմ ասել,— բացատրեց Ջոննին,— որ դու ամեն անգամ պետք է ջարդուփշուր անես ջահերը, երբ բարոնը փորձի նորից քեզ վախեցնել։ Հասկացա՞ր։

Թիմը գլխով արեց։ Բայց նա միայն կիսով չափ հասկացավ այն, ինչ ուզում էր ասել Ջոննին։ Նրա աչքերը փակվում էին։ Չէ որ մինչ այդ նա ստիպված եղավ գինի խմել նաև պալացցո Կանդիդոյում, իսկ նա բոլորովին սովոր չէր այդպիսի խմիչքների։

— Աշխատիր ծիծաղել այդ պառավ կապկի վրա,— շարունակեց Ջոննին։— Դու հիմա բավականաչափ հարուստ ես, որպեսզի քեզ ազատ զգաս։ Իհարկե, ես խոսում եմ արտաքին ազատության մասին, ճստիկ։ Ներքին ազատությունը բոլորովին այլ հարստությամբ է գնվում՝ ծիծաղով։ Կա մի հին անգլիական ասացվածք... Ինչպե՞ս էր... Հիմա կհիշեմ...— Ղեկորդը կնճռոտեց ճակատը։— Զարմանալի բան է,— փնթփնթաց նա,— հենց նոր գլխումս էր և հանկարծ թռավ։ Այ, ուղղակի լեզվիս ծայրին է։— Երևում է, շատ եմ խմել...

— Ես էլ գինուց մի տեսակ լավ չեմ,— ասաց Թիմը, հաղիվ պտտելով լեզուն։

Բայց Ջոննին նրան չէր լսում, նա ջանում էր հիշել առածը։ Եվ հանկարծ բացականչեց.

— Ա՜, հիշեցի։ «Teach me to laugh, save my soul»։ Ինչպե՞ս կարող էի դա մոռանալ։

Նա ծիծաղելով խփեց իր ճակատին և հանկարծ, դեռ շարունակելով ծիծաղել, գունատված դեմքով աթոռից տապալվեց ցած ու անշարժացավ սպանված առնետից ոչ հեռու։

Թիմն անմիջապես սթափվեց, վեր թռավ և սկսեց վախեցած նայել շուրջը, օգնություն փնտրելով, բայց այդ ժամանակ նրա հայացքը պատահմամբ ընկավ մատուցողի վրա, որն անտարբերությամբ նայում էր կատարվածին։ Հենց այդ պահին նա դրամ էր ստանում ինչ-որ պարոնից։ Այդ պարոնը կանգնած էր մեջքով դեպի Թիմը։ Բայց Թիմը նրան ճանաչեց առաջին իսկ հայացքից։ Դա բարոնն էր։

Եվ Թիմը նորից կարծես վերածվեց այլ Թիմի։ Արտաքուստ հանգիստ, նա գլխի շարժումով կանչեց մատուցողին, իսկ հետո ծունկի իջավ Ջոննիի կողքին։ Ղեկորդը գիտակցության չգալով, դանդաղ և դժվարությամբ, բայց և այնպես միանգամայն պարզ կրկնում էր անգլիական առածը։

Նույն վայրկյանին Թիմն իր կողքին տեսավ կռացած մատուցողին և նրա մեջքի հետևում կանգնած բարոնին։

— Պարոն Թալե՞ր։ Ինչպիսի երջանիկ պատահականություն՞ն,— բացականչեց Անատասը հաջող ձևացրած զարմանքով։— Արդեն մեկ ժամից ավելի է, ինչ մենք փնտրում ենք ձեզ։

— Եթե ղեկորդին որևէ բան պատահի,— առանց լսելու բղավեց Թիմը,— ես կհայտնեմ ձեր մասին, բարոն։ Եվ մատուցողի մասին էլ։

Հիմա արդեն Անատասը ուրախացավ։

— Հուզվելու պատճառ չկա, պարոն Թալեր,— ասաց նա ժպտալով։ Նրա առողջությանը դա չի վնասի։ Ճիշտ է, ծառայությունից մենք ստիպված կլինենք նրան ազատել։ Բայց այդպիսի ուժի տեր մարդը հեշտությամբ աշխատանք կճարի նավանորոգման արհեստանոցներում։

Այդ ընթացքում գարեջրատան այցելուները սկսեցին հետաքրքրասիրություն հանդես բերել և, սեղանի մոտ խռնվելով, սկսեցին իրար ընդհատելով զանազան օգտակար խորհուրդներ տալ։ Նրանք, ըստ երևույթին, համարում էին, որ Ջոննին հարբած է։

Անատասը, ինչպես միշտ, ձգտելով խուսափել բազմամարդ տեսարանից, Թիմի թևքից քաշեց դեպի ելքը։

— Ձեր նկարը, պարոն Թալեր, այսօր տպված է բոլոր թերթերում։ Շատ տհաճ կլինի, եթե ձեզ այստեղ ճանաչեն։ Իսկ ղեկորդի մասին դուք կարող եք իրոք չանհանգստանալ։ Գնանք։

Չնայած Թիմը չէր ուզում Ջոննիին այդ վիճակում մենակ թողնել և դիմադրում էր, բայց բարոնին ի վերջո հաջողվեց նրան փողոց դուրս բերել։

Չէր կարելի թույլ տալ, որ Անատասը ամեն ինչի մասին գլխի ընկներ։ Բացի այդ, Թիմը աղոտ զգում էր, որ այդ տարօրինակ, խառը խաղի մեջ, որին մասնակցում էին և՛ սատկած առնետը, և՛ ուշագնաց եղած Ջոննին, և՛ անգլիական առածը, հաղթող էր դուրս եկել ոչ թե բարոնը, այլ Ջոննին։

Եվ Թիմը գնաց մինչև առաստաղը շշեր դասած գարեջրատնից շատ ավելի հանգիստ, քան կարող էր թվալ։

Շքեղ ավտոմեքենան, որը նրանց սպասում էր մոտքի մոտ, փակել էր գրեթե ամբողջ նրբանցքը։ Նրա ետևում կանգնած էին ևս երկու այլ մեքենաներ, և Թիմը նկատեց, որ նրանց մեջ նստած են իրեն քաջ հայտնի երկու անձնավորությունները։ Նա շարաճրճիռրեն գլուխ տվեց, և նրանք, մի փոքր ապշած, գլուխ տվեցին Թիմին։

Մեքենայի մեջ, հետևի նստարանի կարմիր կաշվե մեջքին թիկնած, նստած էր դիրեկտոր Գրանդիցին։ Երբ բարոնը և Թիմը նստեցին նրա կողքը, նա բարակ ձայնով ծիծաղեց։

— Ախ, դուք, փոքրիկ փախստական։ Դուք վատ չեք մեր քիթ բռնած ման գալ, պարոն։ Բայց իմ իմաստուն բարեկամ Աստարոտը...

— Ձայնդ կտրի՛ր, Բեգեմոտ։ Նա տեղյակ չէ,— բղավեց բարոնը դիրեկտորի վրա, իր համար անսովոր կատաղությամբ։

Բայց, անմիջապես դիմելով Թիմին, սիրալիր բացատրեց նրան, որ ինքը և Գրանդիցին հանդիսանում են այսպես կոչվող «Վասալի ակումբի» անդամներ և երբեմն կատակով իրար անվանում են ակումբային անուններով։

Թիմին աղոտ թվաց, որ նա ինչ-որ մեկ անգամ արդեն բարոնից լսել է Աստարոտի և Բեգեմոտի մասին, բայց նա չէր կարողանում մտաբերել, թե երբ և որտեղ է լսել։ Մանավանդ որ ամբողջ ժամանակ մտքում կրկնում էր Ջոննիի ասած անգլիական առածը։

Երբ ավտոմեքենան անցնում էր Քրիստափոր Կոլումբոսի հուշարձանի մոտով, Անաստասն ասաց Թիմին.

— Վաղը առավոտ շուտ մենք թռչում ենք Աթենք, պարոն Թալեր։ Ինքնաթիռը պատկանում է ֆիրմային։ Նա մեզ սպասելու է օդանավակայանում ուղիղ ժամը ութին։

Թիմը գլխով արեց, ոչինչ չպատասխանելով։ Նա, հավանաբար, արդեն տասներեքերորդ անգամ մտքում կրկնում էր անգլիական առածը։ Վերջապես, որոշեց հարցնել Գրանդիցիին.

— Իսկ ինչ է նշանակում. «Թիչ մի թու լաֆ, սեյվ մայ սոուլ»։

— Դա ի՞նչ լեզվով է,— հարցրեց Գրանդիցին։

— Անգլերեն,— հանգիստ պատասխանեց բարոնը։— Հին առած է, նույնքան հին, որքան առածների մեծ մասը։— Նա առածը կրկնեց ավելի ճիշտ անգլերենով, հետո կիսաձայն թարգմանեց. «Ով ծիծաղում է, նա փրկված է»։ Իսկ տառացիորեն այսպես է. «Սովորեցրու ինձ ծիծաղել, փրկիր իմ հոգին»։

Թիմը, որքան հնարավոր է, անտարբեր ասաց.

— Ա-ա՜, հասկանալի է։

Եվ այլևս չարտասանեց ոչ մի բառ։ Նա անընդհատ մտքում կրկնում էր այդ առածը, միայն թե այժմ նրա մոտ ստացվում էր. «Սովորեցրու ինձ ծիծաղել, ղեկորդ»։

Թերթ քսաներորդ

ՊԱՐԶ ՕՐ ԱԹԵՆՔՈՒՄ

Բարոն Անատասի կոնցեռնի ամենամեծ մասնաճյուղը գտնվում էր Աթենքում՝ Հունաստանի հինավուրց մայրաքաղաքում։ Այդ քաղաքում բարոնը արտակարգ աշխույժ և սիրալիր էր։ Նա աշխատում էր նույնիսկ հնարավորին չափ պաշտպանել Թիմին դիրեկտորներից և ճաշկերույթներից։ Դրա փոխարեն նա Թիմին տանում էր զբոսնելու փողոցներում։ Ճիշտ է, որոշ տարածության վրա նրանց ետևից միշտ ընթանում էր ավտոմեքենան, և Անատասի առաջին իսկ նշանով վարորդը կարող էր մեքենան մոտեցնել մայթին ու դռնակը բացել։

Բարոնը Թիմին ցույց չտվեց այն հիշարժան վայրերը, որոնց համար Աթենք է գալիս օտարերկրյա զբոսաշրջիկների մեծ մասը։ Նա Թիմի հետ չբարձրացավ Ակրոպոլիս՝ տեսնելու, թե ինչպես է սպիտակ սյուների միջից ուրախ երկնագույնով փայլատակում էգեյան ծովը, չտարավ նրան նայելու մարմարե քանդակները, որոնք կոճիկի փոսիկներից մինչև շրթունքների կիսաշրջանները աստվածային ծիծաղ են արտահայտում, ցույց չտվեց բարձր տաճարների վերևում փայլփլող վճիտ երկինքը։ Այդ բոլորի փոխարեն նա Թիմին տարավ Աթենքի շուկան։

— Առնվազն կեսը այն դրամների, որ ստանում են այստեղ ապրանքների վաճառքից, գալիս է իմ գրպանը,— ասաց նա Թիմին,— դուք, պարոն Թիմ, որպես իմ ժառանգ, պետք է իմանաք,

թե ինչպես է ստեղծվում մեր հարստությունը։ Եվ մի՞թե վայելք չէ այս գույներին նայե՞լը։

Անատասը Թիմի հետ նախ և առաջ գնաց այն շարքերը, որտեղ ձուկ էին վաճառում։ Աչքները չռած, խոիկների տակ փայլող կարմիր գծով, այստեղ թափված էին հազարավոր ձկներ՝ մեծ բաց սառնարաններում։ Ծովի հարստությունները ներկայացված էին իրենց ողջ շքեղությամբ։ Փայլում էր արծաթը, կապտին էր տալիս պողպատը։ Այս ու այնտեղ երևում էին վառ կարմիր և փայլատ սև կետեր ու շերտեր։ Բայց այդ բոլորին բարոնը նայում էր առևտրականի աչքերով։

— Այս թյունոսը այստեղ է բերված Թուրքիայից,— բացատրեց նա։— Մենք դա այնտեղ շատ էժան ենք գնում։ Իսկ այս ձողաձուկը Իսլանդիայից է, մեր առևտրական ամենաշահավետ գործարքներից մեկն է։ Քամսան, թանաքաձուկը և սարդինները բերված են Իտալիայից, կամ այստեղ, Հունաստանում են որսել։ Այդ ձկները մեծ օգուտ չեն տալիս։ Իսկ հիմա գնանք առաջ, պարոն Թալեր։

Անատասը ուղղակի հիանում էր շուկայով։ Նրանք կանգ առան գաջած պատի մոտ, որի վրա կախված էին մաշկած ոչխարներ՝ լեզուները կախ գցած։

— Այդ ոչխարները Վենեսուելայից են բերված,— ասաց բարոնը։— Այ, իսկ այն խոզերը մենք գնել ենք Հարավսլավիայում։ Շա՞տ շահավետ գործ է։

— Իսկ ձկից բացի, ուրիշ որևէ բան լինո՞ւմ է այստեղ՝ Հունաստանում։

— Իհարկե,— ծիծաղեց Անատասը։— Որոշ բան մեկ մատակարարում է և այս երկիրը՝ չամիչ, գինի, բանան, հրուշակեղեն, ձիթապտղի յուղ, նուռ, բուրդ, գործվածքեղեն, ընկույզ և բոքսիտներ։

Անատասը այնպիսի հանդիսավորությամբ էր թվում ապրանքները, կարծես բերանացի ավետարան կարդալիս լիներ։ Այդ ընթացքում նա Թիմին տարավ կաթնամթերքների շարքը, որտեղ սեղանների վրա ամենուրեք բարձրանում էին ձյան նման սպիտակ կաթնաշոռի լեռները։ Տարօրինակ զբոսանք էր դա։ Ճեղքելով-անցնելով շուկայի ամբոխի միջով, նրանք քայլում ու քայլում էին իրենց ապրանքը գովող առևտրականների և բարձրաձայն սակարկող գնորդների մոտով։ Չկնեղենի շարքով անցնելիս

Նրանք ստիպված եղան քայլել կեղտաջրերի միջով, որոնց մակերեսին լողում էին կլոր կտրատված սոխերը. ոչխարների մոտ նրանք շրջանցում էին հոսող արյան առվակները, իսկ երբ սկսեցին անցնել բանջարեղենի և մրգերի վաճառասեղանների մոտից, աչքերը չէին բարձրացնում գետնից, որ չտրորեն թափված կեղևները և չսայթաքեն։

Ուղիղ Թիմի առջևում երեք տղաներ էին պտտվում։ Բոլորի աչքի առաջ նրանք վազվզում էին այս ու այն կողմ, թռցնելով ձիթապտուղներ։ Ոչ ոք նրանց ուշադրություն չէր դարձնում, նույնիսկ առևտրականները, բարկացած բղավելուց հետո, անմիջապես սկսում էին սակարկել գնորդների հետ։ Գող տղաները ուրախ ծիծաղում էին։

Անցավ մոտ երկու ժամ, որը Թիմի վրա մղձավանջային երազի տպավորություն թողեց, մինչև նա տանջված և նյարդայնացած, դուրս եկավ շուկայից, հեռանալով նրա քաշքրտուկից, աղմուկից, բացականչություններից, քաղաքի այդ հսկայական որովայնից, որի հրեշավոր ախորժակը հիացմունք էր պատճառում բարոնին։

Բարոնը ձեռքով նշան արեց, և մայթին մոտեցավ մի ավտոմեքենա։ Այս անգամ մեքենան ավելի փոքր էր, կաշվե սև նստարաններով։ Անատասը վարորդին կարգադրեց գնալ Բյուզանդական թանգարանի մոտ։

— Հավանաբար, ձեզ այն դուր կգա, պարոն Թալեր,— դիմեց նա Թիմին։— Բայց թե ինչու՝ ես առայժմ ձեզ չեմ ասի։

Այդ «ինչուն» Թիմի մոտ ոչ մի հետաքրքրություն չառաջացրեց։ Նա սարսափելի հոգնած էր և քաղցած։ Բայց բարոնին այդ մասին ոչինչ չասաց։ Նա որոշել էր որքան հնարավոր է քիչ իր թուլությունները ցույց տալ այդ տարօրինակ առևտրականին, որը գնել էր իր ծիծաղը։ Դրա համար էլ, աչքը նույնիսկ չթարթելով, բարոնին թույլ տվեց, որ իրեն տանի Բյուզանդական թանգարանը։

Այն նկարները, որոնց մոտեցնում էր Թիմին բարոնը, կոչվում էին սրբապատկերներ։ Դրանք, ինչպես Թիմին բացատրեց Անատասը, նկարել են կրոնավորները, որոնք հարյուրամյակներ շարունակ գեղանկարչության մեջ ղեկավարվել են միևնույն խիստ կանոններով։ Աստիճանաբար Թիմը սկսեց հասկանալ, թե ինչու բարոնը իրեն բերեց այդտեղ։

Սրբապատկերների մի կետի անշարժ հառած խոշոր աչքերով և օվալը երկու մասի կիսող երկար քթերով դեմքերը անժպիտ դեմքեր էին։ Դրանով նրանք նմանվում էին Ջենովայի պալացցո Կանդիդոյում Թիմի տեսած հոլանդական վարպետների աշխատանքների գունատ դեմքերին։ Թիմին դրանք թվացին օտար և տարօրինակ։ Հատկապես երկար պահեց Անատասը նրան մի սրբապատկերի առջև, որը պատկերում էր սուրբ Գևորգին վառկարմիր թիկնոցով՝ մուգ կանաչ երանգներով ներկված մռայլ ժայռերի բնապատկերի ֆոնի վրա։ Թիմը նույնիսկ սկսեց մտքում կրկնել Ջոննիի առածը. «Սովորեցրու ինձ ծիծաղել, ղեկորդ»։

Եվ, զարմանալի՞ բան, հիշելով Ջոննիին, Թիմը հանկարծ սրբապատկերները տեսավ միանգամայն այլ աչքերով։ Նա նկատեց, որ սրբապատկերները նկարող կրոնավորները կենդանիներին և բույսերին թույլ են տվել անելու այն ամենը, ինչում մերժել են մարդկանց՝ ուրախանալ, ծաղկել, ծիծաղել։ Այն ժամանակ, երբ Անատասը հիանում էր սրբապատկերներ նկարողների սուրբ կարգապահությամբ, Թիմն իր համար հայտնագործեց նրանց վրա ապրող փոքր աշխարհը՝ ժպտացող շնիկներին, աչքով անող գրիֆներին, ուրախ թռչուններին և ծիծաղող շուշաններին։ Նա հիշեց Համբուրգի տիկնիկային թատրոնում լսած մի նախադասություն՝ «Այդպես է մարդը բնությամբ օժտված, երբ ծիծաղելի է, կարող է ծիծաղել»։ Այստեղ ամեն ինչ հակառակն էր՝ ծիծաղում էին գաղանները, իսկ մարդը աշխարհին նայում էր խիստ և անզիջում։

Երբ նրանք իջան թանգարանի առաջին հարկը, Անատասը կանգ առավ խոսելու դիրեկտորի հետ, որին արդեն տեղյակ էին պահել բարոնի այցելության մասին։ Իսկ Թիմը բարձր բաց դռնով դուրս եկավ ոչ մեծ պատշգամբը։ Նայելով ցած, նա պատշգամբի տակ մի փոքր աղջիկ տեսավ, որը թանգարանի մուտքի առաջ փոքր ճյուղիկով ինչ-որ գծեր էր քաշում, իսկ հետո նրանց վրա երփներանգ մանր քարերից նախշեր էր շարում։ Հավանաբար, նա հենց նոր եղել էր այն սրահում, ուր ցուցադրված էին խճանկարները, և հիմա ինքն էլ փորձում էր խճանկար պատրաստել։

Թիմը սկսեց հետևել նախշին և նկատեց, որ այն աստիճանաբար վեր է ածվում սրբապատկերի դեմքի, միայն թե բերանն այդ դեմքի վրա այնպիսին չէր, ինչպես սրբապատկերինը, այլ կիսաշրջանի ձևով, ծայրերը դեպի վեր՝ այդ դեմքը ժպտում էր։

Մտածկոտ նայելով իր նկարածին, աղջիկը կանաչ քար դրեց աչքի փոխարեն։ Եվ հանկարծ որտեղից-որտեղ վազելով եկավ մի տղա, շրթունքները դուրս ցցած նայեց աղջկա սարքած գրեթե պատրաստ նկարին և կոշիկի քթով քանդեց այն։ Դեմքը փչացավ։ Աղջիկը վախեցած նայեց պատանի բարբարոսին, և խոշոր արտասուքները գլորվեցին նրա աչքերից։ Հեկեկալով, նա նորից ջանասիրաբար սկսեց հավաքել և դասավորել քարերը։ Տղան կանգնած էր նրա առջև, ձեռքերը գրպանները դրած։ Նրա հայացքը արտահայտում էր տղամարդու արհամարհանք։

Թիմը կատաղեց։ Նա ուզեց վազել ցած և պաշտպանել աղջկան։ Բայց հենց որ շրջվեց, տեսավ բարոնին։ Բարոնը նրա մեջքի հետևը կանգնած, հավանաբար, դիտում էր այդ տեսարանը։

— Մի միջամտեք, պարոն Թալեր,— ասաց նա ժպտալով։— Իհարկե, շատ ցավալի է, որ տղան այդպես վարվեց։ Բայց, ինչ արած, այդպիսին է աշխարհը։ Ճիշտ նույնպիսի բարբարոսությամբ, որով այդ երիտասարդը կոխկրտեց նկարը, կոպիտ զինվորական կոշիկները կոխկրտում են արվեստի ոգեշունչ ստեղծագործությունները, իսկ երբ պատերազմը վերջանում է, նույն բարբարոսները, շրթունքները սեղմած, գումարներ են բաց թողնում քանդվածը վերականգնելու համար։ Իսկ այդ ամենից շահում ենք մենք։ Մեր ֆիրման պատերազմի ավարտից հետո Մակեդոնիայում վերականգնել է երեսունից ավելի եկեղեցիներ և դրանից ստացած շահույթը կազմել է շուրջ մեկ միլիոն դրամ։

Թիմը բերանացի արածի պես շշնջաց իր համար սովորական դարձած դարձվածքը։

— Ես դա նկատի կունենամ, բարոն։ Բայց հիմա ուզում եմ ճաշել։

— Հիանալի՜ ցանկություն,— ծիծաղեց Անատասը։— Ես այստեղ մի սքանչելի բացօթյա ռեստորան գիտեմ։

Եվ այլևս ոչ մի հայացք չգցելով պատերի նկարների և մուտքի առջևի հրապարակի երեխաների վրա, բարոնը արագ քայլեց դեպի թանգարանի դարպասը, որի մոտ կանգնած էր նրա մեքենան։ Թիմը լուռ հետևեց նրան։

Ռեստորանը, ի զարմանս Թիմի, բոլորովին էլ այնպես շքեղ չէր, ինչպես այն ռեստորանները, որտեղ սովորաբար սիրում էր ճաշել Անատասը։ Այդում, որտեղ դրված էին սեղանները, նրանց

հարգալից ողջունեցին ռեստորանի տերը, դիրեկտորը և ավագ մատուցողը։ Բարոնը նրանց հետ խոսում էր հունարեն, իսկ Թիմի հետ գերմաներեն։ Պատվավոր հյուրերին ուղեկցեցին դեպի անկյունում դրված սեղանը, հատկապես նրանց համար փռեցին մաքուր սպիտակ սփռոց, ծաղկամանով ծաղիկներ դրեցին և ներսից լրացուցիչ սեղան բերեցին սպասքների համար։ Ռեստորանի բոլոր այցելուները լարված ուշադրությամբ հետևում էին այդ պատրաստություններին։ Ոմանք փսփսում էին աննկատելիորեն մատնացույց անելով Թիմին։

— Մի՞թե այստեղ էլ է իմ նկարը տպագրված թերթերում,— շշուկով հարցրեց Թիմը։

— Օ՜, իհարկե,— պատասխանեց բարոնը, չմտահոգվելով նույնիսկ այն բանով, որ դոնե մի փոքր ցածրացնի ձայնը։— Հունաստանում, պարոն Թալեր, ոչ մի բան այնպիսի զարմանք չի առաջացնում, ինչպես հարստությունը, որովհետև երկիրը շատ աղքատ է։ Մեզ նմանների համար Հունաստանը պարզապես դրախտ է։ Անգամ այս ոչ առաջնակարգ ռեստորանում մեզ իսկական թագավորական ճաշ կմատուցեն։ Ես ուզում եմ ասել տառացիորեն, որ այդ ճաշը, առանց երկմտելու, կարելի կլիներ առաջարկել թագավորին։ Հարստությանն այստեղ թագավորական պատիվ են տալիս։ Դրա համար էլ ես շատ եմ սիրում Հունաստանը։

Հավանաբար, Անատասը նույն ոգով դեռ շատ կճամարտակեր, առաջացնելով Թիմի թաքնված զայրույթը, եթե ներս չգար մատուցողը և ինչ-որ բան չշշնջար նրա ականջին։

— Ինձ հեռախոսի մոտ են կանչում։ Իմ սիրած ռեստորանը արդեն շատերին է հայտնի,— ասաց նա Թիմին։— Ներեցեք։

Բարոնը վեր կացավ և մատուցողի հետևից գնաց ներս։

Թիմը այժմ սկսեց հետևել իրենցից մի քիչ հեռու շեղակի դրված սեղանին։ Դա միակ սեղանն էր, որտեղից իր վրա հետաքրքրքրասեր հայացքներ չէին գցում։ Այնտեղ նստած էին երկու ընտանիք։ Մեկը բաղկացած էր թմբլիկ թխահեր մայրիկից, որի այտին խալ կար, և նրա երկու դուստրերից—մեկը մոտ հինգ տարեկան, մյուսը՝ մի երկու տարով ավելի մեծ։ Երկրորդ ընտանիքը խաղում էր սեղանի մոտ, դափնեվարդի թփի տակ։ Նա բաղկացած էր մոխրագույն մայր կատվից և երեք ձագերից՝ երկուսը սև և մեկը՝ մոխրագույն։

Հույն մայրիկը ջղայնանում էր։ Մայր կատուն՝ նույնպես։ Երբ կրտսեր աղջիկը բարձրացավ ծաղկաթմբի վրա, կեղտոտվեց և տերևները տարավ բերանը, խալավոր մայրիկը զայրացավ ու ծեծեց նրան։ Յուրաքանչյուր նոր հարվածից հետո պստլիկը լալիս էր ավելի ու ավելի անմխիթար։

Մայր կատուն իրեն պահում էր ճիշտ և ճիշտ նույն պես։ Հենց որ ձագերից մեկը մոտենում էր նրան կամ ցատկում էր պոչին, նա բարկացած ֆշշացնում էր։ Սև ձագերից մեկը հատուկ համառությամբ հետապնդում էր նրան։ Հանկարծ նա աղերսագին մլավեց՝ մայր կատուն ամբողջ ուժով թաթով խփեց նրա գլխին, ճիշտ է՝ եղունգները պահած։ Կարելի է ասել, որ նա էլ ծեծեց ձագին։ Ձագը նորից փորձեց մոտենալ մորը, և կատուն նորից թաթով խփեց։ Մլավոցը և մանկական լացը ավելի ու ավելի էին ուժեղանում։

Թիմը, վերջապես, հեռացրեց հայացքը. նա այլևս չէր կարող նայել այդ ամենին։ Հենց այդ ժամանակ վերադարձավ բարոնը։ Եվ նորից պարզվեց, որ նա դիտելիս է եղել նույն տեսարանը և, կարծես, կռահել Թիմի մտքերը։ Նստելով սեղանի մոտ իր տեղը, նա ասաց.

— Ինչպես տեսնում եք, պարոն Թալեր, մարդու և գազանի միջև եղած տարբերությունը այնքան էլ մեծ չէ։ Այն, այսպես ասած, հազիվ նշմարելի է։

— Այդ մասին ես արդեն լսել եմ երեք միանգամայն հակասական կարծիքներ,— մի քիչ շփոթված պատասխանեց Թիմը։— Մի պիեսում, որ ես նայեցի Համբուրգի թատրոնում, ասվում էր, որ ծիծաղը մարդուն տարբերում է գազանից, չէ որ միայն մարդն է ծիծաղելու ընդունակ։ Բայց թանգարանի սրբապատկերների վրա ամեն ինչ հակառակն էր— ծաղիկները և գազանները ծիծաղում էին, իսկ մարդիկ՝ երբեք։ Իսկ հիմա, բարոն, դուք ինձ ասում եք, որ մարդու և գազանի միջև ոչ մի տարբերություն չկա։

— Աշխարհում չկան այնպիսի հասարակ բաներ, որ հնարավոր լինի մի նախադասությամբ դրանք սպառել,— պատասխանեց Անատասը։— Իսկ թե ինչու է մարդուն ծիծաղը պետք, դա, թանկագին պարոն Թալեր, ընդհանրապես ոչ ոք ստույգ չգիտե։

— Ծիծաղը—դա ներքին ազատություն է։

Անատասի վրա այս նախադասությունը միանգամայն ան-

սպասելի ներգործություն ունեցավ։ Նա ոտքերը զարկեց հատակին և գոռաց.

— Դա քեզ ղեկո՛ղդն է ասել։

Թիմը զարմացած նայեց նրան և հանկարծ պարզ հասկացավ, թե ինչու է բարոնը գնել իր ծիծաղը։ Նա հասկացավ և մի այլ բան։ Ուրեմն, ահա թե ինչով է ներկայիս բարոն Անատասն այդպես ուժեղ տարբերվում ձիարշավարանի վանդակավոր զգեստով մռայլ պարոնից։ Ներկայիս բարոնը դարձել է ազատ մարդ։ Եվ նրան կատաղեցրեց այն, որ Թիմը հասկացավ իր գաղտնիքը։

Այնուամենայնիվ բարոնը, ինչպես միշտ, անմիջապես տիրապետեց իրեն և սովորական հմտությամբ փոխեց խոսակցության նյութը։

— Դրությունը յուղի շուկայում, պարոն Թալեր, մեզ համար դառնում է սպառնալի։ Ես ստիպված կլինեմ վաղն ևեթ մեր ֆիրմայի ղեկավար պարոնների հետ քննարկել ու անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել։ Այդպիսի խորհրդակցությունները սովորաբար կազմակերպվում են Միջագետքի իմ դղյակում, և ես հուսով եմ, որ դուք չեք հրաժարվի ինձ այնտեղ ուղեկցելուց։ Այն ամենը, ինչ անհրաժեշտ է ձեզ իմանալ Աթենքում, ես ստիպված կլինեմ ցույց տալ մեկ ուրիշ անգամ։

— Ինչպես ցանկանաք,— պատասխանեց Թիմը շինծու անտարբերությամբ։

Իրականում նա ավելի մեծ ցանկություն չուներ, քան տեսնել Միջագետքում գտնվող դղյակը՝ խորհրդավոր ապաստարանը, որտեղ բարոնը սարդի նման հյուսում էր իր ոստայնը։

Ինչ վերաբերվում է իրեն՝ Անատասին, ապա նա, ըստ երևույթին, բոլորովին չէր ուզում գնալ Աթենքից։ Երբ բերեցին և սեղանին դրեցին պատվիրած ճաշատեսակները, նա խոր շունչ քաշեց.

— Ահա և մեր վերջին ճաշկերույթը այս օրհնված երկրում։ Բարիախորժակ։

ԼԱԲԻՐԻՆԹՈՍ

Ծիծաղը մարգարին չէ...
Ծիծաղը չի վաճառվում:

Թերթ քսանմեկերորդ

ՄԻՋԱԳԵՏՔԻ ԴՂՅԱԿԸ

Թիմը արդեն երկրորդ անգամ էր թռչում բարոն Անատասի ֆիրմային պատկանող երկու մոտորանոց փոքր ինքնաթիռով։ Նրանք օդ բարձրացան լուսաբացին, և Թիմը օդանավի պատուհանից կարողանում էր ծովը տարբերել երկնքից։ Եվ հանկարծ, ներքևում, հեռվում մթին տվող լեռնոտ փոքր կղզու հետևում նա տեսավ արևի գունդը։ Թվում էր, թե արևը դուրս եկավ ծովից— այնքան արագ նա ծագեց։

— Մենք թռչում ենք դեպի արևելք, արևին ընդառաջ,— բացատրեց Անատասը։— Աթենքում արևը շատ ավելի ուշ կծագի։ Իմ ենթակաները, այդ թվում նաև դղյակի սպասավորները, արևապաշտներ են։ Նրանք արևը անվանում են էշ Շեմս։

Թիմը ոչինչ չպատասխանեց, նա լուռ նայում էր ցած՝ ծովին. նրա կապարագորշ գույնը գնալով ավելի ու ավելի էր լուսավորվում, մինչև վերջապես դարձավ կանաչավուն։

Թիմը չէր վախենում օդային թռիչքներից, բայց և չէր հիանում դրանցով։ Նա անգամ չէր էլ զարմանում։ Չէ որ նա, ով չի կարող ծիծաղել, չի կարող և զարմանալ։

Բարոնը նրան բացատրեց դրությունը «յուղի շուկայում», որի նկատմամբ Թիմը միանգամայն անտարբեր էր։ Այնուամենայնիվ նա հասկացավ, որ ֆիրման գժտվել էր խոշոր կաթնատնտեսություններից շատերի հետ, և ինչ-որ այլ ֆիրմա, որը միավորում է Նորվեգիայի, Շվեդիայի, Դանիայի, Գերմանիայի և Հոլանդիայի ձեռնարկատերերին, շուկային մատակարարում է շատ

ավելի որակյալ և էժան յուղ, քան Անատասի ֆիրման։ Հենց այդ պատճառով են նրանք հիմա թռչում Միջագետքի դղյակը։ Այնտեղ բարոնը հույս ունի «պարզել գործի էությունը» և «ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ»։ Երկու ուրիշ պարոններ էլ թռել են դղյակի ուղղությամբ. նրանցից մեկը՝ միսթր Պեննին, Լոնդոնից է, մյուսը՝ սինյոր Վան դեր Թոլենը՝ Լիսաբոնից։

Ինքնաթիռը արդեն անցավ Անատոլիական սարահարթի վրայով, իսկ բարոնը դեռ շարունակում էր խոսել յուղի տեսակների և յուղի գների մասին։ Ընդ որում նա հաճախակի օգտագործում էր «սպառման ճակատը», «սպառողի նվաճումը», «շուկայի վրա հարձակման նախապատրաստումը» և նման այլ արտահայտություններ, կարծես հերթական ճակատամարտը շահելու նախապատրաստվող գեներալ լիներ։

Երբ բարոնը լռեց, Թիմը, խոսակցությանը որևէ կերպ մասնակցելու համար, ասաց.

— Իսկ մենք տանը միայն մարգարին էինք ուտում։

— Մարգարինով չես գիրանա։ Մարգարինը, ինչպես ասում են, կարագի պես հացին չես քսի,— ասաց բարոնը։

— Ինչո՞ւ,— առարկեց Թիմը։— Մենք միշտ մարգարինը քսում էինք հացին։ Մեր տանը մարգարինով և տապակում էին, և թխում, և բանջարեղեն պատրաստում։

Բարոնը սկսեց նրան ուշադիր լսել։

— Ստացվում է, որ ձեզ համար մարգարինը և կարագ է եղել, և բուսական և խոզի յուղ—միակը երեք դեմքո՞վ։ Այդպես էր, այո՞։

Թիմը գլխով արեց։

— Երևի միայն մեր նրբանցքը ամեն օր մի տակառից ավելի մարգարին էր սպառում։

— Հետաքրքի՞ր է,— ասաց Անատասը։— Շա՜տ հետաքրքիր, պարոն Թալեր։ Տակտիկական քայլ մարգարինով— անցում հարձակման, յուղի շուկայի գրավում... Գրեթե հանճարե՞ղ է։

Բարոնը խորասուզվեց մտքերի մեջ. թվում էր, թե նա քարացավ իր բազկաթոռում։ Թիմը ուրախ էր, որ բարոնն իրեն հանգիստ թողեց։ Նա ինքնաթիռի պատուհանից դիտում էր ներքևում սուրացող լեռներն ու հովիտները, գագաթներն ու կիրճերը և տարբեր վայրերից մի ուղղությամբ լեռներով շարժվող ավանակների քարավանները, որ հավանաբար գնում էին այնտեղ, ուր

այսօր շուկայի օր էր։ Օդաշուն, որպեսզի տղային հաճույք պատճառի, աշխատում էր թռչել որքան հնարավոր է ցածր, և Թիմը կարողանում էր բավականաչափ լավ տեսնել ավանակներ քշողներին, ճիշտ է, վերևից բոլոր դեմքերը նման էին սպիտակ շրջանակների՝ բեղերով և մորուքներով կամ առանց բեղերի ու մորուքների, և նա ստիպված էր ներքևում անցնող մարդկանց մասին դատել միայն նրանց զգեստներով։ Իսկ նրանց զգեստներն այնքան անսովոր էին Թիմի հայացքի համար, որ մարդիկ էլ նրան թվում էին ֆանտաստիկական անձնավորություններ, ինչպիսիք կարելի է տեսնել գուցե միայն կրկեսում։ Բայց, իհարկե, դա լիակատար անհեթեթություն էր, որովհետև եթե ներքևում անցնող մարդիկ սանրված ու հագնված լինեին այնպես, ինչպես, օրինակ, իր հարազատ քաղաքի բնակիչները, Թիմը նրանց մեջ չէր տեսնի ոչ մի անսովոր բան, բացի, թերևս, մաշկի մուգությունից։ Բայց տասնչորսամյա տղային, որն այդքան անսպասելի ընկել էր հեռավոր երկրներ, կարելի է, թերևս, և ներել այդպիսի ոչ ճիշտ պատկերացումը երբեք չտեսած ժողովուրդների մասին։ Սակայն ծանոթանալով Սելեք Բայի հետ, Թիմն արդեն շատ շուտով առիթ ունեցավ համոզվելու, որ նոր ծանոթների և ուրիշ ժողովուրդների մասին երբեք չպետք է դատել չափազանց շուտափույթ։

Այդ Սելեք Բայը նժույգով դուրս եկավ ձիթենու պուրակից հենց այն պահին, երբ ինքնաթիռը վայրէջք կատարեց բարձր լեռներում գտնվող հրապարակում, և Թիմը ամենաառաջինը աստիճաններով իջավ ցած։ Անատասը նրբագեղ սիրալիրությամբ արաբերեն ողջունեց Սելեք Բային։ Ցածր խոնարհվելով, նա աննկատելի շշնջաց Թիմին.

— Սա ամենախոշոր վաճառականն է արևապաշտների շրջանում և նրանց առաջնորդը։ Նա բարձրագույն կրթությունը ստացել է ձեր հարազատ քաղաքում։ Հիմա կսկսի մեզ հետ գերմաներեն խոսել։ Պատասխանեցեք նրան հարգալից և խոնարհվեցեք որքան հնարավոր է ցածր։

Սելեք Բայը դիմեց Թիմին, դրանով որոշ շփոթություն առաջացնելով նրա մոտ։ Մերուկը հագած էր շատ տարօրինակ զգեստ, ասենք, այդ զգեստի առանձին մասերը Թիմն աստիճանաբար, կարծես, սկսում էր ճանաչել— վերնաշապիկ, ժիլետ, պիջակ և երկար խալաթի նման ինչ-որ բան։ Դրանից բացի, գունավոր շալ, որը փաթաթված էր գոտկաշուրջը և, վերջապես, յուբկա, ինչպիսիք

հագնում են կանայք, որի տակից երևում էր երկար ու լայն վարտիքը։ Այդ բոլոր զգեստները հիանալի պայծառ և գեղեցիկ գույներ ունեին, որոնց մեջ առանձնապես աչքի էր ընկնում նարնջագույն-կարմիրը։ Սելեք Բայի թուխ, մորուքավոր դեմքի վրա կրնճիռներ գրեթե չկային։ Խիտ հոնքերի տակից Թիմին ուշադիր նայում էին երկնագույն աչքերը։

— Ես ենթադրում եմ, երիտասարդ, որ դուք հենց այն հռչակավոր ժառանգն եք, որի մասին աղմկում են բոլոր թերթերը,— ասաց նա գերմաներեն, կարմանալի հիանալի արտասանությամբ։— Ողջունում եմ ձեզ և ցանկանում, որ աստծո օրհնանքը լինի ձեզ վրա։

Ծերուկը խոնարհվեց, և Թիմը հետևեց նրա օրինակին։ Նրա շփոթմունքը ուժեղացավ։ Չէ որ այս մարդը, որը աստծո օրհնանք մաղթեց իրեն, արևապաշտների գլխավորն է։ Բայց Թիմն արդեն վաղուց էր սովորել թաքցնել իր զգացմունքները։ Նա քաղաքավարի պատասխանեց Սելեք Բային։

— Ես շատ ուրախ եմ, որ ծանոթանում եմ ձեզ հետ։ Բարոնը ինձ ձեր մասին շատ է պատմել։ (Դա սուտ էր, բայց հիմա Թիմին հաճախ էր բախտ վիճակվում լսել նման քաղաքավարի ստեր, և նա սովորել էր դա ընդօրինակել)։

Բարձր անիվներով բաց կառքը, որին լծված էին երկու նժույգ, նրանց հասցրեց դղյակ։

Սելեք Բայը, հեծած իր նժույգին, ամբողջ ճանապարհին նրանց ուղեկցում էր և արաբերեն խոսում բարոնի հետ։

Երբ կառքը շրջանցեց ձիթենու պուրակը, նրանց հայացքի առջև բացվեց լեռան զառիթափ լանջին վեր խոյացող դղյակը՝ աղյուսներից կառուցված հրեշավոր շինությունը, որի տանիքի անկյուններում ատամնավոր աշտարակներ և անձրևաջրերը դուրս ժայթքող վիշապների գլուխներ կային։

— Մի կարծեք, խնդրեմ, որ այս անճաշակությունը ես եմ կառուցել,— Թիմին դիմեց բարոնը։— Սա ես գտել եմ կամակոր անգլուհի լեդիից զուտ այն պատճառով, որ սիրում եմ երկրագնդի այս անկյունը։ Միայն զբոսայգին է այստեղ կառուցված իմ սեփական նախագծով։

Զբոսայգին, որ լեռան լանջով դեպի ցած էր իջնում սանդղավանդերով, կառուցված էր ֆրանսիական ոճով։ Թվում էր, թե թփերն ու ծառերը, որ կտրված էին բուրգերի, գնդերի և բազման-

կյունների ձևով, տնկվել են ոչ առանց կարկինի և քանոնի օգնության — այնքան ուղիղ էին այստեղ զբոսուղիները, այնքան կլոր հրապարակներն ու թմբերը։ Յուրաքանչյուր սանդղավանդ տարբերվում էր մյուսից իր զարդաքանդակներով։ Բոլոր ծառուղիներում կարմիր աղյուսի խիճ էր լցված։

— Հավանո՞ւմ եք զբոսայգին, պարոն Թալեր։

Այդ հիմարացված բնությունը, բույսերը, որոնց այդքան անխիղճ ձևով կտրատել էին, Թիմին թվացին մարդկային բթամտության զոհեր, և նա պատասխանեց.

— Իմ կարծիքով, սա լավ լուծված թվաբանական խնդիր է, բարոն։

Բարոնը ծիծաղեց։

— Ձեր բացասական վերաբերմունքը դուք շատ քաղաքավարի եք արտահայտում, պարոն Թալեր։ Պետք է նշեմ, որ դուք հրսկայական քայլերով եք զարգանում։

— Եթե այսպիսի երիտասարդը ասում է ոչ այն, ինչ մտածում է, դա նշանակում է, որ նա շատ վատ է զարգանում,— խոսակցությանը միջամտեց Սելեք Բայը, իր թամբից թեքվելով դեպի կառքը։

Նա դա ասաց բավականաչափ բարձր, աշխատելով խլացնել անիվների ճռռոցը։

Անատասն արաբերեն ինչ-որ բան առարկեց նրան և, ինչպես Թիմին թվաց, բավական կտրուկ։ Հեծյալը բարոնին ոչինչ չպատասխանեց։ Նա միայն երկար, մտազբաղ հայացքով նայեց տղային։ Շուտով նա հրաժեշտ տվեց և, շրջանցելով բլուրը, արշավեց հեռավոր լեռան կողմը։

Բարոնը նայեց նրա հետևից և ասաց.

— Ոսկե գլուխ ունի, միայն թե չափազանց բարոյական է։ Նա արտասահմանյան թերթերում կարդացել է, որ ես իմ սեփական դագաղի անվան տակ հովիվ Ալիի դագաղն եմ ներկայացրել, իսկ ինքս էլ առանց երկար մտածելու՝ վեր եմ ածվել երկվորյակ եղբոր։ Իհարկե, նա կլոր, բայց դրա փոխարեն կպահանջի, որ ես, որպես մեղքերիս քավում, նոր տաճար կառուցեմ նրա հավատակիցների համար։ Եվ, թերևս, ինձ ոչ մի ուրիշ բան չի մնում, քան համաձայնվելը։

— Եթե ես կարողանայի, ես հիմա կծիծաղեի,— լուրջ պատասխանեց Թիմը։

Բայց նրա փոխարեն ծիծաղեց բարոնը։ Նա ծիծաղում էր ելևէջներով, յուրաքանչյուր անգամ կարճ, երջանիկ շնչասպառ պոռթկումով։ Եվ այս անգամ Թիմին չճնշեց նրա սեփական ծիծաղը։ Նա նույնիսկ ուրախ էր, որ վերջապես իր ծիծաղը միշտ իր կողքին էր, այնքան մոտ, որ թվում էր, եթե ձեռքը մեկնի՝ կհասնի նրան։ Նրան նույնիսկ թվում էր, որ երբևէ ինքը իրոք ձեռքը կմեկնի և կբռնի իր ծիծաղը— միայն թե հարմար առիթ լինի։ Նա չէր հասկանում, որ այդպես միայն թվում է։ Թիմը որոշեց ուղեկցել բարոնին միշտ և ամենուրեք։

Կառքը կանգ առավ լայն աստիճանների մոտ, որը սանդղավանդից-սանդղավանդ տանում էր վեր, մինչև դղյակը։ Այստեղից դղյակը թվում էր հսկայական, գրեթե անվերջանալի։ Բայց ամենազարմանալին շներն էին, քարե շները, որ կանգնած էին աստիճանների երկու կողմերում։ Կարծես սառած իրենց քարե լռության մեջ, նրանք աչքերը չռած նայում էին ցած, դեպի հովիտը։ Այստեղ, հավանաբար, կային տարբեր տեսակների հարյուրավոր շներ՝ դոբերման պինչերներ, տաքսաներ, սեթերներ, ֆոքսթերյերներ, աֆղանական թաղիներ, շոու-շուոուներ, սպանիելներ, բոքսյորներ, շպիցներ և մոպսեր՝ վառ գունազարդված կերամիկա։ Ստացվում էր, որ աջից ու ձախից, ամբողջ սանդուղքի երկայնքով դղյակի մուտքը պահպանում է տարբեր շների վիթխարի ոհմակը։

— Ձեր լեդին շների սիրահար էր,— բացատրեց բարոնը։

Իսկ Թիմը պատասխանեց։

— Այո, դա զգացվում է։

Անատասը պատրաստվում էր ցուցում տալ կառապանին, որ գնա ոլորապտույտ լեռնային ճանապարհով, երբ հանկարծ աստիճանների մեջտեղում կանգնած կերամիկական բուլդոգի ետևից դուրս եկավ ինչ-որ մեկը և ձեռքով արեց նրան։

— Դա սինյոր Վան դեր Թոլենն է,— ասաց Անատասը։— Եկեք իջնենք կառքից և գնանք նրա մոտ։ Ես ուզում եմ նրան շշմեցնել մարգարինի մասին իմ պլաններով։ Ա՜յ թե նա կզարմանա։

Նրանք դուրս եկան կառքից, և բոլորը գրեթե վազելով վեր բարձրացան աստիճաններով։ Թիմը դանդաղ բարձրանում էր նրա

ետևից, ուշադիր նայելով խճաքանդակ շներին։ Նրան չէին հետաքրքրում մարգարինի վերաբերյալ խոսակցությունները։

Կարող էր արդյոք նա երբևէ կռահել, թե ինչ կարևոր դեր է նրա կյանքում խաղալու մարգարինը։

Թերթ քսաներկուերորդ

ՊԱՐՈՆ ՎԱՆ ԴԵՐ ԹՈԼԵՆԸ

Դղյակի ներքին կառուցվածքն ապացուցում էր, որ բարոնը, որն այնքան սիրում էր այցելել գեղանկարչության և գեղարվեստական իրերի ցուցահանդեսներ, կենցաղի հարցերում նուրբ ճաշակի տեր էր։ Կահավորման բոլոր առարկաները, անգամ մոխրամանները, դռների բռնակները և լողարանի հատակի գորգը պարզ էին, գեղեցիկ և, ըստ երևույթին, շատ թանկարժեք։ Թիմի սենյակը կիսակլոր էր և գտնվում էր աշտարակներից մեկում։ Նրա պատուհանից երևում էին զբոսայգին և ձիթենու պուրակը։ Անգամ փոքր օդանավակայանը կարելի էր տեսնել ամենայն մանրամասնությամբ. վայրէջքի հրապարակը, որը կանոնադրության համաձայն շրջապատված էր լուսարձակներով, իսկ նրա մոտ՝ մի քանի անգարներ ինքնաթիռների համար և ցածր երկար մի շինություն, որտեղ տեղավորված էին ռադիոկայանը և եղանակի ծառայությունը։

Երբ Թիմը դուրս նայեց պատուհանից, նա վայրէջքի հրապարակում տեսավ երկու ինքնաթիռ։ Երրորդը ճիշտ այդ վայրկյանին վայրէջք էր կատարում. խայտաբղետ գույներով հագնված մի հեծյալ անշարժ կանգնած էր երկար շինության սպիտակ պատի մոտ։ Երևում է, որ Սելեք Բայն էր։

Հանկարծ Թիմը լսեց, ինչպես մեկը կիսաձայն կանչում է նրան.

— Պարոն Թալեր։

Թիմը շրջվեց պատուհանից և բացեց դուռը։ Դռան հետևում կանգնած էր սինյոր Վան դեր Թոլենը, որի հետ նա երեկ շներով աստիճանների վրա փոխանակել էր միայն մի քանի քաղաքավարական խոսք, որովհետև բարոնը, գրեթե առանց շունչ քաշելու, խոսում էր մարգարինի մասին։

— Կարելի՞ է մի փոքր խոսեմ ձեզ հետ, պարոն Թալեր։ Բայց այնպես, որ այդ մասին բարոնը ոչինչ չիմանա։

— Ես բարոնին ոչինչ չեմ ասի, եթե դուք չեք ցանկանում։ Միայն որտե՞ղ է նա հիմա։

— Նա գնում է օդանավակայան դիմավորելու միսթր Պենիին։

Այդ ընթացքում սինյոր Վան դեր Թոլենը մտավ սենյակ և տեղավորվեց հյուսված ճոճաթոռում։ Թիմը փակեց դուռը և նրստեց անկյունում դրված փոքր նստարանին, այժմ նա կարող էր նայել պատուհանից, տեսադաշտից դուրս չթողնելով սենյակը։ Վան դեր Թոլենը, ինչպես Թիմը նկատել էր դեռ առաջին հանդիպման ժամանակ, այնքան էլ շատախոս չէր։ Այդ մասին կարելի էր դատել թեկուզ նրա բերանի ձևից։ Վան դեր Թոլենի բերանը նման էր շնաձկան փակ երախի՝ ուղիղ բարակ գիծ, որի ծայրերն ակնհայտորեն թեքվում էին դեպի վեր։

— Ես ձեզ մոտ եկել եմ այն կապակցությամբ, որ ժառանգության մասին կտակը դեռևս վերջնականապես իրավաբանորեն չի ձևակերպված,— ասաց այդ հոլանդական ազգանունով պորտուգալացին։— Խոսքը բարոնին պատկանող վճռական ձայնի իրավունքով բաժնեթղթերի մասին է։ Դուք բաժնեթղթերից գլուխ հանո՞ւմ եք։

— Ոչ,— պատասխանեց Թիմը, նայելով պատուհանից դուրս։

Այդ րոպեին բարոնի կառքը մոտեցավ օդանավակայանին։

Սինյոր Վան դեր Թոլենը դանդաղ ետ ու առաջ էր ճոճվում հյուսված ճոճաթոռով։ Նրա սպիտակավուն-երկնագույն աչքերը ակնոցների ապակիների տակից սևեռուն նայում էին Թիմին։ Նրա հայացքը սառն էր, բայց ոչ ծակող։

— Ահա ուրեմն, բաժնեթղթերի վիճակը հետևյալն է...

Կառքում նստած բարոնը շրջվեց և ձեռքով արեց Թիմին։ Թիմը ձեռքով պատասխանեց նրան։

— Բաժնեթղթերի քանակը նշանակում է կապիտալի հարցում մասնակցության չափը...

Այժմ երփներանգ հեծյալը հեռացավ պատից։ Սելեք Բայը գնաց Անատասի կառքին ընդառաջ։

— Ես ստիպված կլինեմ միտքս պարզաբանել ակնառու օրինակով։ Դուք ինձ լսո՞ւմ եք։

— Այո,— պատասխանեց Թիմը և հայացքը հեռացրեց պատուհանից։

— Ուրեմն, պարոն Թալեր, պատկերացրեք, թե որոշված է այգի տնկել։ (Թիմը գլխով արեց)։ Բայց այն մարդը, որը նախաձեռնել է այդ գործը, այնքան դրամ չունի, որպեսզի գնի այգու համար անհրաժեշտ բոլոր երիտասարդ խնձորենիները, և նա տնկում է այգու միայն մի մասը։ Մյուս խնձորենիները գնում և տնկում են ուրիշ մարդիկ։ Իսկ երբ խնձորենիները մեծանում են և սկսում են բերք տալ, յուրաքանչյուրը, ով խնձորենի է տնկել, ստանում է խնձորի այն մասը, որը համապատասխանում է տնկած խնձորենիներին։ Ընդ որում յուրաքանչյուր տարի այդ մասը կազմող խնձորի քանակը տարբեր է լինում։

Թիմը սկսեց բարձրաձայն հաշվել.

— Ուրեմն, եթե հարյուր խնձորենուց ես տնկել եմ քսանը և այգում հավաքել եմ հարյուր ցենտներ խնձոր, ապա ես դրանից կստանամ քսան ցենտներ։ Ճի՞շտ է։

— Ոչ բոլորովին։— Սինյոր Վան դեր Թոլենը հագիվ նկատելի ժպտաց։— Պետք է վճարել այգեպաններին և բանվորներին։ Բացի այդ, չորացած ծառերը պետք է փոխարինել նորերով։ Բայց ինձ թվում է, որ դուք արդեն մոտավորապես հասկացաք, թե ինչ բան է բաժնեթուղթը։

Թիմը գլխով արեց։

— Բաժնեթղթերը այն ծառերն են, որոնք ես տնկել եմ։ Նրանք իմ բաժինն են և այգում, և բերքում։

— Շատ ճիշտ է, պարոն Թալեր։

Սինյոր Վան դեր Թոլենը նորից սկսեց լուռ ճոճվել, իսկ Թիմը նորից նայեց պատուհանից դուրս։ Կառքը արդեն օդանավակայանից վերադառնում էր դղյակ։ Սելեք Բայը, ինչպես և երեկ, իր նժույգով ուղեկցում էր կառքին։ Անատասի կողքին կառքում նստած էր խոշոր, չաղ, ճաղատ մի պարոն։

— Բարոնն արդեն դղյակ է վերադառնում, սինյոր դեր Թոլեն։

— Այդ դեպքում ես համառոտակի կշարադրեմ իմ խնդիրը, պարոն Թալեր։ Կտակն այնպես է կազմված, որ նոր բարոնը...

— Ինչպե՞ս թե նոր բարոնը,— նրան ընդհատեց Թիմը։ Բայց նայելով վաճառականի դեմքին, հասկացավ, որ նա ոչինչ չի իմանում բարոնի գաղտնիքի մասին։ Դրա համար էլ արագ ավելացրեց.— Ներեցեք, խնդրեմ, որ ես ձեզ ընդհատեցի։

Զնայած Վան դեր Թոլենը նայում էր նրան՝ հոնքերը վեր բարձրացրած, Թիմը այլևս ոչինչ չասաց։ Եվ սինյոր Վան դեր Թոլենը նորից սկսեց.

— Կտակը այնքան խորամանկորեն է կազմված, որ նոր բարոնը հնարավորություն ունի դատական կարգով վիճարկելու ձեր ժառանգությունը, եթե նա այդ ցանկանա։ Ասենք, դա միայն ձեր և նրա գործն է։ Ինձ այստեղ հետաքրքրում են վճռական ձայնով բաժնեթղթերը։

Թիմը պատուհանից տեսավ, որ կառքը և հեծյալը կանգ առան աստիճանի ներքևում։ Ըստ երևույթին, պարոնները աշխույժ զրուցում էին։

— Իսկ ի՞նչ բան է վճռական ձայնով բաժնեթուղթը,— հարցրեց Թիմը։

— Մեր բաժնետիրական ընկերությունում, պարոն Թալեր, կան մի քանի բաժնեթղթեր, մոտավորապես քսան միլիոն պորտուգալական էսկուդո արժողությամբ։ Նրանք, ում դրանք պատկանում են, վճռական ձայն ունեն ընկերության վարչությունում։ Միայն նրանց վճռից են կախված բոլոր հարցերը և ուրիշ ոչ ոքի։

— Եվ ես ժառանգում եմ այդ բաժնեթղթե՞րը, սինյոր Վան դեր Թոլեն։

— Նրանց մի մասը, պարոն Թալեր։ Մնացածը պատկանում է Սելեք Բային, միսթր Պեննիին և ինձ։

Միսթր Պեննին, հավանաբար, հենց այն ճաղատ չաղլիկն էր, որը Անատասի և Սելեք Բայի ուղեկցությամբ հիմա դանդաղ վեր էր բարձրանում աստիճաններով։

— Եվ դուք ուզում եք ինձնից գնել վճռական ձայնի իրավունք ունեցող իմ բաժնեթղթերը։

— Եթե անգամ ուզենայի, միևնույն է, չէի կարողանա դա անել։ Քանի չի լրացել ձեր քսանմեկ տարին, միայն բարոնը կարող է տնօրինել բաժնեթղթերը։ Բայց այն ժամանակ, երբ դուք օրենքով տեր դառնաք ժառանգությանը, ես սիրով ձեզնից կգնեմ այդ բաժնեթղթերը։ Ես արդեն հիմա նրանց դիմաց ձեզ առաջարկում եմ մեր ֆիրմայի ցանկացած ձեռնարկությունը։ Այդ ձեռնարկությունը կպատկանի ձեզ անգամ այն դեպքում, եթե ձեր ժառանգական իրավունքը որևէ պատճառով չեղյալ հայտարարվի։

Պորտուգալացին վեր կացավ ճոճաթոռից։ Նրա բերանը նո-

րից նմանվեց շնաձկան փակ երախի։ Այս անգամ նա անհամեմատ ավելի շատ խոսեց, քան սովորաբար խոսում էր։ Հիմա Թիմի հերթն էր։ Եվ Թիմն ասաց.

— Ես կմտածեմ ձեր առաջարկի մասին, սինյոր Վան դեր Թոլեն։

— Խնդրում եմ, մտածեք, պարոն Թալեր։ Դրա համար դուք դեռ երեք օր ունեք։

Այս ասելով առևտրականը դուրս եկավ Թիմի սենյակից։

Երբ Թիմը նորից պատուհանից նայեց դուրս, դղյակ տանող աստիճանը արդեն դատարկ էր։

Թիմը մնաց մենակ։ Այստեղ, դղյակի աշտարակում, նստած էր մի տղա, որի անունը Թիմ Թալեր էր, ընդամենը տասնչորս տարեկան, մեծացած մեծ քաղաքի նեղ նրբանցքում, մի տղա, որը զուրկ էր ժպտալու ընդունակությունից, բայց իշխանության և հարստության ուժով ապագա թագավոր էր։ Թագավոր, իհարկե, միայն այն դեպքում, եթե այդպիսի թագը նրա համար որևէ արժեք ներկայացներ։

Թիմը դեռևս լրիվ պատկերացում չուներ իր հարստության չափի մասին։ Եվ այնուամենայնիվ գիտեր, որ բարոն Անատասի ֆիրմայի հսկայական նավատորմը ծովեր և օվկիանոսներ է հատում։ Նա գլխի էր ընկնում, որ աշխարհի ամենամեծ շուկաները, ինչպես Աթենքի շուկան, օրեցօր և տարեցտարի բազմապատկում են իր հարստությունները։ Նա մտովի պատկերացնում էր դիրեկտորների, ծառայողների և բանվորների այն ամբողջ բանակը, հարյուրավոր, հազարավոր, զուցե նույնիսկ տասնյակ հազարավոր մարդկանց, որոնք կատարում են իր հրամանները։ Այդ տեսարանները բորբոքում էին Թիմի սնապարծությունը։ Նա ինքն իրեն նմանեցնում էր հեքիաթի միայնակ բավարական թագավորին, որի մասին մեծ հիացմունքով պատմում էր ծեր ուսուցչուհին, պատմության դասերի ժամանակ։ Նա երազում էր, թե ինչպես Սելեք Բայի ուղեկցությամբ ոսկե կառքով ինքը կանցնի Ֆրաու Բեբերի հրուշակեղենի խանութի մոտով, ողջ նրբանցքի աչքի առջև։ Իսկ հարևանները չոած աչքերով կնայեն իրեն։

Մի պահ աշտարակում գտնվող տղան մոռացավ իր կորցրած ծիծաղի մասին։ Նա երազում էր, նա հեքիաթ էր հորինում այն մասին, թե ինչպես է ինքը թագավոր դարձել։

Բայց իրականությունը միանգամայն այլ էր։ Իրականությունը կոչվում էր մարգարին և պատրաստվում էր շուտով կոպիտ ձևով հիշեցնել նրան իր կորցրած ծիծաղի մասին։

Թերթ քսաներեքերորդ

ՆԻՍՏԸ

Դղյակում նիստերի համար հատուկ սրահ կար, որի պատերին պանելներ էին քաշված և որի կենտրոնում դրված էին երկար սեղան և խորը աթոռներ։ Նա, ով մտնում էր այդ սրահը, անմիջապես ուշադրություն էր դարձնում դռան դիմացի պատից կախված ծանր ոսկեզօծ շրջանակով նկարին։ Դա մեծ նկարիչ Ռեմբրանդտի հռչակավոր ինքնանկարն էր։ Ամբողջ աշխարհի արվեստաբանները այդ նկարը համարում էին վերջին պատերազմի ժամանակ կորած։

Նկարի տակ, սեղանի կենտրոնում բազմել էր բարոնը, նրանից ձախ նստած էին Սելեք Բայը և Թիմ Թալերը, աջից՝ միսթր Պեննին և սինյոր Վան դեր Թոլենը։ Խոսակցությունը «յուղի շուկայի վիճակի» մասին էր։ Թիմի պատճառով բոլորը խոսում էին գերմաներեն, թեպետ միսթր Պեննիի համար դա բավական դժվար էր։

Նիստի ամենասկզբում (այդպիսի քննարկումները, չգիտես ինչու, միշտ անվանում են նիստեր, կարծես ամենագլխավորը դրանց համար աթոռին նստելն է), ուրեմն, նիստի ամենասկզբում միսթր Պեննին գործունյա տոնով տեղեկացավ, արդյոք Թիմը հետագայո՞ւմ էլ պետք է մասնակցի գաղտնի խորհրդակցություններին։ Սելեք Բայը արտահայտվեց «կողմ», բայց մնացած պարոնները վճռականորեն «դեմ» էին։ Նրանք այն կարծիքին էին, որ տղան պետք է նիստին մասնակցի միայն այսօր. նախ՝ որպեսզի մի քիչ ծանոթանա կոնցեռնի գործերին, և երկրորդ՝ քանի որ նա պետք է հաղորդում անի այն մասին, թե որքան մարգարին է սպառվում իրենց նրբանցքում։

Օրակարգի առաջին հարցը Աֆղանստանի դանակ-մկրատ սրողների հարցն էր։ Դա բավականաչափ տարօրինակ պատմություն էր։ Թիմը աստիճանաբար հասկացավ, որ բարոն Անատասի առևտրական ֆիրման Աֆղանստանում ձրիաբար բաժանել էր մոտ

երկու միլիոն էժանագին դանակներ և մկրատներ։ Եվ ոչ այնքան զուտ մարդասիրությունից դրդված, որքան շահույթի նպատակով։ Այդ դանակների և մկրատների հատը ընկերության վրա նստել էր քառասունական պուլի (աֆղանական մանր դրամ)։ Իսկ դանակ սրելը արժեր հիսուն պուլի (կես աֆղանի)։ Քանի որ դանակները և մկրատներն այնքան էլ որակյալ չէին, դրանք ստիպված էին սրել տարեկան առնվազն երկու անգամ։ Իսկ Աֆղանստանի բոլոր սրողները բարոնի ֆիրմայի ծառայողներն էին և ոմն Ռամադուլլան (ոչ հեռու անցյալում հայտնի ավազակ), որից սարսափում էր ամբողջ մարզը, բռան մեջ էր պահում սրողներին։ Նա սրողներին մատակարարում էր սրելու քարեր և պատվիրատուներ, բայց դրա դիմաց պահանջում էր եկամտի այնպիսի մասը, որ բոլոր սրողների վաստակած փողերի կեսը պարբերաբար ընկնի ֆիրմայի գանձարանը։ Դժվար չէր պատկերացնել, թե ինչ կարող էր բաժին մնալ սրողներին։

Այդ պատճառով էլ Աֆղանստանում ստիպված էին մեծ ջանքեր գործադրել, որպեսզի սրողներ հավաքագրեն և նրանց ապահովեն աշխատանքով։ Իսկ այդպիսի աղքատ երկրում դա անհնարին է անել ռադիոյի, թերթերի կամ ռեկլամի միջոցով։ Չէ որ այնտեղ շատ քչերն են կարողանում կարդալ, իսկ ռադիո գրեթե ոչ ոք չունի։ Դրա համար էլ ստիպված եղան վճարել փողոցի երգիչներին, որոնց հանձնարարված էր բակերում երգել «դանակ-մկրատ սրողի երգը»։ Այդ երգի մեջ (պարոնները երկար վիճում էին նրա խոսքերի և եղանակի մասին) ոչ թե գովերգվում էր, ինչպես կարելի էր ենթադրել, սրողի արվեստը, այլ պատմվում էր նրա աղքատության մասին։ Եվ դա այն նպատակով, որ մարդկանց ստիպեն սրել իրենց դանակները և մկրատները գոնե կարեկցանքից դրդված։ Թարգմանաբար այդ երգը հնչում է մոտավորապես այսպես.

Պտտվում է,
Պտտվում է, պտտվում։
Աղմկում է անիվը ու կայծկլտում։
Կես-աֆղանի տվեք նրան և ահա
Նա կսրի ինչ էլ որ դուք կամենաք։
Խեղճ շրջմոլիկ,
Խեղճ շրջմոլիկ
Ու խեղճ մարդ։

Քաղաքներ, գյուղեր,
Փողոցներ մտնում
Միշտ նույն անիվն է անվերջ պտտում։
Կես-աֆղանի տվեք նրան և ահա
Նա կսրի դանակ, կացին ու մկրատ։
Խեղճ շրջմոլիկ,
Խեղճ շրջմոլիկ
Ու խեղճ մարդ։

Վերջին մասը պետք է լսողներին համոզեր, թե որքան երջանիկ է սրողը, երբ նրա մոտ դանակներ և մկրատներ են բերում սրելու։

Տանտիկիններ,
Աղախիններ սիրունիկ,
Շուտ դուրս բերեք ով սրելու բան ունի։
Կես-աֆղանի...
շնորհակալ եմ, աստված,
Այսօր պիտի նա ունենա պանիր հաց։
Խեղճ շրջմոլիկ,
Խեղճ շրջմոլիկ
Ու խեղճ մարդ։

Այն մասին, որ խեղճ դանակ-մկրատ սրողները գրեթե ամբողջ իրենց վաստակը տալիս են Ռամադուլլային, իսկ սա էլ, իր հերթին, հավաքած փողերի մեծ մասը ուղարկում է այս դղյակը, լռում էին։

Թիմն ամբողջ ժամանակ մտածում էր այն ծերուկի մասին, որը շրջում էր իր խուլ ու համր աղջկա հետ և դանակ-մկրատ էր սրում իրենց նրբանցքում։ Գուցե այդ ծերո՞ւկն էլ իր վաստակի մեծ մասը տալիս է որևէ ֆիրմայի։ Նրան տխրեցնում էր այն միտքը, որ ինքը պետք է ժառանգեր այս նողկալի թագավորությունը։ Եվ Սելեք Բայը, ըստ երևույթին, կռահեց նրա միտքը։

— Ինձ թվում է,— ասաց նա,— որ մեր ֆիրմայի մեթոդները հավանության չեն արժանանում երիտասարդի կողմից։ Պետք է ենթադրել, որ նա մտածում է, որ ավազակ Ռամադուլլան բնավ չի փոխել իր մասնագիտությունը և որ նա պարզապես այժմ կողոպտում է մի փոքր ավելի քաղաքավարի, կրթված ձևով։ Պետք է ձեզ ասեմ, պարոններ, որ ես էլ եմ այդպես մտածում։

— Ձեր կարծիքը ինձ հայտնի է,— ասաց միսթր Պեննին։ Իսկ բարոնը, նկատելիորեն աշխուժանալով, ավելացրեց.

— Եթե ավազակների կողմից հոշոտված երկրում, Սելեք Բայ, մեզ հաջողվեց ավազակներին դարձնել ավելի քաղաքակրթված, դա նշանակում է, որ մենք նպաստում ենք առաջադիմությանը։ Ավելի ուշ, երբ այդ երկրում շնորհիվ մեր օգնության կհաստատվի օրենքը և կարգուկանոնը, առևտրի մեր մեթոդներն էլ, իհարկե, կլինեն լրիվ օրինական։

— Այդ նույնը դուք ինձ ասում էիք,— հանգիստ նրան առարկեց Սելեք Բայը,— երբ խոսքը վերաբերում էր հարավ-ամերիկյան երկրներից մեկում շաքարեղեգի պլանտացիաներում աշխատանքի անմարդկային պայմաններին։ Հիմա այդ երկրում մեր դրամի օգնությամբ որպես պրեզիդենտ է ընտրված բոլորին հայտնի գող ու մարդասպանը, և դրությունն այնտեղ ավելի է վատացել։

— Բայց այդ պրեզիդենտը խոնարհվում է կրոնի առջև,— միջամտեց միսթր Պեննին։

— Այդ դեպքում ես կգերադասեի, որ պրեզիդենտը լիներ ավելի մարդասեր և պակաս խոնարհվեր կրոնի առաջ,— ասաց Սելեք Բայը։

Այժմ, ամբողջ ժամանակվա ընթացքում առաջին անգամ, խոսք վերցրեց սինյոր Վան դեր Թոլենը։

— Պարոնայք, չէ որ մենք հասարակ առևտրականներ ենք և քաղաքականության հետ չենք առնչվում։ Հուսանք, որ ժամանակի ընթացքում աշխարհն ավելի լավը կդառնա, և այն ժամանակ մենք բոլորս իրար հետ առևտուր կանենք որպես բարեկամներ։ Իսկ այժմ ես առաջարկում եմ անցնել գլխավորին՝ յուղին։

— Ավելի ճիշտ՝ մարգարինին,— ժպիտով նրան ուղղեց բարոնը և անմիջապես անցավ երկար զեկուցման։

Այդ զեկուցումը քիչ բանով էր տարբերվում այն ճառերից, որոնք Թիմը նրանից արդեն լսել էր ինքնաթիռում։ Նա բնավ չէր խոսում որպես խաղաղասեր վաճառական, այլ որպես մի զորավար, որը պատրաստվել է երկրագնդի երեսից ջնջել իր թշնամիներին՝ յուղի մյուս վաճառականներին։

Նրա ասածների կեսը Թիմը չէր լսում։ Նրա ականջների մեջ աղմկում էր։ Նա տարակուսանքով հարցնում էր ինքն իրեն, թե ինչ կարիք կա այդ դեպքում ընդհանրապես առևտրով զբաղվել

Աֆղանստանում և Հարավային Ամերիկայում, եթե առևտուրն անպայման այնտեղ վերածվում է այդպիսի զազրելի գործի։ Նա այլևս ցանկություն չուներ ժառանգելու բարոնի թագավորությունը։ Նա զզվանք էր զգում առևտրի, առևտրական գործարքների և ընդհանրապես ամեն տեսակի «գործերի» նկատմամբ։ Կարոտով հիշում էր իր սեփական «գործի»՝ վաճառված ծիծաղի մասին։

Բարոնը խնդրեց, որ Թիմը կրկնի այն բոլորը, ինչ ասել է իրեն ինքնաթիռում, իրենց նրբանցքում մարգարինի օգտագործման մասին։

Թիմը սկսեց պատմել, և երբ նա վերջացրեց, նիստերի դահլիճում տիրեց լռություն։

— Մենք միստ չափազանց քիչ ուսադրություն հատկացնել մարգարինին,— ասաց միսթր Պեննին։

— Մինչդեռ մեր կոնցեռնը ներկայիս մեծությանը և հարստությանը հասել է շնորհիվ մանրուքների, որոնց կարիքն են զգում խեղճ մարդիկ։ Բայց մենք բոլորովին անտեսել ենք մարգարինը։ Եվ դա ներելի չէ։ Ստիպված այդ գործը պետք է կազմակերպենք բոլորովին այլ ձևով։

Հիմա Թիմը մի քիչ հանգստացավ։ Նա ասաց.

— Ես միշտ մի տեսակ վիրավորվում էի, որ նրանք, ովքեր կարագ էին գնում, իրենց գնումը ստանում էին արծաթաթղթով փաթեթված, իսկ մեր մարգարինը պարզապես բահիկով դուրս էին փորում տակառից և մի կերպ փաթաթում հասարակ թղթով։ Միթե մենք չենք կարող աղքատ մարդկանց մարգարին վաճառել գեղեցիկ փաթաթված։ Չէ որ դրա համար մեր փողը կբավականացնի։

Բոլոր չորս պարոնները զարմանքից աչքերը չռած նայեցին Թիմին։ Եվ հանկարծ, կարծես ընդհանուր հրամանով, սկսեցին բարձր ծիծաղել։

— Պարոն Թալեր, դուք ուղղակի անքին քանձ,— բացականչեց միսթր Պեննին։

— Լուծումը մեր քթի տակ էր, բայց մենք այն չտեսանք,— ծիծաղով բացականչեց բարոնը։

Անգամ սինյոր Վան դեր Թոլենը վեր թռավ իր բազկաթոռից և աչքերը սևեռեց Թիմի վրա, կարծես ինչ-որ հազվագյուտ գազանիկ էր տեսել։

Միայն ծեր Սելեք Բայն էր մնում հանգիստ։ Այդ պատճառով Թիմը դիմեց նրան և հարցրեց, թե ինչ արտառոց բան տեսան պարոնները իր առաջարկության մեջ։

— Իմ պատանի բարեկամ,— հանդիսավոր արտասանեց ծերուկը,— հենց նոր դուք հայտնագործություն արեցիք։ Դուք հայտնագործեցիք տեսակային մարգարինը։

Թերթ քսանչորսերորդ

ՄՈՌԱՑՎԱԾ ԾՆՆԴՅԱՆ ՕՐԸ

Թե ինչ բան է տեսակային մարգարինը և ինչպես կարելի է այն օգտագործել՝ Թիմը աստիճանաբար սկսեց հասկանալ հաջորդ երկու օրվա ընթացքում։ Դղյակում ուրիշ ոչնչի մասին չէին խոսում։ Անգամ սպասավորները, թվում էր, արաբերեն և քրդերեն փսփսում էին մարգարինի մասին։

Համաձայն բարոն Անատասի բաժնետիրական ընկերության նախագծի, տեսակային մարգարինը շուկա պետք է դուրս բերվեր հատուկ անունով և գրավիչ տեսքով փաթեթված։ Եվ այդ մարգարինի վաճառքի ծրագիրը մշակվում էր այնպիսի մանրամասնություններով, կարծես ռազմական արշավի ծրագիր լիներ։ Մարգարինի բոլոր աչքի ընկնող ֆաբրիկաները պետք է գաղտնի ձևով գնվեին ֆիրմայի կողմից։ Մարգարինի բոլոր տեսակները պետք է ուսումնասիրվեին լաբորատորիաներում։ Տեսակներից լավագույնը պետք է ներդրվեր ֆիրմայի բոլոր ֆաբրիկաների արտադրության մեջ, ընդ որում պետք է գտնվեր նրա պատրաստման առավել շահավետ տեխնոլոգիան։ Եվ, ամենագլխավորը՝ անհրաժեշտ էր նախապատրաստել այնպիսի ռեկլամներ, որպեսզի տնային տնտեսուհիներին համոզեին թանկագին յուղի փոխարեն գնել «գրեթե նույնչափ օգտակար, բայց շատ ավելի էժան» տեսակային մարգարինը։ Այդպիսով անանուն վատ մարգարինը գրեթե ինքնըստինքյան դուրս էր մղվում շուկայից։

Բոլոր այդ պատրաստությունները որոշված էր անցկացնել որքան հնարավոր է արագ և լիակատար գաղտնապահությամբ, որպեսզի որևէ այլ ֆիրմա առաջ չանցնի բարոն Անատասի բաժնետիրական ընկերությունից։ Այդ երկու օրվա ընթացքում հե-

ռախոսային խոսակցություններ էին տարվում Եվրոպայի բոլոր խոշոր քաղաքների հետ։ Առաքվում և ստացվում էին հեռագրեր, ինքնաթիռը անընդհատ այստեղ էր բերում ինչ-որ պարոնների, որոնք բարոնի և խորհրդի երեք մյուս անդամների հետ մի քանի ժամով փակվում էին նիստերի դահլիճում, իսկ հետո նույն օրն ևեթ թռչում էին ետ։

Թիմը հանկարծ շատ ազատ ժամանակ ունեցավ։ Օրվա կեսը նա անցկացրեց աշտարակի իր սենյակում, նորից ու նորից կարդալով այն խարդախ պայմանագիրը, որը մեծ շագանակենու տակ մի ժամանակ ստորագրել էր ինքը (որքա՜ն փոքր ու հիմար էր ինքը այն ժամանակ)։ Ոչ, նա իր ծիծաղը վերադարձնելու ոչ մի ելք, ոչ մի միջոց չէր գտնում։ Հսկայական առևտրական խարդախությունների մասին այդ խոսակցությունները վերջնականապես ապակողմնորոշեցին նրան, և նա չէր նկատում այն պարզ, կարճ ուղին, որը նրան տանում էր դեպի իր կորցրած ծիծաղը։

Բայց նրա երեք բարեկամները Համբուրգում գտան այդ ուղին, և զարմանալի դիպվածը Թիմին օգնեց կապ հաստատել նրանց հետ։

Թիմի սենյակի փոքրիկ հեռախոսը կտրուկ զանգահարեց, և երբ Թիմը վերցրեց լսափողը, նա հեռավոր ձայն լսեց.

— Համբուրգից են խոսում։ Ո՞վ է լսում։ Բարո՞նն է։— Մի վայրկյան Թիմը կորցրեց խոսելու ընդունակությունը։ Հետո նա բղավեց։

— Այդ դո՞ւք եք, պարոն Ռիկերտ։ Ե՞ս եմ, ե՛ս, Թի՛մը։— Հեռավոր ձայնն այժմ դարձավ շատ ավելի բարձր և հստակ։

— Այո, այդ ես եմ։ Աստվա՛ծ իմ, տղաս, ինչպիսի՜ հաջողություն։ Կրեշիմիրը և Ջոննին եկել էին ինձ մոտ։ Կրեշիմիրը գիտե...

Բայց Թիմը թույլ չտվեց, որ պարոն Ռիկերտը ավարտի խոսքը։ Նա ընդհատեց նրան բղավելով։

— Ողջույններ հաղորդեք Ջոննիին, պարոն Ռիկերտ։ Կրեշիմիրին էլ։ Ձեր մայրիկին էլ։ Եվ մտածեք, խնդրո՞ւմ եմ...

Թիմի ուսի հետևից ձգվեց մի ձեռք և սեղմեց լծակը։ Խոսակցությունն ընդհատված էր։ Սարսափից գունատված Թիմը շրջվեց։ Նրա մեջքի հետևում կանգնած էր բարոնը։ Ուրախությունից և հուզմունքից Թիմը չէր լսել, թե ինչպես էր նա ներս եկել։

— Դուք ստիպված կլինեք մոռանալ ձեր հին ծանոթներին, պարոն Թալեր,— ասաց Անատասը։— Շուտով դուք, որպես ժառանգություն կստանաք մի թագավորություն, որտեղ կառավարում են թվերը, այլ ոչ թե զգացմունքները։

Թիմն ուզում էր ասել. «Ես դա նկատի կունենամ, բարոն», ինչպես այժմ հաճախ էր ասում։ Բայց այս անգամ նա ի վիճակի չէր իրեն տիրապետել։ Հեռախոսի սեղանի մոտ կռացած, նա գլուխը դրեց ձեռքերին և լաց եղավ։ Կարծես հեռվից նա լսեց, որ ինչ-որ մեկն ասաց.

— Մենակ թողեք ինձ տղայի հետ, բարոն։

Լսվեցին քայլեր, դուռը փակվեց։ Եվ վերջապես ամեն ինչ լռեց։ Լսվում էր միայն Թիմի հեկեկոցը։

Ծեր Սելեք Բայը անաղմուկ քայլում էր սենյակում։ Հետո նա նստեց պատուհանի մոտ և թույլ տվեց, որ տղան մի կուշտ լաց լինի։

Շատ ժամանակ անցավ, նախքան նա ասաց.

— Երիտասարդ, ինձ թվում է, որ դուք չափազանց փափուկ եք այդպիսի դաժան ժառանգության համար։

Թիմը մեկ անգամ էլ հեկեկաց, հետո արտասուքները սրբեց բաճկոնի վերևի գրպանից դուրս ցցված ձյան պես սպիտակ թաշկինակով և պատասխանեց.

— Ես ոչ մի ժառանգություն էլ չեմ ուզում, Սելեք Բայ։

— Իսկ ի՞նչ է այդ դեպքում քո ուզածը, փոքրիկ։

Թիմն այնքա՜ն լավ զգաց իրեն, որ նորից ինչ-որ մեկը իրեն դիմեց «դու»-ով։ Նա շատ էր ուզում Սելեք Բային պատմել վաճառված ծիծաղի մասին։ Բայց այդ դեպքում նա իր ծիծաղը կկորցներ ընդմիշտ։ Եվ Թիմը լռեց։

— Դե լավ,— փնթփնթաց ծերուկը։— Բարոնը շատ գաղտնիքներ ունի, և դրանցից մեկը դու ես։ Կարծում եմ, դա սարսափելի գաղտնիք է։

Թիմը գլխով արեց և նորից ոչինչ չպատասխանեց։ Եվ Սելեք Բայը փոխեց զրույցի նյութը ու պատմեց տղային, թե ինչպես ինքը դարձավ այդ հարուստ բաժնետիրական ընկերության տերերից մեկը։

— Ասիայում առևտրական գործերի համար նրանց պետք էր որևէ ազդեցիկ մարդ։ Եթե վերցնեին մահմեդականներից, դա դժգոհություն կառաջացներ այն երկրներում, որտեղ երկրպագում

են Բուդդային։ Եսկ եթե ընտրեին բուդդայականներից մեկին, կվիրավորեին մահմեդականներին։ Դրա համար էլ կանգ առան ինձ վրա։ Որքան էլ մեզ՝ արևապաշտներիս, տարօրինակ են համարում, այնուամենայնիվ հարգում են մեծահոգության համար։ Հենց իմ պատճառով բարոնն իր համար գնեց այս դղյակը։

— Բայց չէ որ նրանց կոնցեռնի շատ գործեր բոլորովին ձեր արտովը չեն,— ասաց Թիմը։— Հապա էլ ինչո՞ւ եք միացել նրանց։

— Ես դրան համաձայնվեցի այն պայմանով, որ ինձ վճռական ձայնով բաժնեթղթեր պետք է տային։ Եվ պատկերացրու, որ համաձայնվեցին։ Ես մասնակցում եմ բոլոր հարցերի լուծմանը և ինձ երբեմն հաջողվում է որոշ բան փոփոխել, ճիշտ է, դա այնքան էլ շատ բան չի լինում։ Իսկ դրանից բացի...— Սելեք Բայը խորամանկորեն ժպտաց, ծիծաղեց և արդեն շշուկով շարունակեց։— Դրանից բացի, բոլոր այն միլիոնները, որոնք ինձ բաժին են ընկնում շնորհիվ բաժնետիրական ընկերության շահույթների, ես գաղտնաբար օգտագործում եմ այդ հասարակարգի դեմ ծավալվող պայքարի վրա։ Հարավային Ամերիկայում ես ֆինանսավորում եմ բանակի ծախսերը, որը վաղ թե ուշ ցած կգլորի այն գողին և մարդասպանին, որին սրանք նստեցրել են պրեզիդենտի աթոռին։ Իսկ Աֆղանստանում...

Դուռը ծեծեցին, և Սելեք Բայը անմիջապես լռեց։

— Բացե՞մ,— կամաց հարցրեց Թիմը։

Ներուկը գլխով արեց։ Տղան գնաց դեպի դուռը, և նույն վայրկյանին սենյակ մտավ հուզված միսթր Պեննին։ Մինչև հիմա Թիմը նրան միշտ տեսել էր հանգիստ և խիստ հավասարակշռված։

— Ի՞նչ բան նշանակի... այդ սատանա.... այդ անեծք... այդ ինչպե՞ս...

— Խոսեք անգլերեն,— ասաց Սելեք Բայը,— ես կթարգմանեմ տղայի համար։

Եվ միսթր Պեննին իր ճարտասանության հեղեղը ուղղեց անգլիական հունով։ Հետո հանկարծ լռեց, ցույց տվեց Թիմին և ասաց Սելեք Բային.

— Խնդրում, թարգմանել նրա համար։

Բայց ծեր Սելեք Բայը անգլիացուն խնդրեց նախ և առաջ հանգստանալ ու նստել և, երբ միսթր Պեննին ուժասպառ նետվեց ճոճաթոռին, ասաց Թիմին.

— Բարոնը մի քիչ առաջ Ռիկերտին հեռացրել է մեր համբուրգյան նավագնացության դիրեկտորի պաշտոնից։ Եվ քանի որ միսթր Պեննիի ձեռքում է նավագնացության բաժնեթղթերի մեծ մասը, նա բողոքում է այդ հեռացման դեմ։ Նա հաստատում է, որ պարոն Ռիկերտը մեծ հեղինակություն է վայելում Համբուրգում և կարող են դժգոհություններ առաջանալ։ Իսկ դա կվնասի նավագնացության շահերին։ Միսթր Պեննին գտնում է, որ պարոն Ռիկերտին ազատել են ձեր պատճառով։

— Իմ պատճառո՞վ,— զարմացած հարցրեց Թիմը, խիստ գունատվելով։

— Ձեր, այո, ձեր մեղք։— Միսթր Պեննին նորից ոտքի ցատկեց։— Բարոնը... է... ինչպես... է... բարոնը... է... բարոնը... նա ասել...

Թիմը, իհարկե, ինքն էլ էր հասկանում, որ պարոն Ռիկերտի հեռացումը կապված է հեռախոսային խոսակցության հետ։ Բայց այն, որ բարոնը մեղքը գցել է իր վրա, սատանայական ստորություն էր։ Ո՞վ, ո՞վ, բայց Թիմը երբեք չէր կարող ցանկանալ, որ պարոն Ռիկերտը հեռացվեր աշխատանքից։

Սելեք Բայը հանկարծ ուղղվեց դեպի դուռը, ասելով միսթր Պեննիին.

— Մի քիչ գերմաներեն խոսեք երիտասարդի հետ։ Դա կօգնի, որ դուք խոսեք դանդաղ և հանգիստ։

Այդ ասելով, նա անհետացավ։

Լոնդոնցի հասարիկը փովեց պատուհանի մոտ գտնվող աթոռին, որտեղ հենց նոր նստած էր Սելեք Բայը և տնքաց.

— Ես չկարող դա հասկանալ։

Սկզբում Թիմը ուզում էր ասել նրան, որ բարոնը պարզապես ստել է։ Բայց խոսակցությունը սինյոր Վան դեր Թոլենի հետ, որի մասին նա հաճախ մտածում էր, նորից միտքն եկավ, և դա նրան դրդեց մի փրկարար մտքի։

— Միսթր Պեննի,— ասաց նա,— դուք, իհարկե, գիտեք, որ երբ լրանա իմ քսանմեկ տարին, ես որպես ժառանգություն կընտանամ վճռական ձայնի իրավունք ունեցող բազմաթիվ բաժնեթղթեր։

— Այո՞,— անկյունից մռնչաց միսթր Պեննին։

— Եթե ես ձեզ հետ մի պայմանագիր կնքեմ, որը ձեզ իրավունք կտա ստանալու այդ բաժնեթղթերը հենց որ ես չափահաս

դառնամ, դուք չէի՞ք համաձայնվի այժմ ինձ զիջել համբուրգյան նավագնացության ձեր բաժնեթղթերը։

Միսթր Պեննին անշարժ նստած էր իր անկյունում։ Նա միայն մի փոքր կկոցել էր աչքերը։ Թիմը լսում էր նրա ծանր շնչառությունը։ Վերջապես անգլիացին խռպոտ ձայնով հարցրեց.

— Արդյոք դա օյի՞ն, պարոն Թալեր։

— Ոչ, միսթր Պեննի։ Ես դա ասում եմ առանց որևէ հետին մտքի։

— Այդ դեպքում փակեք դուռը։

Թիմն այդպես էլ արեց և փակ դռան հետևում պայմանագիր կնքեց միսթր Պեննիի հետ, որը պետք է պահպանվեր նույնքան խիստ գաղտնի, որքան և Անատասի հետ կնքված պայմանագիրը։ Ոչ մի պայմանով այն չպետք է ընկներ բարոնի ձեռքը։ Ափսոս միայն, որ նավագնացության բաժնեթղթերը չէին կարող ուժի մեջ դրվել անմիջապես. օրենքի համաձայն Թիմը դրանք կարող էր ստանալ միայն մեկ տարուց։ Բայց, թերևս, այդպես ավելի լավ էր։ Համենայն դեպս, ա՛յն ծրագրերի համար, որ նախագծում էր Թիմը այդ անքուն գիշերը։

Դրանքհսկայակա՞ն ծրագրեր էին։ Թիմը երազում էր, թե ինչպես Սելեք Բայի միջոցով պատին կսեղմի բարոն Անատասի բաժնետիրական ընկերությանը՝ աշխարհի ամենահարուստ և հզոր կոնցեռնը։ Եվ այդ դեպքում բարոնը միայն մի ելք կունենա՝ վերադարձնել Թիմին նրա ծիծաղը։ Հակառակ դեպքում նա մեկ վայրկյանում կկորցնի իր ամբողջ իշխանությունն ու հարստությունը։

Այդ ծրագիրը խելահեղություն էր։ Եվ եթե նույնիսկ Սելեք Բայը համաձայնվեր մասնակցել նա, անկասկած, կձախողվեր։ Թիմը դեռ նոր էր մտնում խոշոր առևտրական գործարքների աշխարհը և թերագնահատում էր այդպիսի համաշխարհային կոնցեռնի հնարավորություններն ու կապերը։ Նա թերագնահատում էր և այն պարոններին, որոնց հետ գործ ուներ։ Նրանցից յուրաքանչյուրը առանց տատանվելու աղքատության կմատներ սեփական կնոջը և երեխաներին, եթե դա հնարավորություն տար ֆիրման փրկելու սնանկացումից։ Նա թերագնահատում էր այդ մարդկանց կպչունությունը, դաժանությունը և երկաթե կամքը։

Թիմը չափազանց փոքր էր և անփորձ այդպիսի ծրագիրը իրականացնելու համար։ Իսկ նրա ծիծաղը կարելի էր վերա-

դարձնել անհամեմատ ավելի պարզ և հեշտ ճանապարհով, սոսկ մի քանի խոսքերի միջոցով։ Բայց ամբողջ ժամանակ բարոնի մոտ գտնվելով, նա բոլորովին ետ էր սովորել պարզ ու հասարակ բաներից և նույնիսկ նրանց մասին մտածելուց։

Առավոտյան չորսի մոտ Թիմը դեռ չէր կարողանում քնել, նա վերստին կարդաց միսթր Պեննիի հետ կնքած պայմանագիրը։ Նրա հայացքը ընկավ օրացույցին. «Սեպտեմբերի երեսունը»։ Դա նրա ծննդյան օրն էր։

Թիմը դարձավ տասնհինգ տարեկան։ Այն օրը, երբ նրա տարիքի մյուս տղաները սովորաբար կարկանդակ են ծամում և ծիծաղում, Թիմի համար դարձավ գաղտնի գործարքների և խարդախ մտահղացումների օր։ Եվ դավադիրը, որը հենց նոր մոայլ ծրագրեր էր կառուցում, նորից վերածվեց անժպիտ, տխուր տղայի։ Թիմը հուսահատությունից լաց եղավ։ Հետո նրա աչքերը ամուր փակվեցին, և նա քնեց խոր, գրեթե հանգիստ քնով։

Թերթ քսանհինգերորդ

ԿԱՐՄԻՐ ՏԱՂԱՎԱՐՈՒՄ

Դղյակում օրն անցնում էր խիստ ռեժիմով։ Առավոտյան ուղիղ ութին լսվում էր դռան բախոց, և երիտասարդ սիրալիր սպասավորը, որի հետ Թիմը, ցավոք, չէր կարող նույնիսկ մի քանի խոսք փոխանակել, առանց թույլտվության սպասելու մտնում էր նրա սենյակը և բացում վարագույրները։ Հետո նա բերում էր տաք ջրով ջրամանը և լցնում լվացարանը։

Լվացվելուց և հագնվելուց հետո Թիմը քաշում էր զանգի ասեղնագործած ժապավենը, և սպասավորը նորից էր մտնում, մատուցարանով բերելով նախաճաշը։ Նա սեղանը մոտեցնում էր պատուհանին, նրա վրա դասավորում էր սպասքը, գավաթի մեջ կակաո էր լցնում, ավելացնելով շաքար և սեր, և սպասում էր, ձեռքը աթոռի մեջքին դրած, թե երբ տղան կբարեհաճի նստել։ Այդ ժամանակ նա մոտեցնում էր աթոռը և անաղմուկ անհետանում։

Առաջին օրը սպասավորը լայն ժպտաց տղային։ Բայց արդեն երկրորդ օրվանից նա այլևս երբեք չէր ժպտում։ Նրա դեմքը ավե-

մի շուտ տխուր էր, կարծես նա գիտեր Թիմի դժբախտության մասին։

Այդ բոլոր ծառայությունները Թիմն ընդունում էր լուռ։ Եվ թեպետ նա զգում էր սպասավորի սրտացավությունը, և նա դուր էր գալիս իրեն, միևնույն է, ամեն անգամ գոհ էր մնում, որ նախաճաշի արարողությունն արդեն ավարտված է և ինքը մենակ կարող է նստել պատուհանի մոտ։

Գրեթե անքուն անցկացրած գիշերից հետո, առավոտյան, Թիմը դժվարանում էր վեր կենալ անկողնուց։ Մանավանդ սենյակում գրեթե մութ էր, որովհետև դրսում ուժեղ անձրև էր։ Չնայած դրան, նա անմիջապես վեր կացավ, և լվացվելու ու նախաճաշելու արարողությունն անցավ, ինչպես միշտ։ Ամենուրեք ուղեկցելով բարոնին, Թիմը սովորել էր ինքնատիրապետման և կարգապահության։

Նախաճաշի ժամանակ Թիմը նայում էր պատուհանից դուրս։ Նա տեսնում էր դեպի դղյակը բերող աստիճանների մի մասը։ Գույնզգույն շները պայծառ փայլփլում էին անձրևի տակ։ Եվ այնուամենայնիվ, սառած և անշարժ, նրանք խղճուկ և անօգնական տեսք ունեին։ Թիմը այնպիսի զգացողություն ուներ, որ շուտով ինքն էլ կվերածվի այդպիսի մի շան, եթե իրեն չհաջողվի նորից դառնալ ծիծաղող տղա։

Հեռախոսը զանգահարեց։ Լսափողում լսվեց բարոնի ձայնը։ Նա Թիմին ժամը հինգին հրավիրում էր թեյի Կարմիր տաղավար։

— Լավ, բարոն,— պատասխանեց Թիմը, շարունակելով նախաճաշել։

Ընդ որում նա մտածում էր, թե ինչ կարող է նշանակել հեռախոսային այդ հրավերը։ Մինչ այդ բարոնը, եթե ուզում էր խոսել Թիմի հետ, բարձրանում էր աշտարակ և մտնում նրա սենյակը։ Ըստ երևույթին, որևէ հատուկ պատճառ կար տաղավարում հանդիպելու համար։

Ճաշի ժամանակ, նրա սկիզբը ամեն օր ուղիղ ժամը մեկին ազդարարում էր գոնգը (Թիմը զարդաքանդակ բազրիքներ ունեցող պտուտակաձև սանդուղքով իջնում էր առաջին հարկում գտնվող ճաշասենյակը),— և այսպես, ճաշի ժամանակ բարոնը նրան այլևս ոչ մի խոսք չասաց թեյի հրավերքի մասին, չնայած Թիմը նստած էր նրա կողքը։

Սելեք Բայը, որը գալիս էր դղյակ միայն ճաշից հետո, այս անգամ նույնպես նստած էր սեղանի շուրջ։ Թիմը մտածեց, որ այսօր առավոտյան տեղի է ունեցել ինչ-որ շատ կարևոր խորհրդակցություն։ Սակայն պարոններն այդ մասին ճաշի ժամանակ բնավ չհիշատակեցին։ Դա ընդհանրապես ամենալռակյաց ճաշն էր այն բոլոր ճաշերից, որոնց ներկա էր եղել Թիմը դղյակում այս ամբողջ ժամանակաշրջանում։

Հետճաշյա ժամերը սովորաբար յուրաքանչյուրն անց էր կացնում իր սենյակում։ Թիմը ամենից հաճախ այդ ժամերին կարդում էր—նա այստեղ մի փոքր գրադարան ուներ։ Ամենից ավելի նա սիրում էր կարմրաշագանակագույն քաթանե կազմերով հատորները, որոնք դրված էին ստորին դարակում։ Դրանք Չարլզ Դիկկենսի հատորներն էին։ Նա կլանում էր խեղճ, հարստահարված երեխաների մասին վեպերը, ինչպես Ֆրաու Բեբերի կարկանդակները, բայց ամեն անգամ նրան վախեցնում էր վեպերի բարեհաջող ավարտը։

Երեք վեպ նա պարզապես չկարողացավ վերջացնել, որովհետև նկատեց, որ բանը գնում է դեպի երջանիկ ավարտ։

Այդ անձրևոտ օրը կարծես հատկապես տխուր գրքերի ընթերցանության համար էր։ Բայց Թիմը չէր կարդում։ Նա նստել էր պատուհանի մոտ և նայում էր հեռու՝ գորշ հովտին, որի վրա անվերջ տեղում և տեղում էր անձրևը,— և փորձում էր հիշողության մեջ վերականգնել իր գիշերային ծրագրերը։ Բայց նրա գլուխը կարծես դատարկված լիներ։ Նա չէր կարողանում մտածել։ Նա միայն նայում էր անձրևին, թաց շներին, որ տխուր նստած էին աստիճաններին, և ծածկված սայլին, որը քարշ էր տալիս իշուկը— ինչպես ամեն օր, այդ հետճաշյա ժամին նա սննդամթերքի պաշարներով շարժվում էր դեպի դղյակ։

Հինգից քառորդ պակաս սենյակ մտավ երիտասարդ սպասավորը, որը բերել էր անձրևանոց։ Նրա դեմքի արտահայտությունից Թիմը հասկացավ, որ երիտասարդը պատրաստվում է իրեն ուղեկցել դեպի Կարմիր տաղավար։ Բայց Թիմը վերցրեց նրանից հովանոցը և նշաններով հասկացրեց, որ ուզում է այնտեղ մենակ գնալ։

Հետո նա հագավ թեթև անձրևանոցը, որը գնել էր Աթենքի շուկայում, և դուրս եկավ սենյակից։

Պտուտակաձև սանդուղքի վերևի աստիճանին կանգնած էր

Սելեք Բայը։ Նա սեղմեց Թիմի ձեռքը և միաժամանակ գաղտնի նրան տվեց մի ինքնահոս։ Թեպետ մոտերքում ոչ ոք չկար, Սելեք Բայը այդ արեց պահպանելով բոլոր նախազգուշական միջոցները։

Նա Թիմին շշնջաց.

— Դրանով ստորագրիր։

Եվ նախքան Թիմը կհասցներ որևէ բան հարցնել, ծերուկն արդեն նորից անհետացավ։ Թիմն ինքնահոսը դրեց գրպանը, իջավ աստիճաններով և ամբողջ սրահով անցավ դեպի մուտքի բարձր դուռը, որը նրա առջև բացեց ծեր ծառան։

Բայց դեռ չէր հասցրել Թիմը դուրս գալ անձրևի տակ, երբ ինչ-որ մեկը ձայն տվեց նրան.

— Մի րոպե, պարոն Թալեր։

Այսան հետևից դուրս եկավ սինյոր Վան դեր Թոլենը։ Նա գլխով արեց ծեր ծառային, որ հեռանա, և կիսաձայն հարցրեց.

— Դուք մտածեցի՞ք իմ առաջարկի մասին, պարոն Թալեր։ Դուք խոստանում եք ինձ վճռական ձայնով ձեր բաժնեթղթերը, իսկ ես ձեզ դրա դիմաց նվիրում եմ այդ խոշոր ձեռնարկությունը։ Դուք համաձա՞յն եք։

Քիչ մնաց, որ Թիմը նրան պատասխանի. «Ես արդեն գործարք եմ կնքել միսթր Պեննիի հետ»։ Բայց այդ տխուր, անձրևային օրը ուներ գոնե այն առավելությունը, որ սառեցնում էր առաջին պոռթկումը։ Դրա համար էլ նախքան պատասխանելը, Թիմը հասցրեց մտածել։ Եվ նրա պատասխանը հնչեց ավելի խելամիտ.

— Ես չեմ կարող ձեզ հետ այդ գործարքը կնքել, սինյոր Վան դեր Թոլեն։

— Ափսոս,— ասաց պորտուգալացին, անփոփոխ մնացած դեմքով։

Այլևս նա ոչ մի բան չարտասանեց։ Նա արդեն շրջվեց, որպեսզի գնա, բայց հետո կանգ առավ և ասաց.

— Հուսով եմ, որ դուք մեզ կընդառաջեք գոնե մարգարինի վերաբերյալ մեր ծրագրերո՞ւմ, պարոն Թալեր։

Այս ասելով, նա վերջնականապես գնաց։

Թիմը չէր կարողանում հասկանալ, արդյոք որևէ կապ կա՞ այդ հանդիպումների միջև, թե ոչ։ Սկզբում Սելեք Բայի խորհրդավոր ինքնահոսը, հետո սինյոր Վան դեր Թոլենը՝ մարգարինի մասին իր մշուշապատ խնդրանքով։

«Մնում է միայն, որ միսթր Պեննիին հանդիպեմ»,— մտածեց Թիմը։

Եվ միսթր Պեննին անմիջապես ներկայացավ։

Այն ժամանակ, երբ Թիմը անձրևանոցը ձեռքին սկսեց ցած իջնել լայն քարե աստիճաններով, նա տեսավ, որ միսթր Պեննին, նույնպես անձրևանոցով, կանգնած է քարե շան մոտ, որից հոսում է անձրևաջուրը։

— Շատ խնդրել պահպանել լիակատար գաղտնի մեր փոքր պայմանագիր մասին՝ եսթերդեյ,— դիմեց նա Թիմին։— Ես ուզել ասել «երեկվա»։

— Ես դա նկատի կունենամ,— պատասխանեց Թիմը, ինչպես նա այժմ հաճախ էր պատասխանում։

Միսթր Պեննին ըստ երևույթին էլի ինչ-որ բան էր ուզում ասել, բայց ոչ մի կերպ չէր համարձակվում խոսել այդ մասին։ Գլխով անելով Թիմին, նա հեռացավ և սկսեց աստիճաններով բարձրանալ։

Թիմը շփոթմունքի մեջ էր։ Դատելով ըստ ամենայնի, նրա առաջիկա զրույցը բարոնի հետ բաժնետիրական ընկերության բոլոր անդամների համար բացառիկ կարևոր նշանակություն ուներ։ Հակառակ դեպքում ինչու պետք է նրանք մեկը մյուսի հետևից կանգնեցնեին իրեն ճանապարհին և այդքան տարօրինակ զրույցներ վարեին։

Խորը մտազբաղության մեջ Թիմը քայլում էր դեպի տաղավար։

Կարմիր տաղավարը գտնվում էր զբոսայգու միջին դարատափի վրա։ Երևի այդպիսի անվանում նա ստացել էր այն կարմիր աքաղաղի պատճառով, որը եզրափակում էր նրա գմբեթը, որովհետև տաղավարը ոչ թե կարմիր էր, այլ սպիտակ։ Խուզված թփերն ու ծառերը հիմա նման էին նրբագեղ պարոնների, որոնց անակնկալ բռնացրել էր անձրևը։ Թվում էր, թե նրանք լրիվ սառել են, սպասելով ինչ-որ մեկի օգնության։ Թիմը բավական արագ անցավ դեպի տաղավարը տանող ծառուղին։ Բարոնը բաց ապակե դռան մոտ կանգնած, արդեն սպասում էր նրան։

— Դուք երեք րոպե ուշացել եք,— ասաց նա։— Ձեզ ուշացրի՞ն։

— Այո,— պատասխանեց Թիմը, և բարոնը նրան այլևս հարցուփորձ չարեց։

Տաղավարի կլոր սրահում դրված էր թեթև կահույք, որը երեսապատված էր դեղին և բաց շագանակագույն շերտավոր մետաքսով։ Սպասուհին ռուսական ինքնաեռից թեյ լցրեց գավաթների մեջ և արդեն պատրաստվեց գնալ, երբ Թիմը նկատեց, որ նա հովանոց չունի և ձայն տվեց.

— Սպասեցեք, սպասեցեք մի վայրկյան։

Երբ կինը շրջվեց, Թիմը նրան մեկնեց իր հովանոցը։

Սպասուհին դրանից գրեթե վախեցած էր թվում։ Շփոթված՝ հարցական հայացք գցեց բարոնին։ Բայց վերջինս ծիծաղեց և ձեռքով նրան հասկացրեց, որ հովանոցի հետ միասին անհետանա, որը նա և անհապաղ կատարեց։

— Ձեր փոքրիկ սիրալիրությունները, պարոն Թալեր, մարդկանց վրա մեծ տպավորություն են գործում։ Շարունակեցեք նույն ոգով, միայն չափը մի անցկացրեք, մնացեք որոշակի սահմաններում։

Բարոնը օգնեց, որ Թիմը անձրևանոցը հանի, և նրանք սեղան նստեցին։

— Բանն այն է, պարոն Թալեր,— նկատեց բարոնը, որ ամբողջ մարդկությունը բաժանվում է երկու մասի՝ ստրուկների և տերերի։ Մեր ժամանակներում աշխատում են ջնջել այդ սահմանը, բայց դա շատ վտանգավոր է։ Պետք է լինեն մարդիկ, որոնք մտածում են և հրամայում, և մարդիկ, որոնք կատարում են այդ հրամանները առանց մտածելու։

Նախքան որևէ բան պատասխանելը, Թիմը հանգիստ խմեց իր թեյը։

— Երբ ես դեռ փոքր էի, բարոն, հայրս մի անգամ ինձ ասաց. «Փոքրիկ, մի հավատա ստրուկների և տերերի մասին հեքիաթներին։ Կան խելոք և հիմար մարդիկ—ահա և ամենը։ Եվ արհամարհիր հիմարությունը, եթե նա չար է»։ Այն ժամանակ ես դա գրեցի իմ դպրոցական տետրի մեջ և այդ պատճառով էլ հիշում եմ մինչև հիմա։

— Ձեր հայրը ըստ էության ասել է այն, ինչ ասում եմ ես, պարոն Թալեր։ Որովհետև խելոքները հենց տերերն են, իսկ հիմարները՝ ստրուկները։

— Սելեք Բայը ինձ պատմել է,— առարկեց Թիմը,— որ շատ երկրներում տեր են դառնում միայն նրանք, ովքեր պատահմամբ ծնվում են տեր։

— Ծնունդը պատահականություն չէ,— մռայլ փնթփնթաց Անատասը։— Ի դեպ, պարոն Թալեր, Սելեք Բայը կոմունիստ է, միայն ինքն այդ մասին չգիտե։ Բայց ես շատ լավ գիտեմ, որ նա Հարավային Ամերիկայում ֆինանսավորում է այն բանակը, որը պետք է տապալի մեր նշանակած պրեզիդենտին։ Եվ, բացի դա, ես գիտեմ, որ նա պատրաստվում էր Աֆղանստանում դանակ-մկրատ սրողներին ոտքի հանել մեր լիազոր Ռամադուլլայի դեմ։

— Դուք ա՞յդ էլ գիտեք։

Թիմի դեմքը այնպիսի զարմանք արտահայտեց, որ բարոնը ուրախ ծիծաղեց։

— Ես շատ ավելին գիտեմ, քան դուք ենթադրում եք,— բացականչեց նա ծիծաղելով։— Ես նույնիսկ գիտեմ ձեր և միսթր Պեննիի պայմանագրի մասին, պարոն Թալեր։ Եվ ես ենթադրաբար գիտեմ, թե ինչպիսի առաջարկ է ձեզ արել սինյոր Վան դեր Թոլենը։

Այս անգամ Թիմը քիչ մնաց խեղդվի թեյով։ Միթե Անատասը կարողանում է կարդալ մտքերը։

Բայց բարոնի տեղյակությունը շատ ավելի պարզ էր բացատրվում։ Նա ինքը այդ մասին պատմեց Թիմին։

— Այս դղյակի յուրաքանչյուր սպասավորը միաժամանակ ինձ մոտ կատարում է նաև լրտեսի պարտականություններ։ Դուք չնկատեցի՞ք, պարոն Թալեր, որ ձեր սեղանին նոր ծծան էր դրված։

— Ոչ։

— Իսկ այդպիսի մանրուքները միշտ պետք է նկատել։ Եթե ձեր հին ծծանը պահենք հայելու դիմաց, նրա վրա շատ հեշտ կարելի է կարդալ ձեր պայմանագիրը միսթր Պեննիի հետ։

Այդ վայրկյանին Թիմը վերջնականապես հասկացավ, որ «գործերի» մեջ ինքը երբեք չի կարողանա հասնել բարոնին։ Այդ գիշերվա ծրագրերն ու երազանքները ցրվեցին, ինչպես նրա թեյի գոլորշին։ Նա տանուլ տվեց իր ծիծաղի շուրջը ծավալած պայքարի հերթական տուրը։

— Դուք պատրաստվում եք Սելեք Բայի և միսթր Պեննիի դեմ ինչ-որ բա՞ն ձեռնարկել։

Բարոնը նորից ծիծաղեց և ասաց.

— Ոչ, թանկագինս։ Ինձ լրիվ բավարարում է և այն, որ ես տեղյակ եմ գործերին։ Իհարկե, ես որոշ չափով վշտացա, իմանա-

լով նրանց մտադրությունները։ Բայց նրա համար ես գնեցի ձեր ծիծաղը, որ սրտիս շատ մոտ չընդունեմ դառնությունները։ Նա թեթևացնում է իմ վիճակը և շնորհում ազատության զգացում։ Ինչպես տեսնում եք, պարոն Թալեր, ես ձեր ծիծաղից օգտվում եմ ռացիոնալ ձևով։

— Ինձ թվում է, որ դուք աշխարհում ամեն ինչից օգտվում եք ռացիոնալ ձևով, բարոն։

— Երկու բացառությամբ, պարոն Թալեր։ Իմ շահագրգռվածությունը նկարների հարցում չունի ոչ մի օգտակար նպատակ, ճիշտ այնպես, ինչպես և իմ շահագրգռվածությունը կրո... Ոչ...,— ընդհատեց նա ինքն իրեն,— իմ շահագրգռվածությունը կրոնի հարցում նույնպես ունի իր օգտակար նպատակը։

Թիմը շտապեց փոխել խոսակցության նյութը, չէ որ այս անգամ սենյակում համապատասխան ջահ չկար։ Նա հարցրեց.

— Իսկ ի՞նչ կլինի այն պայմանագիրը, որ ես կնքել եմ միսթր Պեննիի հետ։

— Գիտեք ինչ, պարոն Թալեր, կհաջողվի՞ միսթր Պեննիին ստանալ վճռական ձայնի իրավունքով բաժնեթղթերը թե ոչ, կախված կլինի միայն այն բանից, թե դուք ձեր քսանմեկ տարին լրանալուց հետո իրո՞ք կժառանգեք իմ ողջ ունեցվածքը, այդ թվում նաև այդ բաժնեթղթերը։ Պայմանագրի մնացած կետերը, իհարկե, մնում են ուժի մեջ։ Այս օրվանից հաշված, ուղիղ մեկ տարի անց ձեզ կպատկանի մեր համբուրգյան նավագնացության բաժնեթղթերի մեծ մասը։ Դուք, ըստ երևույթին, կուզենայիք վերականգնե՞լ պարոն Ռիկերտին իր պաշտոնում և փրկել նրա արատավորված պատի՞վը։

— Այո,— ուղղակի պատասխանեց Թիմը։

— Ինչ կա որ, հուսանք, որ մեկ տարուց նա դեռ ողջ և առողջ կլինի։

Անատասի իբր ի միջի այլոց արած վերջին դիտողությունը վախեցրեց Թիմին։ Բարոնը, անկասկած, ընդունակ էր ամեն ինչի, անգամ այն բանին, որ որևէ միջոցով վերջ տար պարոն Ռիկերտի կյանքին։ Ուրեմն, ամենախելոքն այն կլինի, որ Թիմը ձևացնի, թե պարոն Ռիկերտի ճակատագիրը այնքան էլ չի հուզում իրեն։ Այդ պատճառով էլ նա ասաց.

— Ինձ համար տհաճ է, որ պարոն Ռիկերտը զրկվեց պատշոնից մեր կարճատև հեռախոսային խոսակցության հետևան-

քով։ Եվ պայմանագիրը միսթր Պեննիի հետ ես կնքեցի հենց այդ պատճառով։

Անատասը փոքր բյուրեղապակյա գրաֆինից ռոմ լցրեց իր թեյի մեջ և հարցրեց.

— Ձեզ համար էլ մի կում լցնե՞մ։

Թիմը գլխով արեց։ Բարոնը նրա համար էլ ռոմ լցրեց և ասաց.

— Ես ուզում եմ ձեզ մի առաջարկություն անել, պարոն Թալեր։ Մեկ տարվա ընթացքում ոչ մի հարաբերություն մի պահ-պանեք պարոն Ռիկերտի և Համբուրգի ձեր մյուս բարեկամների հետ։ Այդ դեպքում ես կհոգամ այն մասին, որ համբուրգյան նա-վագնացության բաժնեթղթերը մեկ տարուց հետո իսկապես անց-նեն ձեր ձեռքը։ Համաձա՞յն եք։

— Այո,— պատասխանեց Թիմը մի փոքր լռելուց հետո։— Ես համաձայն եմ։

Մտքում նա ասաց. «Եվս մեկ տարի առանց ծիծաղի — դա, իհարկե, բավական ծանր է։ Բայց ամբողջ կյանքում առանց ծի-ծաղի մնալը—անտանելի է։ Պետք է այդ մեկ տարին դիմանալ։ Գուցե դրա վերջում ես կհասկանամ, թե ինչպես հիմարացնեմ բարոնին։ Իհարկե, «գործերի» իմաստով ես երբեք նրա հետ չեմ կարողանա համեմատվել, բայց հնարավոր է, որ ինձ կհաջողվի գտնել նրա թույլ տեղը, որևէ շատ հասարակ բանի վրա բռնացնել նրան»։

Եվ, կարծես կռահելով Թիմի մտքերը, Անատասը անմիջա-պես ասաց.

— Ես ձեզ առաջարկում եմ, պարոն Թալեր, այդ տարին նվիրել շուրջերկրյա ճանապարհորդության։ Մենք ճանապարհոր-դության կմեկնենք երկուսով, ոչ թե իբրև ֆիրմայի ներկայացու-ցիչներ, այլ պարզապես որպես մասնավոր անձինք։ Դա իմ նվերն է ձեզ, ծննդյան օրվա առթիվ։ Ի դեպ, ընդունեք իմ սրտագին շնորհավորանքները, թեպետ և որոշ ուշացումով։

Լսվեց զրնգուն ելևէջներով ծիծաղը, և Թիմը զգաց սառը ձեռքի սեղմումը։

— Շատ շնորհակալ եմ,— ասաց Թիմը, խմելով մի կում տաք թեյ։

— Իսկ դուք գիտե՞ք, պարոն Թալեր, որ դուք հիմա խմում էիք ղեկորդ Ջոննիի ռոմը։

— Ի՞նչ։

— Դուք Ջենովայում մոռացել էիք այն երկու շիշ ռոմը, որը շահել էիք ղեկորդից։ Դրանք բերեցին հյուրանոց, և ես հրամայեցի այստեղ բերել, որպեսզի դուք կարողանաք վայելել ձեր շահածը։ Մանրուքներում ես միշտ բծախնդիր եմ։

Թիմը ոչինչ չպատասխանեց։ Միայն նորից մտքում կրկնեց Ջոննիի ասացվածքը. «Սովորեցրու ինձ ծիծաղել, ղեկորդ»։

Անատասը կտրեց նրա միտքը.

— Այժմ անցնենք գործի, պարոն Թալեր։ Խոսենք մարգարինի մասին։

— Լավ, բարոն, անցնենք գործի։

Թերթ քսանվեցերորդ

ՄԱՐԳԱՐԻՆ

Բարոնը վեր կացավ տեղից և, ձեռքերը մեջքի հետևում պահած, սկսեց հետ ու առաջ քայլել տաղավարում։ Նա ոչ մեծ ճառով դիմեց Թիմին.

— Ձեզ հայտնի է, պարոն Թալեր, որ մեր կողմից ծրագրված տեսակային մարգարինը պետք է ունենա գրավիչ և հիշվող անուն։ Ցանկալի է, որ նա գնորդի հիշողության մեջ կապվի որևէ իրեն լավ ծանոթ բանի հետ։ Մենք երկար խորհրդակցեցինք ընտրելով այդ անունը, քանի որ դա մեզ համար շափազանց էական է։ Ապրանքի արտահայտիչ անունը—մաքուր շահույթ է նշանակում։

Թիմը գլխով արեց։ Նա դեռևս չէր հասկանում, թե ինչ կապ ունի այդ բոլորը իր հետ։ Բայց նա հիմա պետք է դա իմանար։

— Այն բանից հետո, երբ բազմաթիվ տարբեր անուններ մերժվեցին...— բարոնը շարունակում էր հետ ու առաջ քայլել տաղավարում,— Սելեք Բայը առաջարկություն արեց, որը մենք միաձայն համարեցինք ամենահաջողը. պետք է ձեզ ասեմ, որ Սելեք Բայը, չնայած իր որոշ տարօրինակ գաղափարներին, շատ օգտակար մարդ է մեզ համար։ Բայց դա հենց այնպես, խոսքի բերումով։ Ուզո՞ւմ եք իմանալ, թե ինչպես նա առաջարկեց անվանել մարգարինը։ «Թիմ Թալեր»։

Անատասը կանգ առավ և ակնոցի մուգ ապակիների միջից նայեց տղային. այժմ նա գրեթե երբեք ակնոցը չէր հանում։

Թիմի դեմքը մնում էր հանգիստ։ Թվում էր, թե նա միանգամայն անտարբեր մնաց Սելեք Բայի առաջարկության նկատմամբ, գուցե նույնիսկ ոչ լրիվ հասկանալով։ Այդ պատճառով բարոնը սկսեց նկարագրել այդ առաջարկության շահավետությունը։

— Դուք պետք է հասկանաք, պարոն Թալեր, որ դեռևս երբեք և ոչ մի տեղ աշխարհում տեսակային մարգարին չի եղել։ Եթե մենք ինչպես հարկն է լայն տեսականիով հարվածը նախապատրաստած հանկարծակի գրոհենք գնորդներին, մեզ կհաջողվի տիրել մարգարինի համաշխարհային շուկային։ Դա նշանակում է, պարոն Թալեր, որ ձեր անունը կլինի աշխարհի մարդկանց շուրթերին՝ Նյու Յորքից մինչև Տոկիո, Ստոկհոլմից մինչև Բաղդադ։ Նույնիսկ ամենախղճուկ խանութը ամենահեռավոր պատահական գյուղում կվաճառի ձեր անունը կրող մարգարինը։ Եվ ամենուրեք կախված կլինեն ծիծաղող տղայի երկնագույն լուսանկարները դեղին ֆոնի վրա՝ ձեր նկարները։

Այդ վայրկյանից Թիմը ամբողջովին լսողություն դարձավ։ Նա կամաց հարցրեց.

— Բայց ես ինչպե՞ս եմ ծիծաղելու, եթե չեմ կարող ծիծաղել։

— Դա արդեն այլ հարց է, պարոն Թալեր։ Եվ ես հիմա կանցնեմ այդ հարցին։ Բայց նախ և առաջ վերջացնենք գլխավորը. դուք համաձա՞յն եք մարգարինի անվան հետ։

Թիմը միանգամից չպատասխանեց։

Հիմա նա հասկացավ, թե ինչու էր բաժնետիրական ընկերության համար այդքան շահավետ մարգարինի անունը։ Ինքը, Թիմ Թալերը, հռչակված հարուստ ժառանգ է, և իր անունը, նկարները այս կամ այն առիթով հայտնվում են ողջ աշխարհի թերթերում։ Ուրեմն, ոչ թե մարգարինը պետք է հռչակի նրա անունը, այլ հակառակը— նրա արդեն հայտնի անունը պետք է ծառայի մարգարինի հռչակին։

— Այդ հարցը ես պետք է անմիջապե՞ս լուծեմ, բարոն։

— Այո, այսօր, պարոն Թալեր։ Այս տաղավարում։ Թեպետ մարգարինը շուկա կհանվի միայն մեկ տարուց, կարևորագույն որոշումները պետք է ընդունված լինեն առաջիկա օրերին։ Չէ որ շուկայի վրա գրոհի նախապատրաստման համար ստիպված կլի-

նենք ահռելի գումարներ ծախսել։ Մեր ներդրումն այնքան մեծ է, որ ողջ մեր բաժնետիրական ընկերությունը կարող է հօդս ցնդել։

Թիմը ձեռքը մտցրեց պիջակի գրպանը և հանկարծ շոշափեց Սելեք Բայի ինքնահոսը։ Անատասի ասածը, որ մարգարինի պատճառով բաժնետիրական ընկերությունը կարող է հօդս ցնդել, դեռ հնչում էր նրա ականջներում։ Գուցե Սելեք Բայը ուզում էր այս ինքնահոսի միջոցով նպաստել այն բանին, որ ընկերությունը «հօդս ցնդի»։ Իսկ եթե Սելեք Բայը իր գաղտնի դաշնակի՞ցն է։

Իբր թե մտահոգված, Թիմը գրպանից հանեց ինքնահոսը և սկսեց խաղալ նրանով, որ անհրաժեշտ բոպեին գրիչն իր ձեռքում լինի։

Նա ոչինչ չի կորցնի, եթե մարգարինը իր անունը կրի։ Բայց դրա փոխարեն Սելեք Բայը իր կողմից կլինի, իսկ դա շատ մեծ բան կլինի։

Եվ Թիմը որոշեց վստահել Սելեք Բային։

— Բարոն, հաղորդեք բոլոր պարոններին, որ ես համաձայն եմ։

Անատասը զգալիորեն թեթևացած շունչ քաշեց։ Ասենք, նա միանգամայն անվրդով տեսք ուներ։

— Այդ դեպքում,— ասաց նա,— դուք պետք է ստորագրեք ևս մեկ պայմանագիր։ Ահա այն։

Դավաթները մի կողմ քաշվեցին, և սեղանի վրա, Թիմի առջև հայտնվեցին պայմանագրի երկու օրինակը։ Բարոնը ենթադրում էր, որ Թիմը նախ գոնե կկարդա տեքստը։ Բայց Թիմը, վախենալով, որ Անատասը նրան ուրիշ գրիչ կառաջարկի, անմիջապես Սելեք Բայի ինքնահոսով դրեց իր ստորագրությունը։

Դրանից հետո յուրաքանչյուր թերթը երկու անգամ ստորագրեց բարոնը—մեկը՝ բաժնետիրական ընկերության անունից, մյուսը՝ որպես Թիմի խնամակալ։ Թիմը դրան ոչ մի ուշադրություն չդարձրեց։

— Խմենք «Թիմ Թալեր» մարգարինի կենացը, Թիմ Թալեր։

Բարոնը բուֆետից վերցրեց երկու երեսակված բաժակներ և ռոմ լցրեց դրանց մեջ։ Բաժակները զրնգոցով զարկվեցին իրար։ Թիմն ինքն էլ չգիտեր, խմում է իր երջանկությա՞ն, թե՞ իր դժբախտության կենացը։ Այն, որ ռոմը Ջոննիի շշից էր, նրան թվում էր լավ նախանշան։

Բարոն Անատասը նորից նստեց իր տեղը և սկսեց պատմել,

թե ինչպես է նա պատկերացնում «Թիմ Թալեր» մարգարինի ռեկլամը։

— Մենք բոլորին կպատմենք, թե ինչպես նեղ նրբանցքի աղքատ փոքրիկ տղան հուզեց բարոնի սիրտը, ինչպես վերջինս նրան դարձրեց իր ամբողջ ունեցվածքի ժառանգը և թե ինչպես այդ տղան հոգաց, որ նեղ նրբանցքների բոլոր աղքատները կարողանան իրենց հացին քսել որակյալ և էժան մարգարին։

— Բայց չէ որ դա ամբողջովին սուտ է,— զայրացավ Թիմը։

— Դուք ուղղակի Սելեք Բայի նման եք խոսում,— շունչ քաշեց Անատասը։— Ռեկլամը երբեք սուտ չի լինում։ Ամբողջ բանը նրանումն է, թե ինչպես ես լուսաբանում փաստերը։

— Լուսաբանում փաստե՞րը։

Բարոնը գլխով արեց։

— Գիտեք ինչ պարոն Թալեր, չէ որ ինչ վերաբերվում է բուն փաստերին, ապա դրանք բոլորը համընկնում են. դուք իսկապես ձեր մանկությունը անց եք կացրել նեղ նրբանցքում, իսկապես դարձել եք բարոնի ժառանգը և նույնիսկ տեսակային մարգարինն էլ ձեր դաղափարն է։ Բանը միայն նրանումն է, որ այդ փաստերին ճիշտ լուսաբանում տրվի։ Եվ ահա մեր սրտաճմլիկ հեքիաթը պատրաստ է։ Դա շատ լավ ռեկլամ է։ Մրցակիցները կկատաղեն։ Այդ հարցում դուք կարող եք լիովին վստահել մեզ, պարոն Թալեր։ Իսկ հիմա ավելի լավ է խոսենք ձեր լուսանկարի մասին։

— Ծիծաղող տղայի՞ լուսանկարի մասին։

— Այո, պարոն Թալեր։ Ես սկսնակ ֆոտոսիրող եմ և ուզում եմ այս անգամ փորձել իմ ուժերը։ Ես կլուսանկարեմ ձեզ։ Ամեն ինչ արդեն նախապատրաստված է։

Անատասը մի կողմ քաշեց վարագույրը, որի հետևում, չգիտես ինչու Թիմին թվում էր, թե պետք է փոքրիկ խոհանոց լիներ։ Բայց պարզվեց, որ այնտեղ դրված է շտատիվի վրա ամրացված լուսանկարչական ապարատ, իսկ նրա կողքին՝ աթոռ, որի մեջքին կախված էր մի մաշված տղայական ջեմպր։ Բայց ամենից ավելի Թիմին զարմացրեց աթոռի հետևի հսկայական ստենդը։ Դա նրա հարազատ նրբանցքի հսկայական լուսանկարն էր։ Ճիշտ նրբանցքի մեջտեղում գտնվում էր նրա հին տան դուռը։ Ամեն ինչ, նույնիսկ մանրուքները, կարծես իսկական լինեին։ Թիմը ճանաչեց անգամ հարևան տան պատի այն նեղ անցքը, որտեղ

Նա երբեմնի պահել էր հինգ մարկանոց դրամը։ Նրան թվաց, որ զգում է պղպեղի, չամանի ու անիսոնի հոտը։

— Խնդրում եմ, հագեք այս ջեմպրը և կանգնեք ստենդի առջև, պարոն Թալեր,— ասաց Անատասը, զգուշությամբ տաղավարի կենտրոնը տեղափոխելով շատրվանի վրա ամրացված լուսանկարչական ապարատը։

Կարծես երազում Թիմը կատարեց այն ամենը, ինչի մասին նրան խնդրեց Անատասը։ Անցյալի պատկերները հետևում էին միմյանց նրա հիշողության մեջ։ Հայրը։ Խորթ մայրը։ Գունատ Էրվինը։ Խորթ մոր այն ընկերուհին, որ առավոտները գալիս էր նրա մոտ սուրճ խմելու, ա՛յ ձախ կողմի տնից։ Իսկ աջ կողմում՝ Ֆրաու Բեբերի «Հաց, հրուշակեղեն» խանութը։ Կիրակի օրերը։ Զիարշավները։ Հարցաքննությունը։ Վանդակավոր զգեստով պարոնը։ Պայմանագիրը։

Թիմը մի պահ նստեց։ Անատասը ինչ-որ բան էր անում լուսանկարչական ապարատով։

Վերջապես ամեն ինչ պատրաստ էր։ Բարոնը դիտավորյալ Թիմի հագած ջեմպրին ընդգծված անփույթ տեսք տվեց, մի փոքր խառնեց Թիմի մազերը և անհրաժեշտ դիրքով նրան կանգնեցրեց ապարատի դիմաց, նրբանցքի լուսանկարի առջև։ Հետո մի քանի քայլ նահանջելով, թաքնվեց լուսանկարչական ապարատի ետևում։

— Այսպես լավ է, պարոն Թալեր։ Այսպես էլ կանգնեք։ Իսկ հիմա կրկնեք իմ հետևից. «Ես փոխարինաբար վերցնում եմ իմ ծիծաղը, միայն կես ժամով։ Գրավականն իմ կյանքն է»։

— Ես փոխարինաբար վերցնում եմ իմ ծիծաղը...— Թիմի ձայնը կտրվեց։

Բայց բարոնը անմիջապես վրա հասավ նրան։

— Խոսեք մաս-մաս, ընդմիջումներով, այդպես ձեզ համար ավելի հեշտ կլինի։ Եվ այսպես. «Ես փոխարինաբար վերցնում եմ իմ ծիծաղը...»

— Ես փոխարինաբար վերցնում եմ իմ ծիծաղը...

— «Միայն կես ժամով»։

— Միայն կես ժամով։

— «Գրավական է...»

— Գրավական է...

— «Իմ կյանքը»։

— ...Իմ կյանքը։

Հազիվ էր Թիմը հասցրել արտասանել վերջին բառը, երբ Անատասը մտցրեց գլուխը սև ծածկոցի տակ։ «Ինչպես Պետրուշկան տիկնիկային թատրոնում»,— մտածեց Թիմը ծիծաղելու անհաղթահարելի ցանկություն զգալով և... ծիծաղեց։ Ծիծաղը բարձրացավ ինչ-որ խորքից, խուտուտ տվեց կոկորդը... և Թիմը այնպես ծիծաղեց, որ աչքերից արտասուքներ հոսեցին։ Տաղավարը կարծես դղրդում էր ծիծաղից, նրա պատուհանները զրնգում էին, կողքին դրված աթոռը դողում էր, կարծես ծիծաղելով Թիմի հետ միասին։ Թվում էր, թե հիմա աշխարհը նորից ձեռք կբերի հավասարակշռությունը։ Թիմը ծիծաղո՞ւմ էր։

Բարոնը սև ծածկոցի տակ թաքնված սպասեց, որ այդ ծիծաղը վերջանա։ «Յուպիտերը» միացնելու սպասող նրա ձեռքը դողում էր։

Թիմը աստիճանաբար հանգստանալով, ծամածռվեց և հարցրեց.

— Սա՞ է այն մարգարինե ժպիտը, որը ձեզ պետք է, բարոն։

Նրա սիրտը ուրախ էր, թեթև, հանգիստ։ Բարոնը դեռ շարունակում էր նրան թվալ կրկեսային Պետրուշկա։ Նա չէր հավատում, որ այդ բոլորը միայն կես ժամ է։ Նա համոզված էր, որ իր ծիծաղը հիմա ընդմիշտ իր հետ կլինի։ Անատասի՝ սև ծածկոցի տակ նստած, անծիծաղ բարոնի նկատմամբ նա զգում էր կարեկցանքի նման մի բան։ Նույնիսկ գոռացող, խեղդված ձայնը, որը հիմա իրեն ցուցմունքներ էր տալիս, Թիմի մոտ առաջացնում էր ավելի կարեկցանք, քան ծաղր։ Նա հնազանդ առաջ դրեց աջ ոտքը, մի քիչ թեքեց գլուխը, ժպտաց Անատասի խնդրանքով ու ասաց. «Մի կտոր ընկույզով տորթ»,— և նրա հիշողության մեջ այդ բոպեին կարծես զանգակ զրնգաց։ Իսկ երբ բարոնն անջատեց «Յուպիտերը», Թիմը նորից աջ ոտքը միացրեց ձախին և թեթևացած ծիծաղեց.

— Հուսով եմ, որ նկարը հաջող ստացվեց, բարոն։

Թիմը մի լավ ձգվեց հոգնեցնող դիրքով կանգնելուց հետո և ուրախ ժպտաց լուսանկարչական ապարատի օբյեկտիվին։ Անատասը դեռ շարունակում էր ինչ-որ բան անել սև ծածկոցի տակ։ Նա իր թաքստոցից հայտարարեց, որ մեկ նկարի հետ չի կարելի հույսեր կապել։ Անհրաժեշտ է առնվազն ևս երեք նկար հանել։

— Եվ այդ բոլորը կես ֆունտ մարգարինի համա՞ր,— ծիծաղեց Թիմը։

Բայց նա չէր դիմադրում բարոնին, այլ ընդհակառակը, հնազանդ հետևելով նրա դիտողություններին, ամեն անգամ անհրաժեշտ կեցվածք էր ընդունում և հնարավորություն էր տալիս նրան որքան կամենա նկարել իրեն՝ ողջ հասակով մեկ և ժպտացող։

Չորրորդ և վերջին նկարից հետո Թիմը այնպես էր հոգնել կեցվածք ընդունելուց, որ նրան թվաց, թե արդեն անցել է առնվազն մեկ ժամ։ Իրականում կես ժամը լրանալուն պակասում էր դեռևս երկու րոպե, բայց այդ մասին նա անգամ չէր էլ մտածում։ Թիմը չէր կռահում և այն, թե ինչու Անատասը շարունակում էր իր դեմքը պահել սև ծածկոցի տակ։ Նա մոտեցավ լուսանկարչական ապարատին, մի կողմ նետեց սև ծածկոցը և ծիծաղելով հարցրեց.

— Այդ ի՞նչ է բարոն, դուք այստեղ գաղտնի արդեն մարգարի՞ն եք պատրաստում։

Հանկարծակի նրա ծիծաղը կտրվեց՝ նրան էր նայում նեղ սեղմված շրթունքներով և աչքերին փոխարինող ակնոցի ապակիներով չար դեմքը՝ վանդակավոր զգեստով պարոնի դեմքը։

Թիմը հասկացավ, որ սեփական ծիծաղը թյուրիմացության մեջ էր գցում իրեն. այս մարդը երբեք նրան չի վերադարձնի իր ծիծաղը, իր ազատությունը։ Այդ մարդը սարսափելի էր։

Բայց Թիմի ծիծաղը, որը հիմա լցրել էր նրա ողջ էությունը, մեկ անգամ էլ խաբեց նրան, և նա հեգնանքով բղավեց բարոնին.

— Սատանա մի ձևացեք, բարոն։ Դուք տանուլ տվեցիք։ Այլևս դուք ինձ չեք տեսնի։

Նույն վայրկյանին Թիմը հայտնվեց ապակեպատ դռան մոտ, դեպի իրեն քաշեց այն և, միայն մի հին ջեմպր հագած, դուրս վազեց զբոսայգու դարատափի վրա հորդացող անձրևի տակ։

Չնայած բարոնը նրան բռնելու ոչ մի փորձ չկատարեց, Թիմը սկսեց խելագարի նման վազել նեղ արահետով, որի երկու կողմերում ծակծկող թփեր էին տնկված։ Այդ արահետը տանում էր տաղավարից դեպի զբոսայգու խառնիճաղանջ արահետները։

Նա վազեց ձախ, աջ, առաջ, ապա նորից դեպի աջ, հանկարծ հայտնվեց անանցանելի թփուտների խիտ կանաչ պատի առջև, սլացավ հետ և ընկավ այն փակուղու մեջ, որից հենց նոր էր դուրս պրծել, նորից վազեց հետ, ձեռքով սրբեց անձրևի ջրով

լցված աչքերը և հասկացավ, որ անհուսորեն խճճվել է այդ տարօրինակ լաբիրինթոսի մեջ, որից, թվում էր, միայն մի ելք կար՝ տաղավարի մուտքը։

Եվ հանկարծ Թիմը ամբողջ մարմնի մեջ այնպիսի ծանրություն զգաց, կարծես նրա և՛ ոտքերը, և՛ ձեռքերը, և՛ գլուխը լցվեցին սև ջրով։ Նա ֆիզիկապես, իր ողջ էությամբ զգաց, ինչպես իրեն լքեց իր ծիծաղը։ Նա կանգնած էր կարծես անդամալույծ եղած, այս բանտի կանաչ պատերի միջև, և նրա վրայից թափվում էին անձրևի կաթիլները։ Անձրևի շիթերը առվակներ էին կազմում նրա ոտքերի մոտ։ Շուրջն ամեն ինչ հոսում էր, չփչփում՝ անհատնելի, անսահման արտասուք։ Իսկ մեջտեղում կանգնած էր փոքրիկ Թիմը՝ լուրջ, տխուր դեմքով։

Բայց հանկարծ նրա ծիծաղը նորից լսվեց կողքին— այնպես, ինչպես միշտ, երանգներով, պտույտներով, երջանիկ, շնչահեղձ պոռթկումներով։ Թիմը չգիտեր ինքն է ծիծաղում, թե դա իր ծիծաղն է ինչ-որ տեղ մոտերքում արձագանքում բարձր կանաչ պատերի ներսում։ Բայց ամեն ինչ շատ ավելի պարզ էր բացատրվում։ Նրա ետևում կանգնած էր Անատասը։

— Դուք ընկել եք այսպես կոչվող լաբիրինթոսը, պարոն Թալեր, հուսախաբությունների այգին։ Գնանք, ես ձեզ դուրս կբերեմ։

Թիմը հնազանդ թույլ տվեց, որ բարոնը բռնի իր ձեռքը և տանի տաղավար, սրբի, չորացնի նրան և զգեստը փոխի, հնազանդ թույլ տվեց սպասավորներից մեկին, որ հովանոցը գլխին պահած իրեն տանի դղյակ։

Եվ միայն աշտարակի իր սենյակում նա սկսեց աստիճանաբար ուշքի գալ։ Բայց այս անգամ նույնիսկ արտասուքները չթեթևացրին նրան։ Նրան համակեց սառը կատաղությունը։ Կատաղի հուսահատության նոպայում նա դարակից վերցրեց բարձր ոտիկով կարմիր ըմպանակը և այնպիսի ուժով սեղմեց ձեռքի մեջ, որ ձեռքից արյուն հոսեց։

Թիմը անտարբեր նայում էր, թե ինչպես է ապակին զրնգոցով թափվում հատակին։ Հետո նա ձգեց զանգի ասեղնագործ ժապավենը և, երբ հայտնվեց սպասավորը, ձեռքով ցույց տվեց փշրանքները։

Սպասավորը հավաքեց և դուրս տարավ ապակին, լվաց և կապեց Թիմի ձեռքը ու առաջին անգամ նրան ասաց չորս բառ.

— Ես չէ լրտես, խնդրեմ։

— Գուցե և այդպես է,— պատասխանեց Թիմը։— Գուցե դա և ճիշտ է։ Համենայն դեպս, շնորհակալություն, որ դուք այդքան սիրալիր եք ինձ հետ։

Այդ վայրկյանին դռան շեմին երևաց Սելեք Բայը։ Նա սենյակից դուրս ուղարկեց սպասավորին, հետո հայացքը սևեռեց Թիմի վիրակապած ձեռքին։

— Դու չստորագրեցի՞ր։ Որևէ բա՞ն է պատահել։

— Առանձնապես ոչինչ, Սելեք Բայ։ Ես ստորագրեցի։

— Իսկ որտե՞ղ է ինքնահոսը։

— Այստեղ, գրպանումս։ Բարի եղեք ինքներդ հանեք։

Ներուկը գրպանից հանեց ինքնահոսը, և Թիմը հարցրեց.

— Իսկ ինչի՞ համար էր այդ ինքնահոսը։

— Նրա մեջ այնպիսի թանաք է լցված, որը աստիճանաբար դունաթափվում է և ի վերջո բոլորովին անհետանում։ Երբ մեր բաժնետիրական ընկերությունը մեկ տարուց հետո կհայտարարի «Թիմ Թալեր» մարգարին թողարկելու մասին, սեղմում գտնվող պայմանագրի տակ ձեր ստորագրությունն արդեն չի լինի։ Այն ժամանակ դուք կկարողանաք բողոքարկել պայմանագիրը և խնդարել, որ մարգարինը շուկա դուրս բերվի։ Բայց դա պետք է արվի միայն այն ժամանակ, երբ ողջ աշխարհը տեղեկացված լինի տեսակային մարգարինի թողարկման մասին։

— Եվ այդ դեպքում բաժնետիրական ընկերությունը հոգս կցնդի՞, Սելեք Բայ։

Ներուկը ծիծաղեց։

— Ոչ, փոքրիկ, նա շատ ամուր է կանգնած։ Բայց կոնցեռնը հսկայական վնասներ կունենա։ Իսկ մինչև նրանք պատրաստեն մարգարինի նոր տեսակը, մրցակիցներն էլ իզուր ժամանակ չեն կորցնի։ Եվ այնուամենայնիվ, չնայած դրան, մեր ֆիրման ժամանակի ընթացքում հրեշավոր շահույթ կստանա շնորհիվ տեսակային մարգարինի։ Բայց համաշխարհային շուկան նվաճել նրան այլևս երբեք չի հաջողվի։

Սելեք Բայը նստեց պատուհանի մոտ դրված աթոռին և սկսեց նայել անձրևին։ Չշրջվելով, նա ասաց.

— Չգիտեմ, ինձ և քեզ երբևէ կհաջողվի՞ խորամանկությամբ հաղթել բարոնին։ Նա մտածում է շատ ավելի լավ, քան մենք եր-

կուսս միասին։ Եվ այնուամենայնիվ ես կաշխատեմ օգնել քեզ։ Երևում է, բարոնը քեզ այնպես է իր բուռն առել, որ դու ծիծաղելն էլ ես մոռացել։ Իսկ ես շատ կուզենայի, որ դու նորից սովորեիր ծիծաղել։

Թիմը վախեցած ուզում էր նրան ինչ-որ բան առաջարկել, բայց Սելեք Բայը միայն թափահարեց գլուխը.

— Ավելի լավ է ոչինչ մի ասա, փոքրիկ, բայց մեծ հույսեր էլ մի կապիր իմ ջանքերի հետ։ Ծիծաղը մարգարին չէ, առուծախի ապրանք չէ։ Այն ոչ կփոխանակես, ոչ խորամանկությամբ կվերցնես, ոչ կսակարկես։ Ծիծաղը չեն վաճառում։ Այն կարելի է միայն նվաճել։

Հեռախոսը զանգահարեց։ Քանի որ Թիմի աջ ձեռքը վիրակապված էր, Սելեք Բայը մոտեցավ և վերցրեց լսափողը։ Իր անունը տալով մի քիչ նա լռեց, ապա ձեռքով փակեց լսափողը և կիսաձայն ասաց.

— Քեզ հեռախոսի մոտ է խնդրում ինչ-որ մի պարոն Համբուրգից։

Թիմի ուղեղը տենդագին գործեց։ Չէ որ նա բարոնին խոստացել էր իր համբուրգյան բարեկամների հետ կապ չպահպանել։ Եթե նա խախտի խոստումը, պարոն Ռիկերտին կարող է որևէ բան պատահել։ Ուրեմն, հիմա Թիմը ստիպված պետք է խաբի իր հին բարեկամին և չխոսի նրա հետ։ Դրա համար նա մատը դրեց շրթունքներին և բացասական նշան արեց գլխով և Սելեք Բայը պատասխանեց.

— Պարոն Թալերը այստեղ չէ։ Նա արդեն մեկնել է։

Եվ դրեց լսափողը, չնայած զգացվում էր, որ նա այդ անում է մեծ տարակուսանքով։ Մի քիչ հետո նա դուրս եկավ սենյակից։ Մենակ մնալով Թիմը մոտեցավ պատուհանին և սկսեց նայել անձրևին, որը անդադար գալիս էր ու գալիս։

Մեկ տարուց հետո ինքը կդառնա համբուրգյան նավագնացության տերը և այն ժամանակ այդ նավագնացությունը կնվիրի պարոն Ռիկերտին։ Մեկ տարի հետո գունաթափված ստորագրության պատճառով մարգարինի թագավորությունից ոչինչ չի մնա՝ խաղաթղթերից կառուցված տան պես։ Մեկ տարի հետո նա նորից կտեսնի Կրեշիմիրին և Ջոննիին, պարոն Ռիկերտին և նրա մայրիկին։ Մեկ տարի հետո...

Թիմը չէր համարձակվում իր երևակայության մեջ ավարտի հասցնել ողջ այն երջանկությունը, որը սպասում էր նրան մեկ տարի հետո։ Բայց նա չէր հուսալքվում։ Եվ նա հույս ուներ նաև, որ շուրջերկրյա ճանապարհորդության ընթացքում, որը նա պետք է կատարեր բարոնի ուղեկցությամբ, իրեն կհաջողվի ձեռք բերել հանգստություն և սեփական արժանապատվության զգացում։

Իսկ հույսը—ազատության դրոշն է։

ՎԵՐԱԴԱՐՁՎԱԾ ԾԻԾԱՂ

Նրան, ով ծիծաղում է,
սատանան էլ չի հաղթի:

Ֆրաու Բեբեր

Թերթ քսանյոթերորդ

ՄԵԿ ՏԱՐԻ ԹՌԻՉՔԻ ՄԵՋ

Շուրջերկրյա ճանապարհորդության մեկ տարին Թիմն անցկացրեց թռիչքի մեջ։ Երկմոտորային ինքնաթիռը Թիմին և Անատասին նախ տարավ Ստամբուլ։ Թիմը նորից վերևից նայում էր լեռների միջով իրենց ավանակներին քշող տղամարդկանց և կանանց։ Բայց այս անգամ նրանք արդեն Թիմին չէին թվում տարօրինակ, ինչպես այն ժամանակ, երբ դրանց տեսավ առաջին անգամ։ Նրանց հագուստները հիշեցնում էին Սելեք Բայի և դղյակի սպասավորներից ոմանց զգեստները։ Եվ թեպետ նա բոլորովին չէր ճանաչում այնտեղ, ներքևում անցնող այդ մարդկանց, նրանք ինչ-որ բանով դուր էին գալիս Թիմին։ Նա այդ մարդկանց նկատմամբ ակամա համակրանք և կարեկցություն էր զգում, ինչպես Աֆղանստանի դանակ-մկրատ սրողների նկատմամբ։

Ստամբուլում նրանք մնացին մեկ շաբաթ։ Թիմը բարոնին ուղեկցում էր մզկիթներ և պատկերասրահներ և, թերևս, սկսում էր նույնիսկ հաճույք զգալ այդ ճանապարհորդությունից։ Դղյակում տեղի ունեցած վերջին իրադարձությունների հետևանքով նա հոգեպես գրեթե լրիվ ընկճված էր և կորցրել էր իր ծիծաղը երբևէ վերադարձնելու հույսը։

Բայց այժմ նա նորից հավատում էր, որ մեկ տարի հետո ամեն ինչ կփոխվի։ Այն վայրկյաններին, երբ մտածում էր Սելեք Բայի և Համբուրգի իր բարեկամների մասին, նա հանգիստ վստահություն էր զգում, թե իր ծիծաղը այս ճանապարհորդության վերջում ինքն իրեն կընկնի իր ձեռքը, ինչպես ծառից ընկնում է

հասած խնձորը։ Այդ հույսը պարունակում էր այն վտանգը, որ Թիմն այլևս ոչինչ չի ձեռնարկի, որպեսզի փոխի իր վիճակը և կհաշտվի դաժան ճակատագրի հետ։

Բայց միևնույն ժամանակ Թիմի արտաքին հանգստությունը ուներ իր առավելությունը՝ բարոնը իրեն համարում էր անվտանգության մեջ։ Անատասը մտածում էր, թե Թիմն իրոք հաշտվել է ճակատագրի հետ և սկսել էր պակաս ուշադիր հետևել տղային։ Շաբաթ առ շաբաթ, ամիս առ ամիս աճում էր նրա վստահությունը, որ Թիմ Թալերը ավելի ու ավելի է ընտելանում հարուստ ժառանգի դերին և սովորում է հաճույք զգալ դրանից և, որ այժմ նա այլևս երբեք չի ցանկանա ճանապարհորդող միլիոնատիրոջ ապրելակերպը փոխել որևէ բանի հետ աշխարհում, նույնիսկ սեփական ծիծաղի հետ։

Եվ իրոք, Թիմն այդ ճանապարհորդության ժամանակ շատ ավելի սակավ էր հիշում իր կորցրած ծիծաղը։ Շքեղ հյուրանոցներում շատ սիրալիր են վերաբերվում հարուստ այցելուներին, և, եթե այդպիսի հյուրանոցի դիրեկտորը նկատում է, որ հարուստ այցելուն չի սիրում ծիծաղել, հյուրանոցի ողջ անձնակազմը, դռնապանից մինչև սպասավորը, կարծես դիրեկտորի ձեռքի կախարդական շարժումով, դադարում են նրա ներկայությամբ ժպտալ։

Բայց կյանքը, անգամ շատ հարուստ մարդկանց համար, միայն շքեղ հյուրանոցներից չի բաղկացած։ Եվ երբ Թիմը մենակ կամ բարոնի ուղեկցությամբ զբոսնում էր ոտքով, նա նկատում էր, որովհետև չէր կարող այդ չնկատել, որ աշխարհը լի է ծիծաղով։

Ստամբուլից հետո Թիմը երկրորդ անգամ տեսավ Աթենքը։ Աթենքին հետևեց Հռոմը, Հռոմին՝ Ռիո-դը-Ժանեյրոն, Ռիո-դը-Ժանեյրոյին՝ Հոնոլուլուն, Սան-Ֆրանցիսկոն, Լոս Անջելոսը, Չիկագոն և Նյու Յորքը։ Հետո նրանք մեկնեցին Փարիզ, Ամստերդամ, Կոպենհագեն և Ստոկհոլմ, Կապրի, Նեապոլ, Կանարյան կղզիներ, Կահիրե և Աֆրիկայի հարավը։ Հետո թռան Տոկիո, Հոնկոնգ, Սինգապուր և Բոմբեյ։ Թիմը տեսավ Կրեմլը՝ Մոսկվայում, կամուրջները՝ Լենինգրադում, տեսավ Վարշավան և Պրագան, Բելգրադը և Բուդապեշտը։ Եվ ամենուրեք, որտեղ վայրէջք էր կատարում նրանց ինքնաթիռը, Թիմը փողոցներում լսում էր ծիծաղ։ Ո՞ղջ աշխարհի ծիծաղը։ Նա լսեց կոշիկ մաքրողների ծիծաղը

Բելգրադում և լրագրավաճառ տղաների ծիծաղը՝ Ռիո-դե-Ժանեյրոյում։ Ծիծաղում էին ծաղկավաճառները Հոնուլուլուում և կակաչներով լի զամբյուղներով ծաղկավաճառ կանայք Ամստերդամում, զողոզը Ստամբուլում ժպտում էր ճիշտ այնպես, ինչպես ջրկիրը Բաղդադում։ Մարդիկ կատակում և ծիծաղում էին Պրագայի և Լենինգրադի կամուրջների վրա, իսկ Տոկիոյի թատրոնում ծափահարում և ծիծաղից գլորվում էին ճիշտ այնպես, ինչպես Նյու Յորքի Բրոդվեյում գտնվող թատրոնում։

Ծիծաղը պետք է մարդուն, ինչպես արևի լույսը ծաղկին։ Եթե այնպես պատահեր, որ ծիծաղը մեռներ, մարդկությունը կվերածվեր գազանանոցի կամ հրեշտակներից բաղկացած հասարակության, կլիներ տխուր, շատ տխուր, մռայլ և կքարանար անտարբերության մեջ։

Եվ որքան էլ լուրջ թվար Թիմը բարոնին կամ ողջ շրջապատին, նրա հոգում ապրում էր նորից ծիծաղելու անհաղթահարելի ցանկությունը։ Եվ որքան էլ գոհ թվար Թիմը, նա ուրախությամբ իր ճակատագիրը կփոխեր յուրաքանչյուր աղքատի հետ Նյու Յորքում, եթե դրանով ողջ աշխարհի հետ միասին ծիծաղելու իրավունք նվաճեր։

Բայց նրա ծիծաղը տնօրինում էր մի մարդ, որը միշտ նրա կողքին էր, երբեմն միայն մի քանի քայլ հեռու, նա անվերապահորեն տիրապետում էր Թիմի զրնգուն, ելևէջներով տղայական ծիծաղին։ Եվ Թիմը, որքան էլ ցավալի էր, գրեթե ընտելացել էր դրան։ Նրան հիմա բոլորովին այլ բան էր զբաղեցնում։ Նա սովորում էր։

Նա սովորում էր ամեն ինչ, որ պետք է իմանա և կարող լինի այսպես կոչվող «աշխարհիկ երիտասարդը»։

Նա արդեն յուրացրել էր, թե ինչպես պետք է ուտել ծովախեցգետին, փասիան և սև խավիար, սովորել էր կուլ տալ ոստրեներ և մի հարվածով դուրս գցել շամպայնի շշի խցանը, գիտեր տասներեք լեզուներով ասել դրությանը հարմար սիրալիր նախադասություններ, սկսած «Շատ ուրախ էի ձեզ հետ ծանոթանալու համար»-ից մինչև «Շնորհակալություն պատվի և հաճույքի համար»-ը։ Նա գիտեր, թե որքան պետք է սպասավորներին «տալ» աշխարհի բոլոր ամենահայտնի հյուրանոցներում, կարող էր հանպատրաստից ոչ մեծ ճառ ասել, դիմելով կոմսերին, հերցոգներին և արքայազններին, պահպանելով քաղաքավարության

բոլոր կանոնները և չսխալվելով աստիճանների հարցում, նա գիտեր, թե ինչպիսի գուլպաներ և փողկապ է սազական այս կամ այն զգեստին, գիտեր որ երեկոյան վեցից հետո չպետք է հագնել շագանակագույն կոշիկներ («after six no brown»[1] ասում են անգլիացիները), որ չի կարելի ճկույթը անջատ պահել գավաթը վերցնելիս. նա որոշ չափով ուսումնասիրել էր ֆրանսերեն, անգլերեն և իտալերեն, գլխավորապես ճանապարհին և առանց բառարանից օգտվելու. նա սովորել էր շահագրգռվածություն ցուցադրել այն ժամանակ, երբ ձանձրանում էր. սովորել էր խաղալ թենիս, զբոսանավ ղեկավարել, ավտոմեքենա վարել և նույնիսկ ճանապարհին նորոգել այն։ Նա սովորել էր այնքան հաջող ձևացնել, որ բարոնը ամբողջ հոգով հիանում էր նրանով։

Թեպետ Անատասը գրեթե յուրաքանչյուր քաղաքում գաղտնի բանակցություններ էր վարում մարգարինի շուրջը, որոշված էր Թիմին այս անգամ խնայել։ Նրան թույլ էին տվել անել ինչ ցանկանար։ Միայն երբեմն նա ստիպված էր լինում բարևել և հրաժեշտ տալ, իսկ ծայրահեղ դեպքում ճաշել կամ ընթրել որևէ պարոնի հետ, կամ շատ հայտնի (և այդ դեպքում թղթակիցները նրանց միասին էին լուսանկարում) այնպիսի մեկի հետ, որ կարող էր օգտակար լինել բաժնետիրական ընկերությանը։ Այսպիսով Թիմը ծանոթացավ անգլիացի մի հերցոգի հետ, որը ելույթ էր ունեցել Աֆղանստանի դանակ-մկրատ սրողների պաշտպանությամբ, և մսի պահածոների արգենտինյան ֆաբրիկատիրոջ հետ, որը հանդես էր եկել ի օգուտ անգլիական արիստոկրատիայի արտոնությունների։

Օրացույցի համաձայն, Թիմն այդ ճանապարհորդության ժամանակ մեծացել էր ընդամենը մեկ տարով։ Շուտով պետք է լրանար նրա տասնվեց տարին։ Բայց այդ ամիսների ընթացքում նա բարոնի հետ ինքնաթիռով գրեթե երեք անգամ պտտվել էր երկրագնդի շուրջը։ Իսկ աշխույժ միտք ունեցող տղան կարող էր այդ ժամանակամիջոցում շատ բան իմանալ և մտածել։ Եվ Թիմն այժմ գիտեր, որ ֆրաու Բեբերի հացի-հրուշակեղեղենի խանութը, որտեղից հացի և թխվածքների բուրմունք էր գալիս, իր համար շատ ավելի սիրելի էր, քան որևէ «Պալմարո» հյուրանոց կամ դղյակ Միջագետքում։

---

[1] Երեկոյան վեցից հետո շագանակագույն մի հագիր (անգլ.)։

Ի դեպ, բարոնը տարօրինակ համառությամբ խուսափում էր այն ուղիներից, որոնք անցնում էին Թիմի հարազատ քաղաքով։ Թիմը մի քանի անգամ ցանկություն էր հայտնել այցելել այնտեղ, բայց Անատասը, որը կյանքում երբեք չէր ասում ուղղակի «ոչ», կամ չլսելու էր տալիս նրա խնդրանքը, կամ վկայակոչում էր անհետաձգելի գործերը այլ քաղաքներում։

Շուրջերկրյա ճանապարհորդության տարին մոտենում էր ավարտին, և Թիմը հատուկ ջանասիրությամբ բարոնի առջև խաղում էր խաղաղ և երջանիկ ժառանգի դերը։ Բայց որքան ավելի էր մոտենում նրա ծննդյան օրը, այնքան ավելի էր նա հուզվում։ Այժմ, երբ բարոնը սկսում էր ծիծաղել նրա ներկայությամբ, դողը համակում էր Թիմին։ Մեկ անգամ գիշերը՝ դա Բրյուսելում էր, Թիմը գիշերը երազում տեսավ անցյալ տարվա հեռախոսային խոսակցությունը պարոն Ռիկերտի հետ, բարոնի դղյակում։ Երբ նա արթնացավ, այդ խոսակցությունը դեռ շարունակում էր հնչել նրա ականջներում, և նա պարզորոշ հիշում էր, թե ինչպես պարոն Ռիկերտն ասաց. «Կրեշիմիրը գիտե...»

Ի՞նչ գիտե Կրեշիմիրը։ Դեպի իր կորցրած ծիծաղը տանող ուղի՞ն։

Թիմը հավատարիմ մնաց իր տված խոստումին և ոչ մի անգամ չկապվեց իր համբուրգյան բարեկամների հետ։ Բայց նա երազում էր այն ժամանակը, երբ ի վերջո կավարտվի այդ տարին, պայմանագիրը բարոնի հետ կկորցնի իր ուժը։

Թիմի ծննդյան օրվանից մի քանի օր առաջ նրանք եկան Լոնդոն, որտեղ միսթր Պեննին բարոնի ներկայությամբ Թիմին հանձնեց բաժնեթղթերով մեծ ծրարը։ Դրանք համբուրգյան նավագնացության բաժնեթղթերն էին։

Միսթր Պեննին արդեն տեղեկացված էր այն մասին, որ Անատասը ծծանի վրա կարդացել էր նրա գաղտնի պայմանագիրը Թիմ Թալերի հետ, և, առաջին ցնցումից ուշքի գալով, նա այդ նորությունը գտավ շատ հաճելի։ Չէ որ բարոնը այսպես, թե այնպես պետք է տեղյակ լինի բաժնեթղթերի հանձնմանը։

Ինքնաթիռի մեջ, երբ, վերջապես, նրանք թռչում էին Համբուրգ, Թիմն ասաց բարոնին.

— Միսթր Պեննիի հետ դուք խոսում էիք նույնքան քաղաքավարի և սիրալիր, որքան միշտ։ Միթե դուք նրա վրա բարկա-

ցած չեք, որ նա ձեզնից գաղտնի ինձնից գնեց վճռական ձայնի իրավունք տվող այն բաժնեթղթերը, որոնք ես ժառանգում եմ։

Բարոնը ծիծաղեց.

— Իմ թանկագին պարոն Թալեր, եթե ես լինեի Պեննիի փոխարեն, կվարվեի ճիշտ նույնպես։ Էլ ինչո՞ւ պետք է նրա վրա բարկանամ։ Մեզ մոտ ամբողջ ժամանակ պայքար է գնում վճռական ձայնի իրավունքով բաժնեթղթերի համար։ Նրանց մեծ մասը առ այսօր իմ ձեռքին է։ Բայց միթե մենք դրանց պատճառով պետք է կռվենք միմյանց հետ։ Մենք նման ենք առյուծի ընտանիքի, եթե ավարը մեծ է, ապա ավարը բաժանելիս մի քիչ կռվում ենք, բայց ծեր առյուծը, միևնույն է, ստանում է իր առյուծի բաժինը։ Իսկ ծեր առյուծը ես եմ։ Բայց դրա փոխարեն հենց որ ավարը բաժանված է, մենք նորից դառնում ենք առյուծի համերաշխ ընտանիք։ Եվ ոչ ոք չի կարող մեզ բաժանել։

— Նույնիսկ Սելեք Բա՞յը,— կամաց հարցրեց Թիմը։

— Սելեք Բայը,— մտազբաղ պատասխանեց Անատասը,— թերևս, որոշ բացառություն է կազմում, պարոն Թալեր։ Նա կարծում է, թե շատ խորամանկն է և ճկուն, իսկ իրականում բոլորովին էլ այդպես չէ։ Երբեմն նա մեզ որոշ անախորժություններ է պատճառում։ Բայց մեծ մասամբ նրա մեքենայությունները մեզ միայն զվարճացնում են։ Ընդհանուր առմամբ, նրան մեզ մոտ սիրում են։

— Իսկ բանա՞կը Հարավային Ամերիկայում...— չդիմացավ Թիմը։

— Այդ... «բանակը», պարոն Թալեր, մեծ մասամբ կազմված է մեր մարդկանցից։ Եվ այն զենքը, որ իր սեփական դրամով Սելեք Բայը գնում է զինվորների համար, մատակարարվում է մեր զինամթերքների պահեստներից։ Այնպես որ, Սելեք Բայի փողերը նորից վերադառնում են մեր ֆիրմային։ Դա յուրահատուկ շրջապտույտ է։ Ինչպես ջուրը բնության մեջ։ Եվ այն փողերը, որոնք Սելեք Բայը ծախսում է Աֆղանստանում մեր ազդեցության դեմ մղվող պայքարի վրա, նույնպես հոսում են գլխավորապես մեր գրպանները։

— Իսկ ինչպե՞ս են տեսակային մարգարինի գործերը,— առանց որևէ տեսանելի կապի հարցրեց Թիմը։

Բայց բարոնը անմիջապես կռահեց թաքնված կապը։ Նա ասաց.

— Մեր մարգարինի ծրագրերին խանգարելու Սելեք Բայի փորձը նույնպես նրա հիմար հնարանքներից մեկն է։

Թիմի սիրտը ավելի ուժեղ բաբախեց։ Արդյոք բարոնը գիտի՞, որ ինքը պայմանագիրը ստորագրել է Սելեք Բայի գունաթափվող թանաքով։ Թիմը չէր համարձակվում նրան հարցնել այդ մասին։ Բայց բարոնը ինքը պատասխանեց նրա հարցին.

— Այն ինքնահոսի մեջ, որով դուք ստորագրեցիք պայմանագիրը, պարզ է, որ սովորական թանաք էր, պարոն Թալեր։ Սելեք Բայի տան սպասավորը իմ մարդկանցից է։ Նա գրչի մեջ լցրել էր ուրիշ թանաք։ Բայց նույնիսկ այն դեպքում, եթե վերանար ձեր ստորագրությունը պայմանագրի տակ, այնտեղ կմնար ձեր խնամակալի ստորագրությունը։ Չէ որ յուրաքանչյուր օրինակը ես երկու անգամ եմ ստորագրել, մեկը՝ ֆիրմայի անունից, մյուսը որպես ձեր խնամակալ։

Թիմը ոչինչ չպատասխանեց։ Նա ինքնաթիռի փոքր պատուհանից նայում էր ներքև, երկրին։ Ներքևում նա տեսնում էր աշտարակներ— կարծես դրանք Համբուրգի աշտարակներն էին։

Օ՜, ինչպես էր Թիմն այժմ ուզում լինել ամենասովորական, ոչ ոքից չճանաչված մի տղա և վազվզել այնտեղ, ներքևի փողոցներում։ Բաժնեթղթերի, պայմանագրերի, խոշոր առևտրական գործարքների այդ աշխարհը նրա ուժերից վեր էր, նա շնչահեղձ էր լինում այնտեղ։

Թիմը մտածում էր Ջոննիի, Կրեշիմիրի և պարոն Ռիկերտի մասին։ Վաղը չէ մյուս օրը, իր ծննդյան օրվա հաջորդ օրը, ինքը կկարողանա տեսնվել նրանց հետ։

Իհարկե, եթե նրանք Համբուրգում են։ Եվ եթե նրանք դեռ ողջ են...

Թերթ քսանութերորդ

ԴԻՄԱՎՈՐՈՒՄ ԱՌԱՆՑ ՄԵԾԱՐՈՒՄՆԵՐԻ

Սովորաբար, երբ որևէ օդանավակայանում բարոնը և Թիմը դուրս էին գալիս ինքնաթիռից, Անատասը առաջ էր թողնում Թիմին, որովհետև մեծ մասամբ ներքևում նրանց արդեն սպասում էր ֆոտոթղթակիցների ամբոխը։ Բայց այստեղ՝ Համբուրգյան

օդանավակայանում, բարոնը առաջինը դուրս եկավ ինքնաթիռից և իջավ գետին։ Այս անգամ նրանց ոչ ոք չէր դիմավորում— ոչ թղթակիցներ, ոչ ֆոտոթղթակիցներ։ Չկար նույնիսկ ոչ մի դիրեկտոր։ «Բարի գալուստ»-ի փոխարեն պատին երևում էր ֆիրմայի հսկայական ռեկլամը.

ՊԱԼՄԱՐՈ

Լավագույն տեսակային մարգարինը աշխարհում
Համեղ է ինչպես կարագը, էժան է ինչպես մարգարինը,
Պիտանի է եփելու համար, կարկանդակների, ինչպես նաև
բուտերբրոդների համար:

Թիմը ուշադիր նայեց պլակատին, ապա բարոնին։ Բարոնը ժպտաց.

— Ձեզ զարմացնում է մարգարինի անո՞ւնը, պարոն Թալեր։ Բանը նրանումն է, որ այս մեկ տարվա ընթացքում մենք պարզեցինք, որ «Թիմ Թալեր» մարգարինը արտասահմանի համար կունենար իր բացերը։ Շատ երկրներում այդ անունը դժվար է կարդացվում։ Բացի այդ, Աֆրիկայում գերադասում են ժպտացող սև տղաներով ռեկլամները։ Նեղ նրբանցքի փոքրիկ չքավորի մասին սրտաճմլիկ պատմությունը նույնպես միշտ չէ, որ կարող է տեղին լինել—չէ որ մեր մարգարինը պետք է գնեն ոչ միայն աղքատ մարդիկ։

Այդ ընթացքում նրանք անցան մաքսային զննումը։

Մաքսատան աշխատողները, առանց որևէ բան հարցնելու, կավիճով նշաններ արեցին Անատասի և Թիմի ձեռքի իրերին։

Դուրս գալով մաքսատնից, բարոնը ձեռքը բարձրացրեց և տաքսի կանգնեցրեց, որը շատ զարմացրեց Թիմին։ Ֆիրման այս անգամ նույնիսկ մեքենա չէր ուղարկել նրանց հետևից։ Բայց երբ նրանք նստեցին տաքսի, Թիմը հայելում տեսավ, որ լրտեսներից մեկը, որին նա ճանաչում էր դեռ Ջենովայից, մի կողմից մյուսն է նայում, ուրիշ տաքսի փնտրելով, ճիշտ է, առայժմ՝ ապարդյուն։

Մեքենայում Անատասը շարունակեց զրույցը։

— Ցյսպիսով, մենք որոշեցինք մեր մարգարինը անվանել «Պալմարո»։ Այս բառը աշխարհի բոլոր լեզուներով հնչում է մոտավորապես նույն ձևով։ Եվ արմավենին քաջ հայտնի է յուրա-

քանչյուրին։ Հյուսիսում երազում են նրա մասին, իսկ հարավում նա աճում է յուրաքանչյուր դռան առջև։

— Ուրեմն, Սելեք Բայի ինքնահոսն ընդհանրապես ոչ մի նշանակություն չունե՞ր։

— Իհարկե,— պատասխանեց Անատասը։ Հետո նա կռացավ դեպի տաքսիի վարորդը և ասաց,— աշխատեք խուսափել քաղաքի կենտրոնից, որքան դա հնարավոր է։

Վարորդը լուռ գլխով արեց։

Բարոնը նորից թիկնեց նստարանին և հարցրեց.

— Ինչպե՞ս եք մտադիր վարվել համբուրգյան նավագնացության ձեր բաժնեթղթերի հետ, պարոն Թալեր։

— Համբուրգյան նավագնացությունը ես կնվիրեմ պարոն Ռիկերտին, բարոն։— Աշխատելով խոսել որքան հնարավոր է հանգիստ և անտարբեր, Թիմը բացատրեց.— Այդ դեպքում գոնե իմ խիղճը հանգիստ կլինի։ Չէ որ իմ պատճառով նա զրկվեց պաշտոնից։

Վարորդը, ըստ երևույթին, շատ էր մոտեցել մայթին։ Ավտոմեքենան վեր թռավ։

— Մի քիչ զգույշ, գրողը տանի,— կատաղությամբ բղավեց բարոնը։

— Ներողություն եմ խնդրում,— փնթփնթաց վարորդը։

Թիմին հանկարծ թվաց, որ ինքը ինչ-որ ժամանակ և ինչ-որ տեղ լսել է այդ ձայնը։ Նա փորձեց հայելու մեջ տեսնել վարորդի դեմքը։ Բայց մորուքը, մուգ ակնոցը և ճակատին իջեցված գլխարկը գրեթե լրիվ ծածկում էին դեմքը։

Հանկարծ Թիմի կողքին հնչեց ուրախ ելևէջներով ծիծաղը.

— Տեսնում եմ, որ դուք մեր բաժնետիրական ընկերության մասին պարզ պատկերացում չունեք,— ծիծաղելով ասաց բարոնը։— Դուք չեք կարող հենց այնպես մեր համբուրգյան նավագնացությունը նվիրել պարոն Ռիկերտին, պարոն Թալեր։

— Ինչո՞ւ։

— Ստանալով բաժնեթղթերով այդ ծրարը, դուք դարձաք սոսկ այսպես կոչված տերերից մեկը։ Ճիշտ է, ֆիրմայի մաքուր շահույթը այդ ձեռնարկությունից մտնում է գլխավորապես ձեր գրպանը։ Սակայն նավագնացությունը առաջվա պես կառավարում է բաժնետիրական ընկերության վարչությունը, իսկ նրա կազմի

մեջ մտնում են վճռական ձայնով բաժնեթղթերի տերերը՝ ես, միսթր Պեննին, սինյոր Վան դեր Թոլենը և Սելեք Բայը։

— Ուրեմն, եթե պարոն Ռիկերտը նորից դառնա նավագնացության դիրեկտոր, դուք կարող եք ցանկացած բոպեին նրան ազատե՞լ։

— Ցանկացած բոպեին։

Տաքսիի վարորդը ստիպված էր հիմա ավելի դանդաղ գնալ, որովհետև սկսեց հաղալ։ Ըստ երևույթին, նա մրսած էր։

Թիմը մտազբաղ նայում էր պատուհանից դուրս։ Ավտոմեքենան մտավ մի հանգիստ փողոց և գնաց Ալստերի ափով։ Բայց Թիմը այդ չնկատեց։

— Բարոն։

— Այո, ես ձեզ լսում եմ։

— Դուք շահագրգռվա՞ծ եք Համբուրգյան նավագնացության այդ բաժնեթղթերով։

Անատասը զննող հայացքով նայեց Թիմին։ Տղայի դեմքը մնում էր անվրդով։ Արդեն նրանց հասնում էր այն մեծ փողոցի աղմուկը, որին մոտենում էին։

Վերջապես բարոնը պատասխանեց այնպիսի անտարբեր ձևով, որ Թիմը անմիջապես կռահեց նրա հուզմունքը։

— Այդ նավագնացությունը մի փոքր մարգարիտ է, որը պակասում է ծովերի տիրակալի իմ թագի վրա։ Ինքնըստինքյան առանձնահատուկ արժեք չի ներկայացնում, բայց, ինչպես արդեն ասացի, կարող էր զարդարել իմ թագը։

Երբ բարոնը այնպես, ինչպես այժմ, իր խոսքը զարդարում էր գործի հետ չառնչվող գունեղ արտահայտություններով, դա նշանակում էր, որ նա անտարբեր չէր զրույցի նյութի նկատմամբ։ Թիմն այդ գիտեր։ Այդ պատճառով էլ նա ոչինչ չպատասխանեց և սպասեց հարցի, որը պետք է անմիջապես հետևեր։ Եվ հարցը անմիջապես հետևեց.

— Որքա՞ն եք ուզում ստանալ այդ բաժնեթղթերի դիմաց, պարոն Թալեր։

Թիմը վաղուց նախապատրաստել էր պատասխանը։ Զնայած դրան նա ձևացրեց, որ իբր միայն այժմ այդ մասին մտածեց։ Վերջապես նա ասաց.

— Տվեք ինձ դրանց դիմաց այնպիսի մի փոքր նավագնա-

ցություն Համբուրգում, որը չի պատկանում ձեր բաժնետիրական ընկերությանը։

— Հուսով եմ, որ դուք չե՞ք պատրաստվում դառնալ իմ մրցակիցը, պարոն Թալեր։ Նկատի ունեցեք, որ այդպիսի դեպքում դուք կընկնեք սեփական թակարդը։

— Ոչ, ես խոսում եմ այնպիսի նավագնացության մասին, որի հետ բաժնետիրական ընկերությունը ոչ մի կետով չի առընչվում։ Գուցե որևէ առափնյա նավագնացություն։

Բարոնը կռացավ վարորդի կողմը և հարցրեց.

— Ասացեք, ո՞րն է համբուրգյան առափնյա նավագնացություններից, ձեր կարծիքով, առավել շահավետը։

Վարորդը մի վայրկյան մտածեց, ապա ասաց.

— «ՀՀՄ»-ն՝ «Համբուրգ—Հելհոլանդ—Մարդատարը»։ Վեց նավ։ Երթեր ձմռանը և ամռանը։ Պատկանում է Դենկերների ընտանիքին։

— Իսկ ինչպե՞ս գտնել պարոն Դենկերին։

Վարորդը նայեց իր ձեռքի ժամացույցին և պատասխանեց.

— Հիմա նա իր գրասենյակում է, Նավահանգստում։ Դա վեցերորդ կամրջի վրա է։

— Տարեք մեզ, խնդրում եմ, Վեցերորդ կամրջի մոտ և սպասեք այնտեղ։ Ես երախտահատույց կլինեմ։

— Պետք չէ,— քթի տակ ասաց վարորդը։ Եվ Թիմը նորից մտածեց, որ ինքը ինչ-որ ժամանակ լսել է այդ ձայնը։

Նավահանգստից քիչ հեռու մեքենան կանգ առավ լուսաֆորի մոտ։ Թիմը պատուհանից նայում էր վերամբարձ կռունկներին և բարձր աշտարակներին, այն նախշին, որ նրանք գծագրել էին սեպտեմբերյան գորշ կապտավուն երկնքի վրա։ Թեպետ տաքսիի ապակին բարձրացված էր, նրան թվում էր, որ ինքը շնչում է նավահանգստի բուրմունքը՝ աղի, ձյութի և ջրիմուռի հոտը։

Այդ հոտը, որ ավելի շուտ կախարդել էր նրա երևակայությունը, քան նա իրականում շնչել էր, բազմաթիվ հիշողություններ փոթորկեց նրա մեջ։ Այս նավահանգստում նա կարողացավ գտնել բարոնի հետքը, այստեղ նա սկսեց հետապնդումը, և, թեպետ ինքը ստիպված եղավ անցնել անանցանելի թավուտների միջով, հետապնդումը նրան արդյունք չտվեց։

Այժմ նա վերադարձել է ելակետին։ Գուցե այն, ինչին նա չկարողացավ հասնել մենակ, կնվաճի բարեկամների օգնությամբ։

Վերամբարձ կռունկը օդում ճոճում էր հսկայական արկղը, որի վրա արմավենի էր նկարված։ Թիմը հազիվ ուշադրություն դարձրեց դրան։ Նա դիտում էր անցորդներին։ Թիմը վախենում էր, որ կանցնեն Ջոննին, կամ Կրեշիմիրը, կամ պարոն Ռիկերտը և ինքը չի նկատի նրանց։ Նրանք անպայման պետք է լինեն որևէ տեղ, այստեղ, այս կռունկների և աշտարակների մոտ, այս անտառում, որտեղ դրոշներն են ծաղկում։ Բայց նրանցից ոչ մեկին նա չտեսավ։ Նա նույնիսկ չգիտեր կհաջողվի՞ արդյոք նրանց գրտնել։ Կարոտը ճնշեց նրա սիրտը։ Միայն այն ժամանակ, երբ մեքենան շարժվեց, նա մի փոքր ավելի լավ զգաց իրեն։

Բարոնը, լուսաֆորի մոտ կանգնած, նույնպես լուռ դիտում էր նավահանգիստը։ Բայց նա չէր երազում. հսկայական արկղին, որի վրա արմավենի էր նկարված, նա նայում էր շատ զգոն աչքերով։ Նա գիտեր, որ տեղի է ունենում «Պալմարո» մարգարինի բեռնումը։

Հետագա ճանապարհի ընթացքում տաքսու երկու ուղևորների մտքերը ուղղված էին դեպի այն նավագնացությունը, ուր նրանք պատրաստվում էին հիմա գնալ։ Դեպի «Համբուրգ—Հելհոլանդ—Մարդատարը»։ Անատասի մտքերը կարելի էր արտահայտել երկու բառով. «Շահավետ գործարք»։ Թիմի մտքերն ու զգացմունքները շատ ավելի հախուռն էին։ Կարոտը նրա մոտ փոխարինվում էր հույսով, երջանիկ ավարտի նախազգացումը ընդհատվում էր գաղտնի վտանգավոր սպասումներով։ Նրան այդ նավագնացությունը բոլորովին պետք չէր։ Նրան միայն մի բան էր պետք աշխարհում՝ իր ծիծաղը, իր ազատությունը։ Բայց նա պետք է շահեր այս թղթախաղը, խաղ, որը կոչվում էր գործարք։ Երբ ինքը դեպի նոր կյանք գնալու լինի, նա իր հարստություններից ոչ մի բան չի տանի, բայց թող այդ հարստությունները որևէ օգուտ բերեն գոնե իր բարեկամներին։ Այս նավագնացությունն իրեն կօգնի գեթ մասամբ արտահայտել իր երախտագիտությունը։ Միևնույն է, ինքը երբեք չի կարողանա ինչպես հարկն է արտահայտել նրանց իր երախտագիտությունը այն բանի դիմաց, որ նրանք արեցին իր համար։

Ավտոմեքենան կանգ առավ։ Անատասը և Թիմը դուրս եկան և ուղղվեցին «ՀՀՄ»-ի գլխավոր գրասենյակը, որտեղ ի զարմանս իրենց, նրանց գրկաբաց ընդունեց պարոն Դենկեր-ավագը՝ նավագնացության տերը։

— Ուղղակի զարմանալի զուգադիպում, պարոնայք,— հայտարարեց նա։— Ես հենց հիմա մտածում էի այն մասին, որ վատ

չէր լինի վաճառել իմ նավագնացությունը, և հանկարծ դուք ներկայանում եք իմ գրասենյակը, որպեսզի գնեք այն։ Հրա՞շք է։

Պարոն Դենկերը, հավանաբար, այդ զուգադիպությունը այդքան զարմանալի չհամարեր, եթե ճանաչեր տաքսու վարորդին, որը սպասում էր բարոնին և Թիմին։ Բայց, բարեբախտաբար, նա վարորդին անգամ չտեսավ։ Իսկ եթե տեսներ էլ, ապա չէր ճանաչի, ինչպես նրան չճանաչեց Թիմը։

Ի դեպ, պետք է ասել, որ վարորդն այդ պահին շատ մտահոգված շոշափում էր իր մորուքը, ժամանակ առ ժամանակ գաղտնի նայելով հայելու մեջ։ Եվ հանկարծ հայելու մեջ նա տեսավ մի ուրիշ տաքսի, որը կանգ առավ իր հետևում, մոտ հարյուր մետրի վրա, ընդ որում ուղևորը դուրս չեկավ մեքենայից, այլ շարունակում էր մնալ մեքենայի մեջ նստած։

Դեռ մեկ ժամ չանցած բարոնը և Թիմը դուրս եկան պարոն Դենկերի գրասենյակից, այսպես կոչված «պայմանագրի նախագիծը» գրպանում։ Նրանք անդամ հասցրեցին հենց այստեղ, Դենկերի գրասեղանի շուրջը, երեքով նշել այդ իրադարձությունը, խմելով երեքական բաժակ գինի։ Վաղը, օրենքի բոլոր կանոններով, կձևակերպվի վերջնական պայմանագիրը։

Երբ նրանք մոտեցան տաքսուն, վարորդը կամ քնած էր, կամ ձևացրեց քնած։ Անատասը, որի տրամադրությունն այժմ հիանալի էր, ինքը բացեց դռնակը։ Թիմը մեքենա նստեց մյուս կողմից։

Թվում էր, թե վարորդը հենց հիմա ուշքի եկավ և վատ էր հասկանում, թե որտեղ է գտնվում։ Երբ բարոնը կարգադրեց, որ նա քշի «Տարվա եղանակները» հյուրանոցը, նա անմիջապես չհասկացավ, թե ինչ են իրենից պահանջում, և դա բավական համոզիչ էր։

— Ասացեք,— դիմեց նրան Անատասը, երբ տաքսին շարժվեց,— դուք գիտեիք, որ «Համբուրգ—Հելհոլանդ—Մարդատարը» պատրաստվում են վաճառել։

— Ոչ,— պատասխանեց վարորդը։— Բայց դա ինձ չի զարմացնում։ Ինքը Դենկերը արդեն ծեր է այդպիսի գործի համար, իսկ նրա աղջիկները կգերադասեին իրենց օժիտը ստանալ կանխիկ դրամով։ Պետք է ենթադրել, որ նավագնացությունը նրանց համար չափազանց կեղտոտ աշխատանք է։ Իսկ ձեզ, պարոն, եթե թույլ կտաք հարցնել, շահագրգռե՞ց «ՀՀՄ»-ն։

Բարոնը, որ դեռևս հիանալի տրամադրությամբ էր, պատասխանեց.

— Ես արդեն գրեթե գնեցի այն։

— Սատանան տանի, որքան արագ դուք դա արիք։ Գրեթե նույնքան արագ, որքան «Սա՛գ, սա՛գ, հենց մոտենամ-կկպչեմ» հեքիաթում։ Հենց որ մոտեցաք, անմիջապես կպաք։

Վարորդի թռուցիկ հայացքը հայելու մեջ սահեց Թիմի դեմքով. այդ բառերը լսելիս նրա դեմքը ցնցվեց, ապա նորից սառեց, կարծես քարացավ։ Թիմը, ինչպես դա սովորական էր դարձել վերջին ժամանակներս նրա համար, տիրապետեց իրեն և կարողացավ անտարբերության դիմակի տակ թաքցնել հուզմունքը։

Այդ հուզմունքը լրիվ հասկանալի էր — վարորդը վերջապես ակնարկով հնարավորություն տվեց, որ Թիմը իրեն ճանաչի։ Իսկ բարոնի համար այդ ակնարկը պետք է հնչեր միանգամայն անմեղ։ «Սա՛գ, սա՛գ, հենց մոտենամ-կկպչեմ»-ը այն հեքիաթն էր, որում արքայադուստրը սովորեց ծիծաղել։ Դա ազդանշան էր, որին Թիմը գաղտնի սպասում էր, ազդանշան, որ նրա բարեկամները քնած չեն։

«Սա՛գ, սա՛գ, հենց մոտենամ—կկպչեմ»-ը նոր հետապնդման առաջին ազդանշանն էր։

Այժմ Թիմը միանգամայն ստույգ գիտեր, թե ով է այդ վարորդը, որը նստած է առջևում, լայն թիկունքը իր կողմը դարձրած։ Ինչ-որ մի բան բարձրացավ նրա էության խորքից— ոչ, դա ծիծաղ չէր, բայց ինչ-որ մի բան, որը զրկում է խոսելու ունակությունից։ Կարծեմ, դա կոչվում է «Գունդը դեմ առավ կոկորդին»։

Այդ ընթացքում տաքսին թեքվեց Ալստերի ափը և մոտեցավ հյուրանոցին։ Վարորդը դուրս եկավ և բացեց դռնակը։ Առաջին անգամ նա ուղևորներին ներկայացավ իր ողջ հասակով։

Թիմը այլևս չէր տարակուսում։

Երբ բարոնը վճարեց և շրջվեց հյուրանոցի կողմը, Թիմը դրժվարությամբ զսպեց իրեն, որ չգրկի հսկային։ Հուզմունքից խոպոտած ձայնով նա շշնջաց.

— Ջոննի՜։

Վարորդը մեկ վայրկյան հանեց հսկայական սև ակնոցը, որոնցով նրան գրեթե անհնարին էր ճանաչել, նայեց Թիմին և բարձրաձայն ասաց.

— Ցտեսություն, երիտասարդ,— և ձեռքը մեկնեց նրան, հետո նորից դրեց ակնոցը, նստեց մեքենա և գնաց։

Թիմի ձեռքում մնաց թղթի մի կտոր, փոքրիկ մի երկտող, ըստ էության գրեթե ոչինչ։ Եվ այնուամենայնիվ այդ փոքրիկ թղթի պատճառով նա իրեն զգում էր ավելի հարուստ, քան եթե նրա ձեռքում լինեին բարոն Անատասի կոնցեռնի բոլոր բաժնեթղթերը... Վճռական ձայնի իրավունքով բաժնեթղթերը ներառյալ...

Գրեթե երջանիկ Թիմը Անատասի հետևից մտավ հյուրանոց, որի առաջին հարկում նրան գրկաբաց դիմավորում էր հերթական դիրեկտորը։

«Ինչպիսի՜ պատիվ,պարոն բարոն»,— թվում էր, թե ասում էին նրա ձեռքերը, որոնք կարծես վերածվել էին հիացմունքով լի գավաթի։ Սակայն դիրեկտորը չհասցրեց բարձրաձայն արտահայտել իր հիացմունքը, որովհետև բարոնը մատը դրեց շրթունքներին։

— Խնդրում եմ՝ ոչ մի աղմուկ։ Մենք այստեղ եկել ենք գաղտնի։ Միսթր Բրաուն և նրա որդին, վաճառականներ Լոնդոնից։

Դիրեկտորի ձեռքերը իջան։ Նա քաղաքավարի գլուխ տվեց.

— Շատ ուրախ եմ, միսթր Բրաուն։ Ձեր ճամպրուկներն արդեն ստացվել են։

Այդ բոլորը Թիմին թվաց չափազանց զվարճալի։ Հիմա նա կարող էր անգամ գրկել իր դիրեկտորին,— այնպես էր այդ փոքրիկ երկտողը մեկ ակնթարթում նրա աչքերում վերափոխել աշխարհը։

Բայց Թիմը ոչ ոքի չգրկեց։ Թիմը չծիծաղեց։ Եվ ինչպե՞ս կարող էր նա այդ անել։ Նա ասաց լուրջ և քաղաքավարի, ինչպես սովորել էր այդ երկար տխուր տարիների ընթացքում.

— Շնորհակալ եմ։

Թերթ քսաներորդ

ՄՈՌԱՑՎԱԾ ԴԵՄՔԵՐ

Շուրջերկրյա ճանապարհորդության ժամանակ Թիմն ընտելացել էր այն բանին, որ իրեն մշտապես, ստվերի նման հետևում էր լրտեսներից մեկը, կամ նույնիսկ երկուսը միասին։ Նրանք իրենց հանձնարարությունը կատարում էին անթերի և նույնիսկ բավական տակտով։ Տարբեր քաղաքների փողոցներում Թիմը բազմիցս

ճանաչել էր այդ պարոնների դեմքերը, չէ որ նրանց դեմքերը նա հիշում էր դեռ Ջենովայից։ Եվ դա այլևս չէր հուզում, որովհետև նա սովորել էր ճանապարհորդության ժամանակ խաղալ Անատասի հնազանդ ուղեկցի դերը։

Իսկ այժմ, երբ նրա գրպանում էր թանկարժեք երկտողը, Թիմին թվում էր, թե վարագույրի յուրաքանչյուր ծալքում մի-մի լրտես է պահվում։ Պետք է ասել, որ Ջոննիի դիմակահանդեսային զգեստը և նրա ընդգծված զսպվածությունը նույնպես Թիմին հարկադրում էին ենթադրելու, որ իր բարեկամներին հետևում են ճիշտ այնպես, ինչպես իրեն։

Վերջապես Թիմին հաջողվեց թաքնվել իր համարի լողարանում— բարոնն այդ ժամանակ պառկել էր հանգստանալու։ Նա զուռը փակեց, նստեց վաննայի եզրին և գրպանից հանեց երկտողը։

Չորս տակ ծալած թուղթը փոստանիշից մեծ չէր։ Երբ Թիմը բացեց երկտողը, պարզվեց, որ նրա մի կողմի վրա գրված է մանրադիտակային ձեռագրով։ Չափազանց մանր տառերը հնարավոր չէր անզեն աչքով տարբերել։ Անհրաժեշտ էր խոշորացույց։

Բայց որտեղի՞ց Թիմը գտներ խոշորացույց։ Նորից թուղթը չորս տակ ծալելով և գրպանը դնելով, նա լարված մտածում էր։ «Եթե խոշորացույց խնդրի հյուրանոցի աշխատողներից որևէ մեկից, դա անմիջապես հայտնի կդառնա լրտեսներին։ Գնե՞լ։ Լրտեսներն անմիջապես խանութում կհարցնեն, թե ինչ առավ հենց նոր այդ տղան։ Հապա ինչպե՞ս խոշորացույց ճարի»։

Թիմը լսեց, որ ինչ-որ մեկը ծեծեց դուռը և, ըստ երևույթին, մտավ նրա համարը։ Նա մտածեց, որ դա Անատասն է և, համենայն դեպս, դիտավորյալ քաշեց զուգարանի ջուրը։ Հետո կամաց ետ գցեց փականը և մտավ հյուրասենյակ։

Հյուրասենյակում դրված էին կլոր սեղան և չորս բազկաթոռ։ Նրանցից մեկին, ուղիղ Թիմի դիմաց, նստած էր վիզը երկարած, դեմքը վառ ներկած մի կին, որը հագնված էր ծիծաղաշարժ խայտաբղետ և աղաղակող ձևով։ Նրա խոտի նման մազերը գանգրացրած էին։ Մյուս բազկաթոռին, նրա կողքին նստած էր մի գունատ, նիհար պատանի, հսկայական գունավոր թիթեռնիկով՝ փողկապի փոխարեն։ Թիմին հանկարծ թվաց, որ սենյակում տարածվեց պըզպեղի, անիսոնի և չամանի հոտը։

Այդ մարդիկ սոսկ աղոտ ձևով հիշեցնում էին խորթ մորը և Էրվինին։ Եվ այնուամենայնիվ դա նրանք էին։

Թիմը կանգ առավ դռան շեմին, չասելով ոչ մի խոսք։ Այդ այցելությունը միանգամայն անակնկալ էր նրա համար։ Նա չէր նախապատրաստված այն բանին, որ նորից պետք է տեսնի այդ դեմքերը։ Պահանջվեց միայն մեկ ակնթարթ, որպեսզի Թիմը ճանաչի նրանց։ Բայց էլի անցավ որոշ ժամանակ, նախքան նա տեսավ, թե ինչպես այդ փոփոխված դեմքերի վրա երևացին նախկին գծերը։ Եվ նա առաջին անգամ տեսավ, որ դրանք հիմար դեմքեր են։

Նա հիշեց, ավելի ճիշտ, նորից լսեց հոր խոսքերը. «Արհամարհիր հիմարությունը, եթե նա բարի չէ»։ Եվ այժմ նա պարզորոշ հասկացավ այն, ինչ անորոշ ու մշուշապատ զգում էր, երբ փոքր տղա էր։ Նա հասկացավ, որ իր հայրը դեռ այն ժամանակ էր ճանաչել այդ երկուսին, ովքեր այժմ նստած էին իր դիմաց, բազկաթոռներին։ Նա հասկացավ, որ մանուկ ժամանակ իրեն հաջողվել է պահպանել իր ծիծաղը միայն շնորհիվ այն բանի, որ իր հետ է եղել հայրը։

Թիմի աչքերը լցվեցին ոչ թե կարոտից, այլ այն պատճառով, որ նա երկար ժամանակ անթարթ նայում էր նրանց։ Խորթ մոր դեմքը ճարպակալել էր։ Թիմի աչքերի առջև կանգնած էր մի այլ դեմք, նրա դեմքը, ով նվիրել էր Թիմին իր ծիծաղը՝ մոր դեմքը։ Սև մազեր, փայլուն սև աչքեր, թուխ մաշկ և ուրախ կիսաշրջաններ շուրթերի անկյունների մոտ։

Ահա թե ինչու նրան այդքան դուր եկան Պալացցո Կանդիդոյի դիմանկարները Ջենովայում։ Դա ճանաչում էր, հուշ։ Իտալացի նկարիչների յուրաքանչյուր դիմանկարից նրան նայում էր մոր դեմքը։ Դրանք նրա անցյալի դիմանկարներն էին, նրա նախնիների, սերունդների դիմանկարները։ Իսկ գուցե և նրա ապագայի։ Այո, նա այդ հույսն ուներ։

Թիմի հայտնվելուն պես խորթ մայրը վեր թռավ բազկաթոռից, աղմկելով բարձր կրունկներով, շտապեց նրան ընդառաջ և առանց երկար-բարակ մտածելու, կախվեց նրա վզից։ Թիմը, որի վրա ալիքի նման հորդել էին հիշողությունները մոր մասին, շփոթված գրկեց խորթ մորը։ Բայց նա այլևս այն աղքատ և փոքր տղան չէր։ Նա սովորել էր տիրապետել և իր շփոթմունքին, և իր պոռթկումներին։ Արդեն հաջորդ վայրկյանին նա լուռ, մեղմ հեռացրեց խորթ մորը։ Եվ խորթ մայրը ենթարկվեց։ Մի երկու անգամ հեծկլտաց և տնկտնկալով վերադարձավ սեղանի մոտ, որտեղ դրված էր նրա

պայուսակը, շտապ հանեց թաշկինակը և մի քանի անգամ մոտեցրեց աչքերին, որոնց կպցված էին խիտ թարթիչներ։

Այժմ էրվինն էլ բարձրացավ տեղից։ Անփույթ քայլվածքով նա շարժվեց դեպի խորթ եղբայրը, մեկնեց նրան իր փափուկ, թուլացած ձեռքը և ասաց.

— Ողջույն, Թիմ։

— Ողջույն, էրվին։

Այլևս ոչինչ նրանք չհասցրին ասել միմյանց, որովհետև դուռը հանկարծ լայն բացվեց և շնչասպառ սենյակ մտավ բարոնը։

— Ովքե՞ր են սրանք։

Իհարկե, բարոնը կռահում էր, թե ով է նրա առջև։ Եվ Թիմը հիանալի դա գիտեր։ Այնուամենայնիվ, նա քաղաքավարի ձևով բարոնին ներկայացրեց իր անկոչ հյուրերին։

— Թույլ տվեք ձեզ ծանոթացնել իմ խորթ մոր, ֆրաու Թալերի հետ, պարոն բարոն։ Իսկ սա իմ խորթ եղբայր էրվինն է։

Հետո նա ընդգծված պաշտոնականությամբ, ձեռքի լավ յուրացրած նրբագեղ շարժումով նրանց ներկայացրեց իր խնամակալին։

— Բարոն Անատասը։

Խորթ մայրը աջ ձեռքը բարձրացնելով գրեթե մինչև Անատասի կզակը, ըստ երևույթին համբույրի սպասելով, ծլվլաց.

— Շատ հաճելի է, պարոն բարոն։

Անատասը ոչ մի ուշադրություն չդարձրեց նրա ձեռքին։

— Կարիք չկա այստեղ ներկայացում խաղալ, ֆրաու Թալեր։ Ձեր թատրոնը, ինչպես ասում են շար լեզուները, միևնույն է, վառվել է։

Խորթ մայրն ուզում էր բերանը բացել բարոնին կրքոտությամբ առարկելու համար, բայց հանկարծ փոխեց տակտիկան։ Նա շրջվեց դեպի Թիմը և, իր թթու դեմքի վրա քաղցր հիացմունք արտահայտելով, մի քայլ նահանջեց ու ասաց.

— Դու իսկական բարձր խավի երիտասարդի նման ես, տղա։ Ես շատ հպարտանում եմ քեզանով։ Մենք կարդացել ենք քո մասին ամեն ինչ։ Ճիշտ չէ՞, էրվին։

Նրա տղան ջղայնացած «այ-յո»-ի նման մի բան ասաց։ Ըստ երևույթին, նրա վերաբերմունքը մոր նկատմամբ բոլորովին չէր փոխվել։ Երեսառածության և անօգնականության, կյանքի նկատմամբ իր պահանջները ինքնուրույն բավարարել չկարողանալու

պատճառով մորից կախման մեջ լինելով, նա միաժամանակ ուրիշների ներկայությամբ ամաչում էր մոր համար։ Մոր կենդանական սերը նա օգտագործում էր մեծ օգուտով իր համար, բայց այդ սերը հանդուրժում էր դժվարությամբ։

Թիմն այժմ ուրախ էր, որ այդ սերը ժամանակին չտարածվեց իր վրա։ Այդ սերը կկոտրեր իր ուժը և իրեն կդարձներ դիմադրության անընդունակ։ Նա չէր դիմանա այնպիսի դժոխքին, ինչպիսին էր նրա համար կյանքը այս վերջին տարիներին։ Այդ հանդիպումը Թիմի համար եղավ ոչ թե պարզապես օգտակար, այլ դա ուղղակի անհրաժեշտություն էր։ Նա նորից տեսավ, որ ինքն անցել էր մի շրջան և որ կարծես շարժվում է պարուրաձև ու հիմա գտնվում է իր ուղու սկզբում, միայն մի քանի պտույտով ավելի բարձր։ Եթե ուղու սկիզբը նրա հին տունն էր նրբանցքում, ապա ինքը, զառիթափ շառավիղներով բարձրանալով սարը, հիմա նայում էր նրան այնտեղից, վերից վար՝ ահա այդ տունը, ցածր հովտում։ Թիմը տեսնում էր, որ խորթ մայրը և էրվինը դեռևս կանգնած են այնտեղ, որտեղ ինքը նրանց թողել էր, որ նրանք ոչ մի քայլ առաջ չեն շարժվել։ Եվ չնայած հիմա, «Տարվա ժամանակները» հյուրանոցի համարում նրանք կանգնած էին իր կողքին, իրականում նրանք այնքան հեռու էին իրենից, որ ինքը հազիվ էր լսում նրանց ձայները։

Հենց այդ րոպեին խորթ մայրն ասաց.

— Մենք հիմա ընդմիշտ կմնանք քեզ հետ և կհոգանք քո մասին, Թիմ։ Չէ որ դու ամբողջ հարստության օրինական ժառանգն ես և վաղը լրանում է քո տասնվեց տարին։ Իսկ դա նշանակում է...

— ...դա բնավ չի նշանակում, որ նա դառնում է չափահաս,— խրատական ձևով ասաց բարոնը։

Ֆրաու Թալերը կտրուկ շրջվեց նրա կողմը։ Նրա աչքերը փայլեցին այն կեղծ փայլով, որը Թիմը այնքա՜ն լավ էր հիշում մանկությունից։ Հիմա այդ փայլը թվաց բավական խամրած և միանգամայն անվտանգ։ «Օ՜, ինչպիսի հիմարություն է տառապել հիմարության ճնշման ներքո»,— մտածեց Թիմը։

Այդ ընթացքում Անատասը ուրախ ժպիտով բացատրեց, թե ինչու տասնվեց տարին լրանալուն պես Թիմը դեռևս չի դառնում չափահաս։

— Այս երկրում, տիկին Թալեր, մարդ չափահաս է դառնում, երբ լրանում է նրա քսանմեկ տարին։ Եվ միայն այդ տարիքում նա

կարող է դառնալ ժառանգության օրինական տերը։ Դուք, ըստ երևույթին, իմացել եք, որ ես հանդիսանում եմ մի երկրի քաղաքացի, որտեղ մարդ չափահաս է դառնում տասնվեց տարեկան հասակում։ Բայց դա բոլորովին չի առնչվում ձեր խորթ որդի Թիմի հետ։ Նա, ինչպես և առաջ, ենթարկվում է ոչ թե այն, այլ այս երկրի օրենքներին։ Եվ միայն քսանմեկ տարին լրանալուն պես կարող է դառնալ ժառանգության տերը։

Խորթ մայրը բարոնին չէր ընդհատում։ Քանի բարոնը խոսում էր, նա ոչ մի բառ չարտասանեց։ Նա միայն ջղային բաց ու փակ էր անում աչքերը և ձեռքում ճմռում էր թաշկինակը։ Այժմ նա նորից շրջվեց իր խորթ որդու կողմը և հարցրեց, դժվարությամբ զբսպելով հուզմունքը.

— Բայց մի՞թե դու այն երկրի հպատակը չես, որի հպատակն է բարոնը։

Թիմը, որ նրան նայում էր առանց կարեկցանքի, չլսեց հարցը, որովհետև խորասուզված էր իր մտքերի մեջ։ Նա միայն նկատեց, որ խորթ մայրը ինչ-որ բան հարցրեց։ Որպեսզի անքաղաքավարի չլինի, նա ցույց տվեց բազկաթոռները.

— Եկեք նստենք։ Մեզ համար նստած խոսելը ավելի հարմար կլինի։

Բոլորը լուռ տեղեր գրավեցին սեղանի շուրջը։

Թիմը ոտքը-ոտքի վրա դրեց և ասաց.

— Ես դեռ երբեք չեմ մտածել այն մասին, թե ով է իմ խնամակալը։ Երբ բարոնը...— նա կակազեց,— մեռավ, հայտարարվեց, որ հիմա իմ խնամակալը նոր բարոնն է։ Միայն այժմ մտքովս անցավ, որ խորթ մայրս պետք է դրա վերաբերյալ տար իր համաձայնությունը։ Դա եղե՞լ է։ Թե...

Ֆրաու Թալերը հանկարծ շփոթվեց։ Նա անօգնական փնթփնթաց.

— Գիտես, Թիմ, չէ որ մենք շատ խեղճ էինք ապրում, երբ դու գնացիր։ Մեր բախտն այնպես չէր բերում և այն ժամանակ...

— ...և այն ժամանակ ֆրաու Թալերը խնամակալությունը հանձնեց ինձ օրենքի բոլոր կանոններով,— նրա փոխարեն ավարտեց Անատասը,— ընդ որում, լավ վարձատրությամբ, որը հետագայում օգտագործվեց վարիետե թատրոն գնելու համար։ Իսկ թատրոնը առանց այլևայլի քայքայվեց։

— Բայց չէ որ դրանում ոչ թե ես եմ մեղավոր, այլ հանգա-

մանքները,— հեծկլտաց Ֆրաու Թալերը և սկսեց, ինչպես անցյալում, անդադար շաղակրատել։— Այո, իհարկե, ես գիտեմ, որ օրենքի համաձայն ամեն ինչ կարգին է, բայց չէ որ սա իմ զավակն է, իսկ մենք հիմա նետված ենք փողոց, ես և իմ որդին, և ահա...

Այս անգամ նրան ընդհատեց Թիմը։ Նա ասաց.

— Քանի որ դու վաճառել ես խնամակալությունը, այժմ այլևս ոչինչ հնարավոր չէ փոխել։

— «Վաճառել ես... Վաճառել...»։ Այդքան դաժան մի եղիր, Թիմ։ Մենք առանց փող ենք մնացել, Թիմ։

— Իսկ որքա՞ն փող է ձեզ հիմա պետք։

— Ո՞վ է փողի մասին խոսում։ Հիմա մենք քեզնից երբեք չենք բաժանվի, Թիմ։

— Ոչ,— պատասխանեց Թիմը։— Մենք կբաժանվենք։ Հուսով եմ, որ մենք այսօր տեսնվում ենք վերջին անգամ։ Բայց եթե ես կարող եմ ձեզ օգնել փողով, ես հաճույքով դա կանեմ։ Որքա՞ն փող է ձեզ պետք։

— Նախօրոք տալիս եմ իմ համաձայնությունը,— ասաց բարոնը։

Բայց Թիմը ձևացրեց, որ նրա խոսքերը չլսեց։

— Ախ, Թի՜մ։— Նորից այդ կեղծ հեծկլտոցը։— Չէ որ դու հիմա անսահման հարուստ ես։ Իսկ մենք, որպես քո հարազատները, չենք կարող կիսաքաղց կյանք վարել։

Քիչ էր մնում, որ բարոնը անզուսպ ծիծաղի, բայց նախքան դավաճան ծիծաղը կմատներ նրան, նա անմիջապես ձեռքով փակեց բերանը։ Նա ուզում էր ինչպես հարկն է ծիծաղել նրանց վրա, բայց ժամանակին հասկացավ, որ այդ ծիծաղը նրանց քաջ ծանոթ է։ Իսկ դա նշանակում է, որ անհրաժեշտ է անմիջապես նրանցից ազատվել։ Եվ հոգ տանել այն մասին, որ նրանք այլևս երբեք իր ճանապարհին չհանդիպեն։ Հետևաբար պետք է վճարել։ Դրա համար էլ բարոնը անմիջապես նրանց առաջարկեց.

— Ցամայկայում, Ֆրաու Թալեր, իմ տերիտորիայում կա բարգավաճող ծովափնյա առողջարան։ Այն գլխավորապես այցելում են ամերիկյան զբոսաշրջիկները։ Վաթսուն հազար դոլար տարեկան եկամուտ։ Ինչպես հայտնի է, Ցամայկան մշտնջենական գարնան կղզի է։ Ձեր բունգալոն գտնվում է ծովափին, արմավենիների տակ։

«Խոսում է ճիշտ և ճիշտ զբոսաշրջիկների համար ուղեցույցի

նման,— զարմանքով մտածեց Թիմը։— Ուրեմն, նա այդ էլ կարող է»։ Ի դեպ, նա անմիջապես հասկացավ, թե ինչու Անատասը որոշեց նրանց ուղարկել այդքան հեռու. նրանից չվրիպեց, թե որքան կտրուկ բարոնը կտրեց իր ծիծաղը։ Թիմը չզարմացավ անգամ այն ժամանակ, երբ բարոնը նրանց նվիրեց երկու տոմս առաջին կարգի նավախցիկում։

Խորթ մայրը, նորից հեծկլտալով կամ, ավելի ճիշտ, շարունակելով հեծկլտալ, ասաց.

— Օ՜, դուք չափազանց բարի եք, պարոն բարոն։

Էրվինի այտերը միայն Յամայկայի մասին մտածելուց արդեն հաճույքից շիկնեցին։ Նա անընդհատ ճպճպացնում էր աչքերը, ճիշտ մոր նման։

— Խնդրում եմ, դուք ինձ հետ անցեք իմ համարը, որպեսզի անմիջապես պայմանագիր կնքենք,— ասաց բարոնը։

Նա վեր կացավ իր տեղից, մոտեցավ դռանը և խորթ մոր առջև հեգնական քաղաքավարությամբ՝ բացեց դուռը։

Ֆրաու Թալերը, կրունկներով աղմկելով, շտապեց նրա ետևից, բայց, ժամանակին մտաբերելով Թիմին, շեմքում շրջվեց և հարցրեց.

— Չէ՞ որ դու մեզ չես մոռանա, Թիմ։

— Կարծեմ, ես ձեզ արդեն մոռացել եմ,— ասաց Թիմը, բայց ոչ այնքան էլ բարձր։ Հետո նա ձեռքը մեկնեց խորթ մորը և լուրջ ասաց։— Ցանկանում եմ հաջողություն Յամայկայում։

— Շնորհակալություն, շնորհակալություն, տղաս։

Նրա բերանը պատրաստվում էր ժպիտից ձգվել, բայց չհասցնելով ժպտալ, նա հայտնվեց դռան հետևում։

Էրվինը, սեղմելով Թիմի ձեռքը, ուզում էր հետևել մորը, բայց Թիմը նրան պահեց և շշուկով ասաց.

— Մի խոշորացույց ճարիր ինձ համար և դիր Ալստերի ափին, հյուրանոցի մուտքի դիմացի կարմիր նստարանի տակ։ Ահա, բռնի։— Նա գրպանից հանեց մոտը եղած ամբողջ դրամը և մեկնեց Էրվինին։

Նայելով թղթադրամներին, Էրվինը զարմացած հարցրեց.

— Իսկ սա ի՞նչ երկտող է։

— Վա՜յ։ Դա դեռ ինձ պետք է,— քիչ մնաց բացականչի Թիմը, բայց, բարեբախտաբար, նա դա ասաց շշուկով։

Երկտողը նորից անցավ Թիմի գրպանը, իսկ Էրվինը շարժվեց դեպի դուռը։

— Ամեն ինչ կարգին կլինի,— շշուկով ասաց նա շեմից։— Լռում եմ գերեզմանի պես։

Թիմը գլխով արեց և փակեց դուռը իր խորթ եղբոր և իր հեռավոր անցյալի ետևից։ Անգլիական կողպեքով։

Թերթ Երեսուներորդ

ԹՂԹԵՐԸ

Զարմանալի է, թե ինչպիսի արագությամբ են հարուստ և ազդեցիկ մարդիկ հիմնարկներում կարգավորում այն գործերը, որոնց համար այսպես կոչվող «հասարակ մարդը» հաճախ ամիսներ է վատնում։

Ընդամենը մեկ օրվա ընթացքում բարոն Անատասի բաժնետիրական ընկերության սեփական իրավաբանական գրասենյակում ձևակերպված էին բազմաթիվ կարևոր փաստաթղթեր, համաձայն որոնց.

Ծովափնյա առողջարանը Ցամայկայում հավասար իրավունքով հանձնվում էր ֆրաու Թալերին և նրա որդի Էրվինին։ Այդ կապակցությամբ Թիմը ստիպված եղավ կրկին հանդիպել նրանց, միայն մեկ րոպեով։ Էրվինը, սակայն, հասցրեց շշուկով հայտնել նրան, որ խոշորացույցը արդեն դրված է նստարանի տակ։

«Համբուրգ—Հելհոլանդ—Մարդատարը» նավագնացությունը, որը կրճատ անվանվում է «ՀՀՄ», այդ նույն օրվանից դառնում էր Թիմ Թալերի անձնական սեփականությունը։ (Նախկին տերը, ծեր պարոն Դենկերը պայմանագիրը կնքելուց հետո ջերմ սեղմեց Թիմի ձեռքը, ասելով. «Թո՛ւ, թո՛ւ, թո՛ւ, որ աչքով չտանք»,— և ձախ ուսի վրայով երեք անգամ թքեց։

Դրանից որոշ ժամանակ առաջ Լոնդոնում միսթր Պեննիից Թիմի ստացած համբուրգյան նավագնացության բաժնեթղթերով ծրարը դառնում էր, և էլի նույն օրվանից, բարոնի սեփականությունը։

Մեկ տարի տևողությամբ պայմանական ժամկետը տվյալ դեպքում չեղյալ էր համարվում, քանի որ բարոն Անատասը հանդիսանում էր վճռական ձայնի իրավունքով բաժնեթղթերի տերը։

Եվ, վերջապես, վերջին պայմանագիրը, որ կնքվեց այդ օրը՝ ժառանգության մասին պայմանագիրն էր։ Մինչև հիմա բարոնը հաջողությամբ ձգձգում էր նրա կնքումը, քանի որ Թիմը երբեք դրա մասին չէր հարցնում։

Թե ինչու բարոնը հանկարծ պատրաստակամություն հայտնեց կնքելու այդ պայմանագիրը, Թիմը չգիտեր, և, ի դեպ, դա նրան չէր էլ հետաքրքրում։ Գործարքներ, պայմանագրեր, հարստություն— այս ամենը նրան այժմ բնավ չէր հետաքրքրում։ Միակ հարստությունը, որը նրան հիմա հետաքրքրում էր— ծիծաղն էր։ Նա կանխագուշակում էր, որ իր գրպանի փոքրիկ երկտողը (գիշերը նա այն պահեց բարձի տակ) իր կողպեքով փակված ծիծաղի բանալին էր։ Դրա համար էլ նա շտապում էր, որ խոշորացույցը հանի նստարանի տակից։ Նա ժամանակ առ ժամանակ ճակատը շփում էր ձեռքով, որպեսզի բարոնի ուշադրությունը գրավի այն բանի վրա, թե ինչպես են իրեն հոգնեցրել երեք պայմանագրերի կնքման անսահման ձևականությունները։ Նկատելով այդ, բարոնն ասաց.

— Եթե ձեր գլուխը ցավում է, մենք կարող ենք ժառանգության մասին պայմանագրի կնքումը հետաձգել վաղվան։ Դուք համաձա՞յն եք, պարոն Թալեր։

Թիմը անմիջապես չհամաձայնվեց։ Դրա համար նա այժմ բավականաչափ փորձված էր։ Նա բացատրեց, որ, իր կարծիքով, ավելի լավ կլիներ պայմանագիրը կնքել անմիջապես, բայց, ցավոք, այս րոպեին նրա գլուխը ցավում է։ Իսկ քանի որ պայմանագիրը պետք է ստորագրել պայծառ գլխով, թերևս, իսկապես ավելի լավ կլինի հետաձգել վաղվան։

Այդ խորամանկությունը, ինչպես ինքը ենթադրեց, հաջողվեց։ Պայմանագրի ստորագրումը հետաձգեցին մյուս օրվան և այն բանից հետո, երբ նա հնազանդ կուլ տվեց երկու դեղահաբ, Թիմին թույլ տվեցին գնալ մի քիչ զբոսնելու Ալստերի հյուրանոցի առջև («Թարմ օդը հրաշքներ է կատարում»,— ասաց նրան իրավաբաններից մեկը)։

Թիմը գիտեր, որ մոտերքում որևէ տեղ թաքնված լրտես կա, որը աչքը չի հեռացնում իրենից, և այդ պատճառով անմիջապես չնետվեց խոշորացույցը նստարանի տակից հանելու։ Նա թերթ գնեց կրպակում և նստեց նստարանին։ Նրան հաջողվեց շատ շուտ հայտնաբերել, թե որտեղ է խոշորացույցը։

Ընթերցելիս Թիմը այնպես էր թերթը բռնել, որ ներդիր էջը

շուտով ցած սահեց նրա ծնկներից և ընկավ նստարանի տակ։ Այդ ժամանակ Թիմը կռացավ և թերթի էջի հետ միասին վերցրեց խոշորացույցը։ Հետո պահվելով թերթի ետևում, զգուշությամբ խոշորացույցը դրեց պիջակի գրպանը։ Հիմա նա ավելի հաճախ հագնում էր գորշ գույնի կամ մանր վանդակներով ֆլանելե կոստյումներ։

Անցավ տասնհինգ րոպեից ոչ պակաս, նախքան Թիմը ծալեց թերթը և թողնելով այն նստարանի վրա որևէ անցորդի համար, մտավ հյուրանոց։ Հերթապահը բանալու հետ միասին նրան հանձնեց չորս տակ ծալված մի թուղթ։ Դա երկտող էր բարոնից։

«Եթե դուք ձեզ ավելի լավ զգաք, եկեք, խնդրում եմ, իմ համարը։

Ա ն ա տ ա ս »։

Թիմը որոշեց բարձրանալ վերև, բարոնի համարը, սակայն մինչ այդ կարճ ժամանակով գնաց իր համար։ Նա խոշորացույցը պահեց լողարանի պատին կախած դեղորայքի տուփի մեջ և Ջոնների երկտողը խողովակաձև կլորելով, մտցրեց գլխացավի հաբերի կիսադատարկ սրվակի մեջ։ Սրվակը նորից իր տեղը դնելով, նա գնաց բարոնի մոտ։

Սովորաբար կարևոր բանակցությունների ժամանակ Անատասը ձեռքին ունենում էր մի թուղթ, որի վրա նշված էին լինում հիմնական կետերը։ Այս անգամ էլ Թիմը նրա ձեռքին այդպիսի թուղթ տեսավ։ Նրա վրա սյունակի ձևով գրված էր ընդամենը երեք բառ։ Թիմին չհաջողվեց ինչպես հարկն է տեսնել դրանք, բայց առաջին բառը շատ նման էր «Ռիկերտ» ազգանվանը։

— Վաղը, պարոն Թալեր,— սկսեց բարոնը,— լրանում է պարոն Ռիկերտի վերաբերյալ մեր փոքր պայմանագրի ժամկետը։ Եթե մինչև վաղը դուք հարաբերություններ չհաստատեք ձեր համբուրգյան բարեկամների հետ, պարոն Ռիկերտը նորից կնշանակվի նավագնացության դիրեկտոր։ Տարիքի կապակցությամբ, նա կարող է շուտով պատվով անցնել ամենամսյա բարձր վարձատրվող թոշակի։ Ցավոք, ես և դուք վաղը պետք է թռչենք Կահիրե, որովհետև եգիպտական մի ֆիրմա բողոքարկ է ներկայացնում մարգարինի «Պալմարո» անվան կապակցությամբ։ Հետևաբար, եթե դուք ուզում եք խոսել ձեր համբուրգյան բարեկամների հետ, դուք դա պետք է անեք այսօր։ Բայց այդ դեպքում մեր պայմանագիրը

կկորցնի իր ուժը, և պարոն Ռիկերտը ստիպված կլինի ընդմիշտ մնալ դոկեր։

— Դոկե՞ր,— զարմացած հարցրեց Թիմը։

— Այո, պարոն Թալեր, դոկեր։ Նա գլորվել է այդ մակարդակին։ Իսկ դա նրա տարիքում այնքան էլ հեշտ չէ։ Այդ պատճառով էլ ես ենթադրում եմ, որ դուք կուզեք դուրս քաշել նրան այդ տխուր վիճակից և չեք աշխատի հանդիպել ոչ Կրեշիմիրի, ոչ ղեկորդ Ջոննիի, ոչ էլ իրեն պարոն Ռիկերտի հետ։ Սակայն, գուցե ես սխալվո՞ւմ եմ։

Անատասը վախով և ուշադրությամբ նայեց Թիմին։ Եվ Թիմը գիտեր, թե ինչու, ըստ երևույթին, բարեկամներից որևէ մեկը արդեն գտել էր իր ծիծաղի բանալին, և բարոնը այդ մասին գլխի էր ընկնում։ Այսօր բարոնը ջանասիրաբար հետևում էր, որ իր շուրթերի վրա ժպիտ չերևա։

— Պարոն Ռիկերտը նորից պետք է դիրեկտոր դառնա։

— Ուրեմն, մեր պայմանագիրը ուժի մե՞ջ է մնում, պարոն Թալեր։

Թիմը գլխով արեց։ Բայց նրա այդ շարժումը կեղծ էր։ Նա բնավ էլ չէր պատրաստվում խուսափել բարեկամների հետ հանդիպելուց։ Ընդհակառակը, հարկավոր էր նրանց հանդիպել այսօր։ Վաղն արդեն ուշ կլինի։ Իսկ պարոն Ռիկերտը, միևնույն է, արդեն կդառնա նավագնացության դիրեկտոր։ Միայն ոչ թե բարոնի, այլ Թիմի նավագնացությունում, որն այսօր առավոտյան անցավ նրա տնօրինությանը, որպես սեփականություն, համաձայն «ՀՀՄ» նավագնացությունում կնքած պայմանագրի։

Անատասը նայեց իր թղթին, զգացվում էր, որ նա գրեթե լրիվ հանգստացավ, և ասաց.

— Երկրորդ կետը, պարոն Թալեր, վերաբերվում է...— բարոնը կմկմաց, բայց հետո այնուամենայնիվ ավարտեց սկսած նախադասությունը,— երկրորդ կետը վերաբերվում է ձեր ծիծաղին։

Նա նորից զննող հայացք գցեց Թիմին։ Բայց Թիմը վաղուց արդեն սովորել էր, և ոչ թե մեկ ուրիշից, այլ հենց բարոնից, անտարբերության դիմակի տակ թաքցնել իր զգացմունքները։ Նույնիսկ ձայնը չդողաց, երբ նա հարցրեց.

— Ուրեմն, ի՞նչ էիք ուզում ասել իմ ծիծաղի մասին։

— Մեկ տարի առաջ, պարոն Թալեր, իմ դղյակի կարմիր տաղավարում ես ստուգեցի որքանով է ձեզ հետաքրքրում ձեր ծիծաղը

և շարունակո՞ւմ է արդյոք նա ձեզ ընդհանրապես հետաքրքրել։ Այն ժամանակ ես կես ժամով փոխարինաբար վերադարձրի ձեր ծիծաղը և այդ փոքր փորձի հետևանքով իմացա, որ դուք դեռ շարունակում եք ուժեղ կարոտել ձեր ծիծաղին։ Հենց նոր ես նորից, ձեզ համար աննկատելի ձևով, մի փոքր փորձ կատարեցի։ Այս անգամ արդյունքը ստացվեց շատ ավելի գոհացուցիչ։ Դուք կամովին հրաժարվում եք աշխարհում այն երեք միակ մարդկանց հետ հանդիպելուց, որոնք գիտեն մեր պայմանագրի մասին, և, հավանաբար, կկարողանային անհրաժեշտության դեպքում օգտակար խորհուրդ տալ ձեզ...

Գոհ տեսքով բարոնը թիկնեց բազկաթոռին։

— Ըստ երևույթին, վերջին մեկ տարվա ընթացքում դուք սովորել եք ավելի բարձր գնահատել իշխանությունը, հարստությունը և հաճելի կյանքը, քան այնպիսի դատարկ բան, ինչպիսին ծիծաղն է։

Թիմը նորից գլխով արեց։

— Ես ձեզ առաջարկում եմ...— բարոնը նորից թեքվեց առաջ,— լրացուցիչ պայմանագիր կնքել։

— Ինչպիսի՞ պայմանագիր, պարոն բարոն։

— Ահա թե ինչպիսի, պարոն Թալեր։ Ես պարտավորվում եմ ձեզ համար ապահովել այնպիսի երկրի հպատակություն, որտեղ դուք չափահաս կհամարվեք սկսած այս օրվանից։ Այդ դեպքում դուք կկարողանաք անմիջապես ստանալ ձեր ժառանգությունը։

— Իսկ ի՞նչ պարտավորություններ պետք է ես վերցնեմ ինձ վրա, բարոն։

— Միայն երկու պարտավորություն, պարոն Թալեր։ Նախ՝ երբեք ետ չպահանջել ձեր ծիծաղը։ Երկրորդ՝ զիջել ինձ ժառանգության կեսը, ներառյալ վճռական ձայնի իրավունքով բաժնեթղթերը։

— Այդ առաջարկի մասին արժե մտածել,— դանդաղ ասաց Թիմը, աշխատելով ժամանակ շահել։

Հասկանալի է, որ նա ոչ մի վայրկյան չէր պատրաստվում մտածել անգամ, որ դրոշմոցով և կնիքով հաստատի սեփական ծիծաղից ընդմիշտ հրաժարվելը։ Բայց պետք էր այնպես անել, որ Անատասը ոչ մի դեպքում այդ մասին գլխի չընկնի։

Եվ հանկարծ մի երջանիկ միտք եկավ Թիմի գլուխը։ Եթե ինքը հիմա սկսի բարոնի հետ սակարկել, բարոնը վերջնականապես կհավատա, որ Թիմն ընդմիշտ հրաժարվել է իր ծիծաղից և համոզ-

վել է, որ այս աշխարհում իշխանությունը և հարստությունը շատ ավելի կարևոր են, քան ինչ-որ պայթյուններ և ելևէջներ կոկորդում։

Եվ Թիմը սկսեց սակարկել։ Իրեն հայտնի է, ասաց նա, որ բարոնը կարող էր մինչև իր ծննդյան քսանմեկերորդ տարին լրանալը ձեռք առնել այնպիսի միջոցներ, որ իրեն խանգարի ժառանգության իրավունքներին հասնել։ Այդ պատճառով էլ, Թիմը, որպես սկզբունք, համաձայն է ստորագրել լրացուցիչ պայմանագիր։ Սակայն նա դնում է իր պայմանները՝ ստանալ ժառանգության երեք քառորդը, ներառյալ վճռական ձայնի իրավունքով բաժնեթղթերի երեք քառորդը։

Թիմի ուշադրությունից չվրիպեց բարոնի դեմքին այդ պահին վայրկենապես սահած ժպիտը։ Ըստ երևույթին, բարոնը լրիվ համոզվեց, որ Թիմը վերջնականապես հրաժարվել է իր ծիծաղից։ Հենց այդ էլ պետք էր Թիմին։

Նրանք սակարկում էին ամբողջ կես ժամ։ Ի վերջո Թիմը զիջեց։ Հիմա նա պահանջում էր ժառանգության երեք քառորդը և վճռական ձայնի իրավունքով բաժնեթղթերի կեսը։

— Համաձայնվեք իմ պայմաններին, բարոն, և մենք վաղը Կահիրեում լրացուցիչ պայմանագիր կկնքենք։

— Այդ մտքին ես դեռ պետք է ընտելանամ, պարոն Թալեր։ Վաղը, երբ մենք կլինենք Կահիրեում, ես ձեզ կտամ վերջնական պատասխանը։ Իսկ այժմ...— բարոնը ժպտաց,— ես անցնում եմ վերջին կետին։— Նա վեր կացավ, ձեռքը մեկնեց Թիմին և ասաց.— Սրտանց շնորհավորում եմ ձեզ տասնվեցամյակի առթիվ։ Եթե դուք որևէ ցանկություն ունեք, պարոն Թալեր...

Ցանկությո՞ւն։ Թիմը մտածեց։ Եթե այս օրը բարոնը իրեն տա ամենաթանկագին նվերը՝ իր ծիծաղը, ապա ամենայն հավանականությամբ, ինքը այլևս չի ունենա ոչ մի հարստություն։ Չէ որ նավագնացությունը նա պատրաստվում էր նվիրել իր բարեկամներին։ Ուրեմն, այդ դեպքում ի՞նչ խնդրել որպես նվեր։

Վերջապես հիանալի միտք եկավ նրա գլուխը։

— Խնդրում եմ, ինձ համար տիկնիկային թատրոն գնեք, բարոն։

— Տիկնիկային թատրո՞ն։

— Այո, բարոն։ Տիկնիկային թատրոն, որտեղ երեխաները կարող են ինչպես հարկն է ծիծաղել։

Դրանով Թիմը մատնեց իրեն։ Բայց բարոնը նրան սխալ հասկացավ։

— Օհո՜,— բացականչեց Անատասը։— Հասկանում եմ։ Դուք էլ եք ուզում ձեզ համար մի քիչ ծիծաղ գտնել, և ձեզ թատրոնը պետք է, որպեսզի կարողանաք ընտրել ամենահարմարը։ Վա՜տ չեք մտածել։ Իմ մտքով դա դեռևս չէր անցել։

Թիմին թվաց, թե ինչ-որ մեկը ամբողջ ուժով հարվածեց նրա գլխին։ Ուրեմն, բարոնը լուրջ կարող էր մտածել, որ ինքը՝ Թիմ Թալերը, իր կրած բոլոր փորձություններից հետո ընդունակ է գողանալ որևէ մանկիկի ծիծաղը։

«Սա պարզապես սատանա է և ոչ թե մարդ,— մտածեց Թիմը,— իսկական սատանա»։

Այս անգամ բարոնը չէր կարող չնկատել Թիմի հուզմունքը։ Բայց այդ րոպեին նա շրջվեց։ Տիկնիկային թատրոնի հարցով նա արդեն զանգահարում էր ինչ-որ տեղ։ Եվ դեռ կես ժամ չանցած, նրա բախտը բերեց։ Համապատասխան գնով, որ առաջարկեց բարոնը, նրան հաջողվեց ձեռք բերել մարիոնետային ոչ մեծ թատրոն գլխավոր կայարանից ոչ հեռու, որը արդեն մի քանի տարի մի կերպ քարշ էր տալիս իր խղճուկ գոյությունը։

— Եկեք հենց հիմա գնանք այնտեղ, պարոն Թալեր,— ասաց Անատասը։— Ես ինձ հետ կտանեմ նոտարի և կանխիկ դրամ— ծննդյան օրվա նվերների համար պետք է վճարել կանխիկ...

Կեղտոտ և քերծմծված պատերով փոքր սենյակում, որը, ըստ երևույթին, ծառայում էր որպես թատրոնի գրասենյակ, ստորագրվեց ևս մեկ պայմանագիր։ Թիմ Թալերը այսուհետև դառնում էր տիկնիկային թատրոնի տերը։ Այդ բոլորը նման էր հրաշքների, որոնք ամեն օր չէ, որ կատարվում են անգամ տիկնիկային թատրոնում։

Հակառակ սովորության, բարոնը և երիտասարդը հյուրանոց գնացին ոտքով։ Թիմն առաջին անգամ հարցրեց բարոնին.

— Իսկ ինչո՞ւ է ձեզ հենց իմ ծիծաղը այդքան դուր գալիս։ Այնքա՞ն է դուր գալիս, որ դուք պատրաստ եք կես թագավորություն տալ նրա դիմաց։

— Ինձ զարմացնում է,— պատասխանեց Անատասը,— որ դուք նախկինում երբեք այդ հարցը ինձ չեք տվել, պարոն Թալեր։ Այդ հարցին պատասխանելը այնքան էլ հեշտ չէ։ Միտքս կարճ ձևակերպելով, կարող եմ ասել հետևյալը. երբ դուք նրբանցքում

ապրող փոքր տղա էիք, պարոն Թալեր, դուք ձեր ծիծաղը անցկացրիք այնպիսի չարիքների և դժբախտությունների միջով, որ նա կոփվեց և դարձավ ադամանդի պես ամուր։ Ձեր ծիծաղը ենթակա չէ քայքայման, պարոն Թալեր։ Նա անսասան է։

— Բայց չէ որ ես ինքս ենթակա եմ քայքայման, բարոն,— շատ լուրջ առարկեց Թիմը։

— Բանն էլ հենց դա է,— ասաց բարոնը։

Եվ նախքան Թիմը կհասկանար այդ տհաճ դիտողության իմաստը, նրանք արդեն մոտեցան հյուրանոցին։

— Հելլո՜, միսթր Բրաուն,— նրան ողջունեց հյուրանոցի տերը։

Ի պատասխան՝ բարոնը ցրված գլխով արեց։

Վերևում, Թիմի համարի դռան առջև, Անատասը կանգ առավ և հարցրեց.

— Իսկ ձեր ինչի՞ն են պետք, պարոն Թալեր, վճռական ձայնի իրավունքով բաժնեթղթերը։ Չէ որ պայմանագրի համաձայն դուք, միևնույն է, դրանք պետք է զիջեք միսթր Պեննիին։

«Նորից այդ պայմանագրերի մասին,— հուսահատությամբ մտածեց Թիմը։— Ամբողջ ծննդյան օրս թղթերով է լցված»։ Նրան այժմ աշխարհում հետաքրքրում էր միայն մեկ թուղթ. դեղահաբերի հետ ապակե սրվակի մեջ դրված, խողովակաձև փաթաթված փոքրիկ երկտողը։ Թիմի համար այնքան էլ հեշտ չէր պատասխանել բարոնի հարցին։ Եվ այնուամենայնիվ, իրեն հաղթահարելով, նա ասաց.

— Ես որոշ մտքեր ունեմ, բարոն, այն բանի օգտին, որ միսթր Պեննին որքան հնարավոր է շատ ստանա վճռական ձայնի իրավունքով բաժնեթղթեր։

— Հը՜մ,— մտախոհ արտասանեց Անատասը։ Հետո նա ասաց.— Այսօր ինձ ևս երկու խորհրդակցություն է սպասվում։ Իսկ դուք ի՞նչ եք պատրաստվում անել, պարոն Թալեր։

Թիմը ձեռքով շփեց ճակատը։

— Գլխացավս դեռևս չի անցնում, բարոն։ Ես, թերևս, գնամ պառկեմ։

— Այ դա ճիշտ է,— ժպտաց բարոնը։— Քունը լավագույն սպեղանին է։

Եվ նա գնաց։

Իսկ Թիմը անհամբերությամբ բանալիով բացեց իր համարի դուռը և իրեն գցեց լողարան։

Թերթ երեսունմեկերորդ

ԽՈՐՀՐԴԱՎՈՐ ԵՐԿՏՈՂԸ

Լողարանում Թիմը վառեց միայն լվացարանի վերևում ամրացված հայելին լուսավորող լամպը։ Հետո նա դեղարկղից հանեց խոշորացույցը, իսկ ապակե սրվակից՝ երկտողը։ Նրա սիրտը բաբախում էր այնքան ուժեղ, որ թվում էր, թե հիմա դուրս կթռչի տեղից։

Բայց մինչև երկտողը կարդալը մոխրագույն կոստյումով երիտասարդը ստուգեց՝ արդյո՞ք լավ է փակված լողարանի դուռը։ Հետո նա կանգնեց լվացարանի առջև, խոշորացույցով նայեց փոքր երկտողին և (ո՜ւմ էր պետք այդ վայրկյանին նրբագեղ կոստյումը) վերածվեց անսահման հուզված տղայի։

Խոշորացույցը նրա ձեռքում դողում էր, և այնուամենայնիվ Թիմին հաջողվում էր տառ առ տառ կարդալ մանրադիտակային ձեռագրով գրված բառերը։ Որքան շատ էր կարդում երկտողը, այնքան ավելի ու ավելի էր զարմանում։

Արի «Սա՛գ, սա՛գ, հենց մոտենամ—կկպչեմ»։ Ձեռք բեր այն, ինչ ձեռք բերեց արքայաղուստը։ Միջոցը շատ ավելի հասարակ է, քան դու կարծում ես։ Նա, ով համոզում էր հրաժարվել Հարավայինից, ցույց կտա քեզ։ Մանոթ ավտովարորդը հսկում է ժամացույցով տունը։ Սպասիր տրամվայների (սև՜) ժամին։ Ձգուշացիր առնետից և խաբիր նրան։ Միջոցը հասարակ է, բայց ընտրիր հետևամուտքերը և բակերը։ Վստահիր մեզ և արի։

Թիմը ցած իջեցրեց խոշորացույցն ու երկտողը բռնած ձեռքը և նստեց վաննայի եզրին։ Դեռ շարունակում էր հուզմունքից դողալ, բայց նրա գլուխը պարզ էր։ Նա հասկանում էր, որ երկտողը ծածկագրված է, որպեսզի բարոնի ձեռքն ընկնելու դեպքում չկարդացվի։ Ուրեմն, այժմ մնում էր հասկանալ ծածկագրված ակնարկները և գաղտնի ցուցումները։ Նա նորից մոտեցավ լվացարանին, կանգնեց լամպի տակ և դանդաղ կարդաց երկտողը սկզբից, առանձին նախադասություններով։

Արի «Սա՛գ, սա՛գ, հենց մոտենամ—կկպչեմ»-ը։

Դա դժվար չէր հասկանալ։ Պետք է գնալ այնտեղ, որտեղ նա նայել է տիկնիկային թատրոնի ներկայացումը։ Ուրեմն, Օվելգյոնե արվարձանի պանդոկը։

Ձեռք բեր այն, ինչ ձեռք բերեց արքայադուստրը:

Դա ավելի պարզ էր։ Այդ նախադասությունը պարունակում էր ամենակարևոր և ամենաթանկագին լուրը։ Դա պարզապես նշանակում էր՝ վերադարձրու քո ծիծաղը։ Իսկ որ դա հնարավոր էր, հաստատում էր հաջորդ նախադասությունը.

Միջոցը շատ ավելի հասարակ է, քան դու կարծում ես:

Բայց ի՞նչ կարող էր նշանակել ահա այս.

Նա, ով ձեզ համոզում էր հրաժարվել Հարավայինից, ցույց կտա ձեզ:

Թիմը ստիպված էր լարել հիշողությունը։ Եվ վերջապես նա հիշեց։ Չէ՞ որ Հարավայինը նժույգ է։ Վերջին նժույգը, որի վրա նա գրաց է եկել։ Իսկ անծանոթը, որն այն ժամանակ համոզում էր նրա վրա չդնել՝ Կրեշիմիրն է։

Ուրեմն Կրեշիմիրը գիտե, թե ինչպես կարելի է վերադարձնել իր ծիծաղը։ Թիմը դա առաջ էլ էր կռահում։ Բայց այն, որ դա հաստատվեց, մինչև հոգու խորքը ցնցեց նրան։ Նա ստիպված նորից նստեց վաննայի եզրին։ Բավականաչափ լույս էր և այստեղ նույնպես կարելի էր կարդալ երկտողը։

Ծանոթ ավտովարորդը հսկում է ժամացույցով տունը:

Ծանոթ վարորդը Ջոննին էր։ Թիմը դա ոչ մի վայրկյան չէր կասկածում։ Բայց ի՞նչ է նշանակում «ժամացույցով տունը»։ Այդ ոչ բարդ հանելուկի բանալին Թիմը բավական երկար որոնեց, մինչև վերջապես գլխի ընկավ, որ խոսքը քաղաքապետարանի մասին է։ Քաղաքապետարանը շատ մոտ է իր հյուրանոցին։ Ուրեմն, հենց այնտեղ Ջոննին տաքսիով կսպասի իրեն, որպեսզի տանի Օվելգյոնե։

Բայց ե՞րբ։ Դա առայժմ անհասկանալի էր։

Սպասիր տրամվայների (սև՞) ժամին:

Տրամվայի հետ կապված Թիմի երկու արկածները կապված էին նրա բարեկամների հետ. մեկը՝ երբ տրամվայը, որով գնում էին ինքն ու պարոն Ռիկերտը, թեքվեց իր սովորական ուղուց, և երկրորդը՝ թռչող տրամվայը Ջենովայում, որը նա տեսավ Ջոննիի հետ միասին։ Ըստ երևույթին, նկատի ունեին երկու դեպքերը։ Չէ՞ որ «տրամվայ» բառը օգտագործված է հոգնակի թվով։

Տրամվայների ժամը... Բայց ժամը քանի՞սն էր դա։ Թռչող տրամվայը նա տեսավ մոտավորապես կեսօրին, մոտավորապես ժամը տասներկուսին։ Իսկ հիմա,— Թիմը նայեց իր ժամացույ-

ցին,— ժամը հինգն է։ Ուրեմն, պետք է վա՞ղը գնա։ Բայց գուցե նա պետք է այսօր գնար։

Բայց չէ որ այստեղ «ժամին» բառից առաջ կա նաև «սև» բառը։ Փակագծում և բացականչական նշանով։ Ուրեմն, ի՞նչ է նշանակում «սև կեսօրը»։

Եվ նա նորից ստիպված էր մտածել բավական հասարակ խնդրի վրա։

Բայց գտնվեց և այդ հանելուկի պատասխանը. «սև ժամը» տատներկուսն է։ Կեսգիշերը։ Մինչ այդ մնում էր դեռ յոթը երկար ժամ։

Մնացածը հասկանալը շատ հեշտ էր.

Զգուշացիր առնետից և խաբիր նրան։ Միջոցը հասարակ է, բայց ընտիր հետնամուտքերը և բակերը։ Վստահիր մեզ և արի։

Եվ այսպես, Թիմը պետք է զգուշանար Անատասից և գաղտնաբար դուրս գար հյուրանոցից, գուցե անգամ զգեստափոխված։ «Հետնամուտքը և բակեր» բառերը այս ամենին հաղորդում էին չարագործներով և զգեստափոխված հերոսներով արկածային վեպի երանգ։

Վերծանելով այդ խորհրդավոր երկտողը, Թիմն իրեն զգաց ինչպես ազատ թռչուն։ Նրա մեջ առաջացավ ծիծաղելու անհաղթահարելի ցանկություն։ Եվ ամենազարմանալին այն էր, որ նրա շրթունքներն այդ ժամանակ սովորականի նման չմնացին ամուր սեղմված։ Նրանք դողացին և աննշան, գուցե դա նրան միայն թվաց, բացվեցին ժպիտից։

Երջանիկ սարսափի զգացումով Թիմը վեր թռավ և նայեց հայելուն. նրա բերանի անկյուններում հայտնվել էին երկու աննշան կիսաշրջաններ, ինչպես իտալական դիմանկարների վրա՝ Ջենովայի Կանդիդո Պալացցոյում։ Դա դեռ ոչ ծիծաղ էր, ոչ էլ նույնիսկ ժպիտ։ Բայց կիսաշրջանները շուրթերի անկյունների մոտ երևում էին միանգամայն պարզ։ Բայց չէ որ այն վայրկյանից, երբ Թիմը պայմանագիր կնքեց մեծ շագանակենու տակ, նա այլևս ոչ մի անգամ այդ կիսաշրջանները չէր տեսել։

Ուրեմն, այդ օրն արդեն ինչ-որ բան փոխվել էր։ Հույսը, նկարչի վրձնի նման, վերափոխել էր նրա դեմքը։ Նրա դեմքին ծնունդ էր առնում ժպիտը։

Թիմը պիջակի գրպանը դրեց երկտողը, լույսը հանգցրեց և,

դուրս գալով լողարանից, նստեց բազկաթոռին ոտքը ոտքին դրած։ Անհրաժեշտ էր ամեն ինչ լավ կշռադատել։

Բարոնն այդ ժամանակ գտնվում էր Թիմից ոչ հեռու, Ալստերի առափնյա տաղավարում։ Նա այստեղ բանակցություններ էր վարում եգիպտական այն ֆիրմայի ներկայացուցիչների հետ, որը բողոքարկ էր ներկայացրել «Պալմարո» տեսակային մարգարինի անվան դեմ։ Ֆիրման պահանջում էր, որ Անատասի մարգարինին որևէ այլ անուն տրվեր։

Բարոնն այդ խոսակցության ժամանակ հանդես չէր բերում ոչ այն սառնասրտությունը, ոչ էլ այն հանգիստ գերազանցությունը, որոնք դարձել էին նրա երկրորդ էությունը այն պահից ի վեր, երբ նա ձեռք բերեց ծիծաղը։ Իհարկե, մեծ մասամբ դա բացատրվում էր նրանով, որ «Պալմարո» անվան տակ լայնորեն ռեկլամված մարգարինը արդեն սկսում էր շլսված արագությամբ նվաճել միլիոնավոր գնորդների։ Սակայն բարոնը ոչ մի դեպքում չպետք է ցույց տար, որքան կարևոր է նրա համար մարգարինի անունը։ Պետք էր առարկել ցրված, թեթև ժպիտով։ Չէ որ հենց այսպիսի դեպքերի համար էր նա գնել ծիծաղը։

Երբ Անատասը, որոշելով համապատասխան պահին օգտագործել ծիծաղը, ինչպես միշտ, ընթացքի մեջ դրեց բոլոր իր պայթյունները և ելևէջները, հանկարծ նրա մոտ առաջացավ այնպիսի աղոտ զգացում, որ այս անգամ իր ծիծաղին ինչ-որ բան պակասում է։ Թվում էր, թե նրա գրուցակցի վրա այդ ծիծաղը ավելի շուտ տհաճ տպավորություն գործեց։ Բարոնը ներողություն խնդրեց և արագ գնաց զուգարան։ Այստեղ նա կանգնեց հայելու առաջ և վերարտադրեց Թիմի ծիծաղը, ուշադիր դիտելով իր արտացոլումը։

Առաջին հայացքից ամեն ինչ առաջվա նման էր։ Բայց երբ նա նայեց ավելի ուշադիր (բարոնը կրկնում էր ծիծաղը, հայացքը չկտրելով իր դեմքից), այսպիսով, երբ նա նայեց ավելի ուշադիր, նա նկատեց, որ պակասել էին կիսաշրջանները բերանի անկյունների մոտ։ Դրա համար էլ ծիծաղը հնչում էր կեղծ, արհեստական, կարծես օտար։

Անատասի մոտ վախի զգացում ծնվեց, որը նա վերջին տարիների ընթացքում բոլորովին մոռացել էր։ Երկար տարիների ընթացքում առաջին՝ անգամ նա նորից զգաց խղճի խայթի նման ինչ-որ բան։ Բայց ոչ թե այն պատճառով, որ չարիք էր կատարել

(նա չարը բարուց չէր տարբերում— դրա համար նրա մոտ պակասում էր զգայարաններից ինչ-որ մեկը), այլ այն պատճառով, որ նկատեց, թե ինչպիսի հիմարություն է թույլ տվել։

Այդ թանկարժեք ծիծաղը, այդ ելևէջների անցումները, ամբողջ հոգով ծիծաղը, նրբանցքի տղայի ծիծաղը՝ ադամանդի պես փայլուն և ամուր, նա կարող էր յուրացնել բոլորովին այլ, շատ ավելի հասարակ ձևով— չսակարկելով վեճերը շահելու իրավունքի համար, այլ պարզապես...

Անատատի զրուցակիցը հանկարծ մտնելով զուգարան, տեսավ բարոնի գունատված, վախից աղավաղված դեմքը։ Նրան միայն մնում էր ենթադրել, որ Անատասը այդպես հուզվել է «Պալմարո» տեսակային մարգարինի անվան պատճառով։ Իսկ Անատասը պիտի ենթադրեր, որ եգիպտական ֆիրմայի ներկայացուցիչը հենց այդպես էլ մտածեց։ Ջափազանց տհաճ վիճակ ստեղծվեց։ Բարոնը չէր համարձակվում այս անգամ դործի դնել իր ծիծաղը, որովհետև նա այլևս վստահ չէր այդ ծիծաղի ուժի նկատմամբ։ Դրա համար էլ ձևացնելով, որ սիրտը խառնում է, ասաց.

— Մենք այդ հարցը կքննարկենք վաղը Կահիրեում։ Ես ինձ վատ եմ զգում, մայոնեզով ծովախեցգետինները...— Սակայն նրա խոսքերը այնքան էլ համոզիչ չէին հնչում։

Այդպիսով նա թողեց զուգարանը, դուրս վազեց տաղավարից ու հսկայական ցատկերով, կարծես մեծ մորեխ լիներ, սլացավ դեպի հյուրանոց։ Գետափի երկայնքով, Կույսերի ծառուղիում զբոսնող պճնված տիկնայք և նրբագեղ պարոնները, որոնք աշխատում էին քայլել կանանց հետ ներդաշնակ, նրան նայելով օրորում էին գլուխներն ու բացականչում.

— Այս ո՞վ է այդպես սլանում Կույսերի ծառուղում։ Ի՞նչ անդաստիարակ մարդ ես։

Բայց Անատասը ոչինչ չէր տեսնում և չէր լսում։ Նա զգում էր, որ ծիծաղը ուր որ է կփախչի իրենից, և անորոշ կռահում էր, թե ինչպես կարող է դա կատարվել։ Պետք էր փրկել այն, քանի ուշ չէ, ատամներո՞վ և մագիլներո՞վ։ Եվ նա մեծ ցատկերով վազում էր Կույսերի ծառուղիով, ուշադրություն չդարձնելով անցորդներին և փողոցի երթևեկությանը, սլանում էր խելագարի պես, ոչինչ չտեսնելով իր առջևում, և հանկարծ սայթաքեց փողոցի մեջտեղում, հյուրանոցի առջև, լսեց մեքենայի ազդանշան, արդելակների աղ-

մուկ և վախեցած բացականչություններ, կարծես այրոց զգաց ազդրում և, գիտակցությունը կորցնելով, ճչաց.

— Թիմ Թալե՜ր։

Այդ անակնկալ դժբախտ դեպքը այնքան էլ պատահական չէր։ Վախը ծնում է անվստահություն, անվստահությունը՝ հուզմունք, հուզմունքը՝ դժբախտ դեպքեր։ Եվ ոչ մի զարմանալի բան չկար, որ բարոնն ընկավ մեքենայի տակ, երբ սկսեց վախենալ իր ծիծաղի համար։ Ասենք, նա շատ ավելի ամուր և դիմացկուն էր, քան կարելի էր ենթադրել առաջին հայացքից։ Բացի այդ, վարորդին հաջողվեց վերջին րոպեին արգելակել։ Եվ Անատասը, փաստորեն, չընկավ անիվների տակ։ Նա գիտակցությունը կորցրեց պարզապես այն պատճառով, որ ընկավ։

Երկու լրտեսները, որոնք շնչասպառ հասան նրա հետևից, զգուշությամբ նրան դրեցին սանիտարական մեքենան, որն արդեն հինգ թե վեց րոպե անց ժամանեց դեպքի վայրը։ Նրանք բարոնին ուղեկցեցին մինչև հիվանդանոց, որտեղ նա բավական արագ ուշքի եկավ։ Նրա արտասանած առաջին բառերը առաջացրին հիվանդասենյակում գտնվողների տարակուսանքը։ Նա ասաց.

— Լավ ծիծաղում է նա, ով վերջինն է ծիծաղում։

Հետո մտավ բժիշկը, և Անատասը հոգնած ձայնով լրտեսներին ասաց, որ հիմա նրանք իրեն պետք չեն։

— Հիվանդանոցում, ինչպես ոչ այլուր, մարդուն պահպանում է հարգանքը,— ավելացրեց նա կատակով։

Եվ նա ժպտաց, ու ժպիտը նրա վրա գործեց հանգստացնող ազդեցություն։

Լրտեսները դուրս եկան հիվանդասենյակից, և բժիշկը ուշադիր քննեց բարոնին։ Պարզվեց, որ բարոնը քերծվածքներ և ուղեղի թեթև ցնցում է ստացել։ Բժիշկը նշանակեց դիետա և մի քանի օրվա անկողնային ռեժիմ։ Բացի այդ, նա բարոնին խորհուրդ տվեց ոչ մի այցելու չընդունել։

Չնայած դրան, հենց նույն այդ օրը Անատասի մոտ եկավ չափազանց տարօրինակ մի այցելու։ Դա փոքրիկ, նիհար մարդուկ էր, նիկելե շրջանակով ակնոցով նրա դեմքը և կոստյումը ճմըրթված էին։ Հերթապահ քույրը շատ զարմացավ, որ իր հիվանդը, ըստ ամենայնի դատելով՝ բավական օրինավոր մի պարոն, ծանոթություն ունի նման տիպերի հետ։

Անատասը մի քանի հարց և որոշ ցուցումներ տվեց մարդուկին։

— Դուք տղային տեսե՞լ եք ձիարշավարանի այն պատմությունից հետո։

— Ոչ, պարոն բարոն։

— Կամաց, հարգելիս։ Ես միսթր Բրաունն եմ։

— Ճիշտ այդպես, պարոն... միսթր Բրաուն։ Ես ուզում էի ձեզ նաև ասել, որ տղային ճանաչում եմ թերթերի լուսանկարներով։

— Դա արդեն ինչ-որ բան է։ Եվ այնուամենայնիվ դուք պետք է մեկ անգամ էլ տեսնենք նրան, եթե դա հնարավոր լինի։ Բայց հասկանալի է, այնպես, որ նա չնկատի։ Հուսանք, որ նա ձեզ չի ճանաչի։ Չեմ կարող ասել, որ նիկելե շրջանակով ակնոցը շատ է փոխել ձեզ։

— Ճիշտ այդպես, պարոն... միսթր Բրաուն։

— Եվ այսպես, ևս մեկ անգամ, հարգելիս, ծայրահեղ զգուշություն։ Չի կարելի, որ նա նկատի, որ բացի մեր տնային լրտեսներից իրեն հետևում է էլի ինչ-որ մեկը։ Հասկանալի՞ է։

— Ճիշտ այդպես։

— Երկրորդ հարցը...

— Խնդրեմ, միսթր Բրաուն։

— Դա, այսպես ասած, զուտ անձնական հարց է. դուք գիտե՞ք «Սա՛գ, սա՛գ, հենց մոտենամ—կկպչեմ» հեքիաթը։

— Ինչպե՞ս չէ։ Չէ որ ես ստիպված եղա այդ հեքիաթը դիտել թատրոնում, երբ երկու տարի առաջ այստեղ, Համբուրգում, հետևվում էի տղային, պարոն... միսթր Բրաուն։ Չէ որ այն ժամանակ տիկնիկային թատրոն գնաց այդ Ռիկերտների հետ։ Եվ ներկայացումը կոչվում էր «Սա՛գ, սա՛գ, հենց մոտենամ— կկպչեմ»։

— Ա՜յ թե ինչ։ Դա շատ բան է պարզաբանում։

Բարոնը մի վայրկյան փակեց աչքերը։ Նա նորից իրեն տեսավ տաքսիի մեջ, Թիմի կողքին և լսեց վարորդի խոսքերը. «Որքան արագ ձեզ մոտ ստացվեց։ Գրեթե նույնքան արագ, որքան «Սա՛գ, սա՛գ, հենց մոտենամ— կկպչեմ» հեքիաթում»։ Հետո բարոնը իր առջև տեսավ Թիմի դեմքը, որը նախ դողաց, հետո սառեց։ Տղան հուզմունքը թաքցրեց անտարբերության դիմակի տակ։ (Դա Անատասը վաղուց էր նկատել։) Հիմա նա գիտեր, թե ինչու վարորդը հիշատակեց հեքիաթը։ Իսկ երբ ակնոցավոր մարդուկը պատմեց նրան հեքիաթը, բարոնը շատ ավելին հասկացավ։

Անատասի ամենազարմանալի տաղանդներից մեկը թվեր հիշելն էր։ Հիշողությունը հազվադեպ էր նրան դավաճանում։ Ու հիմա էլ բարոնին թելադրեց տաքսու համարը, որը նա անմիջապես գրեց թերթի կտորի վրա։

Այդ համարը նա հանձնեց այցելուին։

— Եթե տղան նստի այսպիսի համարով տաքսի, անմիջապես հաղորդեք ինձ։ Հերթապահ քրոջից իմացեք իմ հիվանդասենյակի հեռախոսի համարը և գրեք այս թղթի վրա։ Հասկանալի՞ է։

— Ճիշտ այդպես, միսթր Բրաուն։

— Թող իմ վարորդը մեքենայով սպասի հիվանդանոցի մուտքի մոտ։ Հայտնեցեք նրան։ Ավտոմեքենան թող վերցնի վարձով։ Միայն թե ոչ մի դեպքում դա չպետք է լինի մեր ֆիրմայի ավտոմեքենան։ Հենց որ տղան նստի այսպիսի համարով տաքսի, դուք անմիջապես հայտնում եք ինձ։ Անմիջապե՛ս։ Մի քանի րոպեն կարող են վճռական լինել։

— Ճի՛շտ այդպես։

— Հիմա կարող եք գնալ։

Մարդուկը շրջվեց և գնաց դեպի դուռը, բայց Անատասը նորից նրան կանչեց։

— Կարծեմ, նրանք գործում են ծպտված։ Հնարավոր է, որ տղան էլ զգեստը փոխի։ Ես ձեզ զգուշացնում եմ, որպեսզի ոչ մի պատահականություն չլինի։

— Լավ, բարոն... Բրաուն։

Մարդուկը գնաց։ Անատասը վեր կացավ, քարշ եկավ մինչև դուռը, կամաց փակեց այն, հետո հագնվեց և նույնիսկ կապեց կոշիկների կապերը։ Հետո նորից բացեց դուռը և նոր էր կոստյումով ու կոշիկներով մտել անկողին, երբ զանգահարեց հեռախոսը։

Լսափողում լսվեց Թիմ Թալերի ձայնը.

— Ինչպե՞ս եք ձեզ զգում, բարոն։

— Շատ վատ, պարոն Թալեր,— տնքաց Անատասը։— Ջարդվածքներ և ուղեղի ցնցում։ Չեմ կարող շարժվել։

Շունչը պահած և լսափողն ականջին ամուր սեղմած, նա սպասում էր, թե ինչ կլինի հետո։ Բայց նա միայն լսեց Թիմի հանգիստ ձայնը։

— Այդ դեպքում ես ձեզ այլևս չեմ ուզում հոգնեցնել։ Առողջացեք բարոն և զգույշ եղեք։

— Օ՜, դուք կարող եք միանգամայն վստահ լինել, պարոն Թաչեր։— Անատասը լսափողն անաղմուկ դրեց լծակին։

Հետո նա թիկնեց բարձին և նայեց պատուհանից դուրս։ Երկու ծիծեռնակ թևածում էին օդում, առաջ անցնելով միմյանցից։

«Ծիծաղը,— մտածեց Անատասը,— թռչունի նման է։ Միայն թե այդ թռչունին թակարդը չես գցի»։ Հետո նա բարձրաձայն ասաց.

— Բայց ինձ էլ թակարդը չես գցի։

Թերթ երեսուներկուերորդ

ՀԵՏՆԱՄՈՒՏՔԵՐՆ ՈՒ ԲԱԿԵՐԸ

Թիմի պատուհանները նայում էին դեպի հյուրանոցի բակը։ Այդ պատճառով նա չէր լսել բարոնի ճիչը, երբ տեղի ունեցավ ավտոմոբիլային վթարը։ Ընդհանուր իրարանցման պատճառով նա շատ ուշ իմացավ դժբախտ դեպքի մասին։ Անատասի հետ կարճատև հեռախոսային խոսակցությունից հետո նրան սկսեց թվալ, որ այդ վթարն էլ, ինչպես և այդ օրվա ամեն ինչը, արկածային վեպից է։ Երբ Թիմը մտածում էր բարոնի ծանր վիճակի մասին, նա մի փոքր անհարմար էր զգում, բայց ոչինչ չէր կարող անել. այդ զգացումը գրեթե դուրս էր մղել կարեկցանքը։

Հաջորդ քայլը, որ պատրաստվում էր հիմա կատարել Թիմը, նույնպես կարծես արկածային վեպից լիներ։ Իսկ նա պատրաստվում էր անել այն, ինչ հրամայում էր նրան երկտողը («Ընտրիր հետնամուտքերը և բակերը») և այն, ինչ կանխազգում էր Անատասը («Հնարավոր է, որ տղան էլ զգեստափոխվի»)։ Այժմ Թիմին շատ օգնեց այն, որ վերջին տարվա ընթացքում բարոնը ավելի առատաձեռն էր նրան մանր ծախսերի դրամ տալիս, քան առաջ։ Թիմը զանգահարեց սպասուհուն և, երբ նա ներս մտավ, նրան առաջարկեց երեք հարյուր մարկ, եթե նա կարողանա արագ և անկատ իր համար բերել որևէ մաշված նավաստիական զգեստ՝ կլյոշ անդրավարտիք, սվիտեր և նավաստիական գլխարկ։

Սպասուհին, որն, անկասկած, բազմաթիվ արկածային վեպեր էր կարդում, այդ խորհրդավոր հանձնարարությունը համարեց շատ գրավիչ։ Նա ասաց, որ իր սիրած տղան ծառայում է մարդատար

նավագնացությունում, որ ինքը նրան պետք է հանդիպի այսօր երեկոյան ութին և նրանից կվերցնի այն, ինչ անհրաժեշտ է։

— Լավ,— ասաց Թիմը,— իսկ հետո այդ իրերը փաթաթեք թարմ անկողնային սպիտակեղենով և ժամը իննի մոտ բերեք իմ համարը։

— Բայց չէ որ մենք, միսթր Բրաուն,— պատասխանեց սպասուհին (Անատասը և Թիմը հյուրանոցում գրանցված էին որպես հայր և որդի Բրաուններ),— երեկոները երբեք անկողնու սպիտակեղենը չենք փոխում։ Միայն անհրաժեշտության դեպքում բաղնիքի սրբիչ ենք բերում։

— Այդ դեպքում բաղնիքի սրբիչի մեջ փաթաթեք, խնդրեմ։ Կարևորն այն է, որ զգեստներն ինձ մոտ լինեն ժամը իննից ոչ ուշ։

— Իսկ ի՞նչ ասեմ այն պարոնին, որը կանգնած է միջանցքում, պարոն Բրաուն։

— Ո՞ր պարոնին,— հարցրեց Թիմը։

— Նրան, որ ինձ հարյուր քառասուն ֆրանկ է տվել, որպեսզի լրտեսեմ ձեզ և նրան հասցնեմ, թե դուք ինչ եք անում։

— Ա՜, պարոն լրտեսի՞ն։ Նրան ասացեք, որ ես ձեզնից գլխացավի դեղահաբ խնդրեցի, իսկ դուք ինձ հիշեցրիք, որ դեղահաբերը գտնվում են լողարանի պատին ամրացված դեղարկղի մեջ։

— Լավ, միսթր Բրաուն։

— Էլի մի բան։ Երբ այսօր ժամը իննին դուք գաք, չէ՞ որ դուք չեք համարվի հերթապահության մեջ։

— Ոչ, իսկ ի՞նչ կա։

— Չե՞ք կարող երեկոյան հագնել ձեր համազգեստը։

— Ես պատրաստվում էի հենց այդպես անել, միսթր Բրաուն։ Ես տանը մեկ ուրիշ համազգեստ էլ ունեմ։ Վերարկուի տակից այդ համազգեստս կհագնեմ։ Իսկ գլխիս շալ կգցեմ։ Ու ստիպված չեմ լինի այստեղ նորից զգեստափոխվել։

— Հիանալի է,— ասաց Թիմը, և նրա շրթունքների անկյուններում հայտնվեցին երկու պարզորոշ կիսաշրջաններ։— Ուրեմն, ես կարո՞ղ եմ ձեզ լիակատար վստահել։

— Այո, միսթր Բրաուն։ Իսկ ես կարո՞ղ եմ այդ փողի վերաբերյալ վստահ լինել։

— Դուք այդ փողը հենց հիմա կստանաք։

Այդ ասելով, նա իր դրամապանակից հանեց երեք հատ հարյուր մարկանոց դրամ և տվեց սպասուհուն։

— Դուք չափազանց թեթեւամիտ եք,— ծիծաղեց աղջիկը։— Այդպիսի բաների համար երբեք նախօրոք չեն վճարում։ Բայց մի անհանգստացեք, ես ամեն ինչ կանեմ։ Շատ շնորհակալ եմ։ Եվ առայժմ ցտեսություն։

— Մինչև ինները,— ասաց Թիմը։

Նա սպասուհու հետևից փակեց դուռը և պառկեց բազմոցին։ Հասկանալի է, որ քնել չէր կարող, բայց որոշեց մի քանի րոպե հանգստանալ։

Ինները խփելուց մի քանի րոպե անց սպասուհին եկավ Թիմի համարը։ Նա հագել էր արհեստական մետաքսից կարված սև խալաթ, գլխին՝ սպիտակ գլխաշոր։ Բաղնիքի սրբիչը ամուր սեղմել էր կրծքին։

— Այն պարոնն ինձ հարցրեց, թե ինչու եմ ես ձեզ մոտ գալիս,— կամաց ասաց նա։— Ես պատասխանեցի, որ ցերեկը դուք ինձ խնդրել եք ժամը իններին բաղնիքի թարմ սրբիչ բերել ձեզ համար։

— Օ՜, դուք աշտ սիրալիր եք,— ասաց Թիմը, որքան հնարավոր է բարձր։ Հետո կամաց փսփսաց.— իմ կողմից բարևեցեք մարդատար նավագնացությունում աշխատող ձեր փեսացուին։

— Շնորհակալություն, միսթր Բրաուն։ Շնորհակալ եմ։

Իր հետևից դուռը փակելով, նա կրկին աչքով արեց Թիմին։ Եվ Թիմը ի պատասխան արեց նույնը։

Բարեբախտաբար, պարզվեց, որ սպասուհու փեսացուն այնպիսի հսկա չէ, ինչպես Ջոննին։ Հավանաբար, նա Թիմից մի քիչ խոշոր էր։ Բայց անդրավարտիքը հաջողվեց վեր քաշել, մի քիչ կարճացնել ձգոցները, իսկ ինչ վերաբերվում էր սվիտերին, ապա դա որքան աղատ լինի, այնքան լավ։

Նավաստիական գլխարկը դրած Թիմը հազիվ ճանաչեց ինքն իրեն։ Միայն մի բան էր նրան մատնում՝ դեմքի չափազանց նուրբ մաշկը։ Բայց այդ հարցում էլ նա արագ գտավ ելքը։ Լողարանի լվացարանի վրա կար մի մեծ կտոր պեմզա։ Թիմն այնքան շփեց այտերը, որ դրանք կարմրեցին, ապա հող վերցնելով ծաղկամանից, քսեց դեմքին։ Հետո լվաց հողը և նորից կրկնեց այդ ողջ արարողությունը։ Հետո կրկին ու կրկին կատարեց նույնը։ Արդյունքը գոհացուցիչ էր։ Թիմի երեսին նայողը, հավանաբար, կմտածեր, որ տղան նոր է ծաղիկ հանել։ Կարճ ասած, այժմ Թիմը ոտքից

մինչև գլուխ մարդատար նավագնացության նավաստի էր դարձել։

Մնում էր միայն մտածել, թե ինչ վերցնի հետը։ Չէ որ նա այլևս երբեք չէր վերադառնալու այս հյուրանոցը։ Թիմը հասկանում էր, որ այն պահին, երբ կվերադարձնի իր ծիծաղը, հարուստ ժառանգի դերը մինչև վերջ ավարտված կլինի։ Եվ դա նրան բոլորովին չէր վշտացնում։ Ուրեմն, ի՞նչ վերցնի հետը։ Նա որոշեց չտանել ոչինչ, բացի մի քանի փաստաթղթերից՝ անձնագրից, վաճառված ծիծաղի պայմանագրից, «ՀՀՄ» նավագնացության գնման պայմանագրից և երրորդ պայմանագրից՝ տիկնիկային թատրոնի գնման պայմանագրից։ Հետո նաև խորհրդավոր փոքր երկտողը, որը գրված էր մանրադիտակային նշաններով։ Խնամքով ծալելով թղթերը, Թիմը դրանք խցկեց իր նավաստիական անդրավարտիքի հետևի գրպանը և ամուր կոճկեց գրպանը։

Այսպիսով, Թիմը լրիվ պատրաստ էր իր կյանքի ամենալուրջ քայլը կատարելուն։ Մինչ այդ ժամացույցի սլաքը մոտեցավ տասնմեկին։ Այո, մնում էր ևս մի բան. նա արագ-արագ մեկը մյուսի հետևից ծխեց երեք սիգարետ։ Այժմ նրա վրայից ծխախոտի հոտ էր գալիս և ձայնն էլ դարձավ մի քիչ խռպոտ։ Ընդհանրապես նա չէր ծխում, բայց նրա համարի սեղանին միշտ դրված էր սիգարետներով պոլիսանդրե տուփը՝ այցելուների համար։

Այժմ հարկավոր էր այնպես դուրս գալ հյուրանոցից, որ լրտեսները չնկատեն։ Մինչև նա ծխում էր, ժամացույցի սլաքը շարժվեց դեպի տասնմեկն անց քառորդը։ Եթե դուրս գա պատուհանից, շատ վտանգավոր է, կարող են տեսնել։ Ուրեմն, մնում է միայն մի ճանապարհ՝ հյուրանոցի միջով։ Անհրաժեշտ էր մի կերպ շեղել միջանցքի լրտեսի ուշադրությունը։ Եվ Թիմն արդեն գտավ, թե ինչպես դա անի։ Նա մի փոքր նամակ գրեց բարոնին, ցանկանալով նրան արագ ապաքինում և զանգահարեց վերելակի վրա աշխատող տղային։ Մինչ այդ ժամացույցի սլաքը հասավ տասներկուսի կեսին։ Թիմի զանգով եկած տղան մոտավորապես Թիմի հասակին էր, բայց թվում էր շատ ավելի երիտասարդ։ Շիկահեր, կճատ քթով, խորամանկ պեպենոտ դեմքով տղան շատ էր դուր գալիս Թիմին։

— Արդյոք դուք չէի՞ք համաձայնվի երկու հարյուր մարկ վարձատրությամբ մի փոքր ներկայացում խաղալ։

Դա նրա ամբողջ գումարն էր։ Այլևս Թիմին ոչինչ չէր մնում։ Տղայի դեմքը ժպիտից կլորացավ։

— Իսկ ի՞նչ պետք է անեմ։

— Այստեղ, իմ դռան մոտերքում կանգնած է լրտեսը...

— Ինչպես չէ, գիտեմ,— ասաց տղան և ավելի լայն ժպտաց։

— Ուրեմն, այսպես, հարկավոր է շեղել նրա ուշադրությունը։ Վերցրեք ահա այս նամակը և այնպես դրեք ձեր բաճկոնի թևքի ծալվածքի տակ, որ ծայրը երևա։ Եթե լրտեսը հարցնի, թե ում համար եք նամակը տանում, իսկ նա անպայման կհարցնի, ես նրան լավ եմ ճանաչում, ձևացրեք, որ շփոթված եք և արեք այնպես, իբր նամակը ոչ ոքի չեք ցույց տալու։ Եվ անմիջապես արագ քայլեք դեպի միջանցքի անկյունը։ Լրտեսն, իհարկե, կվազի ձեր հետևից և կսկսի ձեզ փող առաջարկել, որ իրեն տաք նամակը։

— Դա հաստատ այդպես կլինի, միսթր Բրաուն։

— Այո, անպայման։ Ես էլ չեմ կասկածում։ Եվ ես շատ եմ խնդրում ձեզ այնքան վիճաբանեք նրա հետ, մինչև ես հասցնեմ դուրս գալ համարից և հետնամուտքով ծլկել հյուրանոցից։ Նամակը նա, իհարկե, կարող է կարդալ։

Շիկահերը ուրախ թափահարեց գլուխը։

— Ուրեմն, ես պետք է նրան պահեմ մի հինգ րոպե։ Կարվի։ Այդ ընթացքում ես կարող եմ սակարկել նրա հետ։ Ուրեմն, հարյուր մարկն էլ ինձ հերիք է, ավել մի տվեք։

Թիմը ուզում էր ինչ-որ բան առարկել, բայց տղան թույլ չտվեց, որ նա բերանն անգամ բացի։

— Ոչ, ազնիվ խոսք, պետք չէ։ Հարյուր մարկը առանց այն էլ շատ է։ Ձեր հագուստից դատելով, կարելի է ասել, որ դուք մտադրություն չունեք ապրելու հարուստների շրջանում, իսկ դա նշանակում է, որ ձեզ, գոնե սկզբի համար, պետք կգան ձեր փողերը։

— Գուցե դուք իրավացի եք,— պատասխանեց Թիմը։— Դե լավ, շատ շնորհակալ եմ։ Ահա նամակը, ահա և հարյուր մարկը։ Իսկ երբ դուք լրտեսին խաբելով տանեք միջանցքի ծայրը, ձևացրեք, թե հազի նոպա ունեք։

— Ամեն ինչ օ՛քեյ կլինի, միսթր Բրաուն։

Տղան փողը խցկեց բաճկոնի վերին գրպանը, իսկ նամակը դրեց թևքի ծալվածքի տակ։ Հետո նա ձեռքը մեկնեց Թիմին, թեպետ դա հակառակ էր կանոններին, և ասաց.

— Հաջողություն եմ ցանկանում։

— Այո, հաջողությունը ինձ շատ է պետք,— լուրջ պատասխանեց Թիմը և ամուր սեղմեց նրա ձեռքը։

Երբ տղան գնաց, Թիմն ականջը դրեց դռանը։ Սիրտն արագ էր բաբախում։ Վերջապես նա լսեց հաչոցի նման հազ։ Ժամացույցը ցույց էր տալիս տասներկուսից քառորդ պակաս։ Նա զգուշությամբ բացեց դուռը։ Միջանցքում ոչ ոք չկար։

Թիմը դուրս սողոսկեց դռնից և, որպեսզի ժամանակ չկորցնի, նույնիսկ չփակեց դուռը։ Մի քանի քայլ հետո նա հետնամուտքի աստիճանների վրա էր։ «Ընտրիր հետնամուտքերը և բակերը»։ Նա ամեն ինչ ճիշտ կատարեց։

Ոչ ոք նրան չկանգնեցրեց։ Միջանցքի հերթապահ կինը, ըստ երևույթին, չճանաչեց Թիմին, երբ նրա մոտից անցնելով Թիմը ասաց. «Բարի երեկո»։

Փողոցը լապտերի լույսի տակ փայլում էր՝ մանր անձրև էր մաղում։ Հովանոցով ինչ-որ մի մարդ կանգնած էր փողոցի մյուս կողմում։ Հենց այդ պահին նա շրջվեց։ Լապտերի լույսի տակ փայլատակեց նրա ակնոցի շրջանակը։

Միայն թե չվազեր։ Մի կերպ քարշ գալ, սուլել, նավաստի ձևանալ։ Թիմը նայեց շուրջը, իբր թե չիմանալով, թե որ կողմ գնա, և, սուլելով, թեքվեց քաղաքապետարանի կողմը։ Իր հետևից քայլեր չէր լսում։ Իսկ ետ շրջվել չէր համարձակվում։ Նա քայլում էր անշտապ, օրորվելով, մինչև մտավ ինչ-որ նրբանցք և միայն դրանից հետո սկսեց վազել։

Հասնելով քաղաքապետարանի հրապարակը (աշտարակի ժամացույցը հենց այդ ժամանակ սկսեց զարկել կեսգիշերը), նա կանգ առավ։ Այստեղ, հրապարակում, շարված էին մի քանի տաքսիներ։ Բայց դրանցից միայն մեկի շարժիչն էր աշխատում։ Թիմը դանդաղ մոտեցավ այդ մեքենային և անմիջապես ճանաչեց ղեկի մոտ նստած Ջոննիին, չնայած նա էլ էր ծպտված։

Աշտարակի ժամացույցը զարկեց վերջին անգամ։ Հասավ կեսգիշերը՝ «տրամվայների սև ժամը»։ Թիմը բացեց դռնակը և նստեց վարորդի կողքը։

— Ներեցեք,— ասաց Ջոննին,— մեքենան զբաղված է։ Խնդրում եմ նստեք մյուս մեքենաներից մեկը։

Այդ ասելով, նա նույնիսկ չնայեց ուղևորին, նա անհամբերությամբ հայացքով հրապարակում փնտրում էր ինչ-որ մեկին։

— Եկ «Սա՛գ-սա՛գ, հենց մոտենամ, կկպչեմ»,— ցածր պատասխանեց Թիմը։

Ջոննին վեր թռավ տեղում։

— Սատանա՞ն տանի, Թիմ։ Ա՜յ թե տեսք ունես, տղաս։

— Հյուրանոցի սպասուհու փեսացուն, Ջոննի, աշխատում է մարդատար նավագնացությունում։

— Որևէ մեկը քեզ հետևո՞ւմ է։

— Կարծեմ՝ ոչ։

Մեքենան սլանում էր հատուկենտ լուսավորված ցուցափեղկերի մոտով, ապա Ռյոլինգոմարկտի մոտ կտրուկ թեքվեց դեպի աջ, նավահանգստի կողմը։

— Իսկ քե՞զ, Ջոննի։

— Հնարավոր է, Թիմ։ Արդեն մոտ մեկ ժամ է, որ ինձ թվում է, թե հետևում են։ Բայց դա միայն զգացողություն է, հասկանո՞ւմ ես։ Առայժմ ես չեմ նկատել ոչ մի կասկածելի ավտոմեքենա կամ մարդ, որն ինձ հետևեր։ Եվ այնուամենայնիվ մենք հիմա կթեքվենք հարևան փողոցը։

Այժմ ղեկորդի կողքին Թիմն իրեն զգաց հանգիստ։ Մտքում նա այս գիշերային ուղևորությունը տաքսիով պատկերացնում էր շատ ավելի դրամատիկ։ Եվ թեպետ նրանք գնում էին խորհրդավոր մութ նրբանցքներով, այս բոպեները, թերևս, վերջին օրվա ամենաանխռով բոպեներն էին, օր, որը նման էր արկածային վեպի։

Ջոննին մեքենան վարում էր ամուր, հաստատ ձեռքով, անընդհատ ավելացնելով արագությունը։ Ժամանակ առ ժամանակ նա նայում էր հայելուն։ Ո՞չ, կարծես ոչ ոք նրանց չէր հետապնդում։

Բայց ինչ-որ մի նրբանցքից դուրս եկավ մի մեքենա և որոշ տարածության վրա, հանգցրած լույսերով, սլանում էր նրանց հետևից։

Մի քանի անգամ Թիմը փորձեց Ջոննիին հարցնել Կրեշիմիրի մասին։ Բայց նա ընդհատում էր Թիմին։

— Մի քիչ սպասիր, այ հիմա իրեն կտեսնես։ Սպասիր, Թիմ, շատ եմ խնդրում։

— Իսկ կարելի՞ է, Ջոննի, քեզ ոչ թե Կրեշիմիրի, այլ ուրիշ բանի մասին հարցնել։

— Ինչի՞ մասին։

Նրանք անցնում էին Ալտոնեի շրջանը։

— Դու որտեղի՞ց իմացար, որ ես և բարոնը ինքնաթիռով եկել ենք։

Ջոննին ժպտաց։

— Դու հիշո՞ւմ ես Սելեք Բայ անունով մի մարդու։

— Ա՞յն էլ ինչպես։

— Նա հեռախոսով կապվեց մեզ հետ և հայտնեց այդ մասին։ Երբ ձեր ինքնաթիռը վայրէջք կատարեց, մենք վարձեցինք օդանավակայանի մոտ կանգնած բոլոր տաքսիները, և դուք ստիպված եղաք կամա թե ակամա նստել իմ մեքենան, ավելի ճիշտ, ոչ թե իմ, այլ իմ աներոջ մեքենան։

— Իսկ դուք ո՞նց իմացաք, որ մենք տաքսի ենք վարձելու։ Չէ որ սովորաբար մենք օգտվում ենք մեր ֆիրմայի մեքենաներից։

— Սելեք Բայը գիտեր, որ դուք Համբուրգ եք գալիս ծպտյալ ձևով, Թիմ։ Անգամ ֆիրման տեղեկացված չէր ձեր ժամանման մասին։ Քո խորթ մորը բարոնի վրա բաց թողնելու միտքն էլ պատկանում էր Սելեք Բային։ Դա որևէ բանի պետք եկա՞վ, թե ոչ։

— Ոչ, Ջոննի, ոչինչ ինձ չօգնեց։ Եվ եթե Կրեշիմիրն էլ ինձ չօգնի, այդ դեպքում...

— Գլուխս կկտրեմ, Թիմի, եթե... Լավ, հիմա այլևս այդ մասին չխոսենք։ Մի քիչ սպասիր։

Նրանք արդեն շատ մոտ էին Էլբայի ափով ձգվող ճանապարհին, շատ մոտ Օվելգյոնե արվարձանին։

Հանկարծ Ջոննին առանց որևէ պատճառի ծիծաղեց։

— Ի՞նչ պատահեց։

— Ես պարզապես հիշեցի քո գործարքը բարոնի հետ։ Թե ինչպես դու քո բաժնեթղթերը փոխանակեցիր նավագնացության հետ։ Ես, իհարկե, անմիջապես միջամտեցի և անմիջապես ասացի այն նավագնացության անունը, որի մասին հաստատ գիտեի, որ վաճառվելու է։ Դու իսկապես դա ստացա՞ր։

— Պայմանագիրը գրպանումս է, Ջոննի։

— Ա՜յ քեզ բան։ «ՀՀՄ»-ն ուղղակի գանձ է, այլ ոչ թե նավագնացություն։ Եթե քեզ ղեկորդ պետք լինի...

Նրանք արդեն դուրս եկան Էլբայի երկայնքով ձգվող ճանապարհը, և հիմա Ջոննին հայելու մեջ նկատեց որոշ տարածության վրա իրենց հետևող, լույսերը հանգցրած մեքենան։

Նա ոչինչ չասաց Թիմին, միայն ավելի արագացրեց ընթացքը և սկսեց հաճախակի նայել հայելուն։

Թիմը ինչ-որ բան էր ասում, բայց Ջոննին նրան չէր լսում։ Նա տեսավ, որ հետևից եկող մեքենան նույնպես արագացրեց ընթացքը և աստիճանաբար հասնում է իրենց։

Արգելակները ճռռացին։ Ազատ ձեռքով Ջոննին բռնեց Թիմին,

որպեսզի վերջինս գլուխը չխփի դիմացի ապակուն։ Տաքսին կըտրուկ կանգ առավ։ Ջլուսավորված մեքենան անցավ նրանց մոտով։

— Դուրս արի,— շտապ ասաց Ջոննին։

Նրանց հասավ մյուս մեքենայի արգելակների ճռռոցը։

Ջոննին բռնեց Թիմի ձեռքը և քարշ տվեց իր հետևից։ Նրանք սլացան խճուղով, վազքով իջան աստիճաններով ցած, դեպի գետափնյա փողոցը, թռան.ոչ բարձր քարե պարսպից ,հայտնվեցին գարեջրի երկար նկուղում, մյուս դռնից դուրս թռան և, մեկ անգամ էլ թռչելով պարսպի վրայից, առաջինից ավելի բարձր աստիճաններ ունեցող մամոտած քարե սանդուղքով վազեցին ներքև։

— Ի՞նչ պատահեց, Ջոննի։ Մեզ այնուամենայնիվ ինչ-որ մեկը հետապնդո՞ւմ է։

— Լսիր, Թիմ, շունչդ պահիր։ Մենք ժամանակ շահեցինք, դա պետք է օգտագործել։ Կրեշիմիրը կանգնած է ցածում։

Թիմի ոտքը ինչ-որ բանի առավ։ Ջոննին գրկեց նրան և այդպես վազեց վերջին աստիճաններից ցած։ Թիմի հայացքն ընկավ սանդուղքի ներքևում փակցված՝ լուսավորված «Սատանայի վայրէջք» ցուցանակին։

Ջոննին Թիմին իջեցրեց և սուլեց։ Ինչ-որ տեղ մոտերքում լսվեց պատասխան սուլոցը։

— Իսկույն կատարիր այն, ինչ կասի Կրեշիմիրը,— շշնջաց Ջոննին։

Մթության միջից դուրս եկան երկու հոգի՝ Կրեշիմիրը և պարոն Ռիկերտը։

— Ձեռքդ տուր, Թիմ։ Գրազ եկ, որ դու ետ կստանաս քո ծիծաղը։ Արա՛գ։— Դա հարազատ ձայն էր, Կրեշիմիրի ձայնը։

Թիմը հուզված մեկնեց ձեռքը։

— Գրազ եմ բռնում...

— Սպասի՛ր,— լսվեց սանդուղքի ամենավերևում։— Սպասի՛ր։

Բայց ոչ ոք չէր երևում։

Կրեշիմիրը հանգիստ ու հաստատ ասաց.

— Գրազ եմ գալիս, որ դու երբեք ետ չես ստանա քո ծիծաղը, Թիմ։ Մեկ գրոշով։

— Իսկ ես գրազ եմ գալիս...

— Սպասի՛ր,— նորից լսվեց վերևից։

— Մի լսիր, շարունակի՛ր,— շշնջաց Ջոննին։

— Իսկ ես պնդում եմ, Կրեշիմիր, որ կվերադարձնեմ իմ ծիծաղը։ Մեկ գրոշով։

Ջոննին բաժանեց վիճողների ձեռքերը։ Եվ հանկարծ տիրեց շարագուշակ լռություն։

Թիմը գրազ եկավ, ինչպես նրան հուշեցին, բայց նա դեռևս չէր հասկանում, թե ինչ պատահեց։ Նա կանգնած էր շփոթված և պապանձված։ Հեռավոր լապտերի լույսով հազիվ լուսավորված երեք թանկագին դեմք նրան էին նայում սպասումի արտահայտությամբ։ Իսկ Թիմի դեմքը ստվերի մեջ էր, միայն ճակատի մի մասը սպիտակին էր տալիս մթության մեջ։

Պարոն Ռիկերտը հայացքը չէր հեռացնում այդ գունատ ճակատից։ Նա արդեն մեկ անգամ տեսել էր Թիմի ճակատը ճիշտ այդպես լուսավորված։ Տիկնիկային թատրոնի ներկայացման ժամանակ՝ այն պանդոկի հետևի սենյակում, որից մի քանի քայլի վրա կանգնած էին նրանք հիմա։ «Մարդն այնպես է բնությամբ ստեղծված, որ երբ ծիծաղելի է, նա կարող է ծիծաղել»։ Օ՜, միթե նա կարող է վերջապես ծիծաղել,— հույսով և տագնապով մտածեց պարոն Ռիկերտը։

Ե՛վ Կրեշիմիրը, և՛ Ջոննին նույնպես իրենց հայացքները չէին հեռացնում Թիմի լուսավորված ճակատից՝ նրա դեմքի միակ մասից, որը սպիտակին էր տալիս մթության մեջ։

Թիմը կանգնած էր հայացքը գետնին հառած։ Եվ այնուամենայնիվ նա զգում էր իրեն ուղղված այդ հայացքները։ Նա աղոտ զգում էր, որ ինչ-որ բան հիմա պետք է բարձրանա իր մեջ, դուրս գա բանտարկությունից, ինչ-որ կամաց, թեթև, աղատ բան, որ նման է թռչունի, ազատության ձգտող ծիծեռնակի ծլվլոցի։ Բայց ինքը Թիմը կարծես դեռ շատ ծանր էր դրա համար, նա իրեն անօգնական էր զգում։ Այո, նա լսեց դրանք, այդ ուրախ, ալիքաձև ծիծաղի ելևէջները։ Բայց նա կարծես դեռ չէր տիրապետում իր նախկին ծիծաղին— ավելի ճիշտ այդ ծիծաղն էր տիրապետում նրան։ Եվ հիմա, երբ հասավ երկար տարիների ընթացքում տառապանքով սպասված պահը, Թիմը զգաց, որ ինքը դեռևս պատրաստ չէ նրա համար։ Ոչ, նա չէր ծիծաղում, ծիծաղը ցնցում էր նրան։ Հասավ նրա երջանկության ժամը, իսկ նա... նա հանձնված էր այդ երջանկության քմահաճույքին։ Այն ժամանակ, տիկնիկային թատրոնում նա նկատեց, որ ծիծաղը դիմախաղով և շարժումներով որքա՜ն նման է լացի։ Հիմա նրան թվում էր, թե ծիծաղն ու

լացը գրեթե միևնույն բանն են։ Նա լալիս և ծիծաղում էր միաժամանակ։ Արտասուքները հոսում էին նրա այտերով, նա անօգնական իջեցրեց ձեռքերը և նույնիսկ չէր նայում իր բարեկամներին։ Նրան վթում էր, թե ինքը նորից է ծնվում։

Եվ այդ ժամանակ տեղի ունեցավ զարմանալին՝ աչքերը շղարշող արտասուքների միջից Թիմը տեսավ երեք հարազատ դեմք, որ մոտեցել էին իր դեմքին, և հանկարծ զգաց, որ ներկան միախառնվել է անցյալին։ Նա նորից փոքրիկ տղա էր և կանգնած էր ձիարշավարանի դրամարկղի պատուհանի առջև։ Նա փող էր շահել, չափազա՞նց շատ փող։ Նա լալիս էր երջանկությունից, որ շահել է, և վշտից, որ հայրը մեռել է և էլ երբեք չի բաժանի իր երջանկությունը։ Եվ այդ ժամանակ նա լսեց մի խոպոտ կոկորդային ձայն. «Հե՞յ, տղա՞, նա, ում գլխին այդպիսի երջանկություն է թափվել, լաց լինելու պատճառ չունի...»

Թիմը բարձրացրեց աչքերը։ Նրա հիշողության ինչ-որ մի անկյունում հիմա պետք է հայտնվեր ճմրթված դեմքով և կոստյումով մարդը։ Բայց այդ մարդու դեմքն անընդհատ շաղվում էր։ Նրա փոխարեն Թիմի աչքերի առջև հառնում էր մի այլ կերպար՝ կենդանի, հսկա Ջոննին։ Եվ երբ նա տեսավ դեկորդ Ջոննիին, նորից վերադարձավ ներկան— գիշերը պանդոկի առջև Օվելգյոնեում, լույսը այն սանդուղքի վրա, որ տանում էր վեր, դեպի մթություն, և իր երեք բարեկամներին— թվում էր, թե նրանց դեմքերին որտեղ որ է կհայտնվի անվստահ ժպիտը։

Նրա վերադարձված ծիծաղը նման էր փոթորկի։ Իսկ հիմա վրա էր հասել խաղաղությունը, փոթորիկը հանդարտվել էր։ Թիմը նորից զգաց իշխանություն իր ծիծաղի նկատմամբ։ Նա ձեռքով սրբեց արտասուքները և հանգիստ հարցրեց.

— Հիշո՞ւմ եք, պարոն Ռիկերտ, թե ինչ ձեզ խոստացա, երբ մեկնում էի Համբուրգից։

— Ոչ, Թիմ։

— Ես ասացի, երբ վերադառնամ, ես կծիծաղեմ։ Եվ հիմա ես ծիծաղո՞ւմ եմ, պարոն Ռիկերտ։ Ես ծիծաղո՞ւմ եմ, Կրեշիմի՞ր։ Ջոննի՞, ես ծիծաղո՞ւմ եմ։ Միայն թե...— Նրա ելևէջներով ծիծաղը խանգարում էր խոսելուն,— միայն թե ինքս էլ չեմ հասկանում, թե ինչպես դա եղավ...

Թիմի բարեկամները, որոնք արդեն սկսել էին վախենալ, որ

նա կարող է երջանկությունից խելքը թռցնել, շատ ուրախացան, որ նա նորից խոսում է այդպես խելոք։

— Դու վաղուց կարող էիր ծիծաղել,— ժպտալով ասաց Կրեշիմիրը։

— Չեմ հասկանում։

— Հապա կրկնիր, թե ինչի մասին դու ինձ հետ գրազ եկար, Թիմ։

— Ես քեզ հետ գրազ եկա, որ ետ կստանամ իմ ծիծաղը։

— Ճիշտ է։ Իսկ ի՞նչ պետք է պատահեր, եթե դու շահեիր։

— Ես ետ կստանայի իմ ծիծաղը։ Եվ ես իսկապես դա ստացա։

— Բայց դու քո ծիծաղը կստանայիր և այն դեպքում, եթե տանուլ տայիր, Թիմ։

Եվ այստեղ Թիմը հասկացավ։ Նա, ծիծաղելով, խփեց իր ճակատին և բացականչեց.

— Դե, իհա՞րկե։ Չէ որ տանուլ տված գրազը պետք է ինձ վերադարձներ իմ ծիծաղը։ Ուրեմն, ես կարող էի ցանկացածս մարդու հետ գրազ գալ, որ ետ կստանամ իմ ծիծաղը։ Եվ, միևնույն է, տանուլ տայի, թե շահեի, ծիծաղս կվերադառնար ինձ մոտ։

— Ոչ, տղաս,— ասաց Ջոննին,— դա այնքան էլ հեշտ չէր։ Դու առաջին պատահած մարդու հետ ոչ մի կերպ չէիր կարող գրազ գալ, որովհետև քեզ կմատնեիր, ասելով, որ ծիծաղդ քեզ չի պատկանում։ Իսկ այդպես անել դու չէիր կարող։ Դու կարող էիր գրազ գալ միայն նրա հետ, ով ինքը կոահել էր Անատասի հետ կնքած քո պայմանագրի մասին։

— Ինձ հետ,— ավելացրեց Կրեշիմիրը,— հաստա՛տ գործ էր։ Հաջողությունը ապահովված էր։

Այժմ, երբ նորից Թիմի ծիծաղը վերադարձել էր նրա մոտ և նա կարծես առողջացել էր, հանկարծ հասկացավ որքան հեշտ էր այդ բոլորը։ Իսկ նա, շփոթված և հուսահատ, այդքան տարի ուղիղ ճանապարհ դուրս գալու փոխարեն դեգերում էր ոլորապտույտ ճանապարհներով։ Խառնիճաղանջ ծրագրեր էր մշակում, որոնց մեջ բաժնեթղթեր և միլիոններ էր խաղացնում։ Իսկ ծիծաղը, պարզվում է, կարելի էր ետ բերել շատ ավելի հեշտ ճանապարհով, և դա շատ ավելի էժան արժեր, քան հարյուր գրամ մարգարիտը՝ ընդամենը մեկ գրոշ։

Ուրեմն, ծիծաղն այդքան էժան է, եթե փողի վերածելու լինենք։ Բայց նրա իսկական գինը ո՛չ մի միլիոնով չի կարելի չափել։ «Ծի-

ծաղը,— ասաց այն ժամանակ Սելեք Բայը,— մարգարին չէ, առուծախի ապրանք չէ... Ծիծաղը չեն վաճառում։ Նրան կարելի է միայն արժանանալ»։

Թերթ երեսուներեքերորդ

ՎԵՐԱԴԱՐՁՎԱԾ ԾԻԾԱՂԸ

Անձրևն արդեն ոչ թե մաղում էր, այլ գետի պես հոսում։ Բայց նրանցից ոչ ոք դա չէր նկատում։ Ոչ ոք չէր լսում և անհասատատ, ծանր քայլերը՝ սանդուղքի վրա։ Միայն հիմա, երբ բոլորը մի պահ լռեցին, պարզվեց, որ ինչ-որ մեկը խարխափելով իջնում է քարե սանդուղքներով ցած, և բոլորը, կարծես միասնական հրամանով, շրջվեցին։

Նեղ սանդուղքով, աստիճանաբար դուրս գալով մթությունից, ցած էր իջնում նիհար, երերվող մի կերպարանք։ Լապտերի լույսի տակ երևացին երկար ոտքերը և երկար մատներով գունատ ձեռքերը։ Հետո երևաց սպիտակ վերնաշապիկը և երկար դեմքը՝ նրա վերևում։ Վերջապես ամբողջ մարմինը դուրս եկավ մթությունից և կանգնեց արդեն լրիվ լուսավորված «Սատանայի վայրէջք» գրությամբ ցուցատախտակի տակ։ Հանկարծ նա ուժասպառ հենվեց տաշած քարերից շարված պատին։

Դա բարոնն էր։

Եվս մի ակնթարթ և Թիմի կրծքից դուրս կհորդեր ելևէջներով ծիծաղը։ Եվ դա իսկապես ծիծաղելի տեսարան էր։ Դա տիկնիկային թատրոնի սատանան էր, տիկնիկ, այնքան ծիծաղաշարժ մի էակ, որ գրեթե կարեկցանք էր առաջացնում։

Բայց Թիմ Թալերը, նորից ծիծաղելու ընդունակ տղան, զսպեց ծիծաղը։

Բարոնը նստեց սանդուղքին և սեղմված շրթունքներով ու կավիճի նման սպիտակ դեմքով նայեց ներքևում կանգնած մարդկանց։ Թիմը բարձրացավ նրա մոտ։

— Դուք պետք է վերադառնաք հիվանդանոց, բարոն։

Անատասը վարից-վեր նայեց նրան։ Նրա շրթունքները ամուր սեղմված էին։

— Ձեզ այստեղ չի կարելի նստել, բարոն։

— Ինչի՞ վրա էիք գրազ եկել, պարոն Թալեր։

— Մի գրոշի, բարոն։

— Մի գրոշի՞։— Բարոնը վեր թռավ։ Հետո նորից հենվեց պատին։ Եվ հանկարծ մի տեսակ կանացի ձայնով ծվծվաց.— Չէ որ դուք կարող էիք գրազ գալ իմ ամբողջ կարողության վրա, հիմարներ։

Թիմին ծանոթ վարորդը ցած վազեց աստիճաններով։

— Պարոն բարոն, ձեզ չի կարելի այդպես հուզվել։

— Թույլ տվեք, որ ես երկու բոպե խոսեմ երիտասարդի հետ։ Հետո կարող եք ինձ նորից հիվանդանոց տանել։

— Հետևանքների համար ես պատասխանատու չեմ, պարոն բարոն։

Վարորդը մի քանի աստիճան բարձրացավ և, երկմտելով, կանգ առավ։ Սանդուղքի ներքևում կանգնած էին Ջոննին, Կրեշիմիրը և պարոն Ռիկերտը. նրանք, կարծես, Թիմի լուռ պահապանները լինեին։

— Կարո՞ղ եմ ես ձեզ վրա հենվել, պարոն Թալեր։

— Դե, իհարկե, բարոն։ Իմ ուժերը կբավարարեն։

Նա այդ ասաց հազիվ նկատելի ժպիտով։ Բարոնը հենվեց նրա ուսին։

— Ձեր ժառանգությունը, պարոն Թալեր...

— Ես հրաժարվում եմ ժառանգությունից, բարոն։

Բարոնի լեզուն բռնվեց։ Բայց միայն մի պահ, հետո նա շարունակեց.

— Դա շատ խելամիտ քայլ է և զգալիորեն հեշտացնում է գործը։ Շնորհիվ ձեր նավագնացության, ես կարծում եմ, դուք կապրեք բավականաչափ լավ։ Համենայն դեպս, կարիքի մեջ չեք լինի։

— Նավագնացությունը, բարոն, ես նվիրում եմ իմ բարեկամներին։— Բարոնի աչքերը զարմանքից չռվեցին։ Դա երևում էր անգամ նրա սև ակնոցի տակից։

— Ուրեմն, ձեզ, պարոն Թալեր, մեր պայմանագիրը ոչ մի օգուտ չտվե՞ց։ Խղճուկ տիկնիկային թատրոնով...

Այժմ Թիմը իրեն թույլ տվեց հեգնաբար ժպտալ։

— Դուք ճիշտ եք, բարոն։ Ես ավարտեցի նրանով, ինչից սկսեցի։ Բայց այն, ինչ ունեմ, վերջին տարիներին ինձ համար այնպիսի

արժեք է ձեռք բերել, որը չի կարելի համեմատել աշխարհիս ոչ մի բաժնեթղթերի հետ։

— Ինչի՞ մասին եք խոսում։

Պատասխանի փոխարեն Թիմը ծիծաղեց։ Բարոնը զգաց, թե ինչպես է իր ձեռքի տակ ծիծաղից դողում երիտասարդի ուսը։ Նա Թիմի ծիծաղի մեջ ինչ-որ նոր երանգ լսեց։ Ավելի ցածր հնչյունները, ավելի խոր տոները, թվում էր, թե նվագակցության նման ուղեկցում էին նրա լուսավոր ծիծաղին։ Անատասը շրջվեց և ձեռքով արեց վարորդին, որն արագ իջավ ցած և իր ուսը տրամադրեց բարոնին, որպես հենարան։ Նրանք սկսեցին դանդաղ բարձրանալ։

— Շուտ առողջացեք, բարո՞ն։ Որքան հնարավոր է՝ շուտ առողջացեք։ Եվ շնորհակալություն այն ամենի համար, ինչ դուք ինձ սովորեցրել եք։

Անատասը չշրջվեց։ Վարորդը լսեց, թե ինչպես նա փնթփնթաց.

— «Առողջացեք... Առողջացեք։ Եղեք ողջ և առողջ...» Ինչպե՞ս չէ։ Կլինե՞ս ողջ և առողջ։

Թիմը հայացքով հետևում էր բարոնին, մինչև նա անհետացավ մթության մեջ։ Բարեկամները աստիճաններով բարձրացան վեր և կանգնեցին Թիմի կողքը։ Նրանք էլ էին նայում հեռացող Անատասին։ Ջոննին փնթփնթաց.

— Սատանայական հարստության տեր է, բայց, ընդհանուր առմամբ, մեղք է։ Ըստ էության նա ոչինչ չունի, այդ ծեր սատանան։

Եվ շորսով սկսեցին բարձրանալ աստիճաններով վեր։ Նրանք լսեցին, թե ինչպես սկսեց գործել մեքենայի շարժիչը։ Հետո դողերի պարզորոշ խշխշոցը սկսեց հեռանալ։

Եվ ահա նրանք դուրս եկան էլբայի երկայնքով ձգվող ճանապարհը։ Նրա մյուս կողմում երևում էր Ջոննիի տաքսու ուրվագիծը։

— Մեքենան առայժմ կանգնեցրեք իմ գարաժում, Ջոննի,— ասաց պարոն Ռիկերտը,— իսկ մենք մի քիչ քայլենք։

— Դուք էլի նո՞ւյն տանն եք ապրում, պարոն Ռիկերտ։ Սպիտակ առանձնատանը, այստեղ, ճանապարհի մոտ։ Իսկ բարոնը ինձ պատմել է, որ դուք դոկեր եք դարձել...

— Ես իսկապես էլ դոկեր եմ դարձել, Թիմ։ Վաղը քեզ ամեն

ինչ կբացատրեմ։ Չէ որ դու, կարծում եմ, դեմ չես լինի մեզ մոտ հյուրընկալվելու, այնպես չէ՞։

— Դե, իհարկե, պարոն Ռիկերտ։ Չէ որ ես պետք է ձեր մայրիկին ապացուցեմ, որ կարող եմ ծիծաղել, եթե...— նա շրջվեց,— եթե նա...

— Ի՞նչ ես ասում, Թիմ, նա ողջ և առողջ է։ Եվ շատ առույգ է։ Գնանք։

Առանձնատան մուտքը պայծառ լուսավորված էր։ Սպիտակ դուռը, որի վերևի կիսաշրջանաձև պատշգամբը պահպանվում էր երկու սպիտակ քարե առյուծներով, լուսավոր կղզի էր թվում մթության ծովի մեջ, կարոտած հարազատ հող՝ ալեկոծ անծանոթ ծովերում երկարատև դեգերումներից հետո։

Երբ Թիմը անցնում էր բարի առյուծների կողքից, նա կուլ տվեց արտասուքները։ Իսկ երբ դուռը բացվեց և, իր փայտին հենվելով, նրան ընդառաջ դուրս եկավ սպիտակ խոպոպիկներով ծեր տիկին Ռիկերտը, նա ստիպված եղավ զսպել իրեն, որ հեկեկոցով չփաթաթվի տիկին Ռիկերտին։ Այն անհասկանալի հնչյունները, որոնք դուրս պրծան նրա կրծքից, երբ նա կանգ առավ, ընդհուպ մոտենալով ծեր կնոջը, ծիծաղի և լացի անորոշ խառնուրդ էին։ Բայց գուցե դա պետք է նշանակեր. «Դե, տիկին Ռիկերտ, հիմա դուք ի՞նչ կասեք իմ մասին»։ Բայց դա հասկանալ չէր կարողանա աշխարհում ոչ մի մարդ։ Ասենք, ոչ ոք ոչինչ չէր էլ աշխատում հասկանալ։

Հիմա հրամանատարությունն անցավ տիկին Ռիկերտին։

— Դե, ինչպե՞ս են գործերը, ամեն ինչ կարգի՞ն է, Քրիստիանիկ,— դիմեց նա որդուն։

Եվ երբ որդին դրականորեն գլխով արեց նրան, թեթևացած շունչ քաշելով ասաց.

— Դե, տղաներ, հիմա մենք առիթ ունենք ուրախանալու։ Բայց տղայի քնելու ժամանակն է։ Նա ուղղակի վայր է ընկնում հոգնածությունից։

Եվ Թիմը, կամա թե ակամա, ստիպված էր գնալ քնելու։ Բայց պարզվեց, որ դա ամենաճիշտ որոշումն էր, քանի որ դեռ մի քանի վայրկյան չանցած՝ նա խոր քուն մտավ։

Հաջորդ օրը տիկին Ռիկերտը հոգաց այն մասին, որ Թիմի արթնանալու ժամանակ մենակ լինի նրա հետ։ Իսկ դա այնքան էլ

բարդ չէր, քանի որ երբ Թիմը արթնացավ, գրեթե կեսօր էր, և բոլորը վաղուց գնացել էին աշխատանքի։

Նրանք հիանալի նախաճաշեցին երկուսով։ Տիկին Ռիկերտը աշխարհում ամեն բանից ավելի սիրում էր նախաճաշել և այդ պատճառով հաճույքով նախաճաշեց երկրորդ անգամ։ Իսկ նախաճաշից հետո Թիմը ստիպված էր ամենայն մանրամասնություններով պատմել նրան այն բոլորը, ինչ եղել էր Համբուրգից գնալու պահից։ Եվ Թիմը դա արեց հաճույքով։

Գլխի վերևում թերթը թափահարելով, նա բղավում էր իտալերեն.

— «Sensazione, sensazione! Բարոն Անատասը մեռե՞լ է։ Տասնչորս տարեկան տղան ամենահարո՞ւստ մարդն է աշխարհում»։

«Ինչպես է առնականացել,— մտածեց ֆրաու Ռիկերտը, նայելով Թիմին։— Եվ ինչ վարժ է խոսում օտար լեզուներով»։ Եվ նորից սկսեց ուշադիր լսել նրա պատմածը։

Թիմը այնպես էր պատմում իր արկածները, կարծես դա կատակերգություն լիներ՝ ուրախ, ծիծաղաշարժ ներկայացում։ Հիմա, երբ նրա ծիծաղը նորից պատկանում էր իրեն, պարզվեց, որ շատ բան այն ամենից, ինչ առաջ թվում էր սարսափելի, իրականում ծիծաղաշարժ էր։ Նա պատմում էր իր ֆանտաստիկական վեճերի մասին Ջոննիի հետ, այն մասին, ինչպես ջարդուփշուր եղավ ջահը «Պալմարո» հյուրանոցում, Ջենովայում և Աթենքում տեսած նկարների մասին, գաղտնի բանակցությունների և դավադրությունների մասին դղյակում, Սելեք Բայի մասին, մարգարինի հետ կապված խարդախության մասին, շուրջերկրյա ճանապարհորդության և Համբուրգ վերադառնալու մասին, խորթ մոր և էրվինի մասին ու «տրամվայների սև ժամի» մասին։

Հետո եկավ տիկին Ռիկերտի պատմելու հերթը։ Եվ նա այդ գործին անցավ հանգամանալիորեն.

— Գիտես, Թիմ, երբ դու այն ժամանակ չվերադարձար Ջենովայից և մեզ մոտ այստեղ սկզբում հայտնվեց Կրեշիմիրը, իսկ հետո այդ հսկա Ջոննին, ես անմիջապես կռահեցի, որ այստեղ ինչ-որ բան կա։ Բայց նրանք չէին ուզում ինձ ասել, թե ինչ է պատահել։ Իբր, իմ սրտի արատի պատճառով։ Բայց չէ որ իմ սրտի արատը արդեն ութսուն տարուց ավելի է, ինչ գոյություն ունի, և մենք՝ այդ արատը ու ես, հիանալի լեզու ենք գտել իրար հետ։ Եվ

ահա ես էլ որոշեցի մի քիչ լրտեսել։ Եվ ես գտա այն նամակը, որ դու Ջոննիի ձեռքով ուղարկել էիր Ջենովայից։ Եվ, հասկանում ես, ես մի քիչ ավելի բան իմացա...

Ծեր կինը այժմ Թիմին այլևս ոչ թե տղա, այլ երիտասարդ էր համարում և սկզբում աշխատում էր նրա հետ խոսել «գրական լեզվով», բայց շուտով նորից անցավ իր սովորական համբուրգյան արագախոսությանը։

— Ուրեմն, ես լրտեսում էի, ուրեմն, ականջ էի դնում, երբ Քրիստիանը փսփսում էր Կրեշիմիրի և այդ արջ Ջոննիի հետ։ Ճիշտ է, նրանք այնքան էլ հաճախ չէին մեզ մոտ գալիս։ Չէ որ նրանք աշխատում էին նավանորոգման արհեստանոցներում։ Ուրիշ աշխատանք նրանց չէին տալիս։ Ոչինչ չէր ստացվում։ Ուղղակի ինչ-որ սատանայություն էր։ Իսկական կախարդանք։ Դե, ընդհանուր առմամբ այն ամենը, ինչի մասին նրանք փսփսում էին, ինձ էլ էր հայտնի։ Եվ ես, իհարկե, գիտեի, որ իմ տղային հեռացրել են աշխատանքից, թեպետ նրանք դա ինձնից ամեն կերպ թաքցնում էին...

— Իսկ նա իրոք դոկե՞ր է դարձել,— ընդհատեց նրան Թիմը։

— Այո, դա ճիշտ է։ Աշխատում էր նավահանգստում, որպես բանվոր։ Ախր դու չգիտես, թե ինչպես է մեզ մոտ այստեղ՝ Համբուրգում, Թիմ։ Եթե որևէ մեկին այստեղ ազատում են գործից, անմիջապես բամբասանքներ են սկսվում։ Եվ այնպիսի ստեր են սկսում մարդու մասին խոսել, որ այլևս ոչ ոք նրան աշխատանքի չի վերցնում։ Հասկանալի՞ է։

Թիմը գլխով արեց։

— Ճիշտ է, ես որոշ ժառանգություն ունեմ։ Գլխավորապես թղթերով։

— Բաժնեթղթերո՞վ,— հարցրեց Թիմը։

— Այո, բաժնեթղթերով, փոքրիկ։ Ուրեմն, դու այդ թղթերից ինչ-որ բան հասկանո՞ւմ ես։ Հետևաբար, թվում է, թե իմ որդին էլ չպետք է նավահանգստային բանվոր դառնար, քանի որ ես, կարելի է ասել, հարուստ ժառանգ եմ։ Բայց նա այդպիսի մարդ չէ։ Առանց աշխատանքի չի կարող ապրել։ Իսկ առանց նավահանգստի բոլորովին կկորչի։ Դրա համար էլ գնաց բանվորություն անելու։ Բայց դոկ հասնելուն պես զգեստը փոխում էր։ Նավահանգստից դուրս է գալիս որպես նրբաճաշակ պարոն և այդ տեսքով էլ տուն է վերադառնում։ Կարծում է, թե ես չեմ նկատի, որ նրա աշխա-

տանքը հիմա այլ է։ Իբր, միևնույն է, ես տանը նստած եմ։ Իսկ հեռախոսը ինչի՞ համար է։

Թիմը չկարողացավ իրեն զսպել, որ չծիծաղի, և տիկին Ռիկերտը ինքն էլ ծիծաղեց։

— Այդքան էլ ծեր ու հիմար չեմ ես... Իհարկե, ես հիմար, ծեր կին եմ, բայց ոչ այնպիսին, ինչպես նրանք են ենթադրում։ Չէ որ Սելեք Բայի հետ էլ առաջինը ես պայմանավորվեցի, երբ նա այստեղ զանգահարեց։ Այ հենց այստեղ էր, որ պարոնայք դավադիրները ամեն ինչ ինձ պատմեցին։ Ես, իհարկե, ձևացրի, թե ոչ մի բանի մասին գլխի չեմ ընկնում։ Աչքերս չռած նրանց եմ նայում և ճչում. «Չի՛ կարող պատահել» և այլն։ Մի խոսքով, նրանք այդ գաղտնիքը վստահեցին ինձ։ Քո երկտողն էլ ես էի գրել։ Խոշորացույցով։ Երբ մենք դեռ դպրոցական երեխաներ էինք, այդպիսի երկտողներ էինք գրում, ամբողջ օրերով վարժություններ էինք կատարում։ Ես այդ գործում ամենահաջողակն էի։ Մեկ անգամ նույնիսկ մի ամբողջ վեպ արտագրեցի տետրի երկու էջի վրա։ Աղնիվ խոսք։

— Չի՛ կարող պա-տա-հել,— ծիծաղեց Թիմը։

— Այ, թե ինչ, ուրեմն, դու ծիծաղո՞ւմ ես ինձ վրա, չարաճճի անբան։

Լսվեց զանգի ձայն և տիկին Ռիկերտը խնդրեց, որ Թիմը գնա տեսնի, թե ով է եկել։ Դա հյուրանոցի շիկահեր տղան էր։ Ամբողջովին քրտնած, նա կանգնած էր դռան առաջ, ճամպրուկները ձեռքին։

— Ինձ կարգադրել են ձեր իրերը ձեզ հանձնել, պարոն Թալեր,— ասաց նա լայն ժպտալով։

— Դեռ երեկ դուք ինձ կոչում էիք միսթր Բրաուն։ Որտեղի՞ց իմացաք, թե ով եմ ես։

Տղան նորից լայն ժպտաց։

— Իսկ դուք, ինչ է, թերթ չե՞ք կարդում։

— Ահա՜ թե ի՜նչ։

Թիմը մի քիչ շփոթվեց։ Հետո նա ձեռքը տարավ գրպանը, բայց շիկահերը վճռականորեն գլուխը թափ տվեց։

— Կարող եք մաքուր խղճով ոչինչ չտալ, պարոն Թալեր։ Ես կարող եմ ահագին փող վաստակել թերթերից, եթե պատմեմ, թե

ինչպես էի երեկ երեկոյան լրտեսի ուշադրությունը շեղում։ Թույլ կտա՞ք ես այդ անեմ։

Թիմը ծիծաղեց.

— Եթե այդքան ուզում ես, այո։

— Շա՜տ, շա՜տ շնորհակալ եմ։ Ճամպրուկները ներս բերե՞մ։

— Շնորհակալություն, դա ես ինքս կանեմ։ Միայն թե թերթերին արկածային վեպ չպատմես։

— Ի՞նչ իմաստ ունի։ Դրա կարիքը չկա։ Առանց դրա էլ պատմությունը շատ հետաքրքիր է։— Նա նորից ձեռքը մեկնեց Թիմին։ — Ուրեմն, նորից եմ քեզ հաջողություն ցանկանում, Թիմ։

— Շնորհակալ եմ։ Հաջողություն թերթո՛ւմ։

Երկու բարի քարե առյուծների միջև կանգնած ծիծաղող տղաները ամուր սեղմեցին միմյանց ձեռք։ Հետո շիկահերը նորից թռավ այն մեքենայի մեջ, որը նրան բերել էր հյուրանոցից, իսկ Թիմը ճամպրուկները տարավ ներս։

Հենց այդ նույն օրը Թիմը Ջոննիի, Կրեշիմիրի և պարոն Ռիկերտի հետ գնաց նոտարի մոտ, որը ֆրաու Ռիկերտի հին բարեկամն էր, և նա ձևակերպեց մի փաստաթուղթ, համաձայն որի «Համբուրգ—Հելնոլանդ—Մարդատար» նավագնացությունը, որը կրճատ կոչվում էր «ՀՀՄ», հավասար իրավունքներով հանձնվում էր Ջոննիին, Կրեշիմիրին և պարոն Ռիկերտին։ Ճիշտ է, այդ փաստաթուղթը անմիջապես ուժի մեջ չէր մտնում, քանի որ անհրաժեշտ էր կատարել բազմաթիվ ձևականություններ, իսկ դրա համար պահանջվում էր ժամանակ։ Չէ որ Թիմը այլևս միլիոնատիրոջ ժառանգ չէր։ Եվ այդ բոլորի համար կպահանջվեր երկու շաբաթից ոչ պակաս։ Համենայն դեպս, այդպես ասաց նոտարը։

Սկզբում Թիմի բարեկամները սարսափելի դեմ էին այդ նվերին։ Բայց երբ Թիմը հայտարարեց, որ այդ դեպքում նա ստիպված կլինի նավագնացությունը ուրիշին նվիրել, նրանք համաձայնվեցին։ Եվ ոչ առանց ուրախության։ Պարոն Ռիկերտը դեռ բավականաչափ ամուր և ժրաջան էր, որպեսզի ի վիճակի լիներ ընդունելու գործերը ծեր Դենկերի գրասենյակում, Վեցերորդ կամրջի վրա, իսկ Ջոննիի և Կրեշիմիրի համար, իհարկե, ավելի հաճելի էր որպես ղեկորդ և ստյուարդ աշխատել իրենց, այլ ոչ թե ուրիշների նավերի վրա։

Երբ նրանք չորսով դուրս եկան նոտարի գրասենյակից, որը գտնվում էր գլխավոր կայարանի մոտերքում, Ջոննին հարցրեց.

— Իսկ դու ինչո՞վ ես հիմա զբաղվելու, Թիմ։

Թիմը ձեռքով դեպի աջ ցույց տվեց։

— Ահա այն հին տանը տիկնիկային թատրոն կա։ Նա իմն է։ Ես այն կվերածեմ մարիոնետների շրջիկ թատրոնի։

— Դրա համար քեզ անհրաժեշտ է ավտոբուս ունենալ,— ասաց Կրեշիմիրը։

— Եվ շարժական բեմ,— ավելացրեց Ջոննին։

— Եվ դրանք,— եզրափակեց պարոն Ռիկերտը,— քեզ կնվիրենք մենք, փոքրիկ։ Ոչ մի առարկություն, թե չէ դու ստիպված կլինես ետ ստանալ քո նավագնացությունը։

— Լավ, համաձայն եմ,— ծիծաղեց Թիմը և լրջորեն ավելացրեց.—Ի՞նչ հրաշալի է, որ ձեզ նման երեք հարազատներ ունեմ։

— Եվ Սելեք Բայը,— նկատեց պարոն Ռիկերտը։

— Եվ Սելեք Բայը,— ուրախ համաձայնվեց Թիմը։— Իսկ ընդհանրապես վատ չէր լինի, եթե նրան հեռագիր ուղարկեինք։

Եվ առանց հետաձգելու, նրանք կազմեցին հեռագիրը...

Հեռավոր Միջագետքում ծեր Սելեք Բայը ուրախ ժպտաց, երբ կարդաց.

Գրողի ծո՛ցը մարգարինը կա։ Ծիծաղը ստանում են ձրի կա։ Ես այն ստացա կա։ Շատ շնորհակալ եմ օգնության համար կա։

Ձեր Թիմ Թալեր

Այսպես այդ օրը վերջացավ այն պատմությունը, որն այդ նույն օրը սկիզբ առավ թերթերի և ամսագրերի ընթերցողների համար։ Ճիշտ է, ընթերցողները այն իմացան ժուռնալիստների և լրագրողների հաղորդագրություններից այն ձևով, ինչպես նրանք էին հասկացել այդ պատմությունը, իսկ պետք է ասել, որ նրանց մեծ մասը բնավ էլ չէր հասկացել։

Պարոն Ռիկերտը նորից դարձավ նավագնացության դիրեկտոր, Ջոննին՝ ղեկորդ, իսկ Կրեշիմիրը՝ ստյուարդ։

Ինչ վերաբերվում է բարոն Անատասին, ապա նրա մասին վերջին ժամանակներս շատ քիչ է խոսվում։ Պետք է ենթադրել, որ նա գրեթե ամբողջ ժամանակը անց է կացնում լիակատար մենակության մեջ և վատ տրամադրությամբ իր դղյակում՝ Միջագետքում։ Ասում են, որ նա խուսափում է մարդկանցից և նույնիսկ մի փոքր

վախենում է նրանցից։ Եվ այնուամենայնիվ նա դեռևս հիանալի վարում է իր առևտրական գործերը և կնքում է փայլուն գործարքներ։

Թիմի մասին շատ քիչ բան է հայտնի։ Հաստատ կարելի է միայն ասել, որ նա ծեր տիկին Ռիկերտի հետ միասին պիես գրեց տիկնիկային թատրոնի համար, որը կոչվում է «Վաճառված ծիծաղը»։ Հետո նա անհետացավ Համբուրգից, և ոչ մի թղթակցի չհաջողվեց իմանալ, թե որ կողմ է նրան քշել քամին։

Ճիշտ է, Թիմի որոշ հետքերը հաջողվեց հայտնաբերել։ Գերմանիայի մեծ քաղաքներից մեկի գերեզմանատանը գերեզմաններից մեկի մարմարե շիրմաքարի մոտ ինչ-որ մեկը ծաղկեպսակ է դրել, որի ժապավենի վրա գրված է. «Ես վերադարձա, երբ կարողացա ծիծաղել։ Թիմ»։

Վերջին տեղեկությունները Թիմի մասին ստացվել են նույն քաղաքի հացի և հրուշակեղենի մի խանութից։ Մի քանի տարի առաջ այնտեղ ներկայացել է մի շատ բարեկիրթ երիտասարդ։ Մի պահ խանութի տիրուհին չի ճանաչել նրան, բայց երբ հարցրել է, թե ինչ է ցանկանում երիտասարդը, վերջինս հանկարծ մռայլ ծամածռել է դեմքը և ասել. «Ես ուզում եմ կողոպտել ջրհան կայանի դիրեկտորին, ֆրաու Բեբեր»։

— Թիմ Թալե՞ր,— բացականչել է զարմացած ֆրաու Բեբերը։

Բայց երիտասարդը մատը դրել է շուրթերին և ասել է.

— Ս՞-ս՞-ս՞։ Մի մատնեք ինձ, ֆրաու Բեբեր։ Ինձ այժմ կոչում են Էնրիկո Գրանդիցի և ես տերն եմ այս աշխարհի ամենաուրախ թատրոնի՝ տիկնիկների թատրոնի, որի անունն է «Մարգարինով արկղը»։

— Ա՞խ, որքան զվարճալի է,— բացականչել է ֆրաու Բեբերը։— Ես հենց երեկ պատահմամբ ընկա այդ տիկնիկային թատրոնի ներկայացմանը։ Ինչ-որ անծանոթ մեկը տոմս էր ուղարկել ինձ։ Բայց գուցե, դա...— Նա ուշադիր նայեց Թիմին...— Բայց գուցե դա որևէ ծանո՞թ է եղել։

— Հնարավոր է,— պատասխանել է երիտասարդը, և նրա շուրթերի անկյունների մոտ երևացել են երկու ուրախ կիսաշրջաններ։

— Բեմադրված էր մի պիես վաճառված ծիծաղի մասին,— շարունակել է ֆրաու Բեբերը։— Շա՞տ լավ ներկայացում էր։ Հազար ու մի միտք է գլուխդ գալիս։ Մտածում ես, մտածում...

— Իսկ ինչի՞ մասին էիք մտածում, ֆրաու Բեբեր,— հետաքրքրվել է երիտասարդը։

— Գիտես ինչ, Թիմ... Անկեղծ որ ասելու լինեմ, սկզբում մի տեսակ էր, ես ինձ լավ չէի զգում... Սարսափելի էր... Բայց վերջում արտասվելու չափ ծիծաղում էի։ Եվ այն ժամանակ ես մտածեցի. «Ով ծիծաղում է, նրան սատանան էլ չի հաղթի»։

— Վատ չի ասված, ֆրաու Բեբեր,— պատասխանեց երիտասարդը։— Այո, այդպես էլ պետք է սատանաների հախից գալ։ Միայն այդպես կարելի է սատանային խեղճացնել։